Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎ. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ

# ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԸ

## 1912-1923 ԹԹ.

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

Գիտական ղեկավար՝ պ.գ.թ.դոցենտ՝

Հարությունյան Ա.Հ.

ԵՐԵՎԱՆ - 2016

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**……………………………………………………………………………………….3

**ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ**

**Արևմտահայ քաղաքական միտքը Հայկական հարցի վերաբացման շրջանում և Առաջին աշխարհամարտի տարիներին**

1.1. Արևմտահայ քաղաքական միտքը Հայկական հարցի վերաբացման շրջանում (1912-1914 թվականներին)……………........................................................................17

1.2.Կամավորական շարժման սկզբնավորումը և արևմտահայ քաղաքական միտքը ……...........................................................................................................40

1.3.Մեծ եղեռնը և Արևմտահայ քաղաքական միտքը ………...........................................................................................................57

**ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ**

**Արևմտահայ քաղաքական միտքը 1918 – 1920 թվականներին**

2.1.Արևմտահայ քաղաքական մտքի դիրքորոշումը Հայաստանի առաջին Հանրապետության շրջանում…………………………………………………………….…….70

2.2.Հայոց Ազգային պատվիրակության մոտեցումները Հայկական հարցի լուծման վերաբերյալ ……………………………………………………………………………….……..92

**ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ**

**Արևմտահայ քաղաքական միտքը 1921 – 1923 թվականներին**

3.1.Արևմտահայ քաղաքական մտքի դրսևորումը Լոնդոնի խորհրդաժողովում..……………………………………………………………………….…..….120

3.2.Լոզանի խորհրդաժողովը և արևմտահայ քաղաքական մտքի ձախողումը ………………………………………………………………………………………134

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**…………………………………………………………………………144**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

………………………………………………………………………………………………..152

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Թեմայի արդիականությունը:** Սույն ուսումնասիրությամբ մենք նպատակ ենք հետապնդել լուսաբանելու արևմտահայ քաղաքական մտքի զարգացման տրամաբանությունը 1912-1923 թթ ընդգրկող ժամանակահատվածում, երբ տեղի են ունեցել հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցած 3 կարևորագույն իրադարձություններ: Այս նպատակի իրականացումը կարևոր և արդիական ենք համարել մի քանի տեսանկյուններից.

1.Փաստերի համակողմանի ուսումնասիրության ճանապարհով հայ քաղաքական մտքի ձախողումների պատճառների վերհանումը կարևոր նշանակություն կարող է ունենալ արդի հայ քաղաքական մտքի մեջ այն համոզմունքի ամրապնդման համար, որ մեծ տերություններին չպետք է հնարավորություն ընձեռել շահարկելու Հայկական հարցը:

2.Հայ քաղաքական մտքի մեջ հետաքրքրող ժամանակաշրջանում տեղի ունեցած վայրիվերումները այսօրվա համար էլ արդիական են դարձնում այն ճիշտ հայեցակետը, որ ռազմաքաղաքական դաշինքները երբեք չպետք է շփոթել քաղաքական կույր կողմնորոշումների հետ և ճիշտ հասկանալ Հայոց ցեղասպանության ճանաչմամբ շահագրգռված տերությունների անկեղծ կամ հետին նպատակները:

3.Հայ քաղաքական մտքի 1912-1923 թթ. փաստացի պարտությունն այսօրվա համար կարևոր է դարձնում այն քաղաքական դասերի ընկալման կարևորությունը, որ քաղաքական դաշնակիցներ հնարավոր է գտնել միայն սեփական հնարավորությունների ընդլայնման և սեփական ուժերին ապավինելու կարգախոսի՝ որպես քաղաքական և ռազմական հաղթանակների հասնելու ամենահիմնական պայմանի առաջնահերթության ընդունման դեպքում:

4.Կարևոր է նաև այն, որ պետականության արարման սկզբնափուլում ձախողումները կարող են հանգեցնել տարածքային առավելագույն պահանջները:

**Ատենախոսության նպատակն ու խնդիրները**: 1912-1923 թթ. արևմտահայ քաղաքական մտքի պատմության լուսաբանմամբ մենք մեր առջև դրել ենք հետևյալ նպատակներն ու խնդիրները:

-Փաստերի համակողմանի վերլուծությամբ փորձել ճշտել, թե այդ քաղաքական միտքն արդյո՞ք ընթանում էր այն ուղղությամբ, որի ավարտը կարող էր արդյունավետ լինել համայն հայության շահերի բավարարման տեսակետից:

-Արևմտահայ և արևելահայ քաղաքական միտքը ինչպիսի դիրքորոշումներ էր որդեգրել Արևմտյան Հայաստանի ազատագրման խնդրի հետ: Արդյոք այդ առումով դրանցում կային տարբերություններ, թե ոչ:

-Գտնել այն հարցի պատասխանը, թե 1912 թ., Հայկական հարցի վերաբացումից սկսած մինչև Լոզանի կոնֆերանսը ճիշտ ուղղով էր ընթանում արևմտահայ քաղաքական միտքը, երբ ապավինում էր մեծ տերություններին, անտեսելով այն խաբկանքը, որ ճաշակել էր Առաջին աշխարհամարտի սկզբնավորումից ի վեր:

-Ճշտել, թե արդյոք ՀՀ անկման պատճառների մեջ կարևոր դերակատարություն չունեցավ այն հարցը, որ չափազանց լայն սահմանների պահանջով հանդես եկան հայ քաղաքական ղեկավարները:

-Համակողմանիորեն լուսաբանել արևմտահայ քաղաքական մտքի դեգերումները վերոհիշյալ ժամանակահատվածում և, որ կարևոր է, այդ քաղաքական մտքի դիվանագիտական պարտությունների մեջ չանտեսել նաև սեփական սխալները:

Մեր որդեգրած նպատակները ու խնդիրները հիմնավորվում են հետևյալով:

Հաճախ հայ քաղաքական մտքի մարտավարական և ռազմավարական սխալներն անտեսվում են այն պատճառաբանությամբ, թե դրանով ջուր ենք լցնում թուրք պատմագրության ջրաղացին, որն այն հայեցակարգն է փորձում հիմնավորել, թե հայերին կոտորել են, քանի որ ունեցել են անջատողական ձգտումներ և նպաստել են մեծ

տերությունների ու մասնավորապես Ռուսաստանի՝ Թուրքիան մասնատելու քաղաքականության իրականացմանը: Սակայն, հայերը եթե ունեցել են էլ անջատողականություն, որն անշուշտ վիճելի է, քանզի հայ քաղաքական կազմակերպությունների ծրագրային դրույթներում եթե խոսք է գնացել անկախության մասին, ապա՝ գործնականում նրանք բավարարվել են միայն բարենորոգումներով, որի իրավունքն ունեին, քանզի ազատագրել էին փորձում իրենց պատմական հայրենիքը և դա ամենևին հիմք չէր տալիս թուրքերին ցեղասպանության ենթարկելու արևմտահայությանը: Ճշմարտությունը պահանջում է շեշտել, որ հայոց մեծ ողբերգությանը քիչ չնպաստեցին մեծ տերությունները, որոնց նկատմամբ հավատի փլուզման բազմաթիվ դեպքերից հետո էլ հայ քաղաքական միտքը շարունակում էր կառչած մնալ նրանց օգնությամբ ազատագրվելու պատմական քննություն չբռնած գաղափարից: Մեկդարյա հեռավորությունից այսպիսի տեսակետներ արտահայտելն իսկապես դյուրին խնդիր կարող է դիտարկվել, որպես ուշացած փաստաբան՝ որակավորելու ցանկություն առաջացնել շատերի մոտ: Բայց չէ՞ որ իրադարձությունների զարգացման այնպիսի բուռն և ընդգրկուն ժամանակների համար, ինչպիսիք են 1912-1923 թթ., արևմտահայ և առհասարակ հայ քաղաքական մտքի այնպիսի ներկայացուցիչներ են եղել, որոնք ընդդիմադիր կեցվածք են ունեցել քաղաքական մեծամասնության նկատմամբ, որը նախընտրել էր խոտոր ճանապարհը, սակայն ժամանակի մեջ ճիշտ չեն ընկալվել և այսօր ենք միայն ընկալում նրանց քաղաքական հայացքների ճշտությունը:

Արևմտահայ և արևելահայ ղեկավարները 1912 թ. Հայկական հարցի վերաբացումով փորձեցին որպես հզորների քաղաքական շահերի բաղադրամասը տեսնել իրենց ժողովրդի շահերը, պահպանելով իրենց հավատարմությունը նրանց նկատմամբ մինչև Հայկական հարցի ձախողումը Լոզանի խորհրդաժողովում և նրա արդյունքում կնքված պայմանագրում, այն դեպքում, երբ այդ տերությունները իրար հետ դաշինքի մեջ լինելով, գաղտնի դավաճանում էին մեկը մյուսին, իսկ բոլշևիկ-քեմալական դաշինքի պայմաններում նույնիսկ պայքար էին տանում Քեմալի հետ

բարեկամանալու համար: Հայ քաղաքական միտքն այդպես էլ չէր շրջանցում «մշտական բարեկամների և մշտական թշնամիների» մասին սին կարգախոսները:

Առաջին աշխարհամարտի սկզբնավորումով, երբ օրակարգից դուրս մղվեց բարենորոգումների խնդիրը, թե՛ արևմտահայ և թե՛ արևելահայ ղեկավար գործիչներն առաջնորդվեցին այն թյուր մտածողությամբ (չնչին բացառություններով), որ շուտով Ռուսաստանը կազատագրի Արևմտյան Հայաստանը: Այստեղ էլ նրանք սխալվեցին, քանզի Ռուսաստանը ոչ թե ազատագրեց Արևմտյան Հայաստանը, այլ գրավեց այն և այնպիսի իրավիճակում, որ այնտեղի հայ տարրը կա՛մ կոտորվել, կա՛մ հայրենազրկվել էր: Կամավորական գումարտակներով ռուսական զենքի հաղթանակին հասնելու մարտավարությունն իրեն չարդարացրեց: Սակայն, Հայոց Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշան, որն արևմտահայության շահերի գլխավոր ներկայացուցիչն էր, կյանքի կոչեց Հայկական լեգեոնի ստեղծման գլխավորապես ֆրանսիական առաջարկը, Արևմտյան Հայաստանը և Կիլիկիան ստանալու հույսով, այն դեպքում, երբ Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագրով որոշված էր այդ տարածքների հարցը, այն դեպքում, երբ Ռուսաստանը չէր կատարել իր խոստումը` Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու հարցում: Փաստորեն, դաշնակիցներին օգնելու մեջ Հայկական հարցի լուծումը տեսնող արևմտահայ քաղաքական միտքը դարձյալ սխալվեց:

Արևմտյան Հայաստանի գրավումից հետո ցարական Ռուսաստանը հրաժարվում է նրա ինքնավարության խոստումներից` ստեղծելով Արևմտյան Հայաստանի գեներալ-նահանգապետությունը: Այս իրավիճակում և՛ արևմտահայ, և՛ արևելահայ քաղաքական մտքի ներկայացուցիչները որդեգրում են այն շենացնելու և հայացնելու մարտավարությունը, որի դրական արդյունքները զգալի էին, բայց որին խանգարեց 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունը, երբ ռուսական բանակի կազմալուծման պայմաններում հօդս ցնդեց Արևմտյան Հայաստանում պետականության աստիճանական առարկայացման գաղափարը, և

թուրքական առաջխաղացման արդյունքում գրավվեց Արևմտյան Հայաստանը, ինչպես նաև Արևելյան Հայաստանի մի մասը:

1918 թ. մայիսյան հերոսամարտերի շնորհիվ թուրքական արշավանքի կասեցումից և Բաթումում դիվանագիտական գործընթացների արդյունքում Անդրկովկասի սեյմի լուծարումից հետո, երբ հռչակվեց Հայաստանի անկախ Հանրապետությունը, արևմտահայ քաղաքական միտքն ընթացավ երկու հիմնական ուղղություններով: Առաջինը հիմնականում նախատեսում էր փոխել Արևելյան Հայաստանի ժողովրդագրական պատկերը` հօգուտ հայոց և թաթարական բնակավայրերը չեզոքացնելու` դրանցում հիմնավորելով արևմտահայ գաղթականների: Սրանով փաստորեն արևմտահայերը նպաստում էին նորաստեղծ պետականության ամրապնդմանը:

Սա, անշուշտ, նրանց համար դյուրին խնդիր չէր, քանի որ միշտ էլ անկախության գաղափարը հայ քաղաքական մտքի ընկալումներում իրականալի պետք է դառնար Արևմտյան Հայաստանում:

Այս ուղղությամբ առաջնորդվող արևմտահայ քաղաքական գործիչները նաև առաջնորդվում էին այն ըմբռնումով, որ Հայաստանի Հանրապետության հետ մեկ ամբողջություն պետք է կազմի Արևմտյան Հայաստանը: Սա հասկանում էին նաև ՀՀ արևելահայ գործիչները, որոնք 1919 թ. մայիսի 28-ին գնացին Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանի մասին ակտի ընդունմանը: Այս ակտը մեղմեց արևելահայերի և արևմտահայերի միջև հոգեբանական անջրպետը, քանզի նրանով հստակեցված չէին այն տարածքները, որոնք պետք է ներառվեին անկախ և միացյալ Հայաստանի սահմանների մեջ:

Երկրորդ ուղղությամբ առաջնորդվող արևմտահայ քաղաքական մտքի ներկայացուցիչները Պողոս Նուբարի առաջնորդությամբ Արևմտյան Հայաստանի խնդրի լուծումը տեսնում էին ՀՀ-ից տարանջատ:

Մեր աշխատության մեջ փորձել ենք ապացուցել, որ նման դիրքորոշումը ամենևին էլ ճիշտ չէր և խոչընդոտում էր մեկ միասնական դիրքորոշումով հաղթող տերությունների վեհաժողովում Հայկական հարցն արծարծելու արդյունավետությանը: Պողոս Նուբարի նման մտածող արևմտահայ

քաղաքական մտքի ներկայացուցիչները չափազանց լայն տարածքային պահանջներ են ներկայացնում դաշնակիցներին, որը տվյալ իրավիճակում չէր բխում համայն հայության շահերից: Ազգային պատվիրակության դիրքորոշումով պայմանավորված երկրորդական պլան մղվեցին Հայաստանի Հանրապետության այն քաղաքական գործիչները, որոնք ավելի նեղ սահմաններով Հայաստանի ճանաչման կողմնակից էին, քանզի գիտակցում էին, որ ավելին ստանալու դեպքում այն անհնար էր պահել սեփական ուժերով: Ավելին՝ Ազգային պատվիրակությանը չհակադրվելու դիրքորոշում որդեգրեց Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝ Ա. Ահարոնյանի գլխավորությամբ, որը հետևեց Պողոս Նուբարի Ազգային պատվիրակությանը:

Մենք այն տեսակետն ենք փորձել հիմնավորել, որ Հայաստանի առաջին Հանրապետության գոյության շրջանում թեպետ ԱՄՆ-ի սենատի կողմից Հայաստանի մանդատը մերժվեց, բայց, այնուամենայնիվ, Սևրի պայմանագրով ստացավ իր բավարարվածությունը: Չնայած՝ բոլշևիկ-քեմալական դաշինքի առկայության պայմաններում այլևս անհնարին էր այն կյանքի կոչել: Ուրեմն դարձյալ չեն իրականանում արևմտահայ կամ առհասարակ հայ քաղաքական մտքի բաղձանքները:

Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումից հետո արևմտահայ քաղաքական միտքը փաստորեն ընթանում է այն ճանապարհով, որ արևմտահայության խնդիրը դարձյալ փորձում է առանձին ներկայացնել Արևելյան Հայաստանում տեղի ունեցած իրադարձություններից, և այդ մտքի առաջատարը դարձյալ Պողոս Նուբար փաշայի գլխավորած Ազգային պատվիրակությունն էր, որին հետևում էր Ա. Ահարոնյանի գլխավորած ՀՀ պատվիրակությունը, որը Խորհրդային Հայաստանի առկայության պայմաններում արդեն զրկվում էր գործունեության իրավական հիմքից:

Ատենախոսության մեջ մենք ցույց ենք տվել, որ 1921-1923 թթ. Եվրոպայում գործող հայկական պատվիրակությունները ցանկանում էին մեծ տերությունների օգնությամբ իրականացրած տեսնել Սևրի պայմանագիրը, այն դեպքում, երբ արդեն քեմալական շարժումը հաղթանակով էր պսակվում և նոր Թուրքիան ամենևին ցանկություն

չուներ վավերացնելու իրեն մասնատող այդ պայմանագիրը: Հայ քաղաքական միտքը դարձյալ սայթաքումներ էր ունենում այն առումով, որ չէր կարողանում խորանալ աշխարհաքաղաքական նոր գործընթացների մեջ, տերություններից պահանջում էր Վիլսոնյան սահմանների իրականացում Թուրքիայում, սահմաններ, որոնք եթե հրաշքով տրվեին էլ, ապա՝ դրանք պահպանելու ոչ մի երաշխիք չկար: Նույնիսկ Հայաստանի Հանրապետության գոյության շրջանում էին մեծ տերությունները կասկածում պատվիրակությունների պահանջած սահմաններով Հայաստանի պաշտպանության հնարավորության մեջ, ուր մնաց այնժամ, երբ Ռուսաստանը կրկին ակտիվացրել էր իր արևելյան քաղաքականությունը, ոչ մի տերություն չէր ստանձնել Հայաստանի մանդատը, իսկ Քեմալը միավորում էր Թուրքիան:

Հայ քաղաքական մտքի միամտությունն այն էր, որ առաջնորդվում էր այն հույսով, թե դաշնակիցները կկարողանան ստիպել Թուրքիային՝ ճանաչելու Սևրի պայմանագիրը, այն դեպքում, երբ վերջիններս գաղտնաբար ձգտում էին լեզու գտնել Քեմալի հետ՝ խորհրդային մակընթացության առաջն առնելու համար:

Լոնդոնի խորհրդաժողովն ակնհայտորեն ձախողվեց, քանզի հնարավոր չեղավ Թուրքիային պարտադրել պայմանագիր, երբ դաշնակիցներն արդեն հրաժարվել էին Սևրի պայմանագրից: Այստեղ Ֆրանսիան և Իտալիան, այլևս հոգնած պատերազմից և համոզվելով, որ թուրքերը չեն ընդունի պայմանագրի նոր տարբերակը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ նույն օրերին Մոսկվայում ընթացքի մեջ էր ռուս-թուրքական խորհրդաժողովը, որն ավարտվեց 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրով, հիմքեր ստեղծեցին Թուրքիայի հետ սեպարատ պայմանագիր կնքելու համար: Այս իրավիճակում անընդհատ Արևմտյան Հայաստանը պահանջող հայ քաղաքական գործիչներին հրամցվեց Թուրքիայի սահմաններում՝ տակավին չճշգրտված տարածքներում, «Ազգային օջախ» ստեղծելու սին գաղափարը, ուր իբրև թե պետք է համախմբվեր աշխարհացրիվ արևմտահայությունը: Բնականաբար, Թուրքիան դրան նույնպես դեմ կանգնեց, որովհետև Խորհրդային Ռուսաստանը նրան զիջել էր

Արևմտյան Հայաստանը, նաև՝ Կարսը, Արդահանը և Սուրմալուն: Նոր պատերազմից խուսափելու ցանկությամբ պայմանավորված, պատերազմ, որը նրանց այլևս չէր հրապուրում, դաշնակիցները ստիպված եղան հրաժարվելու իրենց պահանջներից և ընտրեցին, ի հակակշիռ Ռուսաստանի, Թուրքիային սիրաշահելու և նրան՝ իրենց համար ոչ կարևորը զիջելու արմատականը փրկելու մարտավարությունը: Արդյունքում Լոզանի խորհրդաժողովում նրանք չկարողացան իրականացնել «Ազգային օջախի» վերաբերյալ հայերի ձգտումները, որոնցով վերջիններս տարվել էին Լոնդոնի խորհրդաժողովից հետո՝ առանց լուրջ հաշվեկշռի ենթարկելու դրա կյանքի կոչելու հնարավորության հարցը: Լոզանի խորհրդաժողովին հաջորդած պայմանագրի մեջ կետ անգամ չկար Հայկական հարցի մասին, որը տերությունների քննարկման առարկա էր դարձել 1912 թ. սկսած, և որի լուծման համար հայ քաղաքական մտքի գրեթե 11-ամյա ադեգերումներն անպտուղ վերջացան:

**Ատենախոսության գիտական նորույթը:** Մեր ատենախոսության գիտական նորույթը նախ և առաջ այն է, որ քննական վերլուծաբանության մեթոդաբանությամբ շարադրելիս ջանացել ենք պատմագիտական նոր հայեցակարգեր ներկայացնել արևմտահայ քաղաքական մտքի զարգացման բավական տևական մի ժամանակահատվածի՝ 1912-1923 թթ. վերաբերյալ, բացահայտել այն խորքային գործընթացներն, որոնք նպաստեցին այդ մտքի Հայկական հարցի լուծման ուղղությամբ ձեռնարկած միջոցառումների ձախողմանը, վեր հանել սեփական սայթաքումներն այն դավադիր իրադարձությունների ետնախորքի վրա, որոնք տեղի ունեցան 1912 թ. հոկտեմբերից սկսած մինչև 1923 թ. հուլիսը՝ այսինքն Հայկական հարցի վերաբացումից մինչև փակումը:

**Թեմայի աղբյուրագիտական հիմքը և ուսումնասիրվածության աստիճանը:** Նախ և առաջ մեր ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել արխիվային սկզբնաղբյուրները, որոնք հիմնականում քաղել ենք Հայաստանի Ազգային Արխիվի և ԳԱԹ-ի համապատասխան ֆոնդերից[1]: Խնդրո առարկա ժամանակահատվածի աշխարհաքաղաքական

---

[1] Տե՛ս Հայաստանի Ազգային Արխիվ (ՀԱԱ), ֆ. 57, ց.2, գ. 107, թ. 16, ց. 5, գ. 53, թ. 65, ֆ. 200, ց. 2, գ. 114, թ. 1, ֆ. 222, ց. 1, գ. 1, թ. 28, ֆ. 282, ց. 1, գ. 4, թ. 1-2, գ. 45, թ.1, գ. 56, թ. 1, 16, 17,19, ֆ.370, ց. 3, գ.11, թ. 4, գ. 19, թ. 33, ֆ. 402, ց. 2, գ. 11, թ. 5, ֆ.430, ց. 1, գ. 26, թ. 19, գ. 729, թ. 6,

խորքային գործընթացներին ծանոթանալու նպատակով ուսումնասիրել ենք ժամանակաշրջանի դիվանագիտության պատմությանն առնչվող նյութեր և աշխատություններ, որոնցից պարզ է դառնում, թե ինչպիսի տեղ է գրավել Հայկական հարցը մեծ տերությունների քաղաքական հաշվարկներում 1912 թ.-ից մինչև 1923 թ.-ը: Սա կարևոր ենք համարել նաև այն տեսանկյունից, թե ինչքանով են ընկալելի եղել այդ տերությունների քաղաքական նպատակադրումները հայ քաղաքական մտքի ներկայացուցիչների համար, որքանով են եղել նրանք անկեղծ հայության նկատմամբ: Դա վերաբերում է մասնավորապես Ռուսաստանին, Անգլիային և Ֆրանսիային:

Բոլշևիկ-քեմալական դաշինքի հայ քաղաքական մտքի դիվանագիտական պարտության առումով ունեցած հետևանքների մասին խոր պատկերացում կազմելուն օգնում է փաստաթղթերի և նյութերի ժողովածուն, որը նույնպես ուսումնասիրել ենք մեր ատենախոսության հայեցակարգերը առավել հիմնավոր դարձնելու համար[2]:

Չնայած խորհրդային գաղափարախոսության պարտադրած միակողմանիությանը՝ խորհրդային Ռուսաստանի մասնավորապես 1917 թ. հաջորդած միջազգային հարաբերությունների պատմության վերաբերյալ առատ գրականություն է ստեղծվել ԽՍՀՄ գոյության տարիներին, որոնք մենք օգտագործել ենք որոշ վերապահությամբ[3]: Դրանք հատկապես գնահատելի են բոլշևիկ-քեմալական շարժման մասին ճշգրիտ պատկերացում կազմելու տեսանկյունից, առանց որի

---

գ.1357, թ. 2, 12, ֆ. 1457, ց.1, գ. 81ա, թ. 3, ց. 1, գ. 88, թ. 4, գ. 89, թ. 3, գ. 95, թ. 1- 15, Եղ. Չարենցի անվան ԳԱԹ-ի արխիվ ֆ. Վ. Մալեզյան, գ. 504, թ. 1, 3, գ. 550, թ.5, գ. 726, թ. 1, 5, գ. 735, թ. 1, գ. 736, թ. 1-2, գ. 738, թ. 1, գ. 739, թ. 221-222, գ. 747, թ. 1-2, նույնի՝ ֆ. Ա. Չոպանյան, գ. 2590, բաժ. 7, թ. 4, ֆ. Լ. Բաշալյան, գ. 119, թ. 1 և այլն:

[2]Տե՛ս Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Ե., 1960:

[3]Տե՛ս Армянский вопрос на Лозанской конференций, Тифлис, 1926, Масловский Е. В., Мировая война на Кавказском фронте 1914-1917 гг., Париж, 1933, Кемаль М., Путь новой Турции, т. 3, Москва, 1934, Корсун Н. Г., Первая мировая война на Кавказском фронте, М., 1946, История внешней политики СССР, 1917-1985 гг., в 2-х томах, под. ред. Громико А. А., Пономарев Б. Н., М., 1986, История внешней политики СССР, 1917-1970 гг., в 2-х т., под. ред. Пономарев Б. Н. и др., М., 1970, История внешней политики СССР, 1917-1966 гг., в 2-х т., авт. кол. Александров А. М., под. ред. Пономарев Б. Н. и др., М., 1966, Штейн Б. Е., "Русский вопрос" на Парижской мирной конференции, М., 1949, նույնի՝ "Русский вопрос" в 1920-1921 гг., М., 1958.

անհնար է համակողմանի ներկայացնել արևմտահայ քաղաքական մտքի ունեցած ձախողումների պատճառները:

Ճշմարիտ է, մենք հիմնական նպատակը չենք համարել բացահայտել այդ դաշինքի նրբերանգները, բայց դրա ուսումնասիրությունը կարևոր նշանակություն է ունեցել հայ քաղաքական մտքի դրսևորումների վերաբերյալ պատմագիտական հայեցակարգերի հիմնավորման համար:

Հիշատակված ժողովածուները նաև կարևոր սկզբնաղբյուր են հենց արևմտահայ քաղաքական մտքի զարգացման փուլերի վերաբերյալ պատկերացում կազմելու տեսանկյունից ևս, քանզի առատ տեղեկություններ են բովանդակում Հայկական հարցի մասին՝ սկսած 1912 թ. մինչև Լոզանի խորհրդաժողովը: Դրանցից հատկապես կուզենայինք առանձնացնել «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923 թթ.)» ժողովածուն և նմանաբնույթ մի քանի այլ ժողովածուներ[4], որոնք առատնյութ են պարունակում մեր ուսումնասիրության առկա ժամանակահատվածում Հայկական հարցի զարգացման ընթացքի, դրա շուրջ մեծ տերությունների և հայ հասարակական-քաղաքական շրջանակների ունեցած դիրքորոշումների ճշգրտման համար: Արևմտահայ քաղաքական մտքին առնչվող նյութերը մենք օգտագործել ենք ամենայն բծախնդրությամբ, փորձել ենք այնտեղից գիտական շրջանառության մեջ դնել փաստաթղթեր, որոնք ցայսօր ամբողջությամբ ուշադրության չեն արժանացել: Այս առումով հատկապես կուզենայինք առանձնացնել «Армения в документах государственного департамента США 1917-1920 гг.» ժողովածուն[5], որի նյութերի ուսումնասիրությունն էլ նպաստել է ճշմարիտ պատկերացում

[4]Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923 թթ), պրոֆ. Ջ. Ա. Կիրակոսյանի խմբագրությամբ, Ե., 1972, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբ. Գ. Գալոյան, Ե., 2000, Լազեան Գ., Հայաստանը եւ հայ դատը, հայ և ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Ե., 1991, Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Ե., 1991, Համահայկական խորհրդակցությունները (1912-1920 թթ.), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբ. Ա. Վիրաբյան, Ե., 2004, Великая Октябрьская революция и победа Советской власти в Армении (Сборник документов), Е., 1957, Армянскии вопрос на Лозаннскои конференции, Извлечения из протоколов, перевод М.Т., с предисловием П. Макинциана, Тифлис, 1926.

[5]Армения в документах государственного департамента США 1917-1920 гг., Составитель Г. Г. Махмурян, Е., 2011.

կազմելու ԱՄՆ-ի Հայկական հարցի նկատմամբ ունեցած դիրքորոշումների մասին և այն անկեղծության չափի, որն ուներ այս պետությունը Հայաստանի Հանրապետության տարածքների ընդլայնման վերաբերյալ:

Անգլիայի Հայկական հարցի նկատմամբ ունեցած դիրքորոշումների հստակեցման համար կարևոր հուշագրություն է թողել նրա վարչապետ Լլոյդ Ջորջը[6], որի ուսումնասիրությունը բացահայտում է նաև հայ քաղաքական մտքի խարխափումների և ունեցած ճախող ավարտի դրդապատճառները՝ մեծ տերությունների վեհաժողովներում:

Թեմայի շարադրման ժամանակ օգտագործել ենք նաև հուշագրական բնույթի աշխատություններ[7]:

Հայկական հարցին վերաբերող բազմաթիվ աշխատություններ և սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող հուշագրություններ են ստեղծվել Սփյուռքում, որոնք նույնպես ուսումնասիրել ենք մեր ատենախոսության մեջ[8]:

---

[6]George D. L., The Truth about the Pease Treaties, London, vol. 2, 1938, Джордж Л., Правда о мирных договорах, том 2, М., 1957.

[7]Սեպուհ, Էջեր իմ յուշէրէն, հ. Ա, Պոսթըն, 1925, Զաւեն արքեպիսկոպոս, Պատրիարքական յուշերս, վաւերագրեր եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947, Գարօ Ա., Ապրուած օրեր, Բոստըն, 1948, Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Է հատոր, Լօս Անճէլըս, 1952, Ավետեան Վ., Հայ ազատագրական ազգային յիսնամեայ (1870-1920) յուշամատեան եւ Զօր. Անդրանիկ, Փարիզ, 1954, Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. Բ, Պէյրութ, 1952, նույնի՝ Իմ յուշերը, հ. Գ, Գահիրէ, 1957, Տերտերյան Ի., Հայկական գոյամարտը, հ. 6, Թեհրան, 1957, Թագուորեան Գ., Երազանքի ու տագնապի տարիներ, Գահիրէ, 1961, Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Գ, Պէյրութ, 1963, նույնի՝ Կեանքի ուղիներով, հ. Ե, Պէյրութ, 1966, Մենակ Գ., Կեանքիս ուղին, Յուշեր Հայկական լեգէոնէն, Պէյրութ, 1968, Յուշամատեան Մուսա Լերան, Պէյրութ, 1970, Յուշեր Արմենակ Եկարեանի, Պէյրութ, 1985, Արամը, Մահուան յիսնամեակին առթիվ, Երևան, 1991, Գ. Զօհրապը ժամանակակիցների յուշերում եւ վկայութիւններում, Ե., 2006, Ա-Դո, Իմ հիշողությունները, Երևան, 2015:

[8]Սապահ-Գիւլեան, Սօցիալ իզմ եւ Հայրենիք, Պրակ 2-րդ, Փրավտէնս, 1916, Ահարոնեան Ա., Հայկական Հարցը խաղաղութեան ժողովին առջեւ, Բոստոն, 1919, Քաջազնունի Յ., Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, Վիեննա, 1923, Թերզիբաշյան Ա., Անդրանիկ, Փարիզ, 1942, Տերտերյան Ի., Երկերի ժողովածու, հ. 6, Թեհրան, 1957, Վրացեան Ս.,Հայաստանի Հանրապետութիւն, Բէյրութ, 1958, Պատմութիւն Ս.Դ.Հնչակեան կուսակցութեան 1887-1962, խմբագիր Ա. Կիտուր, հ. Ա, Պէյրութ, 1962, Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումը և զարգացումը, Բէյրութ, 1968, Մխիթարեան Ս.,Հայկական Հարցը, Փարիզ, 1968, Չորմիսեան Լ., Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, հ. Գ, Պէյրութ, 1975, Թորիկյան Շ., Հայկական հարցը եւ միջազգային օրենքը, Բէյրութ, 1976, Մսըրլեան Զ., Երեք դաշնագրեր, Պէյրութ, 1979, Չելեպեան Ա., Զօրավար Անդրանիկ եւ Հայ Յեղափոխական շարժումը, Լոս Անճելըս, 1984, Տասնապետեան Հ., Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ Ընդհ. ժողով (1890-1924), Աթէնք, 1988, Քիւրքճեան Յ., Ուրուագիծ Հ.Յ.Դ. պատմութեան 1919-1924 հնգամեակի, Աթէնք, 1988, Նասիպեան Ա., Բրիտանիա եւ Հայկական հարցը 1915-1923, Պէյրութ, 1994, Հայ ժողովրդի պատմություն, Թեհրան, Ա.թ., Պր., Արծրունի Վ., Հայ-տաճկական պատերազմը, Հայ սպայութիւնը, Շատախ, Ե., 2002, Mandelstam A.N., La Socie'le' des Nations et les Puissansces devant

Հիմնախնդրի համակողմանի լուսաբանման համար ուսումնասիրել ենք նաև հայրենական պատմագիտական աշխատություններ, որոնք լույս են տեսել խորհրդային շրջանում, ինչպես նաև ԽՍՀՄ անկումից հետո՝ նոր պատմագիտական հայեցակարգերի ձևավորման շնորհիվ: Դրանք մեզ օգնել են ճիշտ կողմնորոշվելու և ճշգրիտ լուսաբանելու մեր ատենախոսական թեմայի ծավալն ու ժամանակաշրջանը [9]:

---

le problem Arme'nien, 2 e'me e'd., Beyrut,1970, Salahi R.S., Turkich Diplomacy 1918-1923: Mustafa Kemal and the National Movement, London, 1975, Ter Minassian, La Question Armenienne, Paris, 1983, նույնի՝ La Republqe d'Armenie, Bruxelles, 1989, Hovannisian R.G., The Republic Armenia, vol. 2, 1919-1920, Berkeley-Los Angeles-London, 1982, vol. 3, From London To Sevres, February August 1920, Berkeley-Los Angeles-London, 1996, vol. 4, Between and Sickle: Partition and Sovietization, Berkeley-Los Angeles-London, 1996 և այլն:

[9] Տե՛ս Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Ե., 1967, Կէօրկիզեան Ա., Մեր ազգային գոյապայքարը 1915-1922-ի զուլումի տարիներուն, Պէյրութ, 1967, Արզումանյան Մ., Հայաստան 1914-1917, Ե., 1969, նույնի՝ Արհավիրքից վերածննունդ, Ե., 1973, Սահակյան Ռ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ., Ե., 1970, Խուրշուդյան Լ., Սովետական Ռուսաստանը և Հայկական հարցը, Ե., 1977, նույնի՝ Հայկական հարցը, Ե., 1995, նույնի՝ Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Ե., 2002, Նորագույն պատմություն 1918-1939 թթ., Ե., 1983, Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Ե., 1991, նույնի՝ Անդրանիկի ժամանակը, գիրք Ա և Բ, Ե., 1996, նույնի՝ Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 5, Ե., 2013, Սարուխանյան Ն., Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական քաղաքական մտքի և պատմագրության մեջ, Ե., 1997, Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Ե., 1997, Մելիքյան Վ., 1917 փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Ե., 1997, նույնի՝ Արևմտահայերի համագումարները և Հայկական հարցի փուլերը 1917-1923 թթ., Ե., 2007, նույնի՝ Հայութեան ինքնակազմակերպման խնդիրը եւ արևմտահայերի 3-րդ համագումարի անհրաժեշտութիւնը հայկական պահանջատիրութիւն, Ե., 2010, նույնի՝ Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում: Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը (1917 թ. նոյեմբեր - 1918 թ. փետրվար), Ե., 2010, Ձոհրաբյան Է., 1920 թ. Թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Ե., 1997, նույնի՝ Նախիջևանի հիմնահարցը և Հայաստանի «Դաշնակիցները» (1918 թ. Դեկտեմբեր - 1920 թ. ապրիլ), Ե., 2002, Մուրադյան Մ., Հայկական հարցը և ռուսական հասարակական-քաղաքական ու պատմագիտական միտքը, Ե., 1998, Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները (1917-1923 թթ.), Ե., 1999, Կացարով Գ., Հայաստանը և հայկական հարցը պատերազմից առաջ և հետո, Ե., 1999, Նազարյան Ա., Հայկական զորամասերի կազմավորումը Կովկասյան ճակատում (1914-1918 թվականներ), Ե., 1999, Սարդարյան Կ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ., Ե., 2002, Հարությունյան Ա., Սևրը և հայ հասարակական-քաղաքական միտքը, Ե., 2004, Խուդինյան Գ., Հակոբյան Ա., ՀՅ Դաշնակցության պատմության խեղաթյուրման վերջին փորձերը, Ե., 2005, Հակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Ե., 2010, նույնի՝ ՀՍԽՀ 1921 թ. ներքաղաքական կյանքի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ, Ե., 2014, Սահակյան Ռ., Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Ե., 2005, նույնի՝ Ինքնապաշտպանական կռիվները Արևմտյան Հայաստանում 1915 թվականին և ՀՅ Դաշնակցությունը, Ե., 2010, Սահակյան Ռ., Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը (1914 թ. Հուլիս - 1917 թ. փետրվար), Ե., 2015, Ներսիսեան Ա., Կարո Սասունի, Ե., 2004, նույնի՝ Ավետիք Սահակյան (Հայր Աբրահամ), Ե., 2006, նույնի՝ Ռուբէն, Ե., 2007, նույնի՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պատմութիւն (1908-1918), Բէյրութ, 2013, Պողոսյան Ս., Պօղոս Նուբար փաշա. Ազգային գործիչը, Ե. 2004, Ստեփանյան Մ., Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը առաջին աշխարհամարտի և հայոց ցեղասպանության ժամանակաշրջանում, Ե., 2005, Ղամբարյան Ա., Հայկական հարցը

Որոշ հայեցակետեր հիմնավորելու համար նպատակահարմար ենք գտել նաև օգտագործել Գայանե Մախմուրյանի դոկտորական ատենախոսությունը, ինչպես նաև Ռ. Խուրշուդյանի և Մ. Մարտիրոսյանի, Ռ. Սահակյանի ատենախոսությունների սեղմագրերը և միջազգային գիտաժողովի և զեկուցումների այլ ժողովածուներ[10]:

Առանձին նշենք Նիկողայոս Ադոնցի հաշվետվություններից մեկը, ինչպես նաև նրա երկերի վեցհատորյակի վերջին հատորը, որն օգնում է առավել լայն պատկերացում կազմել արևմտահայ քաղաքական մտքի ուղղվածությունների վերաբերյալ Հայկական հարցի վերաբացման շրջանում[11]:

Արևմտահայ քաղաքական մտքի անվանի ներկայացուցիչների հայացքների լուսաբանման տեսանկյունից այս հաշվետվությունն ունի սկզբնաղբյուրային նշանակություն, քանի որ ներկայացնում է այն խոհերը, որոնք ունեին նրանք Հայկական հարցի լուծման շուրջ: Ադոնցի հաշվետվությունից բացահայտվում է մի պարզ

1912-1914 թթ. և Մեծ Բրիտանիան, Ե., 2006, Պապյան Ա., Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները, Ե., 2007, Բոյաջյան Հ., Պողոս Նուբար փաշան և բարենորոգումների խնդիրը Արևմտյան Հայաստանում 1912-1914 թթ, Ե., 2010, Ս. Էջմիածինը և հայոց ցեղասպանությունը, հրատ. պատր. Ա. Հարությունյան, Ս. Էջմիածին, 2010, Ղազարյան Հ., Մոսկվայի և Կարսի 1921 թվականի պայմանագրերն ու նրանց ողբերգական դերը հայ ժողովրդի ճակատագրում, Ե., 2010, նույնի՝ Սևրի պայմանագիրը և Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանման վերաբերյալ, գիրք առաջին և գիրք երկրորդ, Ե., 2012, Հովհաննիսյան Գ., Հնչակյան կուսակցության պատմություն (1887-1915 թթ.), Ե., 2012, Սարվազյան Լ., Մաղաքիա Օրմանյան, Երևան, Ե., 2013, Саакян Р., Франко-турецкие отношения и Киликиа в 1918-1923 гг, Е., 1986, Кочар М., Армяно-турецкие общественно политические отношения и армянский вопрос в конце 19 начале 20 веков, Е., 1988, Тунян В., Младотурки и армянский вопрос, т. 3, Е., 2010, նույնի՝ Политика самодержавия России в Закавказье 19-нач. 20 вв., часть 6, Е., 2010, նույնի՝ Армянский вопрос: мифотворческий аспект, Е., 2015 և այլն:

[10] Хуршудян Р., Критический анализ политики и идеологии армянской мелкобуржуазной партии гнчак в период борьбы трудящихся закавказья за победу и упрочение советской власти (1917-1921 гг.), Автореферат, диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Е., 1981, Мартиросян М., Армянский вопрос и русская дипломатия 1912-1914 гг., Автореферат, диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Е., 1990, Մախմուրյան Գ., 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետությունը Մեծ Բրիտանիայի քաղաքականության մեջ, Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Ե., 2009, Սահակյան Ռ., Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը (1914 թ. Հուլիս - 1917 թ. փետրվար), Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Ե., 2012, Գիտագործնական միջազգային գիտաժողով «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրը». 18-19 ապրիլի 2008: Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրը, Կիպրոս-Նիկոսիա. 18-19 ապրիլի 2008: Գիտական զեկուցումների ժողովածու, Ե., 2009:

[11] Ադոնց Ն., Երկեր, Չ, Հրապարակախոսություն, Ե., 2012, տե՛ս «Հայկական հարցի շուրջ Թուրքիայում», էջ 92-121:

ճշմարտություն, այն է՝ Հայկական հարցի վերաբացման շրջանում արևմտահայ և արևելահայ քաղաքական միտքը միաձուլված էր:

Ատենախոսությունը շարադրելիս ուսումնասիրել ենք թե՛ հայրենական և թե՛ Սփյուռքում լույս տեսած պարբերական մամուլի նյութերը[12]: Այդ նյութերը հոդվածներ են, տեղեկատվություններ, ժողովների արձանագրություններ և այլն: Դրանք և հրատարակված աղբյուրներն ու աշխատություններն օգտագործել ենք խիստ նպատակային, մեջբերել ենք այն նյութերը միայն, որոնք կարևորագույն նշանակություն ունեն պատմագիտական հայեցակարգերի մշակման, արևմտահայ քաղաքական մտքի զարգացման տրամաբանության հստակեցման տեսանկյուններից:

[12]Տե՛ս «Նորք», Ե., 2006, թիվ 3, «Մշակ», Թիֆլիս, 1914, նոյեմբերի 17, թիվ 205, նույն տեղում, 1914, նոյեմբերի 10, թիվ 229, «Ակունք», Գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2011, թիվ 1, «Հայաստան» օրաթերթ, Թիֆլիս, 1917, մայիսի 7, թիւ 18, «Վան-Տոսպ», Վան, 1914, թիւ 40-89, «Հորիզոն», Թիֆլիս, 1916, ապրիլի 7, թիւ 78, «Հորիզոն», Թիֆլիս, 1917, մայիսի 17, թիվ 101, նույնի 1917, մայիսի 20, թիւ 104, 1917, հունիսի 18, թիւ 126, 1917, յունուարի 11, թիւ 6, «Նայիրի», Բեյրութ, 1969, ԺԶ տարի, փետրվարի 2, թիւ 35 և այլն, «Յեղափոխական ալպոմ», Պէյրութ, 1965, Հ. Ե, թիւ 10 (58), «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1922, նոյեմբեր, թիւ 1, նույնի 1923, փետրվար, թիւ 4, նույնի ապրիլ, թիվ 6, 1924, յունիս, թիւ 8, յուլիս, թիւ 9, սեպտեմբեր, թիւ 11, նոյեմբեր, թիւ 1(25), նույնի 1925, մայիս, թիւ 7(31), նույնի 1955, դեկտեմբեր, թիվ 12 (358), 1963, յուլիս, թիւ 7, «Բանբեր Հայաստանի արխիվների», Ե., 1972, թիւ 3 (34), նույնի 1990, թիւ 1, «Հայկազեան Հայագիտական Հանդէս», Պէյրութ, 1977-78, հ. Զ., նույնի 2015, հատ. 35, «Բագին», Պէյրութ, 2007, Սեպտեմբեր, թիւ 3, «Դրօշակ», Ե., 2000, յունիս, թիւ 6 (1568), նույնի 2000, դեկտ., թիւ 1 (1569), «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 2002, թիվ 2 (606), նույնի 2005, թիվ 1, «Պատմա-բանասիրական հանդես», Ե., 2006, փետրվար, թիվ 2 (172), «Բանբեր Հայաստանի արխիվների», Ե., 2006, թիվ 1 (107), նույնի 2014, թիվ 122 և այլն:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

### 1.1.**Արևմտահայ քաղաքական միտքը Հայկական հարցի վերաբացման շրջանում (1912 – 1914 թթ.)**

1911 թ. թուրք-իտալական և 1912 թ. բալկանյան պատերազմները նոր հույսեր արթնացրին արևելահայերի և արևմտահայերի շրջանում, որոնք, հաշվի առնելով ներքին և արտաքին նպաստավոր նախապայմանները, 1912 թ. աշնանը նորից բարձրացրին Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածն իրականացնելու խնդիրը: Հայկական հարցը նորից դարձավ մեծ տերությունների միջազգային դիվանագիտության խնդրո առարկա, որոնք գնում էին աշխարհի վերաձևմանը, իսկ նրանց քաղաքական սիրախաղը հայության նկատմամբ վերջնականապես ավարտվեց Արևմտյան Հայաստանի բնիկ հայ տարրի դատարկմամբ:

Հայկական հարցի վերաբացման շրջանում Ռուսաստանը հանդես եկավ նախաձեռնողի և պաշտպանի դերում՝ ելնելով իր քաղաքական և

տնտեսական շահերից, քանի որ 1878 թ. Բեռլինում կորցրել էր Սան-Ստեֆանոյի պայմանագրով ձեռք բերածը: Թուրքիայի հետ հնարավոր պատերազմի դեպքում Ռուսաստանը փորձում էր իր կողմը գրավել հայերին՝ իբրև քրիստոնյա փոքրամասնության և նրանց ծառայեցնել Թուրքիայի դեմ իր դարավոր խնդիրների լուծմանը: Այդ մասին Ջ. Կիրակոսյանը նշում է, որ «այժմ ցարական դիվանագիտությունն ուզում էր հայոց հարցն իր ձեռքում դարձնել մի մշտական գործիք ներգործելու համար թուրքաց կառավարության վրա»[13]:

Երբ 1912 թ. Ռուսաստանի նախաձեռնությամբ բարձրացվեց Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրագործման խնդիրը, դրանով տարվեցին հայ դաշնակցականները, հնչակյանները և ռամկավարները, ինչպես նաև Կ. Պոլսի հայոց Պատրիարքարանը[14]:

1912 թ. սեպտեմբերի 19-ին հայ հասարակական-քաղաքական տարբեր շրջանակների մասնակցությամբ Թիֆլիսում հրավիրված ժողովում որոշում կայացվեց դիմել ցարական կառավարությանը՝ Արևմտյան Հայաստանի ազատագրման համար: Դրան հաջորդեց Գևորգ Տփխիսեցի կաթողիկոսի դիմումը փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովին, ուր խնդրում էր օգնության ձեռք մեկնել արևմտահայությանը: «2 հոկտեմբերի 1912» թվագրված դիմումում կաթողիկոսը մասնավորապես գրում է. «Թուրքիայի անատոլիական վիլայեթներում և Կիլիկիայում հայերը անպատիժ կերպով ենթարկվում են անլուր հալածանքների նրանց սպանում են, թալանում, նրանց կանանց ու աղջիկներին տանում են իրենց հարեմները և շատերին բռնությամբ իսլամացնում են: Հայոց պատրիարքը բազմիցս դիմել է Բարձր Դռանը արդարադատության և իր հոտի պաշտպանության համար, բայց ստանալով միայն փուչ խոստումներ՝ իր հայացքը իմ միջոցով հառում է ռուս մեծ ժողովրդին ու մեր մեծազոր թագավորին և նորին մեծությունից է սպասում պաշտպանություն և հովանավորություն ....»[15]:

---

[13]Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Ե., 1967, էջ 150:
[14]Տե՛ս Ստեփանյան Մ., Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը Առաջին աշխարհամարտի և հայոց ցեղասպանության ժամանակաշրջանում, Ե., 2005, էջ 30:
[15]Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Ե., 1991, էջ 283:

Կաթողիկոսը կրկին հույսեր էր փայփայում ռուսների հետ կապված, որոնց իրականացման հիմքերը խարխուլ էին և դժվար է համաձայնել այն տեսակետին, թե «.... ո՛չ մի կաթողիկոսի օրօք հայկական հարցն այնքան յուսալի ընթացքի մէջ չէ եղել, ինչպէս ներկայ Վեհափառ Գէորգ Ե. Կաթողիկոսի օրօք, շնորհիւ ռուսաց բարեխնամ կառավարութեան գործ դրած եռանդուն միջոցների եւ Վեհափառ Հայրապետի հայրական խոհուն հոգացողութեանց ....»[16]:

Արևմտահայության ծանր վիճակի մասին է վկայում նաև Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Նիկոլայ Գիրսը 1912 թվականի նոյեմբերի 26-ին Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությանն ուղղած իր զեկուցագրերից մեկում, որտեղ ասում է. «Համիդյան վարչակարգի կողմից հայերի նկատմամբ իրականացված դաժան ու զանգվածային կոտորածներից հետո, երիտթուրքերի կառավարման ժամանակ հայության վիճակը անելանելի դարձավ: Հայ բնակչության նկատմամբ բռնի մահմեդականացման, ավազակային հարձակումների, կոտորածների ու թալանի կազմակերպիչներն ու իրականացնողները օրենքի և իշխանությունների առջև երբեք պատասխանատվություն չեն կրում և չեն պատժվում»[17]:

Ավելորդ համարելով նոր դիմումագրերի և աղերսագրերի մեջբերումները, կցանկանայինք միայն ուշադրություն սևեռել մի կարևորագույն հարցի շուրջ. ցարիզմը կաթողիկոսի միջոցով ցանկանում էր վերստին իր կողմը գրավել արևմտահայությանը, ինչը նշանակում է, որ 1912-14 թթ. արևմտահայ քաղաքական միտքը դեպի Ռուսաստան ուղղորդելու գործում իրենց դերակատարումն են ունեցել արևելահայ ռուսամետ գործիչները: Ընդ որում, ցարիզմն այդ ամենն անում էր նաև ելնելով այն մտավախությունից, որ եվրոպական տերությունները, որպես Թուրքիայի դեմ խաղաքարտ, կարող էին իրենց ձեռքը վերցնել Հայկական հարցն առաջ քաշելու «պարտականությունը», ինչը երևում է Վորոնցով-Դաշկովի՝ ցարին հասցեագրած մի նամակից, որտեղ նա շեշտում էր, որ այդ հարցում եվրոպական միջամտությունը դառնում էր անխուսափելի և խորհուրդ էր տալիս շտապել, «որպեսզի նախաձեռնությունը ձեռքից

[16]Ս.Էջմիածինը և հայոց ցեղասպանությունը, հրատ. պատր. Ա. Հարությունյան, Ս.Էջմիածին, 2010, էջ 372:

[17]Ստեփանյան Մ., նշվ. աշխ., էջ 17:

դուրս չընկնի»[18]: Ըստ նրա՝ հակառակ դեպքում Ռուսաստանի հեղինակությանը մեծ հարված կհասցվի և կստիպի հայերին «մեկընդմիշտ ձեռք քաշել ցարի հետ հույսերը կապելուց» և որոնել այլ պաշտպանություն, այն դեպքում, երբ Ռուսաստանին անհրաժեշտ էր ունենալ «մի համակիր ժողովուրդ այն մարզերում, որոնք իրերի ներկա պայմաններում կամա թե ակամա հեշտությամբ կարող են գտնվել մեր ռազմական գործողությունների թատերաբեմում»[19]:

Ինչպես համոզվում ենք, ցարիզմի համար կարևորը ոչ թե հայերի փրկությունն էր, այլ նրանց օգտագործումը հօգուտ իր քաղաքական շահերի:

Իսկ ինչպիսի՞ դիրքորոշում ուներ Անգլիան Հայկական խնդրի նկատմամբ: Ակնհայտ էր նրա արտգործնախարարության՝ արտաքնապես շահագրգռվածություն չցուցաբերելու միտումը: Դրան հակառակ՝ Անգլիայի առաջադեմ հանրությունը, ի դեմս պառլամենտականներ Ն. Բաքսթոնի և Ա. Ուիլյամսի, գտնում էին, որ անգլիական կառավարությունն ակտիվություն պետք է դրսևորի հայկական բարենորոգումների լուծման խնդրում՝ ելնելով ոչ միայն մարդասիրական գաղափարներից, այլ նաև Անգլիայի «բարի» համբավից, քանի որ 30 տարի առաջ հենց Անգլիան էր, որ խոչընդոտեց Հայկական խնդրի լուծմանը: Ըստ ՈՒիլյամսի, տվյալ խնդրի լուծումը կարող էր նաև ազդել մեծ տերությունների միջև խաղաղության հաստատման վրա[20]:

Մինչև արևմտահայ քաղաքական մտքի ուղղվածություններին անդրադառնալը, որոնք հիմնականում ընթանում էին արևելահայ քաղաքական մտքի մատնանշած ուղով, ավելորդ չենք համարում նշել, որ շուտով ցարական կառավարությունը Թիֆլիսում ստեղծեց իր քաղաքական նպատակներն ընդհանրությանը հասցնելու հայկական քաղաքական մարմին՝ հանձին Ազգային Բյուրոյի և Եվրոպայում Հայկական հարցին հետամուտ հանդիսացող հայոց Ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ: Ազգային պատվիրակության ստեղծման վերաբերյալ բավական

---

[18]Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 283:
[19]Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ 6, Ե., 1981, էջ 520-521:
[20]Տե՛ս Ղամբարյան Ա., Հայկական Հարցը 1912-1914 թթ. և Մեծ Բրիտանիան, Ե., 2006, էջ 212-213:

հետաքրքիր տեղեկություն է հաղորդում Վ. Մալեզյանը, որը գրում է. «Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսը բարեհաճեցաւ Ազգային Պատգամաւորութիւն մը կազմել, որուն նախագահութիւնը պատիւ ըրաւ ինծի վստահիլ եւ որուն միւս անդամներն են՝ Գեր. Գ. Եպիսկ. Իւթիւճեան, Վսեմ. Եագուպ Փաշա Արթին, Տեարք Մինաս Չերազ եւ Յ. Ն. Մոստիչեան»[21]:

Ըստ նրա, «.... առաջարկուեցաւ Ն. Վեհափառութեան որ Հայկական դատին հետապնդումը վստահուի Պօղոս Նուպար Փաշայի հեղինակաւոր նախաձեռնութեան, եւ վերջնոյն մենք եւս ստիպողաբար դիմումներ կատարեցինք որ անվարան այդ գործին գլուխը անցնի.... Նամակներ ուղղեցի նախկին Պատրիարք Օրմանեան Սրբազանին՝ որ Պօղոս փաշայի կողքին իր ազգանուէր ծառայութիւնը մատուցանէ, կազմուելիք Պատուիրակութեան մաս կազմելով»[22]:

Պատասխանատու այդ պաշտոնը ստանձնելուց հետո Պողոս Նուբարը դարձավ ամենաժողովրդական հայը: Նրա մասին Երուանդ Օտյանը գրում է. «Ալ լոկ հարուստ բարերար մը ըլլալէ դադրեցաւ անիկա ու դարձաւ յուսոյ փարոս մը, դէպի ուր ուղղուեցան ամէնուն աչքերը»[23]: Պատվիրակության ստեղծումը Թուրքիայի հետ հնարավոր պատերազմից առաջ նպատակային քայլ էր ցարական իշխանությունների կողմից՝ հայությանը դեպի իր քաղաքական լաստանավը կողմնորոշելու համար: Իսկ հայությունը գնաց դրան՝ փոխանակ ընտրելու չեզոքության և դեպքերի ընթացքին լուռ հետևելու մարտավարությունը: Դրանում համոզվելու համար բավական է մեջբերել 1912 թ. նոյեմբերին Թիֆլիսում հրավիրված Ազգային Բյուրոյի հիմնադիր համագումարում ընդունված որոշումներից (մինչ այդ՝ դեռևս հոկտեմբերին, ստեղծվել էր յոթ հոգուց բաղկացած ժամանակավոր Բյուրո) մեկը, ուր մասնավորապես կարդում ենք. «Բյուրոյի քաղաքականությունը կարելի է ամփոփել հետևյալ հակիրճ բանաձևերով. մեր գործունեությունը հարմարեցնել ռուսաց քաղաքականությանը, ունենալ պահանջների

---

[21]Եղ. Չարենցի անվան ԳԱԹ-ի արխիվ, ֆ. Վ. Մալեզյան, գ. 738, թ. 1:
[22]Նույն տեղում, գ. 739, թ. 221-222:
[23]Պօղոսեան Ս., Պողոս Նուպարը և հայկական հարցի զարգացումները 1912-1921 թթ., Հանդէս ամսօրեայ, Վիեննա-Երևան, 2005, թիւ 1-12, էջ 416:

մի ծրագիր միայն, համարձակ և ներդաշնակ գործունեություն առաջ բերել բոլոր կենտրոններում»[24] (ընդգծումը` Հ. Ս.):

Ինչպես պարզ երևում է, հատկապես մեր ընդգծած տողերից, նորաստեղծ այս մարմինն ամբողջությամբ դառնում էր ռուսական քաղաքականության կցորդը: Նույն փաստաթղթում մի հետաքրքիր տեղեկություն կա, որը վերաբերում է արևմտահայերի ինքնապաշտպանության հարցի նկատմամբ ցարիզմի ունեցած վերաբերմունքին: Այնտեղից իմանում ենք, որ Բյուրոն ինքնապաշտպանության գործը պետք է ձեռնարկեր միայն ռուսական կառավարության օժանդակությամբ և գիտությամբ: Իսկ այդ առումով հարցումներին կառավարությունը պատասխանել էր, թե «կառավարությունը ամեն միջոց ձեռք է առել հայերի ապահովության համար և որ ուրեմն պետք չի տեսնում օժանդակելու ինքնապաշտպանության»[25]:

Կարծում ենք, որ Ռուսաստանին ամենևին ձեռնտու չէր արևմտահայերի ինքնապաշտպանության կազմակերպումը, որը բնականաբար չէր բխում նրա շահերից:

Արևմտահայերի հոգևոր, ինչպես նաև քաղաքական մարմինը` Կ. Պոլսի Պատրիարքարանը, թեպետ զգուշությամբ, սակայն դարձյալ կողմնորոշվում էր դեպի Ռուսաստանը և նրա դաշնակիցները: Այսպես, Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Գիրսին հասցեագրված իր 1913 թ. մայիսի 20-ի նամակում պատրիարք Հովհաննես Արշարունին մասնավորապես գրում էր. «Հալեպից մինչև Վանա լճի ափը հայ ժողովուրդը ապրում է վաղվա օրվա հանդեպ մշտական վախի մեջ: Նորից հայ ընտանիքների երկար շարանները ձգվում են դեպի սահմանը: Հայերն ստիպված են կտրել այն թելերը, որոնցով պատմության դարերը և համառ աշխատանքի դարերը իրենց կապել են այս հողի հետ: Ի նկատի ունենալով, որ հայերի այսպիսի վիճակը դարձել է անտանելի, ինչպես և` մեր դեմարշների ապարդյունությունը, պատրիարքը չկորցնելով Հայաստանում բարենորոգումների հարցի լուծման հույսը` դրա հետ միասին Ձերդ գերազանցությանը խնդրում է ձեռք առնել այնպիսի միջոցներ, ինչպիսիք դուք տեղին կհամարեք, որպեսզի վերացվի

[24]Հայաստանի Ազգային Արխիվ (ՀԱԱ), ֆ. 222, ց. 1, գ. 1, թ. 28:
[25]Նույն տեղում, փաստաթուղթն ամբողջությամբ տե՛ս թթ. 25-28:

Անատոլիայում զանգվածային անխուսափելի կոտորածի վտանգը ….»[26]:

Հարկավ, այս և նմանատիպ այլ գրությունները պետք է պայմանավորել մի կողմից Պատրիարքարանի անորոշությամբ և ստեղծված իրավիճակում ելքեր գտնելու անհրաժեշտությամբ, մյուս կողմից անհրաժեշտ էր հաշվի առնել թե՛ ռուսական և թե՛ եվրոպական տերությունների հայության նկատմամբ որդեգրած դիրքորոշումների պատմական փորձը: Բավական է նշել, որ 1912 թ. դեկտեմբերի 21-ին տեղի է ունենում Կ. Պոլսի հայոց Ազգային ժողովի դռնփակ նիստ, որի ատենապետ Ս. Գարայանը և դաշնակցական գործիչ Վահան Փափազյանը (Կոմս) հայտարարում են, թե «այլեւս սպառած են բոլոր միջոցները, ու քողարկուած ձեւով առաջադրեցին հայ ժողովրդի այսուհետեւ հետեւելիք ուղեգիծը, այսինքն նորէն միջազգային սեղանի վրայ հանել **հայ կական հարցը** ….»[27]:

Այս նիստից հետո պատրիարքարանի խառը ժողովն ընտրում է Հայկական հարցին հետամուտ եղող քաղաքական մի մարմին, նրան տալով լիազորություններ, արտաքին բանակցությունների համար` կապված բարենորոգումների խնդրի հետ: Այս մարմինը կոչվում է Ապահովության խորհուրդ, որի մեջ մտնում են Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանը (նախագահ), Գ. վարդապետ Պալաքյանը, Ստեփան Գարայանը, Ոսկան Մարտիկյանը, Լևոն Տեմիրճիպաշյանը, Մուրադ Պոյաճյանը և Վահան Փափազյանը: Ստացվում է, որ «թե՛ արևմտահայ և թե՛ արևելահայ հոգևոր և քաղաքական գործիչները իրարից անկախ բռնել էին նույն ճանապարհը»[28]: Այսինքն, նրանք ամբողջովին շրջադարձ էին կատարել դեպի մեծ տերությունները:

Այսպիսով արևմտահայ քաղաքական ղեկավարները, որոշ բացառությամբ, ելնելով արևմտահայության անհուսալի ծանր վիճակից, որդեգրել էին հակաթուրքական կեցվածք: Անհրաժեշտ է շեշտել, որ այս առումով միավորված էին Պատրիարքարանն ու՛

[26]Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 316:
[27]Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. երկրորդ, Պէյրութ, 1952, էջ 182:
[28]Ներսիսյան Ա., Հայկական հարցի վերաբացումը 1912-14 թթ., տե՛ս «Նորք», Ե., 2006, թիվ 3, էջ 153:

դաշնակցություն կուսակցությունը, որը դեռևս 1912 թ. մայիսի 5-ից խզել էր իր հարաբերությունները իթթիհատի հետ[29]:

Հայ շատ քաղաքական գործիչներ, դրան հակառակ, ցանկանում էին հայոց փրկության ուղին որոնել ցարական Ռուսաստանի մեջ: Այսպես, հայտնի գործիչ Մ. Պապաջանովը հայտարարում է, որ Կովկասը ռուսական կայսրության անբաժանելի մասն է, որտեղ հայերը երջանիկ են ու գոհ իրենց տրված վարչակարգից և մտածում են միայն երկրի ընդհանուր զարգացման մասին, իսկ Ռուսաստանի և ամբողջ աշխարհի հայերի պահանջը վերաբերում է միայն վեց վիլայեթներին ու Կիլիկիային[30]:

Իսկ 1913 թ. փետրվարի 23-ին թվագրված Ա. Չոպանյանին ուղղված նամակում, Սամսոն Հարությունյանը գրում է, որ դիմել է Փարիզի հայկական մասնախմբի մեծարգո նախագահին, հայտնելով, որ անհրաժեշտ է ստեղծել մի մարմին, որը կկարողանա կապ ստեղծել հայոց օգտին գործող բոլոր մարմինների հետ: Նա գտնում է, որ Փարիզի պատվիրակությունը պետք է ջանա նպաստավոր տրամադրություն ստեղծել մեծ տերությունների շրջանում, որպեսզի վերջիններս Ռուսաստանին տան բարենորոգումներ սկսելու իրավունք: Կ. Պոլսի պատրիարքարանի և Փարիզի պատվիրակության նախագծերը պետք է այնպես մշակվեն, որ ընդունելի լինեն Ռուսաստանի կողմից: Փաստաթղթում կարդում ենք, որ Պողոս Նուբար փաշան այդ ծրագրերը ներկայացրել էր տեղի ռուսաց դեսպան Իզվոլսկուն. մի քայլ, որը հայ ազգաբնակչության համար վտանգավոր էր, քանի որ դեռ չէր արժանացել Նորին վեհափառության հավանությանը[31]:

Սակայն Կ. Պոլսի ռուսական դեսպանատան գլխավոր թարգման՝ Ա. Մանդելշտամը[32], որին հանձնարարվել էր կազմել հայկական բարենորոգումների նախագիծ[33], հենվելով Պատրիարքարանի ներկայացրած նյութերի և հայկական նախորդ ծրագրերի վրա,

---

[29] Տե՛ս Հ. Յ. Դաշնակցութեան յոթերորդ ընդհանուր ժողովի որոշումները, Ա.տ., 1913, էջ 7:

[30] Տե՛ս Եղ. Չարենցի անվան ԳԱԹ-ի արխիվ ֆ. Վ. Մալեզյան, գ. 747, թ. 1-2:

[31] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 282, ց. 1, գ. 4, թ. 1-2:

[32] Նրա գործունեության մասին տե՛ս Мартиросян М., Армянский вопрос и русская дипломатия 1912-1914 гг., Автореферат, диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Е., 1990.

[33] Տե՛ս Կիրակոսյան Ջ., նշվ. աշխ., էջ 144-145:

մշակում է 1913 թ. հունիսի 8-ի նախագիծը, որի մեջ խոսք անգամ չկար Արևմտյան Հայաստանի անջատման և հայկական անկախ պետության ստեղծման մասին:

1913 թ. հուլիսի 3-24-ը Կ. Պոլսի ավստրիական դեսպանատանը մեծ տերությունների լիազոր-ներկայացուցիչները որոշեցին քննարկել հայկական հարցը: Ռուսական նախագիծը տապալելու նպատակով և գերմանացիների խորհրդով` թուրքերն առաջ քաշեցին հապճեպ կազմված իրենց նախագիծը[34]:

Պողոս Նուբարը Ֆրանսիայի արտգործնախարար Դելկասեին ուղղված հուշագրում ասում է, որ Ռուսական կառավարության կողմից վերջերս հրատարակված Նարնջագույն Գիրքը Հայաստանի մասին ցույց է տալիս հատկապես Գերմանիայի ընդդիմության պատճառով առաջացած մեծ դժվարությունները, որոնք Անտանտայի գերտերությունները պետք է հաղթահարեն: Այդ դեպքում միայն, ըստ նրա, հայերը հույս կունենան, որ օսմանյան կառավարությունը կկատարի իր պարտավորությունները և բարեփոխումների իրականացմամբ վերջնականապես վերջ կդրվի հալածանքներին և կոտորածներին, և այդժամ միայն անվտանգություն և արդարություն պահանջող այդ դժբախտ բնակչությունը կկարողանա ի վերջո ապրել խաղաղ[35]:

Ինչպես նշում է Վ. Փափազյանը, Կ. Պոլսի Ազգ. Կենտ. վարչությունը նույնպես սերտ հարաբերություններ էր պահպանում անգլիական, ֆրանսիական և գերմանական դեսպանատների հետ: Իսկ Խորհրդարանի երեսփոխաններից «.... ամենէն անվերապահ, եռանդուն եւ նուիրուած ոյժը Գ. Զօհրապն էր, որ մեծ հեղինակութիւն եւ յարգանք կը վայելէր միջազգային քաղաքական-դիւանագիտական շրջաններուն մէջ. բոլոր դուռները դիւրին կը բացուէին անոր առջեւ»[36]:

Գ. Զոհրապը շփման մեջ էր նաև Կ. Պոլսի ռուսական դեսպանատան առաջին թարգման, իրավագետ և խորհրդական` Ա. Մանդելշտամի հետ[37]:

---

[34] Տե՛ս Կացարով Գ., Հայաստանը և հայկական հարցը պատերազմից առաջ և հետո, Ե., 1999, էջ 28:
[35] Տե՛ս Եղ. Չարենցի անվան ԳԱԹ-ի արխիվ, ֆ. Վ. Մալեզյան, գ. 735, թ. 1:
[36] Գ. Զօհրապը ժամանակակիցների յուշերում եւ վկայութիւններում, Ե., 2006, էջ 197:
[37] Տե՛ս նույն տեղում, էջ 205:

Կ. Պոլսի ռուսական դեսպան Գիրսը 1913 թ. օգոստոսին իր գաղտնի հեռագրում ասում է, որ իր մոտ եկել էր հայտնի հայ գործիչ Գ. Զոհրապը՝ Պատրիարքության անունից երախտագիտությունը հայտնելու կայսերական կառավարությանը՝ հայ ժողովրդի հանդեպ ցուցաբերած հոգածության համար: Զոհրապը տեղեկացնում է գերմանացի Լեփսիուսի և ներքին գործոց նախարար Թալեաթի հետ ունեցած իր խոսակցության մասին, որի ընթացքում Լեփսիուսը հայտնել է, թե Կ. Պոլսի գերմանական դեսպանության անունից ինքը լիազորված է հայերին առաջարկություններ անել, որոնք ենթադրում են բարենորոգումներ, փոխզիջումներ՝ ռուսական ու թուրքական նախագծերի հեղինակների միջև: Հայաստանը բաժանվում էր երկու սեկտորի՝ պահպանելով վիլայեթների կառուցվածքը: Առաջին սեկտորի մեջ մտնում էին Տրապիզոնը, Սվազը, Էրզրումը, իսկ երկրորդի մեջ՝ Խարբերդը, Բիթլիսը և Դիարբեքիրը: Գերմանիան այլևս չի ընդդիմանում տերությունների համաձայնությամբ սեկտորների երկու գլխավոր տեսուչների նշանակմանը: Տեղեկանում ենք նաև, որ Թալեաթը, կանչելով Զոհրապին, առաջարկում է հարցը լուծել թուրքերի ու հայերի ուղղակի բանակցությունների միջոցով: Իսկ ռուսներին պետք չէ վստահել. նրանք հարաբերությունների մեջ են նաև քրդերի հետ: Գերմանական դեսպանությունը հայտնել է, որ ռուսական նախագիծը մերժված է: Թալեաթը խորհուրդ է տալիս դադարեցնել բանակցությունները Եվրոպայի հետ և ետ կանչել Պողոս Նուբարին: Զոհրապը պատասխանում է, որ անհրաժեշտ է եվրոպական վերահսկողություն բարենորոգումների նկատմամբ: Խորհրդակցելուց հետո Զոհրապը Լեփսիուսին պատասխանում է, որ հայ ազգի համար գերմանական առաջարկություններն անընդունելի են[38]:

Մի բան ակնհայտ է, որ ընդհանուր տրամադրվածությունը եղել է հօգուտ ռուսական նախագծի:

Երկար բանակցություններից և դիվանագիտական համառ պայքարից հետո Օսմանյան Թուրքիայի ռուսական դեսպան Գիրսին հաջողվեց, որոշ զիջումներ կատարելով, համաձայնության գալ թուրքական կառավարության հետ, և ի վերջո, Կ. Գուլկևիչի կողմից

[38] Տե՛ս Զոհրապ Գ., Երկերի ժողովածու, հ. Զ, Ե., 2004, էջ 327-328:

կնքվեց 1914 թ. հունվարի 26-ին ռուս-թուրքական համաձայնագիրը՝ Արևմտյան Հայաստանի բարենորոգումների վերաբերյալ, որը սակայն հնարավոր չեղավ կյանքի կոչել:

Քանի որ դաշնակցության արևմտահայ շատ գործիչներ նույնպես ներքաշված էին ռուսական ծրագրերի մեջ, իթթիհատական պարագլուխները հայազգի իթթիհատական Պ. Հալաճյանի միջոցով փորձում են սիրաշահել նրանց և կանխել նրանց կողմնորոշումը դեպի Արևմուտք և Ռուսաստան: Նույն Պ. Հալաճյանի բնակարանում տեղի է ունենում հանդիպում Կ. Պոլսի ՀՅԴ մարմնի ներկայացուցիչների հետ: Իթթիհատականներից ներկա էին Թալեաթը, Խալիլը և Միդհատ Շյուքրին, իսկ դաշնակցության կողմից՝ Ակնունին, Վարդգեսը և Արմեն Գարոն: Երիտթուրքերը վստահեցնում են՝ ա) հավատընծայել իրենց բարյացակամությանը, բ) իրենք հայաբնակ նահանգներում բարեկարգումներ կմտցնեն, գ) պետք չէ դառնալ օտարների ձեռքին խաղալիք, քանի որ իրենք նույն հայրենիքի զավակներն են և Պողոս Նուբար փաշան ռուսների դրածոն է: Նրանք գտնում են, որ կաթողիկոսի՝ ռուսների դրդմամբ գործին միջամտելն ապօրինի է և որ «Պատրիրքարանը Թյուրքիո մէջ է և ոչ մեկ պետութիւն ձեզի չէ տուած այն իրաւունքները, որ մենք տուած ենք հանձին ձեր Ազգային Սահմանադրութեան»[39]:

Երիտթուրքերն իրենց հերթին ցանկանում էին արևմտահայ ղեկավար ուժերին հեռու պահել մեծ տերությունների հանդեպ հակվածությունից: Սակայն ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ քաղաքական մտքի ներկայացուցիչները չեն հավատում նրանց առաջարկներին: Թալեաթը, Նաջի բեյը, հայազգի իթթիհատական Պ. Հալաճյանի միջոցով ցանկանում էին զանազան խոստումներ շռայլելով ստիպել Պատրիարքարանին՝ իրենց հետ բանակցություններ սկսելու «պետութեանց միջամտութիւնը արգելելու»[40] համար: Պետք է նշել, որ տվյալ իրավիճակում թուրքական իշխանությունների հետ բանակցելու հակվածություն էին դրսևորում արևմտահայ այն գործիչները, որոնք ճանաչված էին որպես օտար տերությունների հայկական խնդրին միջամտելու հակառակորդներ: Դրանք էին Կ. Պոլսի նախկին պատրիարք Մաղաքիա

[39] Փափազեան Վ., նշվ. աշխ., էջ 191:
[40] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 107, թ. 16:

Օրմանյանը, «Սաբահ» թերթի խմբագիր Տիրան Քելեկյանը, Գ. Գյուլպենկյանը և ուրիշներ: Չի կարելի պնդել, թե այս գործիչները սխալ էին, երբ հակված էին բարենորոգումների թուրքական նախագծին՝ միաժամանակ առաջադրելով իրենց առաջարկները:

Ինչպես Արմեն Գարոն է հավաստում, հանդիպում տեղի ունեցավ նաև Խալիլենց տանը 1914 թ. հունիսին, որտեղ ելույթ ունեցավ Թալեաթը՝ համոզելով բոլորին, որ իրենք իրենց կամքին հակառակ չեն կարողացել մինչ օրս գոհացնել հայերի արդարացի պահանջները, հողային և դպրոցական խնդիրը, հայ պաշտոնյաների քանակի ավելացման հարցը և այլն: Եվ մեղադրելով հայերին՝ նա ավելացնում է, որ փոխանակ իրենց հետ համաձայնության գալու, դիմել են արտաքին միջամտությանը[41]:

Մեկ ուրիշ հանդիպում էլ տեղի է ունենում այդ օրերին Սկյուտարի զինվորական կառավարիչ Ջեմալ փաշայի հետ, որին ներկա էին Արմեն Գարոն, Ակնունին, Վարդգեսը, Հրաչ Թիրաքյանը, Վահագն Տաթևյանը և Վահան Փափազյանը: Ջեմալը մեղմորեն նույն հորդորն է անում հայերին և հասկացնում, որ «օտարները իրենց շահերուն համար պիտի ջանան շահագործել մեր վիճակը, բայց դուք պիտի հասկանաք վերջապես, որ մենք չենք կրնար հաշտուիլ այն դիրքին հետ, որ դուք եք բռնած, հետեւանքները անդարմանելի կրնան դառնալ ….»[42]:

Սակայն, այս առաջարկությունները չեն ընդունվում: Ինքը՝ Վ. Փափազյանը խոստովանում է, որ 1912-1914 թթ. երիտթուրքերի դեմ որդեգրած քաղաքականությունը «անըմբռնելի յանդուգնութիւն մըն էր», «որուն արդիւնքը վայելեցինք 3 տարի վերջը»[43]:

Եվ իսկապես, արևմտահայ քաղաքական միտքն Առաջին աշխարհամարտի նախօրյակին և նրա սկզբնավորումով առավելապես կողմնորոշվեց դեպի մեծ տերությունները: Ընդհանուր առմամբ հասարակական հիմնական հակվածությունը Ռուսաստանի և եվրոպական տերությունների կողմն էր: Այդ է հաստատում նաև Ս.

---

[41]Տե՛ս Գարօ Ա., Ապրուած օրեր, Բոստըն, 1948, էջ 196-197, տե՛ս նաև Գարօ Ա., Մեր վերջին տեսակցութիւնը Թալէաթ փաշայի հետ, «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1922, նոյեմբեր, թիւ 1, էջ 39-43:
[42]Գարօ Ա., նշվ. աշխ., էջ 192:
[43]Փափազեան Վ., նշվ. աշխ., էջ 192:

Վրացյանը՝ գրելով հետևյալը. «Երբ 1912-ին սկսուեց թիւրք-բալկանեան պատերազմը, հայերի մէջ այլեւս հաւատ ու խանդավառութիւն չէր մնացել: Պատրիարքարան, կուսակցութիւններ, հանրային կարծիքը, բովանդակ ժողովուրդը եկել էին այն համոզման, որ առանց դրսի միջամտութեան հայերի վիճակը չի բարեփոխուի: Այս տրամադրութեան հետեւանքով էր, որ պատերազմի ընթացքին բուլգարահայութիւնը կազմակերպեց Թիւրքիայի դէմ Անդրանիկի կամաւորական խումբը»[44]:

Բայց ակնհայտ է նաև, որ արևմտահայ հասարակական-քաղաքական գործիչները երբևէ չէին դրել Թուրքիայից անջատվելու խնդիր, որի առիթով իթթիհատականները պայմանավորել են հայոց ջարդերը: Բավական է նշել, որ Վարդգեսն իր նամակներից մեկում հետևյալն է գրել. «Մենք ամեն բան կընենք համոզելու համար կառավարութեանը, թէ անջատումի ոչ մէկ ձգտում ունինք եւ ուրիշ վեհապետութիւն չենք ցանկար, բայց եթե սուլթանին: Մենք հստակ կերպով կը տեսնենք, թէ կառավարութիւնը չէ համոզուած այս մասին, այլ անիկա կուզէ գիտցած ըլլալ թէ մենք յեղափոխական շարժում մը կազմակերպած ենք իրեն դէմ եւ թէ մենք հակառակորդներ ենք»[45]:

Փորձենք այն ավելի հիմնավորել փաստերով: Այսպես, հայ մեծ պատմաբան Նիկողայոս Ադոնցը Հայկական հարցի վերաբացման շրջանում՝ 1912 թ. վերջերին, Պետերբուրգի «Հայկական խմբակի» կողմից Սիրական Տիգրանյանի հետ գործուղվում է Կ. Պոլիս, ուր հանդիպում է տեղի քաղաքական և հասարակական գործիչների հետ: Նրանք տեղեկանում են, որ Ազգային վարչությանն առընթեր կազմվել է Ապահովության հանձնաժողով և որի մեջ մտնող ութ հոգուն «հանձնարարված էր բոլոր գործերի վարումը, կապված հայկական հարցի և նրա նոր փուլի հետ»[46]: Այդ նպատակով պատրիարք Հ. Արշարունու գլխավորությամբ հանձնաժողովը, որի անդամների թվում էին Եղիշե եպիսկ. Դուրյանը, Գրիգոր վրդ. Պալաքյանը, Գնել վրդ. Գալեմքեարյանը, ազգային վարչության նախագահ՝ Ստ. Գարայանը, Ոսկան Մարտիկյանը, Վահան Փափազյանը, պրոֆ. Տեր-Հակոբյանը և ուրիշներ, նիստեր էր գումարում: Հետագայում Ն.

[44]Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Պէյրութ, 1958, էջ 4:
[45]Թագուորեան Գ., Երազանքի ու տագնապանքի տարիներ, Գահիրէ, 1961, էջ 94:
[46]Ադոնց Ն., Երկեր, Չ, Հրապարակախոսություն, Ե., 2012, տե՛ս «Հայկական հարցի շուրջ Թուրքիայում», էջ 95:

Ադոնցն իր հաշվետվության մեջ փաստորեն բացահայտում է այդ գործիչների քաղաքական դիրքորոշումները, որից ակնհայտ է դառնում, որ նրանք պատերազմի նախօրյակին տարված էին բարենորոգումների խնդրով: Հետաքրքիր է Ն. Ադոնցի հետևյալ տեղեկությունը. «Այն բանից հետո, երբ Ամենայն Հայոց սրբազնագույն կաթողիկոսը պաշտոնապես բարձրացրեց Հայկական հարցը` դիմելով ռուսական կառավարությանը և վերջինս հանձնառու եղավ պաշտոնապես այն վարելու, Ազգային վարչությունը հնարավորություն ստացավ ձևականորեն հեռանալ ու միջազգային խորհրդաժողովի առջև այդ միջնորդության մեջ պաշտոնական մասնակցությունից: Բայց Ազգային վարչությունը, հասկանալի պատճառներով ձեռնպահ մնալով բացահայտ ելույթից, միևնույն ժամանակ անհրաժեշտ էր գտնում իրազեկ պահել, աջակցել և մասամբ էլ ուղղություն տալ կաթողիկոսին` տերություններին ուղղված նրա դիմումներում (ընդգծումը` Հ. Ս.): Այդ նպատակով էլ նա ընտրել էր հիշյալ հանձնաժողովը` ամեն ինչում Հայ եկեղեցու հետ համաձայնությամբ գործելու և անհրաժեշտ նյութերի, տեղեկությունների և նկատառումների հայթայթումով նրան սատարելու պարտավորությամբ: Ապահովության խորհրդի գործունեությունն արտահայտվեց բարեփոխումների հայկական տեսանկյունից ենթադրվող և ընդունելի նախագծի մշակման մեջ, եվրոպական տերությունների ներկայացուցիչների և, գլխավորապես, Կոստանդնուպոլսում ռուսական դեսպանության հետ հարաբերությունների մեջ մտնելու և բանակցություններ վարելու գործում: Բացի այդ, հանձնաժողովը պրակներով հրատարակում և հարկ եղած ոլորտներում տարածում է նյութեր ու հաղորդագրություններ, որոնք նպատակ ունեին ներկայացնելու իրերի փաստական դրությունը Հայաստանում և պարզաբանելու Թուրքիայի հայոց կյանքում դրանց բավարարման կարիքներն ու միջոցները»[47] (ընդգծումը` Հ. Ս.):

Այս ընդարձակ մեջբերման եզրակացություններն են.

[47] Նույն տեղում, էջ 95-96:

1.Կ.Պոլսի Պատրիարքարանը և Ապահովության հանձնաժողովը, թեպետ գաղտնիության շղարշին, կողմ էին հայկական բարենորոգումներին և թեքվել էին դեպի Ռուսաստանը:

2.Նրանք արևմտահայության դրության վերաբերյալ նյութեր էին տրամադրում կամ հրապարակում այն հույսով, որ դրանք կնպաստեն հայոց բարենորոգումների ծրագրի իրականացմանը:

Ըստ այդմ՝ Կ. Պոլսի հայ մտավորականության ընտրանին քաղաքական հակվածությամբ Ռուսաստանի կողմն էր: Դրանում էլ ավելի ենք համոզվում, երբ ծանոթանում ենք Ն. Ադոնցի և Ս. Տիգրանյանի՝ այս գործիչների հետ ունեցած հանդիպումներին: Մինչև դրանց քննարկումը, նշենք, որ Ն. Ադոնցի վկայությամբ, նոյեմբերի 13-ին պատրիարքը և Ոսկան Մարտիկյանը, որը 1913 թ. մի կարճ ժամանակ կապի նախարարն էր, այցելում են Թուրքիայում ռուսական դեսպան Մ. Ն. Գիրսին, որի մոտ էր նաև Ա. Մանդելշտամը: Հանդիպման ժամանակ պատրիարք Արշարունին մասնավորապես նշում է. «Մենք համոզված ենք, որ թուրքերը, անգամ ցանկության դեպքում, անզոր են մեզ համար ստեղծելու կենցաղի այլ և լավագույն պայմաններ: Մեր միակ հույսը քրիստոնեական մեծ տերութեան վրա է, որը կկարողանար դասավորել մեր ճակատագիրը թեկուզ և այնպես, ինչպես որ Ավստրիան կարգավորել է Հերցեգովինան»[48]:

Հանձնաժողովի անդամները հերթով այցելում են Ֆրանսիայի, Անգլիայի, Գերմանիայի դեսպաններին, Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարարին և այլոց, բոլորից հայկական բարենորոգումների խնդրով ակնկալիքների հույսով: Սակայն Ադոնցի հաշվետվությունն ընթերցելիս այն տպավորությունն ենք ստանում, որ ոչ մեկը իրականում ոչինչ չէր խոստանում. Ռուսաստանը ցանկանում էր իր կողմը գրավել հայերին, Անգլիան ու Ֆրանսիան՝ իրենց կողմը, Գերմանիան՝ իր կողմը: Բայց կրկին ու կրկին մի բան շատ պարզ էր, որ հայ քաղաքական և հոգևոր ղեկավարները կողմնորոշվել էին դեպի մեծ տերությունները:

Այս հարցում մի անգամ էլ համոզվելու համար տեսնենք, թե արևմտահայ քաղաքական մտքի նշանավոր ներկայացուցիչներն ի՞նչ են ասել Ն. Ադոնցին և Ս. Տիգրանյանին: Այսպես, Մաղաքիա

[48]Նույն տեղում, էջ 97:

Օրմանյանը մասնավորապես հետևյալն է նշում. «Որքան ես խորամուխ եմ լինում Փոքր Ասիայում եվրոպական տերությունների շահագրգռությունների բարդ հանգույցի մեջ, մասնավորապես Եռյակ համաձայնության շահերի ու խնդիրների մեջ, մեր հարցը կարող է լուծել միայն Եռյակ համաձայնությունը: Այդ է պահանջում, ամենից առաջ, ռուսական դիվանագիտությունը: Ռուսները չեն կարող հաշտվել այն բանի հետ, որ Սան-Ստեֆանոյում նրանց ձեռք բերած իրավունքները տերությունները բռնազավթեցին Բեռլինի վեհաժողովում.... Ռուսաստանի միջամտությունը թուրքական Հայաստանի գործերին մեզ ցանկալի է և օգտավետ»[49]:

Բայց նա խոսքը տանում էր ոչ թե այն ուղղությամբ, որ հայկական նահանգները Թուրքիայից պետք է անջատվեին, այլ` Ռուսաստանի ճնշմամբ Թուրքիայում ստանային առանձին կարգավիճակ:

1913 թ. հունվարի 1-ին «Հայկական խմբակի» պատվիրակները հանդիպում են Գ. Նորատունկյանի հետ, որը երիտթուրքերի իթթիլաֆական հեղաշրջումից հետո նշանակվել էր Օսմանյան Թուրքիայի առևտրի, ապա հանրօգուտ աշխատանքների, իսկ 1912-1913 թթ.` Օսմանյան Թուրքիայի արտաքին գործոց նախարար: Վերջինս իր խոսքերի մեջ վերապահ է լինում: Նա Թուրքիայում հայերի, իր արտահայտությամբ` բարեփոխումների հարցը կախյալ է համարում Թուրքիայի բարեփոխումից ընդհանրապես[50]: Ստացվում է, որ նա նույնպես չէր դնում անջատողականության հարց:

Պ. Հալաճյանը մասնավորապես այն կարծիքն էր հայտնում, որ «Հայաստանի վրա եվրոպական հովանավորության հաստատումը` Թուրքիայի գերակայության պահպանմամբ, երաշխիք կլիներ այդ մարզի անջատելիության` Օսմանյան կայսրությունից»[51]: Ինչպես համոզվում ենք, Պ. Հալաճյանը ևս չի ժխտում Թուրքիայի գերակայությունը:

Հետաքրքիր տեսակետներ է արտահայտում Գ. Զոհրապը, որը լինելով ռուսական դեսպանատան իրավագետ-խորհրդատու, մեծ

[49] Նույն տեղում, էջ 108-109:
[50] Տե՛ս նույն տեղում, էջ 111:
[51] Նույն տեղում, էջ 113:

օգնություն է ցույց տվել ռուս դիվանագետներին՝ բարենորոգումների գործին հաջող ընթացք տալու համար և բարեկամական հարաբերություններ ունեցել դեսպանության բարձրաստիճան պաշտոնյաների, ինչպես վերը նշեցինք, հատկապես առաջին թարգման Մանդելշտամի հետ: Նամասնավորապես շեշտում էր, որ «Ցանկալի բարեփոխությունների էությունը կայանում է գերագույն կոմիսարի (կամ, ինչպես ես եմ մտածում անվանել «վալի հազամի») նշանակման մեջ տերությունների հովանավորության ներքո»[52]: Չդնելով անջատողականության հարց և գտնելով, որ «Հայկական մարզերի վերափոխումը իրավաբանորեն պետք է այնպես կարգավորել, որպեսզի այն որքան հնարավոր է չշոշափի գործող կայսերական օրենքներն ու կանոնադրությունները և իրագործման մեջ կախված լինի, գլխավորապես, գերագույն իշխանությունից, սահմանելով ի վնաս և կամ ի հաշիվ սուլթանի գերագահ իրավունքների, որն ինքն այս, կամ այն ձևով, կամ չափով ընձեռում է կոմիսարին.... Մեր գլխավոր հենարանը Հայկական հարցում՝ Ռուսաստանն է, դրացիության իրավունքով և շահագրգռվածության աստիճանով»[53]:

Գ. Զոհրապի և Ա. Չոպանյանի ռուսական կողմնորոշման փաստը առավել բնորոշ ձևակերպում է ստացել Գ. Զոհրապի վերջին նամակներից մեկում, որում նա նշում է. «Մեկ ուժ մը միայն, որուն ես գոնե անձնապես և դուն ալ ինծի հետ, փարած էի սկզբեն ի վեր.... ույժ մը, զոր, երբ անդին բոլոր հայերը կը հարվածեին, կը նախատեին, մենք կը փայփայինք ույժ մը, զոր հաջողեցանք հայոց պաշտպան դարձնելու.... այդ ույժը ըսելու պետք կա՞ միթե, ռուսական պետությունն է»[54]:

Դեմ չլինելով ռուսական ազդեցության հաստատմանը, նա ևս չէր դնում անջատման խնդիր և գտնում էր, որ Ռուսաստանից ունեցած պահանջների մեջ հարկավոր էր լինել համբերատար և սկզբնական շրջանում բավարարվել բարեփոխումների չափավոր նախագծով:

[52]Նույն տեղում:
[53]Նույն տեղում, էջ 113-114:
[54]Սարուխանյան Ն., Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական քաղաքական մտքի և պատմագրության մեջ, Ե., 1997, էջ 230:

Բավական իրատեսորեն է արտահայտվում «Սաքահ» թերթի խմբագիր Տ. Քելեկյանը: Նա մասնավորապես հետևյալն է ասում. «Հատկապես ցանկալի կլիներ երկարաձգել Հայաստանի՝ Ռուսաստանին ենթարկվելու ժամանակը, հնարավորություն տալ հայ ազգաբնակչությանն ավելի ամրապնդվելու և ուժեղանալու թվապես և տնտեսապես, որպեսզի կարելի լիներ ավելի հաջող դիմադարձել ռուսական կառավարության հնարավոր ճնշումը: Ցավոք սրտի, այդ հարցում մենք՝ հայերս չենք վճռողը, այլ ուժեղ տերությունների կամքը, և Հայկական հարցի լուծումը կհետևի այն ժամանակ և այնպես, երբ և ինչպես կկամենան տերությունները»[55]: Ինչպես տեսնում ենք, Տ. Քելեկյանը ոչ միայն անջատողականության հարց չէր դնում, այլ առհասարակ գտնում էր, որ չպետք է արագորեն ենթարկվել Ռուսաստանին, իսկ Հայկական հարցի լուծումը փաստորեն չէր պայմանավորում հայերով: Եվ նա, բնականաբար, չէր սխալվում:

«Բյուզանդիոնի» խմբագիր Բ. Քեչյանը նույնպես այն կարծիքին է եղել, որ հայերին անհրաժեշտ է ռուսական հովանավորություն, և ճիշտ կլիներ, եթե Թուրքիան ընդուներ ապակենտրոնացումը և «եվրոպացիներին հանձներ կառավարման և դատարանի բոլոր կարևորագույն պաշտոնների տնօրինությունը»: Սակայն նա այդ առումով թերահավատ էր[56]:

Ն. Ադոնցի եզրակացությունը միանգամայնորեն ընդունելի է արևմտահայ քաղաքական մտքի ուղղվածությունն ընկալելու առումով. «Ինչպես վերը թվարկված անձնավորությունները, որոնց մենք այցելեցինք՝ իրենց կարծիքը հարցնելու հատուկ նպատակով, այնպես էլ գրական, քաղաքական, հասարակական մի շարք անձնավորություններ և գործիչներ, որոնց մենք հանդիպում էինք բավականին հաճախ և երկար զրուցում Կոստանդնուպոլսում մեր գտնված օրերին, ըստ էության ներծծված էին գրեթե միևնույն քաղաքական ծրագրով: Լիակատար հուսահատություն թուրքական պետականության նկատմամբ՝ որևէ բան բարեփոխելու վերաբերյալ, հետևաբար և հիմքի փնտրտուք հայկական անհրաժեշտ բարեփոխումների առնչությամբ եվրոպական տերությունների

[55]Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 117:
[56]Տե՛ս նույն տեղում, էջ 117-118:

կողմից Թուրքիայի վրա հարկադրական ճնշում գործադրելու և, առանձնապես, Ռուսաստանի միջամտության մեջ՝ այդպիսին են հիշյալ ծրագրերի հիմնական սկզբունքները: Ռուսասիրության միտումը՝ այնպես ավանդական կերպով ուժեղ թուրքական Հայաստանի ազգաբնակչության մեջ և նախկին ժամանակներում Կոստանդնուպոլսում հեղինակություն զուրկ, այժմ տիրապետող տրամադրությունն է ամբողջ հայ հասարակության մեջ: Զայները, որոնք մատնանշում են ռուսական վարչակարգի բացասական և վտանգավոր կողմերը՝ վտանգավոր հայերի ազգային-ինքնանկախ զարգացման համար, Հայաստանի՝ Ռուսաստանի իշխանության տակ ընկնելու դեպքում, մնում են միայնության մեջ»[57]:

Այսպիսով, մի փոքր շրջայց կատարելով դեպի Առաջին աշխարհամարտի նախօրյակը, մենք փորձեցինք վերստին ապացուցել, որ արևմտահայ քաղաքական ընտրանին ամբողջությամբ թեքված էր դեպի Ռուսաստանը՝ չդնելով Օսմանյան կայսրությունից անջատվելու հարց: Բայց, պատերազմի սկսումով արդեն հիշյալ ընտրանին ոչնչացվեց այն պատճառաբանությամբ, թե դրել էր անջատողականության հարց: Խնդրի այդպիսի մոտեցումը թուրքերի համար իրականում առիթ էր արևմտահայ տարրին ոչնչացնելու, դրանով իր հերթին վերացնելով հայության վիճակի բարելավման առիթով մեծ տերությունների՝ Թուրքիան բաժանելու ակնկալիքները:

Իսկապես, հետևանքները անդարմանելի եղան, քանի որ թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ քաղաքական ղեկավարները, ջերմեռանդորեն տարվելով մեծ տերությունների խոստումներով, նորից ընտրում էին մի ճանապարհ, որի վերջին կանգառը խաբկանքն էր: Սա չի նշանակում, թե մենք արդարացնում ենք թուրքերին, քանզի եթե բարվոք լիներ արևմտահայության կացությունը, ապա հայության ղեկավարները չէին գնա նման քայլերի: Բայց չէ՞ որ գրեթե ողջ 19-րդ դարում խաբված լինելը պետք է ստիպեր գեթ չեզոք դիրք գրավելու: Այնպես որ, միանգամայն ճիշտ է Լևոն Չորմիսյանը, երբ գրում է, որ թուրքերը «խորհուրդ տուին, թելադրեցին, որ Հայերը հրաժարին եւրոպական պետութեանց պաշտպանութենէն եւ

---

[57] Նույն տեղում, էջ 118-119:

իրենց հետ համախորհուրդ լուծումներ գտնեն Հայկական խնդրին: Հայերը վստահութիւն չէին կրնար ունենալ եւ չունեցան Թուրքերուն վրայ: Ինչպէս հին Թուրքերը, նորերն ալ ցոյց տուած էին, Ռումելիի և Արաբիոյ դէպքերուն ընթացքին, փոքրամասնութիւններու հանդէպ իրենց իրական զգացումները եւ քաղաքականութիւնը: Ընդհանուր օրէնք է նոյնպէս, որ որեւէ պետութիւն իր պարտութեան եւ տկարութեան պահուն միայն կը հաշտուի սա կամ նա քաղաքական զիջումին: Հայ ղեկավարները ամէնէն նպաստաւոր եւ յարմար քաղաքական պահը կը նկատէին Թուրքերուն պարտութիւնը: Նման պատեհութենէ օգտուիլ ուզողը պարտաւոր է հաշուի առնել նաեւ հակառակորդին հաւանական վերաբերումը, երբ պայմանները աւելի նպաստաւոր դարձուածք մը ստանան իր հանդէպ: Պարտաւոր է անոր հաւանական վրիժառութեան, քինախնդրութեան եւ ատելութեան դէմ պաշտպանողական որոշ միջոցներ ապահովել: Մէկ խօսքով, պարտաւոր է նժարի մէջ դնել անպատեհութիւնները իր առած քայլին եւ նախազգուշական միջոցներ ձեռք առնել»[58]:

Մենք նպատակահարմար չենք գտնում մանրամասնել, թե Օսմանյան Թուրքիայի արևելյան՝ վիլայեթներում քաղաքական ղեկավարներն ինչպիսի դիրքորոշում էին բռնել մեծ տերությունների նկատմամբ, քանզի չնչին բացառություններով նրանք ընդունում էին կաթողիկոսի, պատրիարքի և դաշնակցության դիրքորոշումները: Դաշնակցության պարագայում պետք է պնդել, որ նա 1913 թ. օգոստոսին Էրզրումում գումարված, իր յոթերորդ Ընդհ. ժողովում ընդունեց ճիշտ որոշում, այն է. «Քաղաքական բարդութիւններու ատեն՝ համախորհուրդ ընկերվարական միւս կուսակցութիւններուն՝ օրինական բոլոր հնարաւոր միջոցներով կանխել զինուած ընդհարումները, իսկ պատերազմի պարագային ամէն քաղաքացի կը կատարէ իր քաղաքացիական պարտականութիւնը իր պետութեան հանդէպ»[59]:

Այդ հաստատում է նաև Հրաչ Տասնապետյանը, գրելով, որ հայերը, թե՛ քաղաքացի և թե՛ զինվոր, պետք է կատարեին իրենց պարտականությունը հավատարմորեն՝ երկու երկրների մեջ էլ, և

[58] Զորմիսեան Լ., Կուսակցութիւնները, Ե., 1995, էջ 63-64:
[59] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 81ա, թ. 3:

մեջբերում է Ուինսթոն Չերչիլի խոսքերը. «Հայերը նախընտրեցին թշնամի երկու բանակներուն մէջ ծառայելով եղբայրասպան կռիւ մղել, քան թէ դաւաճանել թուրք թէ ռուս քաղաքացիի իրենց պարտաւորութեանց»[60]:

Ինչ վերաբերում է հնչակյաններին, ապա ինչպես դաշնակցության պարագայում, նրանց համար էլ կարելի է պնդել, որ նրանց թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ ներկայացուցիչները առաջնորդվել են մեկ քաղաքական գծով:

Այսպես, Հնչակյան կուսակցության կենտրոնական վարչությունը 1913 թ. կանխազգալով մոտալուտ արյունալի պատերազմի սպառնալիքը, կոչ էր անում եվրոպական ժողովուրդներին և պետություններին՝ նրանց ուշադրությունը հրավիրելով Հայկական հարցի և բնաջնջման սպառնալիքի տակ գտնվող արևմտահայության վրա:

Հնչակյան կուսակցությունը մի կարևոր քայլ կատարեց ևս. 1913 թ. հունվարի 25-ին Ս.Դ.Հ.Կ. Վասպուրականի կենտրոնական մարմինը հանդես եկավ տեղի դաշնակցական, ռամկավարական և հնչակյան կուսակցությունների տեղական կազմակերպություններին ուղղված շրջաբերականով, որտեղ ասվում էր. «Մեր հայրենիքին այս պահուս անցուցած պատմական մեծ տագնապը հրամայական պարտականութիւն մը կդնէ գործող կուսակցութիւններուն վրայ, մնալով հանդերձ իւրաքանչիւրն իր ծրագրին եւ տակտիկին սահմաններուն մէջ, համաձայնութեան մը գալ համազգային բնոյթ ունեցող հրատապ խնդիրներուն շուրջ»[61]:

Պաշտպանելով Արևմտյան Հայաստանի ինքնավարության խնդիրը՝ Ս. Սապահ-Գյուլյանը Թուրքիան բարենորոգելու ամենաիրական ճանապարհը տեսնում էր ոչ միայն արևմտահայության, այլև ոչ թուրք մյուս ժողովուրդներին ինքնավարություն տալու մեջ: Նա դրական էր գնահատում 1860 թ. Կ. Պոլսում ընդունված արևմտահայության ազգային սահմանադրությունը, որն իր թերություններով հանդերձ, ճանապարհ էր ընձեռնում արևմտահայությանը՝ ինքնավարության հասնելու համար: «Հիմք ունենալով արդեն եղածը, - նշում էր նա,

[60]Տասնապետեան Հր., Հայկական հարցը, Պէյրութ, 1984, էջ 25:
[61]Ստեփանյան Մ., նշվ. աշխ., էջ 26:

մնում է նրան տալ այն մասերը, ինչ որ պակասում են, ճանաչել հայ սահմանադրության մասնակի գործադրական իշխանության իրավունքները, ընդարձակել նրա սահմանները ավելի դեմոկրատական հիմունքներով Հայաստանի ամբողջ տարածութեան վրա, - դա ամենադյուրին միջոցը կտահայկական հարցը լուծելու»[62]:

Ինչպես տեսանք հետսահմանադրության շրջանում հնչակյաններն առաջ էին քաշում Արևմտյան Հայաստանի ինքնավարության խնդիրը, իսկ Հայկական հարցի վերաբացման շրջանում կարծես թե ընդհանուր հակվածությունը մեծ տերությունների կողմն էր:

Այդ երևում է 1913 թ. հունվարի 30-ին Փարիզում Ս.Դ. Հնչակյան կուսակցության կենտրոնական վարչության եվրոպական մեծ պետություններին ուղղված կոչից, ուր նշվում է, որ Օսմանյան կայսրությունում «ահավոր ճնշումներն ու կոտորածները դարձել են ծրագրված աւանդական քաղաքականութիւն, որին դիմել են սուլթաններն ու ամեն անգամ, երբ ուզեցել են ոչնչացնել իրենց իշխանութեան տակ հեծեծող այս կամ այն քրիստոնեայ ժողովուրդին»[63]:

Կոչը միաժամանակ հորդոր էր «քաղաքակիրթ Եվրոպային»՝ սատարելու ազատության և առաջադիմության ձգտող հայ ժողովրդին: Կոչում առաջ էր քաշված բարենորոգումների իրականացման և Արևմտյան Հայաստանի ինքնավարության խնդիրը:

1913 թ. սեպտեմբերի 7-ին Ռումինիայի Կոստանցա քաղաքում գումարված Ս.Դ. Հնչակյան կուսակցության 7-րդ պատգամավորական ժողովը, որին մասնակցում էին 59 պատգամավորներ, գնահատելով Թուրքիայում ստեղծված դրությունը, քննադատում է Օսմանյան Սահմանադրությամբ հռչակված ժողովուրդների իրավահավասարության մասին սուտ խոստումները և Իթթիհատի վարած քաղաքականության հետևանքով հայ ժողովրդի ծայրահեղ ծանր վիճակը: Այդ մասին Սապահ-Գյուլյանը գրում է. «Այդ ժողովը ոչ միայն իր, այլև ընդհանուր Հայութեան անունով վերջ տուեց Իթթիհատի ստեղծած, հարկադրիչ դարձած օրինականութեանը եւ

[62] Նույն տեղում, էջ 30:
[63] Հիսնամեակ սոցիալ-դեմոկրատ հնչակեան կուսակցութեան, Փրեզնո, 1938, էջ 265-267:

աշխարհին, եւրոպային հենց իրեն՝ Թուրքին՝ ցույց տուեց, որ «սահմանադրական» կոչուած Թիւրքիայի մէջ, նորից, գոյութեան իրաւունք է ստացել Հայ Յեղափոխութիւնը եւ նա գործում է հակաօրինական հողի վրայ՝ անհրաժեշտութիւնից մղուած ....»[64]:

Վերլուծելով հնչակյանների քաղաքական գործունեությունը պատերազմին նախորդած շրջանում՝ գալիս ենք այն համոզման, որ Սապահ-Գյուլյանը, Ա. Նազարբեկյանը և այլոք գտնում էին, որ թուրքական տիրապետող վարչակարգը հնարավորություն չի տալու բարեփոխել երկիրը:

Հնչակյանների դեպի մեծ տերությունները կողմնորոշվելու մասին է վկայում նաև Ս. Սապահ-Գյուլյանի հետևյալ միտքը. «....Հայ ազգը՝ իր ուժերի սահմանների մէջ՝ այդ նպատակի գործաւորներից մէկն է արդէն, որոշ կերպով և դրականօրէն Դաշնակիցների կողմը բռնելով և տասնեակ հազարաւորներ պատերազմի թէ՛ արեւմտեան և թէ՛ արեւելեան թատերաբեմը հանելով»[65]:

Փաստորեն, հնչակյանները նույնպես որդեգրել էին քաղաքական այն ուղղությունը, որին հետամուտ էին վերոհիշյալ հոգևոր և քաղաքական գործիչները:

1914 թ. հուլիսի 19-ին (օգոստոսի 1-ին) սկսվում է Առաջին աշխարհամարտը:

Դոկտոր Զավրյանի՝ Պողոս Նուբարին ուղղված մի գրությունում կարդում ենք, որ Թուրքիայի հետգալիք պատերազմը հայերի առաջ դնում էր հետևյալ խնդիրները. 1.Անհետացնել ռուսական կառավարության, ինչպես նաև հասարակության անվստահության վերջին հետքերը հայերի նկատմամբ՝ նրանց ապացուցելով հայ ժողովրդի ազնվությունը և նվիրվածությունը Ռուսաստանին, քանի որ հայ ժողովուրդն իր ճակատագիրը կապել է Ռուսաստանի ճակատագրի հետ: 2.Փորձել ռուսական կառավարությանը մղել քայլերի՝ օժանդակելու համար Թուրքիայում ինքնավար Հայաստանի ստեղծմանը պատերազմի

[64] Հովհաննիսյան Գ., Հնչակյան կուսակցության պատմություն (1887-1915 թթ.), Ե., 2012, էջ 249-250:

[65] Սապահ-Գիւլեան Ս., Ինքնավար Հայաստան, Գահիրէ, Ա. թ., էջ 66-67:

ավարտին, որն իր կարծիքով պետք է հաղթական լիներ դաշնակիցների համար[66]:

Սակայն Ռուսաստանը, ելնելով իր քաղաքական շահերից, որոնք ենթադրում էին Թուրքիայի հետ հնարավոր պատերազմի ժամանակ իր կողմը գրավել հայերին, կտրուկ կերպով փոխում է իր վերաբերմունքը հայ հասարակական-քաղաքական շրջանակների նկատմամբ: Բավական է նշել, որ ՀՅԴ կուսակցության նկատմամբ 1907-1912 թթ. շարունակված հետապնդումները և նրա ղեկավար գործիչների հանդեպ կիրառված բռնություններն ու բանտարկություններն անակնկալորեն վերջ գտան և վերաբերմունքը մեղմացավ: Այս անգամ ևս ցարական իշխանությունները խոստացան Արևմտյան Հայաստանի շուտափույթ ազատագրում և ինքնավարություն, որի գաղափարը հիմնականում ներշնչեցին Գևորգ Ե. կաթողիկոսի միջոցով: Եւ, ցավոք սրտի, դրան հավատաց ոչ միայն վերջինս, այլև` բազում արևելահայ և արևմտահայ գործիչներ: Այսպես, «Մշակի» մի խմբագրականում կարդում ենք. «Իբրև քաղաքացի և իբրև ազգասէր, ռուսահայի ամբողջ համակրութիւնը և անկեղծ սէրը ռուսական զէնքի յաջողութեան և յաղթութեան կողմն է»[67]:

Մեծատաղանդ բանաստեղծ Վ. Տերյանը գրում էր, որ «նոր չէ, որ հայությունը պիտի վկայի իր համակրությունը և ձգտումը դեպի Ռուսաստանը: Դա մի պատմական ավանդություն է արդեն մեզ համար»[68]:

Բժիշկ Հակոբ Զավրյանը և Հովհաննես Թումանյանը Ազգային Բյուրոյում ներկայացնում էին ռուսասեր թևը, որոնց ազդեցությամբ Անդրանիկի մոտ նույնպես խորացել էր ռուսասիրությունը: Հետագայում նա բանաստեղծի գործունեության մասին գրում է. «Թումանեան իր հեռատես կարողությամբ հասկացած և ըմբռնած էր թէ հայ ժողովուրդն իր աշխարհագրական դիրքին համար պէտք է կապէ իր քաղաքական ճակատագիրը ռուսներու բախտին հետ»[69]:

---

[66]Տե՛ս Եղ. Չարենցի անվան ԳԱԹ-ի արխիվ, ֆ. Վ. Մալեզյան, գ. 726, թ. 1:
[67]«Մշակ», Թիֆլիս, 1914, նոյեմբերի 17, թիվ 205:
[68]Նույն տեղում, Թիֆլիս, 1914, նոյեմբերի 10, թիվ 229, նաև` Համբարյան Ա., Հայ հասարակական քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Ե., 1990, էջ 448:
[69]Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գիրք Ա, Ե., 1996, էջ 376:

Դեռևս 1914 թ. օգոստոսի 5-ին կաթողիկոսը դիմում է փոխարքա Վորոնցով-Դաշկովին, հիշեցնում է նրան հայկական բարենորոգումների գործի ձախողումը և խնդրում՝ Արևմտյան Հայաստանի նահանգներից կազմել մի շրջան, շնորհել ինքնավարություն՝ ղեկավար կարգելով ռուսական բարձրաստիճան մի անձի: Հետաքրքիրն այն է, որ նա այդ նույն գրության մեջ նշում է, թե Թուրքիայի կողմից արդեն հայտարարված զորահավաքը ահուդողի մեջ է գցել հայությանը, ուստի Ռուսաստանի կառավարությունից խնդրում է միջոցառումներ մշակել հայերի կյանքը փրկելու ուղղությամբ[70]:

1914 թ. սեպտեմբերի 2-ին փոխարքան այս գրությանը պատասխանում է վարչապետ Գորեմիկինի և Սազոնովի անունից, հավաստիացնելով, որ այս անգամ ոչ մի զիջում չի արվելու հայկական բարենորոգումների հարցում: Սակայն ինքնավարության հարցն անպատասխան է թողնվում[71]:

Եվ զարմանալի է, որ այս պայմաններում էլ Հ. Զավրյանը պնդում էր, որ անհրաժեշտ էր ռուսական կառավարությանը վարժեցնել այն մտքին, որ թուրքական Հայաստանի ինքնավարությունը վտանգավոր չէր կարող լինել նրահամար[72]:

Ցարական Ռուսաստանը, հավատարիմ մնալով իր փորձված քաղաքականությանը, այս անգամ էլ սիրաշահեց հայերին, բայց պատերազմի սկսման պատճառով անտեսեց իր խոստումները:

Արևելահայ և արևմտահայ մտավորական ու քաղաքական շրջանակների մեծամասնությունը դարձյալ հավատով էր լցվել Ռուսաստանի նկատմամբ, որը, սակայն, չէր բխում նախորդ քաղաքական իրադարձությունների ակունքներից:

Ամփոփելով վերոշարադրյալը, կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

1. 1912 թ. Բալկանյան պատերազմի սկսումով արևմտահայ ղեկավար ուժերը կրկին կողմնորոշվում են դեպի մեծ տերությունները և մասնավորապես Ռուսաստանը:

---

[70] Տե՛ս Մեծ պատերազմը և հայ ժողովուրդը, Ա հ., Ա.տ.,Ա. թ., էջ 5-7:
[71] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 53, թ. 65:
[72] Տե՛ս Եղ. Չարենցի անվան ԳԱԹ-ի արխիվ, ֆ. Վ. Մալեզյան, գ. 726, թ. 5:

2. Երիտթուրքերը նման կողմնորոշումը համարում էին դավաճանություն Թուրքիայի նկատմամբ, որը արևմտահայության ցեղասպանության առիթներից մեկը հանդիսացավ Առաջին աշխարհամարտի տարիներին:

## 1.2. **Կամավորական շարժման սկզբնավորումը և արևմտահայ քաղաքական միտքը**

Կամավորական շարժումը սկսեց ձևավորվել Կովկասից, հիմնականում արևելահայ մտավորական, քաղաքական և հոգևոր գործիչների՝ ռուսական քաղաքականության ներշնչած հերթական խաբկանքի ճաշակումով, որոնց մեջ գլխավոր դերակատարությունն ունեին Հ. Զավրյանը, Ա. Խատիսյանը, Խ. Կարճիկյանը, Գևորգ Ե. կաթողիկոսը և էլի ուրիշներ: Իսկ արևմտահայ մտավորական, կուսակցական գործիչների մեծամասնությունը գնաց նրանց հետևից:

Ինչպես նշում է Ռ. Սահակյանը, հայ հասարակական-քաղաքական շրջանակների մեծ մասը ողջունեց կամավորական խմբերի կազմակերպմանը: Եվ այն, որ Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև պատերազմ է սկսվելու, չէին կասկածում ոչ միայն զինվորականները, այլ և բնակչության մեծ մասը[73]:

Արևմտահայ քաղաքական մտքի կրողների՝ սկսվող կամավորական շարժման վերաբերյալ որդեգրած վերաբերմունքը միանշանակ չէր: Այստեղից էլ՝ անհնար է խոսել ոչ միայն արևմտահայ քաղաքական մտքի մեկ ընդհանուր ուղղվածության, այլ և առանձին գործիչների քաղաքական ձգտումների մասին:

Ճշմարտությունը պահանջում է շեշտել, որ կամավորական շարժման վերաբերյալ, ինչպես նաև դրան նախորդած Հայկական հարցի վերաբացման շրջանում, թե՛ հայ քաղաքական կուսակցությունների և թե՛ Կ. Պոլսի Պատրիարքարանի մոտեցումները գրեթե նույն էին: Մենք հատկապես առանձնացնում

[73]Տե՛ս Սահակյան Ռ., Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը (1914 թ. հուլիս - 1917 թ. փետրվար), Ե., 2015, էջ 43:

ենք այս երկուսը, քանզի հիմնականում դրանք էին արևմտահայ քաղաքական մտքի կրողը: Անշուշտ, Պատրիարքարանն իր գործունեության և վերաբերմունքի դրսևորման առումներով ավելի պահպանողական էր, բայց փաստերն այն համոզմունքն են առաջացնում, որ, ի վերջո, Զավեն պատրիարքն էլ, թերևս ակամա, տուրք է տվել կուսակցական դիրքորոշումներին:

Ծուտով Բուլղարիայից Կովկաս է վերադառնում Անդրանիկը, որը կանչված էր ղեկավարելու հայ կամավորական շարժումը: Վերջինիս հանձնարարվում է փոխարքայի օգնական Միշլաևսկու կողմից կազմակերպել կամավորների առաջին զորագունդը: Ապա կազմվում են մյուս խմբերը՝ Դրոյի, Համազասպի, Քեռիի և Վարդանի հրամանատարությամբ:

Անդրանիկը սկզբում մտավախություն ուներ, որ կամավորական շարժումը կարող է մեծ վնաս հասցնել ազատագրական գործին. ավելի շատ՝ վնաս, քան՝ օգուտ: Գալով Թիֆլիս, նրան հետաքրքրում էր այն միտքը, թե ինչո՞վ էր պայմանավորված այդ շարժումը, և արդյո՞ք ցարի կողմից էր կազմակերպված: Չ՞է որ, ինչպես Կովկասյան ճակատում զորավար Միշլաևսկին էր վկայում, ռուսական 800-հազարանոց բանակի շարքերում մի քանի հազար հայ կամավորները չէին կարող եղանակ փոխել, բայց փոխարենը թուրքերին պատրվակ կտային՝ նոր ջարդ կազմակերպելու հայերի նկատմամբ: Չնայած դրան՝ Անդրանիկը նույնպես կանգնեց շարժման գլուխ՝ ոգևորվելով իշխանության տված խոստումներով[74]:

Արդյունքում՝ թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ քաղաքական ուժերը «ռուս-թուրքական պատերազմի բռնկումով նորից որդեգրեցին ռուսական կողմնորոշում»[75]:

Հ.Յ. Դաշնակցությունը, որը հայ քաղաքական ուժերի առաջատար կազմակերպությունն էր, պատերազմի նախօրյակին Էրզրումում գումարած իր 8-րդ Ընդհանուր ժողովում (1914 թ. հուլիս) ընդունած որոշումներով փաստորեն արտահայտում էր նաև կուսակցության արևմտահայ ներկայացուցիչների քաղաքական դիրքորոշումը գալիք

[74]Տե՛ս Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 286:
[75]Ներսիսյան Ա., Առաջին Աշխարհամարտում հայ կամավորական շարժման սկզբնավորման պատմության դասավանդման հայեցակարգային հիմքերը, «Ակունք», Գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2011, թիվ 1, էջ 104:

պատերազմի նկատմամբ: Եվ սա այն պարզ պատճառով, որ ժողովին մասնակցում էին արևմտահայ մի շարք նշանավոր գործիչներ՝ Ռ. Զարդարյան, Ա. Օխիկյան, Մ. Թերլեմեզյան, Հ. Սրվանցտյան և այլք:

Ժողովն ընդունում է բավական իրատեսական որոշումներ, որոնք, ցավոք, տարբեր դրդապատճառներով հետագայում անտեսվում են: Դրանցից հատկապես կարևոր էր այն, որ պատերազմի ժամանակ թե՛ արևմտահայությունը և թե՛ արևելահայությունը «պարտավոր է կատարել իր քաղաքացիական պարտքը պետության նկատմամբ» [76]:

Սակայն, ինչպես իրավացիորեն նկատել են Գևորգ Խուդինյանը և Արարատ Հակոբյանը, «.... երբ սկսվեց պատերազմը և քաղաքական ցնցումների ու վայրիվերումների հետևանքով անհնար դարձավ պահպանել չեզոքությունը՝ Հ.Յ.Դ.-ն, բնականաբար, նման ճակատագրական պահին չէր կարող մնալ անտարբեր և թույլ տար, որ արևմտահայ եղբայրներին օգնելու համար սկիզբ առած կամավորական շարժումը մնաանղեկ»[77]:

Վերոհիշյալ որոշումը դրվատելի էր երկու պատճառով. ա) թուրքերն ուզում էին, ինչպես վկայում է Կ. Սասունին, «.... որ մենք ապստամբենք Արարատեան Հայաստանի մէջ, գործենք ռուսական բանակի կռնակեն, բացի օրինական զինուորներէ, կամաւորական գունդեր կազմակերպենք եւ Կովկասեան ճակատի վրայ արշաւենք»[78], բ) իսկ ռուսներն ուզում էին, որ հայերը գործեն իրենց բանակի կողքին՝ ընդդեմ թուրքերի:

Այս անելանելի իրավիճակից կանխատեսվող ելքը վերոհիշյալ որոշումն էր, որը, սակայն, խախտվեց հօգուտ Ռուսաստանի, և թուրքերին տրամադրեց հայերի դեմ: Թեև, անհրաժեշտ է ավելացնել, որ ժողովի մասնակից որոշ արևմտահայ գործիչներ (օրինակ՝ Համազասպը) ջերմ կողմնակիցներ էին հօգուտ՝ ռուսական բանակի գործողությունների:

Կամավորական շարժմանը մասնակցելու վերաբերյալ դրական կողմնորոշում ունեին նաև արևմտահայ այլ գործիչներ, որոնք չէին մասնակցել Ընդհանուր ժողովին: Բավական է հիշատակել

---

[76] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 88, թ. 4, տե՛ս նաև Ստեփանյան Մ., նշվ. աշխ., էջ 36:
[77] Խուդինյան Գ., Հակոբյան Ա., ՀՅ Դաշնակցության պատմության խեղաթյուրման վերջին փորձերը, Ե., 2005, էջ 29:
[78] Սասունի Կ., Տաճկահայաստանը ռուսական տիրապետութեան տակ (1914-1918), Բոստոն, 1927, էջ 22:

Օսմանյան խորհրդարանի արդեն նախկին պատգամավոր Արմեն Գարոյին (Գարեգին Փաստրմաճյան):

Բավական հետաքրքիր է Կ. Պոլսի ՀՅԴ մարմնի (այն կոչվում էր Բյուրոյի հատված) վերաբերմունքը կամավորական շարժմանը: Այնտեղ, օրինակ, կարևորագույն տեղ էր զբաղեցնում այնպիսի ազդեցիկ, ծագումով արևելահայ քաղաքական գործիչ, ինչպիսին էր Ակնունին: Ուրեմն, դժվար է, ինչպես նշեցինք, այս պարագայում այս կոմիտեի դիրքորոշումը ներկայացնել սոսկ որպես արևմտահայ գործիչների քաղաքական մոտեցում: Հայաստանի ազատագրման շուրջ արևմտահայ քաղաքական մտքի ձևավորման վրա մեծ էր արևելահայ քաղաքական մտքի ազդեցությունը, ուստի շատ արևելահայեր, հաստատվելով Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի այլ շրջաններում, ինքնաբերաբար հանդես էին գալիս նաև որպես արևմտահայ քաղաքական մտքի կրողներ:

Կ. Պոլսի Դաշնակցության մարմնի դիրքորոշման մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում Մալխասը և Կարո Սասունին: Մալխասի (Արտաշես Հովսեփյան) վկայության համաձայն՝ Կ. Պոլսում տարաբնույթ են եղել դիրքորոշումները կամավորական շարժման վերաբերյալ: Վերջինս լինում է Կ. Պոլսում՝ «Ազատամարտի» խմբագրատանը, և տեսակցում Արմեն Գարոյի, Բարսեղ Շահպազի, Սարգիս Մինասյանի և Հրաչ Թիրաքյանի հետ: Կ. Պոլսի մարմինը նիստ է գումարում, որի մասին Մալխասը գրել է. «Ինչպէս կերեւէր, անոնք տարակարծիք չէին կամաւորական շարժումը առաջ բերելու մասին: Կը մնային միայն քանի մը հարցեր անմիջականօրէն կապուած այդ ձեռնարկին հետ: Պարզ էր ինքնին, որ կամաւորական շարժումը կրնար սկսիլ միայն Կովկասի մէջ: Իսկ ինչ պիտի լինէր Թուրքիոյ մէջ գտնուող ընդհանրապէս հայերու ու մասնաւորապէս դաշնակցականներու վերաբերմունքը Թուրքիոյ հանդէպ: Բոլորս ալ այն տեսակէտն ունէինք թէ՝ հայ ժողովուրդը պէտք է օրինապահ քաղաքացու դերին մէջ մնար ամէն տեղ, բայց մասնաւորապէս Թուրքիոյ մէջ»[79]:

Այսպիսով, Կ. Պոլսի հիշյալ ազդեցիկ արևմտահայ գործիչներն էլ դեմ չէին Կովկասում կամավորական շարժման սկսվելուն, բայց

[79] Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը, հայ և ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Ե., 1991, էջ 176:

դրա հետ մեկտեղ ցանկանում էին օրինապահ քաղաքացու դերը պահպանել Թուրքիայում: Անտեսվում էր այն հանգամանքը, որ Կովկասում սկզբնավորված կամավորական շարժումը բացասաբար էր անդրադառնալու արևմտահայերի օրինապահ կեցվածքի վրա:

Նրանք այդպես էին մտածում՝ ելնելով այն թյուր համոզմունքից, թե ռուսները շատ արագ կգրավեին Արևմտյան Հայաստանը: Արմեն Գարոն գտնում էր, որ կամավորների թիվը պետք է հասցվեր 30 հազարի, որոնք «պատերազմը յայտարարելուն պէտք է մտնեն երկիր, որպէս ռուսական բանակի յառաջապահներ»[80]:

Ինչպես նա, այնպես էլ շատ այլ գործիչներ սխալ պատկերացում ունեին ռուսական քաղաքականության մասին:

Այս ամենը վերաբերում է օգոստոս ամսին, բայց արդեն հոկտեմբերին Կ. Պոլսի մարմինը կարծես թե փոխում է իր դիրքորոշումը: Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելու նախօրյակին այն Թիֆլիս է ուղարկում Կ. Սասունուն, որի հայտնած տեղեկությունից եզրակացվում է, որ փոխվել էր դիրքորոշումը: Նա հետևյալն է գրում. «Ես հոկտեմբերի 12-ի կէսօրին Պոլսէն նաւ առած էի Տրապիզոն ելնելու եւ անկէ ալ Սասուն-Մուշ երթալու համար: Ինծի հետ կը տանէի ՀՅԴ Բյուրոյի (նկատի ունի ՀՅԴ Բյուրոյի Կ. Պոլսի հատվածը - Հ. Ս.) հրահանգ նամակները Էրզրում եւ Մուշ: Պոլսոյ եւ Թուրքիոյ դաշնակցական ղեկավար ընկերներու կարծիքով կամաւորական շարժման շուրջ շատ աղմուկ եւ շատ ցոյցեր էին, որ տեղի կ’ունենային: Ընկերներն ինծի կը թելադրէին, հնարաւորութեան պարագային, Կովկասի վրայով անցնիլ եւ յայտնել Կովկասի մեր ղեկավարներուն, որ հրաժարուին ցուցական գործունէութենէ եւ գաղտնի աշխատանք կատարեն ....»[81]:

Բայց, երբ Կ. Սասունին հասել էր Թիֆլիս, արդեն բանը բանից անցել էր: Ցարական Ռուսաստանը հասել էր նրան, որ սկզբնավորվել էր հայերի կամավորական շարժումը, որը կրում էր քառսային բնույթ, իսկ դաշնակցությունը, ստիպված խախտելով իր չեզոքության որոշումը, ձեռնամուխ էր եղել կամավորական գումարտակների ստեղծման գործին:

---

[80]Նույն տեղում, նաև՝ Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 382-383:
[81]Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 32:

Այդ է հաստատում նաև Լեոն, գրելով, որ Բյուրոյի նիստերից մեկում Հ. Քաջազնունին ելույթ ունենալով, արտահայտում է թե՛ Վանի և թե՛ երկրի դաշնակցական այլ մարմինների բացասական վերաբերմունքը Կովկասում սկսվող կամավորական շարժման նկատմամբ: Նա այն համարում էր վտանգավոր՝ արևմտահայերի համար[82]:

Կամավորական շարժմանը դեմ էր ՀՅԴ Վանի կոմիտեն, որի կարևորագույն ներկայացուցիչներից Արամ Մանուկյանը գտնում էր, որ դավնասակար էր արևմտահայության համար:

Վահան Փափազյանը, որն այդ օրերին Կ. Պոլսից անցել էր Վան, գրում էր, որ կովկասահայ գործիչների՝ կամավորական շարժմանը հակվելու մասին իր զեկուցումը ճնշող տպավորություն է թողնում ընկերների վրա: «Անոնք, - գրում է նա, - թուրքահայ ժողովուրդի համար կորուստաբեր կը համարէին կամաւորական գունդերու կազմութիւնը եւ մանաւանդ գործուն մասնակցութիւնը՝ ենթարկուելով ռուսական բանակին»[83]:

Հենվելով Էրզրումի ընդհանուր ժողովի որոշման վրա, Վանի կոմիտեն պահանջում էր անմիջապես վերջ տալ այդ շարժմանը, որը գրգռում էր թուրք կառավարությանը հայերի դեմ[84]:

Ս. Վրացյանը գրում էր. «Ծուտով Վանից եկան Քաջազնունին եւ Խեչոն: Առաջինը խիստ հակառակ էր կամաւորական շարժման եւ պնդում էր, թէ Վասպուրականի բոլոր ընկերները հակառակ էին կամաւորական խումբերի կազմութեան, իսկ Խեչոն համամիտ չէր Քաջազնունուն»[85]:

Կամավորական շարժման վերաբերյալ նույն կարծիքն ուներ նաև Ռուբեն Տեր- Մինասյանը, որը Սասուն-Մուշի կուսակցական ղեկավարն էր: Վերջինս ինքնատիպ քաղաքական միտք ունեցող գործիչ էր և միակն էր, որ Էրզրումի յիշատակված ընդհանուր ժողովում դեմ արտահայտվեց հօգուտ Ռուսաստանի շարժմանը և կողմ թուրքերի առաջարկին՝ կամավորական խմբեր կազմակերպել թուրքական բանակներին կից: Բայց նրա այդ առաջարկը նույնիսկ

[82] Տե՛ս Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 297:
[83] Փափազեան Վ., նշխ. աշխ., էջ 283:
[84] Տե՛ս Լեո, նշվ. աշխ., էջ 297:
[85] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ.Գ, Պէյրութ, 1963, էջ 19:

քվեարկության չդրվեց[86]: Ռուբեն Դարբինյանը (Արտաշես Չիլինկարյան) միանգամայն ճիշտ է գնահատել Ռուբեն Տեր-Մինասյանի դիրքորոշումը. «Ներկայի ակնոցով դիտելով անցեալի դէպքերը` կրնանք ըսել, որ Ռուբէնի այս տեսակէտը կամ ծրագիրը եւս աւելի առողջ, աւելի հեռատես եւ քաղաքականապէս աւելի ճիշտ էր, քան այն ճամբան, որուն հետեւեցաւ գրեթէ ամբողջ հայութիւնը ՀՅԴ գլխավորութեամբ»[87]:

Սրա հետ մեկտեղ դաշնակցության մեջ միաժամանակ պատերազմի սկսումով իշխեց այն համոզմունքը, որ Հայկական հարցը կլուծվի և Արևմտյան Հայաստանը կստանա ինքնավարություն: ՀՅԴ Արևելյան բյուրոյի 1914 թ. վերջի շրջաբերականներից մեկում կարդում ենք. «Կամավորների կազմակերպումով մենք նպատակ ունեինք մեր մասնակցությունը բերել այս պատերազմին, վորով յեւ ընդհանուր հաշվեհարդարի միջոցին ավելի մեծ իրավունք պահանջել, վոր գումարվելիք վեհաժողովը լուծե մեր հարցն էլ: Մենք հույս ունենք, վոր յերյակ համաձայնության հաղթությամբ կվորոշվի յեւ տաճկահայեր ապագան յեւ ուզում ենք հավատալ, վոր թուրքաց Հայաստանը կստանա ավտոնոմիա: Այդպիսի հավաստիացումներ լսում ենք Պարիզից յեւ թե մանավանդ Պետրոգրադից: Այսպես ռուս-թուրքական պատերազմի առթիվ Պետրոգրադում յեղած հետապնդումները այն հետևանքն են տվել, վոր արտաքին գործոց նախարարության մեջ համակրանքով են ընդունվել «վեց վիլայեթների» եւ նրա անբաժան մաս Կիլիկիայի ինքնավարության միտքը»[88]:

Բավարարվելով հիշյալ փաստերով` անհրաժեշտ ենք համարում ներկայացնել այն հայեցակարգը, համաձայն որի` հայ քաղաքական միտքը ընդհանուր առմամբ դրական վերաբերմունք է դրսևորել կամավորական շարժման նկատմամբ, և առանձին գործիչների բացասական վերաբերմունքը վճռորոշ չի եղել այդ շարժումը կասեցնելու տեսանկյունից:

Կամավորական շարժման վերաբերյալ մյուս քաղաքական կուսակցությունների վերաբերմունքի մասին նույնպես կարելի է

[86] Տե՛ս նույն տեղում, էջ 9:
[87] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Է, Լոս Անճըլըս, 1951, էջ 126-127:
[88] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 89, թ. 3:

պնդել, որ այն մեկ ընդհանուր համոզմունքով չի դրսևորվել: Այն ուներ իր դրդապատճառները, որոնցից նախ և առաջ պետք է առանձնացնել այն, որ 1896 թ. Լոնդոնի խորհրդաժողովում Հնչակյան կուսակցությունը պառակտվել էր, նույն թվականին Վանի ինքնապաշտպանությունից հետո գլխատվել էր Արմենական կուսակցությունը, որի անդամներից շատերը 20-րդ դարասկզբին Վանում մտան ՀՅԴ շարքերը, իսկ ոմանք, միանալով վերակազմյալ հնչակյաններին, 1908 թվականին հիմք դրեցին Հայ Սահմանադրական Ռամկավար Կուսակցությանը (ՀՍՌԿ): Բայց այս իրադարձություններից հետո էլ որոշ արմենականներ իրենց այդպես էլ շարունակեցին կոչել: Նրանցից էր Արմենակ Եկարյանը, որը, ելնելով Արմենական կուսակցության ծրագրային դրույթներից, որոնք առավել իրապաշտական էին, քանզի բխում էին մեծ տերությունների՝ հայության նկատմամբ որդեգրած քաղաքականության երկդիմության ճիշտ ընկալումներից, սխալ էր համարում կամավորական շարժումը՝ հօգուտ ռուսների: Նա մասնավորապես հետևյալն է գրում. «Կովկասի մէջ Թուրքիոյ դէմ կռուելու նպատակաւ կամաւորական գունդեր կազմելու ռուսական քաղաքականութեան ներքին, չխոստովանուած դրդապատճառը ոչ թէ արեւմտահայոց փրկութիւնն էր, ինչպէս կեանքը ցոյց տուաւ արդէն, այլ այդ ճակատի վրայ ռուսական ուժերու անբաւարարութիւնը: Կազմուեցան կամաւորական գունդերը, եւ դաշնակցութիւնը, որ վարկաբեկ էր Ռուսիոյ մէջ և հալածուած, նորէն ջուրին երեսը ելաւ. իր հին խմբապետները գործի անցան, գործի անցաւ Գարօ Փաստրմաճեանը, մոռնալով, թէ ինք օսմանեան երեսփոխան էր, մոռնալով Թուրքիոյ իրականութիւնը, արեւմտահայութիւնը, Թուրքիոյ մէջ մնացած իր ընկերներն անգամ»[89]:

Հարկավ, Ա. Եկարյանը ճիշտ չի ներկայացնում ռուսական քաղաքականության պատճառները՝ կապված կամավորական շարժման խրախուսման հետ, բայց նաև չի սխալվում, գտնելով, որ լուրջ հաշվեկշռի չենթարկվեց արևմտահայության փրկության առումով դրանունենալ իք օգուտն ու վնասը:

[89]Յուշեր Արմենակ Եկարեանի, Պէյրութ, 1985, էջ 150:

Գրեթե նույն տեսակետն է արտահայտում արմենական հայտնի գործիչ Արտակ Դարբինյանը, որ գրում է. «Կամաւորական շարժումը էլ աւելի է բորբոքելու թուրքերի մինչեւ այժմ զսպուած բարբարոսական կիրքը եւ այս անգամ թուրքահայութիւնը անխնայօրէն պետք է ջարդուի ամէն տեղ, մանաւանդ, որ ինքնապաշտպանութեան միջոցներէն լրիւ զուրկ է»[90]:

Կարևոր ենք համարում նաև Պատրիարքարանի քաղաքական վերաբերմունքի ճշտումը կամավորական շարժման նկատմամբ: Պետք է նշել, որ Պատրիարքարանը Կ. Պոլսի հայոց պատրիարք Զավեն արքեպիսկոպոսի գլխավորությամբ այս շարժման նկատմամբ որդեգրել էր բացասական կեցվածք, բայց նաիր գործունեությունը համաձայնեցնում էր հայ քաղաքական կուսակցությունների հետ: Բավական է հիշատակել այն փաստը, որ 1914 թ. հոկտեմբերի 20-ին Զավեն արքեպիսկոպոսը հրավիրում է խորհրդակցություն, որին մասնակցում են հայ քաղաքական կուսակցությունների, տարբեր քաղաքական հոսանքների ներկայացուցիչներ և ոչ կուսակցական գործիչներ: Դրանց թվում էին Վահրամ արք. Մանկունին, Պետրոս Հալաճյանը (իթթիհատի անդամ), Գրիգոր Զոհրապը, Բյուզանդ Քեչյանը, Համբարձում Պոյաճյանը (հնչակյան), Վարդգես Սերենկյուլյանը (դաշնակցական), Տիրան Քելեկյանը (ՀՍՌԿ), Հարություն Շահրիկյանը (դաշնակցական) և ուրիշներ: Վերջիններս Պատրիարքարանին և Ազգային վարչությանը հանձնարարեցին բարվոք հարաբերություններ մշակել իթթիհատի հետ և «Շրջաբերական հրահանգ մը ղրկել անմիջապէս բոլոր գաւառները եւ հրաւիրել ժողովուրդը կատարել իր պարտականութիւնը»[91]:

Ավելին, պատրիարքն այցելում է օսմանյան ներքին գործերի և արդարադատության նախարարներին՝ հավաստիացնելու, որ հայ ազգը նվիրված է օսմանյան հայրենիքին[92]:

Պատերազմող կողմերի նկատմամբ չեզոքության և սեփական անվտանգության մասին կոչերով էր հանդես գալիս նաև Գ. Զոհրապը: Սակայն, անհնար էր շրջել պատմության անիվը: Ռուսական

---

[90]Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն, Փարիզ, 1947, էջ 254:
[91]Զաւեն արքեպիսկոպոս, Պատրիարքական յուշերս, վաւերագրեր եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947, էջ 40-50:
[92]Տե՛ս նույն տեղում, էջ 75:

քաղաքականությունն արդեն արել էր իր գործը, և կամավորական շարժումն ընթացք առավ՝ ակամայից իր մեջ ներառելով հայ քաղաքական գործիչներին, դյուրահավատ հայրենասերներին և խմբապետներին:

Ինչ վերաբերում է ՀՍՌԿ դիրքորոշմանը, ապա պետք է շեշտել, որ այն նույնպես որդեգրեց ՀՅԴ Էրզրումի Ընդհանուր ժողովի կարգախոսը և գիտակցելով, որ պատերազմը կարող է թուրքերի կողմից առիթ հանդիսանալ արևմտահայության բնաջնջման համար, կանգնեց օսմանյան հայրենիքի պաշտպանութեան դիրքերում՝ հայերին կոչ անելով կատարել իրենց զինվորական պարտքը[93]: Բայց արդեն 1915 թ. գարնանը, երբ ՀՍՌԿ ղեկավարությունը տեղափոխվել էր Թիֆլիս, բախվելով ցեղասպանութեան փաստին, փոխեց իր տեսակետը կամավորական շարժման նկատմամբ և արևմտահայությանը կոչ արեց. «Վրէժ՝ մեր մորթոտուող եղբայրներուն ու քոյրերուն, մեր աւերակներուն, մեր արիւնի մէջ խեղդուած յուրաքանչիւրին համար: Վրէժ այն վայրենի ոհմակներու հանդէպ, որ այս պահուս դիւային հրճուանքով կը լողան հոսող հայ արեան մէջ.... Աչքի տեղ աչքեր և ակռայ ին տեղ ակռաներ»[94]:

Փաստորեն, նրանք նույնպես հրաժարվեցին օրինապահ քաղաքացու նախկին կոչերից: Իսկ Թիֆլիսն այդ ժամանակ դարձել էր կամավորների հավաքագրման և կազմակերպման հիմնական դարբնոց, որտեղ Ազգային բյուրոն իր ձեռքում էր կենտրոնացրել կամավորական շարժման ամբողջ ղեկավարումն ու կազմակերպման աշխատանքները:

Իսկ հնչակյանների բոլոր կառույցները ջանք չէին խնայում կամավորական շարժմանը զորակցելու գործում: Այդ պատրվակով 1915 թ. հունիսին Թիֆլիսում տեղի ունեցավ հնչակյանների միջշրջանային ժողով, որի մասին Կահիրեից գրված իր նամակում Ս. Սապահ-Գյուլյանը նշում էր. «.... պատգամաւորներ են եկել 32 հոգի, եւ ժողով են կազմել, ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ խնդիրները հաստատ

[93]Տե՛ս «Վան-Տոսպ», 1914, թիւ 40-89, էջ 435:
[94]Սարգսյան Ս., Հայ սահմանադրական Ռամկավար Կուսակցություն (1908-1921), Ե., 2009, էջ 106:

հիմունքների վրայ դրել, ընտրել են ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԻՉ ԿՈՎԿԱՍԻ, ու Կեդրոնի իրաւունքով գործերը վարում են»[95]:

Թիֆլիսում գործող ՍԴՀԿ կամավորների խնդիրներով զբաղվող Գործադիր մարմինը գլխավորում էր նվիրյալ հնչակյան Հարություն Գասպարյանը (Արտեմիս): Նրա հսկողությամբ հնչակյան կամավորներն անցնում էին զինավարժությունների, մարզումների կարճատև փորձաշրջան, որից հետո ուղարկվում ռազմաճակատ:

Այս կուսակցության կողմից 6-րդ կամավորական գումարտակի կազմավորման հանգամանքը ևս վկայում է այն մասին, որ այն նույնպես դրական էր վերաբերում այդ շարժմանը:

Արդեն, երբ կամավորական շարժումը՝ հօգուտ ռուսական զենքի հաղթանակի, կատարված փաստ էր, ինչպես արևմտահայ, այնպես էլ առհասարակ հայ քաղաքական միտքը շարունակում էր զարգանալ այն տրամաբանությամբ, որ ցարական զորքերը արագորեն կգրավեն Արևմտյան Հայաստանը, և հագուրդ կտան գեթ ինքնավարություն ունենալու՝ հայության բաղձանքներին: Սակայն 1914 թ. նոյեմբերին, երբ Թուրքիայի հետ պատերազմի մեջ ներքաշվեց Ռուսաստանը, շատ չանցած, իր որդեգրած մարտավարությամբ սկսեց ի դերև հանել այդ բաղձանքները:

Ռուս-թուրքական պատերազմի սկզբնավորումով Առաջին աշխարհամարտում բացվում է Կովկասյան ռազմաճակատը: Արևմտյան Հայաստանի սահմաններին գտնվող ռուսական բանակն արագ անցնում է սահմանը և չորս թևով առաջանում: Կենտրոնական թևը Կարաուրգանից անցնում է դեպի Քեոփրիքոյ: Երկրորդ թևը Ստահան գյուղից մտնում է Բասենի դաշտ և ուղղվում դարձյալ դեպի Քեոփրիքոյ և Հասանկալե: Երրորդ թևը Արարատյան դաշտից շարժվում է դեպի Ալաշկերտի դաշտ, հին Բայազետ և Վան: Չորրորդ թևը մտնում է պարսկական Ատրպատական և շարժվում դեպի Վան[96]:

Այս ուղղություններով առաջացող ռուսական զորքերի հետ կռվում էին հայ կամավորները: Սակայն հենց պատերազմի առաջին ամիսներից պարզ դարձավ, որ ռուսական զորքերը չեն շտապում, իսկ

---

[95]Ստեփանյան Մ., նշվ. աշխ., էջ 45:

[96]Սասունի Կ., Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914-1918), Պէյրութ, 1966, էջ 37-38, մանրամասն տե՛ս Корсун Н. Г., Первая мировая война на Кавказском фронте, М., 1946, с. 42-48:

դա նշանակում էր, որ հայ գործիչների սպասելիքները՝ կապված Արևմտյան Հայաստանի գրավման հետ, իրեն չարդարացրեց: Հայոց բուռն ոգևորությունը երկար չտևեց:

Այդ հաստատում է նաև Արարատ Միրզոյանը, ասելով, որ «.... ռուսների դանդաղ առաջխաղացումը հայ և քուրդ ժողովրդի մոտ առաջ էր բերում այն գաղափարը, թե ռուսները դիտմամբ են դանդաղում, որպեսզի Հայաստանը գրավեն առանց հայերի»[97]:

Ռուսներն այս հարձակման արդյունքում հասան մինչև Հասանկալայի դռները, իսկ Ալաշկերտը գրավելով՝ մինչև Ղլիճ Կետուկ: Ավելի առաջ գնալ, կնշանակեր գրավել Էրզրումն ու Տրապիզոնը, որը տվյալ պահին անհնար էր: Փաստորեն, ռուսական առաջին հարձակման հետևանքով գրավվեցին Էրզրումի նահանգի երկու հայաշատ գավառները՝ Բասենն ու Ալաշկերտը: Պատերազմական գիծը միաժամանակ «կայունութիւն մը ունեցավ եւ մնաց Գավրե-Ծամե-Ալադաղ, Խըլըճ-Գետիկ-Դանակերմազ, Դալի-Բաբա-Գարաուրկան»[98]: Ինչպես դիպուկ կերպով նկատում է նույն Կ. Սասունին՝ «Առայժմ այսքան էր Թրքահայաստանը»[99]:

Նշանակում է, որ հայ քաղաքական ղեկավարները, եթե անգամ ցանկանային էլ, ապա՝ անկարող էին ավելին գրավել:

Սակայն այս գրավյալ տարածքները, որոնց հայացման աշխատանքներին ձեռնամուխ եղան հայ քաղաքական գործիչները, երկար չտևեցին: 1914 թ. դեկտեմբերին Էնվեր փաշայի հարձակման հետևանքով սկսվեց ռուսական զորքերի առաջին նահանջը: Բասենի և Ալաշկերտի թերի զինված բնակչությունը բռնեց գաղթի ճանապարհը: Էնվերը, դիմելով հարձակման, նպատակ ուներ «օգտվելով կովկասեան ռուս բանակի տկարացումից՝ արագ եւ վճռական հարվածով գրավել Օլթին, Սարիղամիշն ու Կարսը եւ ուղղակի արշավել Թիֆլիսի վրա»[100]:

Թուրքական հարձակման հետևանքով «Կովկասյան բեմը Բասենէն կը փոխադրուեր զինուորական բնական կարգով, Ախալքալակ-Լոռի-

---

[97] Տե՛ս Միրզոյան Ա., Էջեր Արեւմտահայ գործիչների եւ հայ կամավորների հրամանատարության 1915 թ. նամակագրությունից, «Բանբեր Հայաստանի արխիվների», Ե., 2006, թիվ 1(107), էջ 70:
[98] Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 40:
[99] Նույն տեղում:
[100] Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 45:

Գանձակ-Ղարաբաղ, այսինքն՝ Փոքր Կովկասեան լեռնաշղթայի վրայ»[101]: Ռուսական առաջին նահանջը հայության վրա ունեցավ երեք բացասական անդրադարձ, որոնք էին. «1.Խախտեց գրաւեալ տարածքների բնակչութեան այն համոզմունքը, որ ռուսների կողմից վերջնականապէս ազատուած են թուրքական տիրապետութիւնից եւ այլեւս տէր են իրենց հայրենիքին: Նրանց էութեան եւ հոգեբանութեան մէջ ներարկուեց վախը, որ իրօք անապահով են եւ ցանկացած պահի կարող է կրկնուել նոյնը: 2.Հայ քաղաքական ղեկավարների վրա ծանրացաւ եւս մէկ հոգս՝ գաղթականութեան հոգսը: Այդ նոյն հոգսը չունենալու համար ռուսը շատ չանցած որդեգրեց մի քաղաքականութիւն, որն էր՝ Արեւմտեան Հայաստանը գրաւել այն ժամանակ, երբ հայութիւն վերջնականապէս կոչնչանայ թուրքերի կողմից: 3.Փոխուեց վերաբերմունքը կամաւորական շարժման նկատմամբ, սառեց նախկին ոգեւորութիւնը, քանզի դրանով մի աւելորդ առիթ էր տրւում թուրքերին իրենց ջարդերի վաղօրոք ծրագրած քաղաքականութիւնն իրականացնելու համար»[102]:

Կարծում ենք, որ կարելի է համաձայնել Ա. Ներսիսյանի նաև այն եզրահանգմանը, ըստ որի՝ «արդէն 1914 թ. վերջերին կրկին բեկում սկսուեց հայութեան հոգեբանութեան մէջ ի վնաս ռուսական կողմնորոշման, քանզի սկսեց պարզ դառնալ այն ճշմարտութիւնը, որ ռուսներից վերստին խաբուած են, ճշմարտութիւն, որն աւելի արմատաւորուեց 1915 թ. մեծ ցեղասպանութեան օրերին, որի մասին տեղեակ լինելով իրենց հետախոյզներից, ռուսները ոչ մի փրկարարի քայլ չկատարեցին, ստիպելով մէկ անգամ եւս ճաշակել իրենց քաղաքականութեան խաբկանքը»[103]:

Այստեղից հետևություն, որ արևմտահայ և առհասարակ հայ քաղաքական մտքի ներկայացուցիչները զգում էին իրենց սխալը Ռուսաստանի կողմից ունեցած ակնկալիքների առումով, և այդ զգացումն ավելի ուժեղացավ Սարիղամիշի ճակատամարտից հետո:

---

[101] Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 51:
[102] Ներսիսեան Ա., Հայերի հոգեբանութեան փոփոխութեան գործօնները 1912-1914 թուականներին, «Բագին», Պէյրութ, 2007, Սեպտեմբեր, թիւ 3, էջ 60:
[103] Նոյն տեղում:

Սարիղամիշի ճակատամարտի նկարագրությունը մեր նպատակների մեջ չի մտնում: Այն սկսվեց 1914 թ. դեկտեմբերի 9-ին, երբ ռուսներն անցան հակահարձակման և ավարտվեց 1915 թ. հունվարի 5-ին Էնվերի բանակի ջախջախիչ պարտությամբ: Նա կորցրեց իր 90 հազարանոց բանակի մեծ մասը՝ 70 հազ. զինվոր[104]:

Էնվերը մազապուրծ փախավ, բայց ռուսական բանակը Սարիղամիշից ոչ մի քայլ առաջ չշարժվեց: Սարիղամիշի ճակատամարտով ձախողվեց Կովկասը գրավելու թուրքական պլանը, բայց դրանից հետո սկսվեց հայոց ցեղասպանության իրագործումը, որին ոչ մի կերպ չխոչընդոտեց ռուսական բանակը:

Այս ճակատամարտից հետո շատ չանցած՝ 1915 թ. Փետրվարին, անգլո-ֆրանսիական զորքերը սկսեցին Դարդանելի օպերացիան: Իսկ ռուսներին ձեռնտու չէր, որ դաշնակիցները գրավեին Կ. Պոլիսը: Ուստի, ռուսական բանակը գրեթե մեկ տարի դեպի արևմուտք առաջ չշարժվեց, որին թուրքերը չէին դիմանա: Ռուսական հրամանատարությունը ձգտում էր այն պատրանքը ստեղծել թուրքերի մոտ, որ կովկասյան ռազմաճակատում շատ ուժեր չունի, ինչը նրանց հնարավորություն կտար ավելի շատ զորքեր կենտրոնացնելու նեղուցներում: Երկրորդ պատճառն այն էր, որ ռուսները ձգտում էին Հայաստանը գրավել այն ժամանակ, երբ այն դատարկված կլիներ իր բնիկ հայ տարրից:

Ռուսներն իրենց հարձակումը շարունակեցին Պարսկաստանից, 1915 թ. հունվարից սկսած գրավեցին Թավրիզը, Դիլմանը, ինչպես նաև Բաշկալեն, Շատախը, Կոթուրը, Արճեշը, Վանը, որը շուրջ մեկ ամիս հերոսական կռիվների մեջ էր: Բայց կամավորներն այդպես էլ չկարողացան իրականացնել արևմտահայության փրկելու իրենց առաքելությունը, քանի որ դա չէր բխում ռուսական քաղաքական շահերից: Հարց է առաջանում՝ կամավորական գումարտակները, եթե ամբողջությամբ կախյալ էին ռուսական հրամանատարությունից, այդ դեպքում ովքե՞ր էին շահում նրանց անձնուրաց կռիվներից: Կարծում ենք, որ պատասխանը հստակ է՝ ռուսները, քանզի բացառությամբ Վանի, արդեն 1916 թ. գրեթե գրավված Արևմտյան Հայաստանում հայ ազգաբնակչությունը մեծամասամբ վերացվել էր:

---

[104]Նույն տեղում:

Եվ կրկին հարց. եթե հայ քաղաքական ուժերը չգնային կամավորական գումարտակների ստեղծմանը, միթե՞ ռուսները չէին կարող գրավել Արևմտյան Հայաստանը: Պատասխանը դարձյալ պարզ է` իհարկե կգրավեին: Ուրեմն, հայ քաղաքական մտքի այն ուղղվածությունը, որ կամավորական գումարտակներով արագ կգրավեն Արևմտյան Հայաստանը, իրեն չարդարացրեց: Ռուսական զորքերին կից կամավորական գումարտակների ստեղծումը սխալ մարտավարություն էր, որը հիմնականում չծառայեց իր նպատակին: Այն միայն նոր առիթ հանդիսացավ թուրքական ջարդարարական ծրագրերի նախապատրաստման և իրականացման համար: Սակայն չի նշանակում նաև, որ ճշմարիտ է թուրքական այն հայեցակետը, որ հայերին կոտորել են կամավորական շարժման համար:

1915 թ. ռուսական մեծ նահանջի ժամանակ կամավորները հնարավորություն ունեցան մեկ անգամ ինքնուրույն գործելու և շարժվելու դեպի Մուշ և Սասուն, որն օրհասական կռիվների մեջ էր, սակայն դա էլ չարեցին, որը կարող էր հաջողությամբ պսակվել:

Ռուսական մեծ նահանջը տեղի է ունենում հուլիսին, որի հետևանքով պարպվում է Վանը, Բուլանուխ-Մանազկերտը, իսկ ժողովրդի մի մասը Ալաշկերտի ճանապարհով ուղևորվում է դեպի Իգդիր, իսկ մյուս մասը` դեպի պարսկական Ատրպատական[105]:

Ռուսական այս նահանջի մասին Արարատյան գնդի հրամանատար Վարդանը հետևյալն է գրում. «.... Նկատի ունենալով նոցա նահանջը, որից հետո մեր դրությունը ծանրանում էր, խնդրեցի Նիկոլաևից, որ գոնե մեզ թողնի իրենց թնդանոթները, իրենց զինվորներով:

---

[105]Տե՛ս Զորմիսեան Լ., Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, հ. Գ, Պէյրութ, 1975, էջ 264, նաև` Արամը, Մահուան յիսնամեակին առթիվ, Ե., 1991, էջ 457-459, Արամ Մանուկյան, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 2009, էջ 265-267, Ասրյան Ա., Արամ Մանուկյան, կյանքը և գործունեությունը, Ե., 2009, էջ 135-139, Մխիթարեան Օ., Վանի ինքնապաշտպանութիւնը, «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1924, Յունիս, թիւ 8, էջ 98-101, նույնի 1924, Յուլիս, թիւ 9, էջ 130-132, նույնի 1924, Սեպտեմբեր, թիւ 11, էջ 89-90, նույնի 1924, Նոյեմբեր, թիւ 1(25), էջ 8-90, նույնի 1925, Մայիս, թիւ 7(31), էջ 93-94, Ներսիսյան Ա., Արամ Մանուկյանը և հայոց նոր պետականության արարումը, «Էջմիածին», Ե., 2007, Ե, մայիս, էջ 146, տե՛ս Հարությունյան Ա., Ռուսական բանակի նահանջի և Վան-Վասպուրականի 1915 թ. մեծ գաղթի հարցի շուրջ, «Իրան-Նամե», 2001, հ. 37, էջ 18-23, նույնի Վան-Վասպուրականի ազգաբնակչության 1915 թ. հուլիսյան գաղթը, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 2002, թիվ 2 (606), էջ 46-58, նույնի Վան-Վասպուրականի ազգաբնակչության Մեծ գաղթը. Պատճառները, ընթացքը, հետևանքները և պատասխանատվության խնդիրները, Հայաստանի մայրաքաղաքները, գիրք 1, Վան, Ե., 2013, էջ 170-196, Ա-Դո (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան), Իմ հիշողությունները, Ե., 2015, էջ 265-267 և այլն:

Պատասխանեց, որ ոչինչ չեն կարող թողնել: Նա, որ նահանջը մասամբ բացատրում էր նրանով, որպես թե կոնտրռազվետկայից տեղեկություն է ստացել (Դևոյան-ռազվետկայի պետը), որ մեզ վրա տաճկական մեծ ուժեր են գալիս: Հետո պարզվեց, որ ոչ մի ուժ պատրաստ չի եղել մեզ վրա գալու: Այդ ժամանակ ռուսների վերաբերմունքը դեպի հայերը, դեպի հայկական հարցը շատ կասկածելի էր ու խորհրդավոր.... Իսկ երբ հասանք Բերկրիկալա, կարծես դիտավորյալ և իրոք որ դիտավորյալ էր, Նիկոլաևը նստեց և հայտնեց, որ наша задача только да Беркри-Кала. Իզուր չէր Լաքանովը ասել, որ մենք Հայաստանը կուզենք առանց հայերի, իսկ դժբախտ տաճկահայ ժողովուրդը իր փրկության հույսը դրել էր քրիստոնյա ռուս կառավարության վրա: Այս բոլորը ցույց են տալիս, որ հայերի կոտորվելը ցարական կառավարության ցանկությունն էր ....»[106]:

Այս նահանջն էր, որ «մեզի պատճառեց «40 հազար հայերի» հավելվածական մի ջարդ, մեր արիւնարբու թշնամիների՝ թուրքերի կողմից, եւ որը իր ժամանակին բացատրւում էր պարտադրուած տեղական ռազմավարական պատճառաբանութիւններով»[107]:

Այս օրերին հայ կամավորները ստացել էին Սասունից գրված Ռուբենի և Վ. Փափազյանի աղերսալի նամակները, որոնցով խնդրում էին արագ օգնության հասնել հերոսական ժողովրդին: Ընդ որում, այդ նամակներից մեկում նրանք ապացուցում էին, որ Սասուն և Մուշ հասնելը դյուրին էր, որովհետև թշնամին չուներ համապատասխան ուժեր, թուրքական բանակը քայքայված էր[108]: Հայ կամավորները կարող էին առաջ շարժվել, որը չարեցին:

1915 թ. հուլիսին Ս. Վրացյանը և Ն. Աղբալյանը Վանի ափին գտնվող Խնձորկին գյուղում խորհրդակցություն են գումարում, որին մասնակցում են կամավորական գումարտակների հրամանատարներ: Քննվում է Մուշ և Սասուն հասնելու նպատակահարմարության հարցը: Ս. Վրացյանը գրում է. «Դրոն պնդում էր, որ եթե ռուս բանակը որևէ պատճառով դանդաղեցնի յառաջխաղացումը, հայ կամաւորները պէտք է առանձին շարժուէն առաջ: Նա համոզուած էր, որ ջոկատի հրամանատար զօր. Տրուխինը, որ

[106] ՀԱԱ, ֆ. 370, ց. 3, գ. 11, թ. 4 նաև՝ ֆ. 402, ց. 2, գ. 11, թ. 5:
[107] Մխիթարեան Ս., Հայկական Հարցը, Փարիզ, 1968, էջ 39:
[108] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 95, թ. 1-15:

հայերից սիրուած մի ծերունի էր, կը տրամադրէր կամաւորներին թնդանօթներ եւ կոզակային մասեր: Դրօն ինքը նոյնիսկ խօսել եւ ստացել էր կոզակների համաձայնութիւնը: Անդրանիկը սխալ եւ անիրագործելի էր համարում Դրօյի ծրագիրը, կամաւորական խմբերը առանձին, ասում էր նա, չեն կարող Տարօն հասնել եւ պէտք է իրենց շարժումները յարմարացնեն ռուս բանակի տակտիկային»[109]:

Հարց է առաջանում, եթե կամավորական գումարտակները ամբողջովին պետք է հարմարվեին ռուսական զորքերի մարտավարությանն այն դեպքում, երբ վերջիններս ստույգ տեղյակ էին հայկական ջարդերից, այդ դեպքում ո՞րն էր նրանց գործունեության նպատակը:

Այսպիսով, առաջխաղացումը տեղի չի ունենում, որին հետևում է Սասունում ապաստանած 60 հազ. հայերի ջարդը[110]:

Ռուսական զորքերն այնուհետև կովկասյան ռազմաճակատում ընդհանուր հարձակման անցան միայն 1916 թ. հունվարին, երբ արևմտահայությունից բեկորներ էին միայն մնացել:

Կարևոր է նաև մեկ այլ հարցի պատասխանի որոնումը, այն է՝ ճի՞շտ էին արդյոք արևմտահայ և առհասարակ հայ քաղաքական մտքի կրողները ռուսական բանակին կից կամավորական գումարտակների կազմավորման հարցում: Հարցին պատասխանելու համար հարկ ենք համարում մեջբերել Ս. Վրացյանի վկայությունը կամավորական շարժմանը հարելու նպատակների մասին. «Կամավորական խմբեր կազմակերպելով՝ Կովկասի հայ ղեկավար շրջանները նպատակ ունէին՝ մի կողմից մասնակցելով պատերազմին Թիւրքիայի դէմ՝ արագացնել թիւրքահայերի ազատութիւնը, միւս կողմից՝ զինուած ուժեր ունենալով ռազմաճակատի առաջաւոր մասերում՝ նպաստել այնտեղի հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան գործին: Ենթադրւում էր, որ հայ կամաւորական խմբերը արագ շարժումներով կարող էին առաջն առնել կամ մեղմացնել կոտորածները»[111]:

Նշենք, որ այդպես էին մտածում ոչ միայն Կովկասի հայ ղեկավարները, այլև՝ արևմտահայ քաղաքական շատ գործիչներ, մանավանդ, երբ ոչնչով այլևս հնարավոր չէր կասեցնել Արևմտյան

[109]Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 91:
[110]Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև Ներսիսյան Ա., Ռուբէն, Ե., 2011, էջ 203-206:
[111]Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 10:

Հայաստանի շուտափույթ ազատագրության հույսերով պայմանավորված այդ շարժումը: Սակայն հենց պատերազմի սկզբի ամիսները ցույց տվեցին, որ անհնար էր կատարել այն առաքելությունը, որի մասին գրում է Ս. Վրացյանը: Կամավորական գումարտակներն ամբողջությամբ հանդիսանում էին ռուսական զինվորական ստորաբաժանումների կցորդները և զրկված էին ինքնուրույն գործելու, արևմտահայերին օգնելու և կամ նրանց ինքնապաշտպանությունը կազմակերպելու հնարավորությունից: Ընդհակառակը՝ հայ և հիմնականում արևմտահայ կամավորների ռուսական զորքերի կազմում կռվելու փաստն ավելի գազազեցրեց թուրք պարագլուխներին, և Սարիղամիշի ճակատամարտից շատ չանցած՝ արդեն տրվեց հայոց զանգվածային ջարդերի հրահանգը: Իսկ Դիլմանի ճակատամարտում (1915 թ. Ապրիլ) պարտվելուց հետո[112] Խալիլ փաշան իր նահանջի ճանապարհին հրամայեց կոտորել Բերկրիի հովտի ամբողջ հայ բնակչությանը:

Ինչպես համոզվում ենք, հայ կամավորական գումարտակների ստեղծմամբ և ռուսական զորքերին օժանդակելով արևմտահայությանը փրկելու հայ քաղաքական ուժերի մարտավարությունն իրեն ամենևին չարդարացրեց:

Ամփոփելով ասվածը՝ անհրաժեշտ ենք համարում հետևյալ եզրակացությունները կատարել.

1.Կամավորական շարժման վերաբերյալ հայ քաղաքական միտքը չի ունեցել մեկ ընդհանուր ուղղվածություն:

2.Չի եղել արևմտահայ առանձին քաղաքական հոսանք կամ կուսակցություն, որը կամավորական շարժման նկատմամբ իր վերաբերմունքով լինի միակարծիք:

3.Սկզբնական շրջանում կարծես թե ընդհանրության է հասել այն գաղափարը, որ չպետք է տուրք տալ այդ շարժմանը՝ պահպանելով չեզոքություն, բայց այն եղել է տեսականորեն, իսկ գործնականում ցարական իշխանությունների քաղաքականությամբ և Արևմտյան Հայաստանի շուտափույթ գրավման թյուր հույսերով պայմանավորված՝ մեծ է եղել հակվածությունը դեպի այդ շարժումը:

---

[112]Տե՛ս Կացարով Գ., նշվ. աշխ., էջ 68:

## 1.3. Մեծ եղեռնը և Արևմտահայ քաղաքական միտքը

1915 թ. հայոց ցեղասպանությունը, որն սկսվեց արևմտահայ մտավորականների ձերբակալությամբ, բնականաբար նպաստեց արևմտահայ քաղաքական մտքի վայրընթացին: Փակվում են լրատվական և հրատարակչական բոլոր այն միջոցները, որոնցով արտահայտվում էր այդ միտքը: Ապրիլի 24-ից մինչև 29-ը ձերբակալվում և ապա խումբ-խումբ Անատոլիայի խորքերն են աքսորվում երեսփոխաններ, ուսուցիչներ, բժիշկներ, արվեստագետներ, հոգևորականներ և բազում այլ մտավորականներ` թվով ավելի քան 800 հոգի[113]:

Դրանց թվում էին այնպիսի նշանավոր գործիչներ, ինչպիսիք են Ակնունին, որը թեպետ արևելահայ էր, բայց արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքի ակնառու դեմքերից էր, Վարդգեսը, Գ. Զոհրապը, Հ. Ճահրիկյանը, Ռ. Զարդարյանը, Ն. Տաղավարյանը, Տ. Քելեկյանը և բազում ուրիշներ: Ձերբակալություններ տեղի ունեցան բնականաբար նաև տեղերում: Վանում դավադրության զոհ դարձան Իշխանը[114] և Ա. Վռամյանը[115], Բիթլիսում` Ա. Օխիկյանը[116]: Բարեբախտաբար Ա. Մանուկյանը և Մուշ-Սասունի դաշնակցական ղեկավար Ռուբենը կարողանում են խույս տալ ձերբակալությունից:

Մինչև Կ. Պոլսի մտավորականների ձերբակալությունը, վերջիններիցս շատերը, այդ թվում և Զավեն պատրիարքը, փորձում են թուրքական կառավարության այն հավատը ներշնչել, թե իրենք չեզոք դիրք են գրավել և չունեն որևէ անջատողական ձգտում: Բայց առիթներ որոնող թուրք կառավարությանը այլևս ուշ էր համոզել:

---

[113] Տե՛ս Тунян В., Младотурки и армянский вопрос, т. 3, Е., 2010, с. 150-160, տե՛ս նաև Թյուրապեան Յ., Դրվագներ հայկական եղեռնէն, Փարիզ, 1946, էջ 156:

[114] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1916, ապրիլի 7, թիւ 78, Աստուածատրեան Ա., Իշխանը, «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1955, դեկտեմբեր, թիվ 12 (358), էջ 86-87, Բոստոն, 1956, յունուար, թիւ 1 (359), էջ 41-45, Ներսիսեան Ա., Իշխան (Նիկոլ Պողոսան), «Դրօշակ», Ե., 2000, յունիս, թիւ 6 (1568), էջ 24 և այլն:

[115] Տե՛ս Սահակյան Ռ., Ինքնապաշտպանական կռիվները Արևմտյան Հայաստանում 1915 թվականին և ՀՅ Դաշնակցությունը, Ե., 2010, էջ 15, տե՛ս նաև Աւօ, Արշակ Վռամեան (Օննիկ Դերձակեան-Վահապ, Վարազ), «Յեղափոխական ալպոմ», Պէյրութ, 1965, Հ. Ե, թիւ 10(58), էջ 269-278:

[116] Տե՛ս Ներսիսեան Ա., Իշխան (Նիկոլ Պողոսան), նույն տեղում:

Երբ 1914 թ. նոյեմբերի 11-ին (հոկտեմբերի 24-ին) Թուրքիան պատերազմի մեջ մտավ Ռուսաստանի հետ, վերջինս արդեն մտահոգված էր ոչ թե բարեփոխումների խնդրով, այլ՝ Արևմտյան Հայաստանի գրավմամբ, որը ձգձգվեց մեր մատնանշած պատճառներով, իսկ երբ այն գրավեց, հայ տարրն արդեն մեծամասամբ ոչնչացված էր:

Կարծում ենք, որ 1915 թ. ապրիլից հետո կարելի է խոսել ոչ թե համապարփակ արևմտահայ քաղաքական մտքի, այլ՝ առանձին արևմտահայերի մասին:

Եվ իսկապես, ռուսներն ամբողջ 1915 թ.՝ Սարիղամիշի ճակատամարտից հետո, դեպի արևմուտք, առաջ չշարժվեցին: Երբ արևմտահայությունը մեծամասամբ նահատակվեց, իսկ նրա բեկորները ցիրուցան եղան, նոր միայն 1916 թ. հունվարին ռուսական զորքերը Կովկասյան ռազմաճակատում անցան ընդհանուր հարձակման և մեկ ու կես ամսվա ընթացքում արեցին այն, ինչը հայերն երազում էին տեսնել 1914 թ. վերջերին: Իրար հետևից գրավվեցին Էրզրումը, Տրապիզոնը և Երզնկան: Ռուսական բանակի մի թևը գրավեց Խնուսը, Մուշը և Սասնո առաջին լեռնաշղթան, իսկ մյուսը մտավ Բիթլիս: Այս հարձակումներով «Ռուսական բանակը կերթար ամրանալ ու Սեւ ծովու եզերքը, Պոնտոսն իր թեւարկութեան տակ առնելով եւ ուղիղ գծով վար կիջնէր Երզնկա, մինչեւ Դերսիմի լեռնաշղթան, աւելի հարաւ կը հանգչէր Եփրատի հովիտը ու անոր հունով կառաջանար մինչեւ Սասնո լեռնաշղթան, Բիթլիսի հարավով մինչեւ Վանի Շատախները ու կը կախվէր Մուսուլի գլխին, հայկական նահանգներն իր տիրապետութեան տակ առնելով»[117]:

Այս հարձակմանը բնականաբար մասնակցում էին նաև հայ կամավորները, որոնց կազմած գումարտակներն ամռանը կազմալուծվեցին: Ցարիզմին ձեռնտու չէր հայկական զինված ջոկատների երկարատև գոյությունը, որոնք գնալով ազգային մեծ ուժ էին դառնում:

Արևմտյան Հայաստանի գրավումից հետո արդեն ռուսները հրաժարվեցին արևմտահայությանը ինքնավարություն տալու խոստումներից և որդեգրեցին միանգամայն հակահայ քաղաքականություն: Դրանում համոզվելու համար բավական է

[117]Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 107-108: Ռուսական հարձակման մանրամասները տե՛ս Масловский Е. В., Мировая война на Кавказском фронте 1914-1917 гг., Париж, 1933, с. 246-397.

կարդալ Կովկասի փոխարքայի «Թիֆլիս, 3/16 հուլիսի», թվակիր նամակը, ուր մասնավորապես նշվում է. «Հարկավ, չշոշափելով Ռուսաստանի հովանու ներքո Հայաստանի ինքնավարության հարցը, մի հարց, որն ամենայն հավանականությամբ առայժմ կյանքի չի կոչվելու և որը, իմ կարծիքով, կարող է միայն վտանգավոր կերպով բարդացնել այս պատերազմի ժամանակ ծնունդ առած հարցերի լուծումը, ես լիովին Ձեզ հետ համաձայն եմ, որ պետք է, և միանգամայն հնարավոր է, հայերին վերապահել դպրոցական ու եկեղեցական անկախություն, եկեղեցական հաստատությունների և գույքերի կառավարման իրավունք, (մայրենի) լեզվից օգտվելու իրավունք՝ բոլոր պաշտոնական դեպքերում ռուսաց լեզվի առաջնության պայմանով: Պետք է վերապահել (հայերին) նաև քաղաքային և գյուղական ինքնավարություն՝ ընտրությունների ժամանակ բնակչության հարաբերակցության տոկոսի պահպանմամբ հանդերձ: Ոչ քրիստոնյա տարրերի նկատմամբ հարկավոր է տեղական պայմանների և նրանց կուլտուրական զարգացման աստիճանի համեմատ կիրառել նույն սկզբունքները»[118]:

Այսպիսով, ցարական Ռուսաստանը փաստորեն արևմտահայերին տալիս էր այն իրավունքները, ինչը նրանք ունեին Օսմանյան Թուրքիայում՝ մինչև պատերազմը:

Ահա սա էր անմիջական արդյունքը արևմտահայ և արևելահայ կամ առհասարակ հայ քաղաքական մտքի այն ուղղության որդեգրման, որին անդրադարձանք:

Վերոհիշյալ նամակի սկզբունքներով էլ 1916 թ. հունիսի 6-ին կազմվում է Թուրքիայից գրավված վայրերի վերաբերյալ կառավարության ծրագիրը, որից հետո ստեղծվում է Արևմտյան Հայաստանի գեներալ-նահանգապետությունը՝ Պեշկովի գլխավորությամբ:

1916 թ. կեսերից իր քաղաքական առաջնորդներին կորցրած, մեծամասամբ կոտորված, կամ արդեն սփյուռք դարձած արևմտահայության իղձերի արտահայտիչն է նորից դառնում Հայոց

---

[118]Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրոֆ. Ջ. Ա. Կիրակոսյանի խմբագրությամբ, Ե., 1972, էջ 461, նաև՝ Ղազարյան Հ., Սևրի պայմանագիրը և Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանման վերաբերյալ, էջ 204-207, Հայաստանի ավտոնոմիան և Անտանտան, Ե., 1926, էջ 55–56:

Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարը: Վերջինիս քաղաքական ըմբռնումները՝ կապված Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի կարգավիճակի հետ այդպես էլ չլքեցին նրան 1912 թվականից սկսված իր ողջ գործունեության ընթացքում, այն է՝ հենվել Արևմուտքի վրա, որը կլուծի Հայկական հարցը: Իսկ 1916 թ. երկրորդ կեսից Պողոս Նուբարը, հենվելով Անգլիայի և Ֆրանսիայի խոստումների վրա, 1914-1918 թթ. ստիպված ճաշակեց այն խաբկանքը, որը հայ քաղաքական շրջանակները ճաշակել էին Ռուսաստանից: Քաղաքական ի՞նչ աստիճանի միամտությամբ պետք է համակված լիներ նա, երբ հույս ուներ, որ Սայքս-Պիկոյի համաձայնագրով ինքնավարություն կտրվեր Հայաստանին, այն դեպքում երբ արդեն Օսմանյան Թուրքիայի տիրույթները բաժանված էին Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի միջև: Ս. Վրացյանը գրում է. «Ինչպէս Ազգ. Բյուրոն Կովկասում, Ազգ. Պատւիրակութիւնն եւս արտասահմանում մեծ պետութիւնների պետական գործիչներից ու կառավարութիւններից ստանում էր խոստումներ ու հավաստիացումներ, որ հայկական բաղձանքները լիովին կը գոհացւեն դաշնակիցների յաղթութիւնից յետոյ: Այս հաւաստիացումների հիման վրա էր, որ Ազգ. Պատւիրակութիւնը նախաձեռնեց-կովկասեան կամաւորական շարժման հաջւեյարդարից յետոյ - հայկական լեգէոնի կազմակերպութեան դաշնակիցների արեւելեան բանակում»[119] (Ընդգծումը մերն է՝ Հ. Ս.):

Հետաքրքիրն այն է, որ այս ամենը տեղի էր ունենում ռուսական բանակներին կից կամավորական շարժման հաշվեհարդարից հետո: Այժմ էլ հայերին օգտագործելու հերթը Ֆրանսիայինն ու Անգլիայինն էր: Դրանում համոզվելու համար նայենք ժամանակագրությանը: Այսպես, 1916 թ. մայիսին Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան գաղտնի ստորագրում են անգլիացի դիվանագետ Սայքսի և ֆրանսիացի դիվանագետ Պիկոյի կազմած համաձայնագիրը, որը նախապատրաստվում էր դեռևս փետրվար-մարտից, և որով նրանց միջև էին բաժանվում Օսմանյան Թուրքիայի Մերձավոր և Միջին Արևելյան տարածաշրջանները: Այդ մասին մարտին տեղյակ է պահվում Ռուսաստանին, որը հայտնում է իր

[119]Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 16:

դժգոհությունը: Այդ համաձայնագրի մասին Սազոնովին ուղարկված անգլիական և ֆրանսիական դեսպանությունների գրությունից պարզ երևում է, որ այնտեղ Հայաստան կամ Հայկական հարց եզրույթներն իսպառ բացակայում են[120]:

1916 թ. մարտի 12-ին Սայքսը Ռուսաստանում Անգլիայի դեսպան Բյուքենին գրում է, որ անհնար է հայկական պետության ստեղծումը և Հայաստանի հանձնումը Ռուսաստանին[121]: Ռուսաստանին էր տրվում Էրզրումը, Տրապիզոնը, Վանը և Բիթլիսը, Կ. Պոլիսը՝ նեղուցներով, ինչպես նաև Քրդստանի մի մասը («դեղին» գոտի): Ձգտելով տիրանալ այդ տարածքներին՝ Ռուսաստանը կեղծ հայտարարում էր. «Ինք կը պայքարի իբրև թէ քրիստոնէաները ազատագրելու համար Թուրքիոյ մահմեդական լուծէն»[122]: Իսկ արևելյան Սիրիան և Մոսուլը մտնում էին Ֆրանսիայի ազդեցության ոլորտի մեջ (A գոտի), Անդրհորդանանը և Բաղդադի վիլայեթի հյուսիսային մասը՝ Անգլիայի ազդեցության ոլորտի մեջ (B գոտի)[123]: Ահա այս պայմաններում, մանավանդ, որ Ռուսաստանն արդեն ցրել էր կամավորական գումարտակները, Պողոս Նուբարը հայության նկատմամբ դավադրության հեղինակներից Մարկ Սայքսի հետ Լոնդոնում 1916 թ. հոկտեմբերի 27-ին համաձայնագիր է կնքում Արևելյան լեգեոն կազմավորելու մասին, որը հետո կոչվեց Հայկական: 1916 թ. նոյեմբերին ֆրանսիական կառավարությունը սահմանում է կամավորության սկզբունքները, որոնց համաձայն լեգեոնական կարող էին դառնալ միայն հայերն ու արաբները, իսկ հրամանատարները լինելու էին ֆրանսիացիները, որոնք էլ հոգալու էին ֆինանսական ծախսերը: Հայ լեգեոնականները ֆրանսիական զորքերի կազմում պետք է մասնակցեին թուրքերի դեմ մարտերին, որի դիմաց Ֆրանսիան խոստանում էր պատերազմից հետո

---

120 Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 381-384, տե՛ս նաև Մելիքյան Վ., 1917 փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Ե., 1997, էջ 157:
121 Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 386:
122 Տերտերյան Ի., Հայկական գոյամարտը, հ. 6, Թեհրան, 1957, էջ 157:
123 Տե՛ս Արզումանյան Մ., Հայաստան 1914-1917, Ե., 1969, էջ 674:

ինքնավարություն տալ Կիլիկյան Հայաստանին, ինչպես նաև Խարբերդին, Դիարբեքիրին և Սեբաստիային[124]:

Հայկական լեգեոնի ստեղծումը հիմնականում նպատակաուղղված էր ֆրանսիական կառավարության բարյացակամության ձեռքբերմանը, որի մասին են վկայում հետևյալ տողերը. «Կիլիկյան կամավորական շարժումով մենք դեռևս կապված ենք ֆրանսիական կառավարության հետ, առանց որին դիմելու ներկա քաղաքական պայմաններում անհնարին է իրականացնել որևէ գործողություն»[125]:

Նույնը հաստատում է նաև Կյորկիզյանը, գրելով, որ ապագա Արևելյան լեգեոնը կազմվել է Եգիպտոսում. «Ճիշդ այդ ատենն է որ Եգիպտոսի հայերու մէջ տիրող երկպառակութիւնները - արտաքին ազդեցութեամբ - վերջ կը գտնեն եւ կը կազմուի «Ազգային Միութիւն» անունով մարմին մը, որ բանակցութեան մէջ կը մտնէ Ֆրանսական կառավարութեան ներկայացուցիչներու հետ, հայերէ կազմուած բանակի մը կազմութեան համար, կռուելու թուրքին դէմ, Պաղեստինի ճակատին վրայ, ու եթէ պէտք ըլլայ՝ նաեւ Կիլիկիոյ մէջ»[126]:

Հետաքրքիր դիտարկումներ է կատարել Ս. Պողոսյանը, ով հիմնավորում է այն տեսակետը, թե Պողոս Նուբարն արդեն 1916 թ. դեմ էր կամավորական նոր զորամաս ստեղծելու գաղափարին, բայց «ֆրանսիական իշխանությունները կարողացան համոզել Պ. Նուբարին համագործակցել Կիպրոսում հայկական զորամաս կազմավորելու հարցում՝ սպառնալով, որ հակառակ պարագայում այն կստեղծեն առանց հայ գործիչների հետ համագործակցության, իսկ հայերը ինքնավարություն պահանջելու իրավունք չեն ունենա: Պողոս Նուբարը պարտադրված էր համագործակցել Ֆրանսիայի հետ»[127]:

---

[124]Տե՛ս Ավետեան Մ., Հայ ազատագրական ազգային յիսնամեայ (1870-1920) յուշամատեան եւ Զօր. Անդրանիկ, Փարիզ, 1954, էջ 474-494, նաև՝ Սահակյան Ռ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ., Ե., 1970, էջ 113-114, Պօյաճեան Տ., Հայկական Լէգէոնը, Ուօթրթաուն, 1965, էջ 9-10, Ներսիսեան Ա., Մովսէս Տէր Գալուստեան, Ե., 2011, էջ 103:

[125]ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 729, թ. 6:

[126]Կէօրկիզեան Ա., Մեր ազգային գոյապայքարը 1915-1922-ի զուլումի տարիներուն, Պէյրութ, 1967, էջ 293:

[127]Պողոսյան Ս., Գևորգ կաթողիկոսի և Պողոս Նուբարի նամակագրությունը, «Էջմիածին», 2013, թիվ 4, էջ 54:

Համընդհանուր հուսախաբության պայմաններում վրա հասավ ռուսական Փետրվարյան հեղափոխությունը, որ ձախողեց ցարական իշխանությունների մարտ ամսին ծրագրած հարձակումը, որի «նպատակն էր Երզնկայէն առաջանալ Խարբերդ-Սեբաստիա, Խնուսէն իջնել Տիգրանակերտ, իսկ Պարսկաստանի եւ Վանի գծէն մտնել Մուսուլ եւ այդ կողմէն միանալ անգլիական բանակին»[128]:

Բացի սրանից, Փետրվարյան հեղափոխությունն իր հետ հայության համար բերեց մտավախություն, որ կարող է քայքայվել ռուսական ռազմաճակատային գիծը և իսպառ վերանան հայության երազանքները՝ կապված մասնավորապես Արևմտյան Հայաստանի վերաշինության հետ:

ՀՍՌԿ-ը հանձինս Ա. Դարբինյանի գտնում էր, որ այդ հեղափոխությունը ձեռնտու չէր հայ ժողովրդին, քանզի որքան երկար մնար ցարական իշխանությունը, այնքան ռուսական բանակն էլ ավելի շատ հայկական հողեր կգրավեր և Ռուսաստանի տիրապետության ներքո կմիացներ Արևելյան Հայաստանին:

Միայն հնչակյաններն էին, որ Փետրվարյան հեղափոխությունն ընդունեցին մեծ ոգևորությամբ, կարծելով, որ հեղափոխությունն իրական ճանապարհ կարող է հարթել Ռուսաստանում հակամիապետական և ժողովրդավարական քաղաքական ուժերի համար, որը կբարելավեր նաև Ռուսաստանի կազմում գտնվող մյուս ազգերի վիճակը:

Փետրվարյան հեղափոխության կողմնակից էր նաև Անդրանիկը, հայտարարելով. «.... Մենք կհավատանք, որ ազատ Ռուսաստան մը պաշտպան պիտի հանդիսանա մեր արյան և անդարմանելի կորուստներու հարկին և հատուցանել պիտի տա մեր դարավոր թշնամին՝ Օսմանյան պետության ....»[129]:

Հայտնի է, որ հեղափոխությունից հետո Անդրկովկասի համար կազմվեց հատուկ իշխանություն՝ ՕԶԱԿՕՄ (Անդրկովկասյան հատուկ կոմիտե)[130], որի նախագահին այսուհետև կոչվելու էր «Կովկասում ժամանակավոր կառավարության Գերագույն կոմիսար», որին տրվում էին նախկին փոխարքաների իրավունքները, իսկ Օզակոմի

---

[128] Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 137:
[129] ՀԱԱ, ֆ. 370, ց. 3, գ. 19, թ. 33:
[130] Տե՛ս, Մելիքյան Վ., նշվ. աշխ., էջ 30-31:

անդամները դառնալու էին Գերագույն կոմիսարին կից վարչական խորհրդի անդամներ: Ստեղծվելու էր նաև մի լրացուցիչ պաշտոն՝ «Պետրոգրադում Կովկասի գործերի կոմիսար», ով պետք է կարգավորեր «Կովկասում ժամանակավոր կառավարության Գերագույն կոմիտեի» և ժամանակավոր կառավարության հարաբերությունները[131]: Արևմտյան Հայաստանի համար էլ 1917 թ. ապրիլի 26-ի կարգադրությամբ ստեղծվեց առանձին կարգավիճակ՝ Գեներալ-կոմիսարություն: Դրանով այն առանձնացվում էր կովկասյան քաղաքացիական և զինվորական իշխանությունների տնօրինությունից և անմիջապես ենթարկվում էր ժամանակավոր կառավարությանը: Նրա կառավարման համար ստեղծվում էր Թուրքահայաստանի ընդհանուր կոմիսարի պաշտոն, որում նշանակվեց զոր. Պ. Ավերիանովը՝ օգնական ունենալով Հ. Զավրյանին[132]:

Թուրքահայաստանը բաժանվում էր չորս նահանգների՝ Էրզրումի, Վանի, Տրապիզոնի և Խնուսի: «Ըստ ձեւի, - գրում է Կ. Սասունին, - նշանակուած նահանգապետները ռուս էին, անոնց օգնականները հայեր էին եւ ունեին իրենց գրասենեակները: Իսկական նահանգապետները հայերը կըլլային, անմիջական գործի պատասխանատուութիւնը իրենց վրա վերցնելով»[133]:

Ինչպես տեսնում ենք՝ նահանգներում գործի գլուխ կանգնած էին հայերը:

Փետրվարյան հեղափոխությունից մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը արևմտահայ և արևելահայ գործիչները Արևմտյան Հայաստանի նկատմամբ որդեգրած ծրագրերում միակամ էին: Այդ ծրագրերն ունեին հետևյալ ուղղվածությունները.

1. Հաղթող դուրս գալ միջցեղային կռիվներում, հայացնել Արևմտյան Հայաստանը:

2. Ստեղծել զինված կազմավորումներ՝ ռուսական զորքերի հնարավոր նահանջի դեպքում թուրքերին դիմադրելու համար:

---

[131] Տե՛ս Մելիքյան Վ., Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում: Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը (1917 թ. նոյեմբեր - 1918 թ. փետրվար), Ե., 2010, էջ 33:
[132] Տե՛ս Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 24-25, նաև՝ Արզումանյան Մ., նշվ. աշխ., էջ 735:
[133] Սասունի Կ., Պատմութիւն Տարոնի աշխարհի, Պէյրութ, 1956, էջ 1050:

Այս խնդիրներն իրականացնելու համար գրավված վայրերում աշխատում էին բազմաթիվ մշակութային և բարեգործական կազմակերպություններ՝ Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը, Եղբայրական օգնության կոմիտեն, Քաղաքների միությունը, Մոսկվայի հայկական կոմիտեն և այլն: Կատարված եռուն աշխատանքների հետևանքով հայրենիք վերադարձած արևմտահայության բեկորները վերընձյուղում էին իրենց օջախները:

Արևմտյան Հայաստանի վերականգնման և արևմտահայ գաղթականների խնդիրների լուծման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ արևմտահայ եղեռնից փրկված քաղաքական առաջնորդների նախաձեռնությամբ, դեռևս 1916 թ. մայիսի 10-13-ը Պետրոգրադում տեղի ունեցավ հայկական համագումար: Այն թերևս հայկական առաջին համաժողովն էր, որը նվիրված էր հայկական խնդրին: Վերջինիս կարևորությունն այն էր, որ ռուս հասարակությունը տեղեկացավ հայ ժողովրդի տառապանքներին, ինչպես Օսմանյան Թուրքիայում, այնպես էլ Ռուսաստանում, ուր ապաստան էր գտել արևմտահայ գաղթականության մի զգալի հատված: Մեծն հայագետ Ալեքսեյ Ջիվելեգովը այս համագումարի մասին արտահայտել է իր կարծիքը հետևյալ կերպ. «Համատեղ աշխատանքը կայացավ. հարկավոր է ավելի վճռական քայլ դեպի այդ ուղին: Այդ է պահանջում Հայաստանի շահը»[134]:

1917 թ. մայիսի 2-ին Երևանում գումարվում է արևմտահայերի առաջին համագումարը: Այն նախաձեռնել և հրավիրել էր Թիֆլիսում գտնվող արևմտահայերի հրապարակային մի ժողովի ընթացքում ստեղծված հանձնաժողովը, որի մեջ մտնում էին Արամը, որը թեպետ արևելահայ էր, սակայն 1905-1908 թթ. և 1915 թթ. գործել էր Վանում, Վ. Փափազյանը և Անդրանիկը: Համագումարը բացահայտեց արևմտահայ և արևելահայ խորացող առճակատումը, ինչը դրսևորվեց Արևմտահայ ազգային խորհրդի ստեղծումով՝ ՀՅԴ գերակշռությամբ: Այս առումով Արտակ Դարբինյանն իր անհանգստությունն էր հայտնում

[134]Մելիքյան Վ.,Հայկական հարցը և հայ հասարակության ինքնակազմակերպման խնդրի փուլերը, Գիտագործնական միջազգային գիտաժողով «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրը». 18-19 ապրիլի 2008: Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները, Կիպրոս-Նիկոսիա. 18-19 ապրիլի 2008. տե՛ս Գիտական զեկուցումների ժողովածու, Ե., 2009, էջ 161:

Արամ Մանուկյանին՝ Անդրանիկի այն համոզման առթիվ. «Կովկասահայ դաշնակցականները պիտի հակառակին Տաճկահայերու որևէ ձեռնարկին, եթե իրենք ղեկավարողի դերին մեջ չգտնուին»[135]: Համագումարում ելույթ ունենալով՝ Արամն իր հերթին առաջարկեց «.... համագումարի և ժողովականներու կողմէ ողջոյններ ուղղարկել դաշնակից և չէզոք պետութիւններուն, հայասէր ընկերութիւններու և անհատներու, ինչպէս նաև Պօղոս Նուպարին»[136]:

Համագումարի աշխատանքներին մասնակցում էին 80-ից ավելի պատգամավորներ: Արևմտյան Հայաստանից եկել էին 15 պատգամավոր, (որոնցից չորսը ռամկավարներ էին՝ Ա. Դարբինյան, Վ. Պապիկյան, Ա. Թերզիպաշյան, Ն. Հակոբյան), 27-ը՝ Կովկասի արևմտահայ գաղթականներից էին, 14-ը՝ տարբեր ընկերություններից, 3-ը՝ մամուլի ներկայացուցիչներ, 6-ը՝ ձայնի իրավունքով, 11-ը՝ խորհրդակցական ձայնով հրավիրվածներ, իսկ 8-ը՝ տարբեր կուսակցություններից[137]:

Համագումարի օրակարգում դրված էին հետևյալ հիմնական խնդիրները.

1.Արևմտահայ գաղթականության ֆիզիկական պահպանություն:
2.Արևմտյան Հայաստանի շենացում և հայությամբ վերաբնակեցում:
3.Նոր սերնդի կրթական, ֆիզիկական և քաղաքացիական դաստիարակություն:

Համագումարը գաղթականության խնդրի հետ կապված որոշում է. «ա) Գաղթականության բոլոր աշխատանքները կենտրոնացնել մէկ մարմնի ձեռքը: բ) Ստեղծել Արեւմտահայ խորհուրդ մը, որ գերազանցապէս այդ գործով զբաղվի: գ) Այդ մարմինը պէտք է ճանաչվի որպէս միակ ներկայացուցիչը ամբողջ արեւմտահայերու եւ իր քոնթրոլը պիտի ունենա բոլոր այն գործերու վրա, որոնք

[135]Նույն տեղում, էջ 162:
[136]«Հայաստան» օրաթերթ, Թիֆլիս, 1917, մայիսի 7, թիւ 18:
[137]Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1917, մայիսի 17, թիվ 101, նաև՝ Փափազեան Վ., նշվ. աշխ., էջ 439, Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 28, Ներսիսյան Ա., Կարո Սասունի, Ե., 2004, էջ 100, Չորմիսեան Լ.,Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, էջ 270:

տնտեսական, որքանոցային եւ գաղթականական անվան տակ կրնան կապ ունենալ թրքահայերուն հետ»[138]:

Այսպիսով, բոլոր այն կազմակերպությունները, որոնք զբաղվում էին գաղթականության խնդիրներով, պետք է ունենային իրենց վերադաս մարմինը, որը վերահսկելու էր նրանց գործունեությունը՝ տալով դրանց հստակ ուղղվածություն, և այդ մարմինն էր լինելու արևմտահայության միակ ներկայացուցիչը: Ստացվում է, որ ստեղծվում էր արևմտահայերի քաղաքական ձգտումներն արտահայտող և կյանքի կոչող մի մարմին, քանի որ Արևմտյան Հայաստանում գաղթականության տեղավորմամբ լուծվում էր նաև կարևորագույն քաղաքական խնդիր՝ հայացվում էր այն:

Երկրի հայացման և շենացման համար նախատեսվում են հետևյալ աշխատանքները.

«Պատրաստություն տեսնել պատերազմեն անմիջապես վերջ երկիր փոխադրելու Կովկաս ապաստանած թյուրքահայ փախստականությանը:

Հայրենիք վերադարձնել Ամերիկայի, Եգիպտոսի, Պալքաններու եւ արաբներու մեջ ցրված հայերը:

Հրավիրել ռուս կառավարության ուշադրությունը, որպեսզի հնարավորության չափով շուտ վերացվեն բոլոր այն ճնշիչ պայմանները, որոնք ստեղծել է նախկին ռեժիմը հողային եւ այլ վարչական-հասարակական խնդիրներու մեջ: Այս բոլոր նպատակների իրականացման համար ստեղծել հավաքական կազմակերպություն մը»[139]:

Համագումարը նաև արձանագրում է, որ չնայած իր նպատակն է Հայկական դատի հետապնդումը, բայց քանի որ «այդ խնդիրը քաղաքական բնույթ ուներ, բաղձանք հայտնեց, որ Արեւմտահայ խորհուրդն ինքզինք չնկատէ քաղաքական մարմին մը Հայկական Դատը հետապնդելու առանձնապէս, այլ քաղաքական կուսակցութիւններու եւ համազգային քաղաքական մարմիններու միջոցով ձգտի հասնելու իր բաղձանքներուն»[140]:

---

[138] Սասունի Կ., Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914-1918), էջ 149:
[139] «Հորիզոն», Թիֆլիս, 1917, մայիսի 20, թիվ 104:
[140] Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 149:

Համագումարն ընտրում է Արևմտահայ խորհուրդը՝ բաղկացած 15 հոգուց՝ Անդրանիկ, Սեպուհ, Ս. Բորոյան, Հ. Գալիկյան, Ա. Դարբինյան, Զ. Եսայան, Ա. Թերզիպաշյան, Գ. Հայկունի, Հ. Մանուկյան, Լ. Շանթ, Վ. Պապիկյան, Խ. Բոնապարտյան, Կ. Սասունի, Հ. Տեր-Զաքարյան, Վ. Փափազյան:

Խորհրդի անդամներից ընտրվում է գործադիր մարմին՝ Բյուրո, որի մեջ մտնում են Վ. Փափազյանը, Կ. Սասունին, Ա. Դարբինյանը, Հ. Տեր-Զաքարյանը և Գ. Գալիկյանը: Ահա այս Բյուրոն էր արևմտահայերի քաղաքական շահերի ներկայացուցիչը և քաղաքական խնդիրներ լուծողը՝ 1917 թ. սեպտեմբերից հետո արդեն համախորհուրդ արևելահայերի Թիֆլիսում գումարած համագումարի կողմից ստեղծված Հայոց Ազգային խորհրդի հետ:

Համագումարից հետո, որն ավարտվեց մայիսի 11-ին, Արևմտահայ Բյուրոն աստիճանաբար մասնաճյուղեր կազմակերպեց թե՛ գրավյալ տարածքներում և թե՛ Կովկասի զանազան վայրերում:

Ավելացնենք, որ արևմտահայության և արևմտահայ քաղաքական մտքի համախմբման տեսանկյունից կարևոր նշանակություն է ունենում 1917 թ. մայիսի 11-ին կայացած դաշնակցության արևմտահայ հատվածի շրջանային ժողովը, որը Երևանի թեմական դպրոցի դահլիճում բացում է Ռոստոմը: Այն ընդունում է բանաձև Թուրքահայաստանի գրավյալ տարածքների նախկին և ապագա վարչակազմի մասին, շեշտելով, որ «պատերազմի տևողության ամբողջ ընթացքին անհրաժեշտ ըլլալով գործակցութիւնը զինվորական տարրերու հետ՝ կը հրահանգէ երկրի դաշնակցական մարմիններուն եւ ընկերներուն ամեն կերպ ջանալ, որ ստեղծվեն տեղական ժողովրդի կողմէ ընտրված վստահելի տարրերէ վարչություններ, որոնք նպատակ ունենան աջակցելու պատերազմական գործողության հաջողության եւ երկրի վերաշինության գործին»[141]:

Այս որոշումը կարևոր էր նրանով, որ գրավված Արևմտյան Հայաստանում գրեթե գոյություն չունեին գործադիր մարմիններ:

Քանի որ մեր նպատակը արևմտահայ քաղաքական մտքի զարգացման տրամաբանության բացահայտումն է, ավելորդ ենք համարում

[141]«Հորիզոն», Թիֆլիս, 1917, հունիսի 18, թիվ 126:

մանրամասնել վերաշինության և կազմակերպչական այն աշխատանքները, որոնք իրականացվում էին դեռևս 1916 թ. Վասպուրականում, Տարոնում, Երզնկայում, Բաբերդում, Բասենում, Ալաշկերտում և այլուր, և որոնց արդյունքում իսկապես դրվում էին հայոց պետականության հիմքերը[142]:

Թվում էր, թե անպատմելի տառապանքներից հետո արդեն վերջնականապես լուծվելու էր Արևմտյան Հայաստանի խնդիրը, թեպետ դեռևս հստակ չէր, թե նա, ի վերջո, ինչպիսի կարգավիճակ պետք է ստանար նոր՝ ցարական կարգերից զերծ Ռուսաստանում, երբ տեղի ունեցավ Հոկտեմբերյան հեղափոխությունը, որից հետո արևմտահայերի քաղաքական մտքի նոր ուղղորդվածություններին կփորձենք անդրադառնալ հաջորդ գլխում:

---

[142]Այդ աշխատանքների մասին տե՛ս Սասունի Կ., Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914-1918), էջ 109-113, Սեպուհ, Էջեր իմ յուշերէն, հ. Ա, Պոսթըն, 1925, էջ 294-295, Վասպուրական: Վան-Վասպուրականի ապրիլյան հերոսամարտի տասնհինգամյակի առթիվ (1915-1930), Վենետիկ, 1930, էջ 97-100, Փափազեան Վ., նշվ. աշխ., էջ 472-473, Ներսիսյան Ա., Կարո Սասունի, էջ 88-89, նույնի՝ Զորավար Սեպուհ, Ե., 2005, էջ 174, նույնի՝ Ավետիք Սահակյան (Հայր Աբրահամ), Ե., 2006, էջ 169-171, Հարությունյան Ա., Անվտանգության ապահովումը և վերաշինության գործի ընթացքը Վան-Վասպուրականում 1916 թ. վերջերին և 1917 թ. սկզբներին, «Ակունք», գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2012, թիվ 2 (5), էջ 19-25:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԸ 1918 – 1920 ԹԹ

### 2.1. Արևմտահայ քաղաքական մտքի դիրքորոշումը Հայաստանի առաջին Հանրապետության շրջանում

1918-1920 թթ. արևմտահայ քաղաքական միտքն անհրաժեշտ է վերլուծել և գնահատել երկու տեսանկյունից՝ ա) Հայաստանի Հանրապետության կայացման մեջ ունեցած դերի և նրա նկատմամբ ունեցած վերաբերմունքի և բ) Մեծ տերությունների շրջանում Հայկական հարցի արծարծման մոտեցումների առումով:

Մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը հայ քաղաքական ղեկավարների մեջ իշխում էր այն մտավախությունը, որ կարող է քայքայվել ռուսական ռազմաճակատը: Կովկասում և ռուս-թուրքական ճակատում գտնվող ռուսական բոլոր զինված ուժերը միասին կազմում էին համառուսաստանյան բանակի միայն 10 տոկոսը[143], որոնց քանակությունը Կովկասյան ռազմաճակատում մայիսի սկզբին գնալով նվազում էր:

Իսկ արդեն Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, մեծ հարված հասցվեց Կովկասյան ռազմաճակատում գործող ռուսական բանակի մարտունակությանը[144]: Բոլշևիկյան իշխանությունը որդեգրեց ռուսական պետությունը՝ պատերազմից դուրս բերելու քաղաքականությունը, այն դեպքում, երբ Կովկասյան ռազմաճակատում ռուսական բանակը հաղթանակներ էր ձեռք բերել: Հոկտեմբերյան հեղափոխության առաջնորդները, հետամուտ էին եղել անհապաղ հաշտություն կնքել թշնամու հետ, իսկ վերջինս՝ ի դեմս Գերմանիայի, պահանջում էր վերադարձնել պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրությունից գրավված բոլոր տարածքները[145]: Ուստի և ամեն քայլի դիմում էին հայ քաղաքական

---

143 Տե՛ս Նազարյան Ա., Հայկական զորամասերի կազմավորումը Կովկասյան ճակատում (1914-1918 թվականներ), Ե., 1999, էջ 85:

144 Տե՛ս Մախմուրյան Գ., Ինքնապաշտպանության կազմակերպման հարցերի քննարկումը Հայոց Ազգային խորհրդում (1917 թ. նոյեմբեր - 1918 թ. հունվար), «Բանբեր Հայաստանի արխիվների», Ե., 2014, թիվ 122, էջ 58:

145 Տե՛ս Մախմուրյան Գ., Արեւմտեան Հայաստանի պաշտպանութեան խնդիրները ԱՄՆ-ի եւ Դաշնակից տէրութիւնների քաղաքականութեան ոլորտում (1917-1918 թթ.), «Հայկազեան Հայագիտական Հանդէս», Պէյրութ, 2015, հատ. 35, էջ 273:

ղեկավարները՝ հայկական զինված կազմավորումներ ստեղծելու համար: Սակայն, այս առումով աշխատանքները թերի մնացին:

Դեռևս հեղափոխությունից առաջ Թիֆլիսի և Պետրոգրադի հայ ղեկավար կազմակերպությունների ներկայացուցիչները դիմել էին ժամանակավոր կառավարությանը, որպեսզի թույլատրվի մյուս ռազմաճակատներում գտնվող հայ զինվորներին տեղափոխել Կովկասյան ռազմաճակատ՝ հայկական զորամասեր կազմակերպելու նպատակով: Արևմտյան ռազմաճակատում կար մոտ 80 հազ. հայ զինվոր, որը «միացուած Կովկասում գտնուող գրեթէ նոյնչափ հայ զինւորների հետ, լաւ կազմակերպուած ու մարզուած, տրուած հմուտ հրամանատարութեան ձեռքը, կարող էր վճռական դեր կատարել Թուրքիայի դէմ»[146]:

Մինչ այդ, 1917 թ. հուլիս 2-ի և 11-ի հրամաններով, Կովկասյան ճակատի գլխավոր հրամանատարությունն արտոնում է հայկական հրացանաձիգ գումարտակները վերածել գնդերի: Արագորեն կազմվում են վեց հայկական գնդեր՝ յուրաքանչյուրը բաղկացած երկու գումարտակից[147]:

Պետք է շեշտել, որ հայկական զորամասերի ստեղծման առումով միավորված էին և՛ Ազգային խորհրդի և՛ Արևմտահայ բյուրոյի ջանքերը: Այսինքն՝ թե՛ արևելահայ և՛ թե արևմտահայ քաղաքական միտքը զբաղված էր ընդհանուր հայկական զինված կազմավորումների ձևավորման աշխատանքներով:

Քանի դեռ առկա էր ռազմաճակատը պահպանելու խնդիրը, Ա. Կերենսկին դանդաղում էր տալ հրաման՝ հայկական զորաբանակ ստեղծելու համար, բայց արդեն Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, դեկտեմբերի 13-ին Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար Լեբեդինսկին թիվ 136 հրամանով հայերին արտոնեց ստեղծել առանձին զորաբանակ կամ կորպուս՝ հրամանատար նշանակելով Թ. Նազարբեկյանին: Այս առումով կարևոր դերակատարություն ունեցավ հայոց Ազգային խորհուրդը:

Իսկ Արևմտահայ բյուրոն դեկտեմբերի սկզբներին Թիֆլիսում գումարված արևմտահայության ներկայացուցիչների մի խորհրդակցության ժամանակ որոշում է կայացնում կազմակերպել

[146] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 58:
[147] Տե՛ս նույն տեղում:

արևմտահայ մարտական ուժեր: Այդ նպատակով ստեղծվում է հատուկ մարմին՝ Ապահովության խորհուրդ, որի նախագահն էր Վ. Փափազյանը, իսկ անդամները՝ Սեպուհը, Ա. Թերզիպաշյանը, Հ. Տեր-Զաքարյանը և Ժ. Միրզախանյանը: Խորհրդաժողովը որոշում է հայտարարել արևմտահայերի պարտադիր զորակոչ և կազմել արևմտահայերի առանձին դիվիզիա, որը պետք է ներառեր մինչև 20 հազ. զինվոր: Թեր և դեմ կարծիքներից հետո որոշվում է այս դիվիզիայի հրամանատար նշանակել Անդրանիկին[148]:

Հ. Սիմոնյանը գրում է, որ ըստ Թ. Նազարբեկյանի Անդրանիկը միայն խմբապետ չէր, այլ գեներալ ու զինվորական, որին նա ճանաչում էր դեռևս Դիլմանի ճակատամարտից՝ իբրև ռազմագետի ու հանճարեղ զինվորականի[149] և հպարտանալով ավելացնում էր, որ նրա նման երկու զորավարներ էլ եթե լինեին, ապա հիմա թուրքերը Անկարայում կլինեին և ոչ թե Կարսի շուրջ[150]: Ծեշտենք, որ այս դիվիզիան նախատեսված թվաքանակով այդպես էլ չկազմավորվեց: Իսկ թուրքական հարձակումը հիմնականում փորձեցին կասեցնել մինչև այդ ստեղծված զինված կազմավորումները, որոնց մասին, Վարդգես Ահարոնյանը գրում է. «Հայկական կամաւոր զօրամասեր՝ հրացանաձիգ գնդեր, գումարտակներ, հեծելազօր, հրետանի եւ կամաւորական խմբեր սկսել էին կազմուել 1917-ի ամառուանից, թէ թիկունքում եւ թէ ռազմաճակատում՝ Վանում, Խնուսում, Բաբերդում, Երզնկայում եւ այլուր: Էրզրումում կազմակերպուած էր բերդապահ գունդը, Վանում՝ Վանի երկրորդ գունդը՝ գնդ. Տիգրան Բաղդասարեանի հրամանի տակ, Երզնկայում՝ Մուրադի եւ Բաբերդում Սեպուհի ջանքերով կազմուել էին կամաւորական զօրամասեր, Խնուսում Սասունի գունդը Մանուկի եւ Մուշեղի ղեկավարութեամբ, Ալաշկերտում՝ տեղական զօրամասեր՝ Սմբատի ջանքերով»[151]: Այդ մասին վկայում է նաև Ռ. Փիրումյանը ասելով որ. «Պատերազմին դաշտին վրայ, հայ ռազմիկներու անհաւասար դիմադրութիւնը այդ ընդարձակ ճակատին վրայ, Դաշնակցութեան

---

[148]Տե՛ս Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 146, նաև՝ Թերզիբաշյան Ա., Անդրանիկ, Փարիզ, 1942, էջ 311:
[149]Տե՛ս Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Ե., 1996, էջ 102-103:
[150]Տե՛ս Ղարիբջանյան Գ., Ժողովրդական հերոս Անդրանիկ, Ե., 1990, էջ 119:
[151]Ահարոնեան Վ., Անդրանիկ, մարդը և ռազմիկը, Բոստոն, 1957, էջ 46-47:

դրոշին տակ, Երզնկայէն մինչեւ Բաքու, ղեկավարեցին Մուրատ, Սեպուհ, Անդրանիկ, Արամ, Նազարբէկեան, Դրօ եւ Ռոստոմ»[152]:

Այսպիսի կազմավորումներն էին և ոչ թե Անդրանիկի այդպես էլ չկազմավորված դիվիզիան կամ թե Նազարբեկյանի կորպուսը, որ դանդաղեցրին թուրքական առաջխաղացումը, որը սկսվեց Երզնկայի 1917 թ. դեկտեմբերի 5-ին ստորագրած զինադադարի խախտման հետևանքով[153]:

Թուրքական առաջխաղացման պայմաններում Արևմտյան Հայաստանում գտնվող քաղաքական և ռազմական ղեկավարները ցանկանում էին համախմբել հայության բոլոր ուժերը և պարտության մատնել թուրքական զորքերին՝ օգտագործելով ռազմաճակատը լքած ռուսական զորքերի թողած միլիոնների արժողությամբ զենքն ու զինամթերքը, սակայն ցավոք, հայ ժողովուրդը համախմբվեց միայն այն ժամանակ, երբ թուրքական բանակը մտավ Արևելյան Հայաստան:

Մինչ այդ՝ 1917 թ. նոյեմբերին, «Ռուսաստանի և Արևելքի բոլոր աշխատավոր մուսուլմաններին» ուղղված կոչում Ժողկոմխորհը պարզ ու որոշակիորեն հայտարարում էր. «Հենց որ դադարեն ռազմական գործողությունները, հայերին կտրվի քաղաքական բախտը ազատորեն տնօրինելու իրավունք»[154]: Ուստի և 1917 թ. դեկտեմբերի 29-ին Ժողովրդական կոմիսարների խորհուրդը հրապարակեց «Տաճկաստանի» մասին դեկրետ, որտեղ ասվում էր. «Ժողովրդական քոմիսէրներու խորհուրդը կը յայտարարէ Հայ ժողովուրդին թէ Ռուսաստանի գործաւորներուն և գիւղացիներուն կառավարութիւնը պիտի պաշտպանէ Ռուսիայէն գրաւուած Տաճկահայաստանի Հայերուն իրաւունքը՝ ազատօրէն որոշելու իրենց ճակատագիրը, նոյն իսկ մինչև կատարեալ անկախութիւն:

Քոմիսէրներու խորհուրդը հետևեալ պայմանները անհրաժեշտ կը դատէ որպէս նախապատրաստական երաշխաւորութիւններ.

---

[152]Փիրումեան Ռ., Հայաստանը Հ.Յ.Դ.- Բոլշեւիկ Յարաբերութիւնների Ոլորտում (1917-1921), Ե., 1997, էջ 73-74:

[153]Այս զինադադարի պայմանների մասին տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 412-416:

[154]Խուրշուդյան Լ., Սովետական Ռուսաստանը և Հայկական հարցը, Ե., 1977, էջ 15-16:

Յօդ. 1° Ռուսական զօրքը պէտք է պարպէ Տաճկահայաստանը, և անմիջապէս հայկական ազգային միլիցիա կազմել՝ Տաճկահայաստանի մէջ կեանքի և ինչքի ապահովութիւնը երաշխաւորելու համար:

Յօդ. 2° Հայ փախստականներու, ինչպէս նաև զանազան երկիրներու մէջ ապաստանած հայ գաղթականներու վերադարձը դէպի իրենց հայրենիքը պէտք է ապահովուի առանց ո և է խոչընդոտի:

Յօդ. 3° Պատերազմի ընթացքին մէջ թուրք կառավարութեան ձեռամբ Տաճկաստանի ներքին կողմերը աքսորուած Հայերու առանց ո և է արգելքի դէպի Տաճկահայաստան վերադարձը պէտք է ապահովուի:

Քոմիսէրներու խորհուրդը տաճիկ պատուիրակներու հետ ունեցած խաղաղութեան բանակցութիւններու ատեն՝ պիտի պնդէ այս պայմանին վրայ :

Յօդ. 4° Տաճկահայաստանի մէջ Հայկական առժամեայ կառավարութիւն մը պիտի հաստատուի, կազմուած հայ ժողովուրդի պատգամաւորներէն, որոնք պէտք է ընտրուին դէմոկրատական սկզբունքներով»[155]:

«.... Իսկ «Թուրքահայաստանի» աշխարհագրական սահմանները որոշվում են հայ ժողովրդի՝ դեմոկրատականորեն ընտրված ներկայացուցիչների կողմից, խառը և վիճելի (մուսուլմանական և այլն) օկրուգների դեմոկրատականորեն ընտրված ներկայացուցիչների համաձայնությամբ՝ Կովկասի գործերի Արտակարգ Ժամանակավոր Կոմիսարի՝ Ս. Շահումյանի հետ միասին»[156]:

Սակայն, դեկրետն անհնար էր իրականացնել երկու հիմնական պատճառով. առաջին՝ Արևմտյան Հայաստանը դատարկված էր իր բնիկ տարրից, երկրորդ՝ ռուսական զորքերը նահանջում էին:

Արևմտահայ քաղաքական միտքը, որի շատ կրողները 1918 թ. Հայ-թուրքական պատերազմի հետևանքով նույն թվականի մայիս ամսից սկսած գտնվում էին Արևելյան Հայաստանում, միանշանակ վերաբերմունք չդրսևորեցին ՀՀ գոյության նկատմամբ, որի արարմանը, բնականաբար, նպաստեցին: Այս ժամանակահատվածի արևմտահայ քաղաքական միտքը կրողները գործում էին բուն

[155] ՀԱԱ, ֆ. 282, ց. 1, գ. 45, թ. 1:
[156] Խուրշուդյան Լ., նշվ. աշխ., էջ 41-42:

Հայաստանում և արտասահմանում՝ գլխավորապես Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ: ՀՀ-ում թե՛ արևմտահայ և թե՛ արևելահայ քաղաքական միտքը 1918 թ. մայիսի 28-ից հետո, անկախ տարածքային պահանջների առումով առաջացած որոշ տարակարծություններից, վերաճեց պետական քաղաքական մտքի, որի ուղղվածությունները ցավոք չէր կիսում Պողոս Նուբարի գլխավորած պատվիրակությունը: Սա, հարկավ, իր բացասական հետևանքներն ունեցավ:

Նախ՝ փոքր ինչ այն մասին, թե ի՞նչ դերակատարում ունեցան արևմտահայերը հայոց նոր պետականության արարման գործում: Հարկավ, դժվար էր կանխատեսել, որ 1918 թ. մայիսի վերջերին Անդրկովկասյան սեյմը, ուր ձևականորեն միավորված էին հայերը, վրացիները և թաթարները, կկազմալուծվի և կհռչակվի Հայաստանի Հանրապետությունը: Թուրքերն իրենք էին ցանկանում Ռուսաստանից անկախ տեսնել Անդրկովկասը, որը կհեշտացներ երկրամասի զավթումը: Այսպիսով, անկախության գաղափարը գալիս էր Թուրքիայից[157]: Բայց, անկախ այդ հանգամանքից, թուրքական զորքերի առջևից նահանջող արևմտահայ կռվող ուժերը, որոնց հետ էր գաղթականությունը, նպաստեցին այդ պետականության կայացմանը՝ նախապես հայացնելով Հայաստանը: Արևմտյան Հայաստանի հայացման գործընթացը, որին ձեռնամուխ էին եղել բազում գործիչներ դեռևս 1915 թ. մայիսից, կիսատ մնալով՝ շարունակվեց արդեն Արևելյան Հայաստանում:

Հունվարի վերջերին, խախտելով զինադադարը, թուրքերը հարձակվում են Երզնկայի վրա, որը, չնայած Սեբաստացի Մուրադի գործադրած ջանքերին, նույն ամսի 31-ին պարպվեց: Հայկական 1000-ից մի փոքր ավելի ուժերը գաղթականության հետ նահանջեցին մինչև Էրզրում: Փետրվարի 3-ին նահանջի ճանապարհը բռնեցին Բաբերդի փոքրաթիվ կռվող ուժերը՝ Սեպուհի գլխավորությամբ: Փետրվարի 11-ին նա և Մուրադն արդեն Էրզրումում էին, որը նույնպես ընկավ փետրվարի 27-ին: Այսպիսով Արևմտյան Հայաստանը նորից անցնում էր թուրքերի ձեռքը: Մարտի 22-ի լույս 23-ի գիշերը

[157] Տե՛ս Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 3-4:

պարպվեց Սարիղամիշը, ապրիլի 12-ին՝ Կարսը, մայիսի 15-ին՝ Ալեքսանդրապոլը:

Մայիսյան հերոսամարտերի կազմակերպման նկարագրությունը մեր խնդրից դուրս է: Նշենք միայն, որ երբ 1918 թ. սկսվեց թուրքական հարձակումը, հնչակներն այդ առումով հայտարարեցին. «.... Մեր վերջին հույսը զենքը ձեռքին պաշտպանվելն է»[158]:

Պարզապես փորձենք ճշտել այն դերը, որ ունեցան արևմտահայ շատ քաղաքական ղեկավարներ՝ այդ հերոսամարտերում հայերի հաղթանակի տեսանկյունից, որը նաև նշանակում էր նպաստ պետականության ստեղծման գործին:

Թուրքական արշավանքի հետևանքով նահանջի ճանապարհը բռնեց նաև Վասպուրականի 25000-ի հասնող և Տարոնի, Սասունի և Խնուսի 60-70000 հասնող հայությունը: Վասպուրականի հայությունը, որի առաջնորդն էր Կոստի Համբարձումյանը[159], մինչև մարտի 21-ը դիմադրեց թուրքերին, ապա նահանջեց Պարսկաստան, որտեղ էլ վերջինս սպանվեց: Ընդհանրապես նահանջող արևմտահայության մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում Կարո Սասունին: Վերջինս, որը Տարոնի նահանգապետի տեղակալն էր, կենտրոն ունենալով Խնուսը, նահանջող ժողովրդի հետ հասնում է Ալաշկերտ: Հենց այստեղից սկսած՝ ժողովուրդը, թերևս զգալով, որ վերջնականապես թողնում է իր հայրենիքը, սկսում է վերացնել այն բոլոր թաթարական գյուղերը, որոնք հանդիպում են իր ճանապարհին: Տարոնի և Խնուսի ժողովուրդը Ալաշկերտի Ղարաքիլիսա գյուղում և շրջակայքում մնում է մինչև մարտի 23-ը՝ Սարիղամիշի անկումը՝ կրակի տալով տեղի հսկայաքանակ պահեստները, իսկ Կարսի անկումից հետո տարոնահայությունը զինված ուժերի հետ համախմբվում է Դիադինի և Մոսունի շրջաններում՝ Մեծ Մասիսի ստորոտում: Այստեղ Տարոնի և Ալաշկերտի ղեկավարները

[158] Хуршудян Р., Критический анализ политики и идеологии армянской мелкобуржуазной партии гнчак в период борьбы трудящихся закавказья за победу и упрочение советской власти (1917-1921 гг.), Автореферат, диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Е., 1981, с. 20.

[159] Տե՛ս Սասունի Կ., Մայիսեան խռովութիւնները եւ թաթարական ապստամբ շրջանները, Պէյրութ, 1968, էջ 57-60, նաև՝ «Նայիրի», Բէյրութ, 1969, ԺԸ տարի, փետրվարի 2, թիւ 35:

խորհրդակցություն են ունենում՝ «գոյութեան պայքարի ուղեգիծ մը պատրաստելու համար»[160]:

Խորհրդակցության ընթացքում հետևյալ քաղաքական որոշումն են կայացնում՝ «ժողովուրդի հետ մնալ եւ ղեկավարել գաղթարշավը, դառնալ տեսակ մը շարժական կառավարութիւն, կեդրոնացած պահել զինուորական, կուսակցական եւ վարչական ղեկավարութիւնը եւ ընթացք տալ 150.000 է աւելի ժողովրդական զանգուածի մը շարժումներուն»[161]:

Այսպիսով, ժողովուրդն ուներ իր քաղաքական և վարչական ղեկավարությունը, որի խնդիրն էր հիմնավորվել Արևելյան Հայաստանում՝ գործնականում հայացնելով այն և դարձնելով միատարր: Սա շատ կարևոր խնդիր էր, քանի որ ակնհայտ էր, որ Անդրկովկասյան դաշնությունը փլուզվելու է, իսկ ներքին թաթար դավադիր տարրը նպաստելու էր թուրքական զենքի հաղթանակին: Պատահական չէ, որ խորհրդակցությունը որոշում է զենքի ուժ կիրառել բոլոր այն մահմեդական տարրերի նկատմամբ, «ովքեր Արեւմտյան Հայաստանի կորստից հետո սպառնալիք էին՝ կախված արևելահայութեան գլխին»[162]:

Կ. Սասունին հետևյալն է գրում. «Ռուսական Հայաստանի քարտեսը մեր աչքերուն առջեւ ունէինք: Մեր աչքերը կը հառէինք լեռնամասերուն եւ թաթարական շրջաններուն վրա: Հայկական լեռնամասերը մեր ժողովուրդի ապավենը պիտի ըլլային եւ մենք բնական ամրութիւններէն օգտուելով ՝ գոյամարտը պիտի շարունակէինք: Գոյամարտն ապահովելու համար, անհրաժեշտ էր թաթարական ապստամբ շրջանները (որոնք կռնակէն եւ կողքերէն կը հարուածէին հայ ժողովուրդը) առնել զինուած ժողովրդի ազդեցութեանը տակ: Պարզ տրամաբանութիւն մը ուներ դէպի Արարատեան Հայաստան դիմող թրքահայ զինւած զանգուածը: Անիկա կը մտածեր, եթէ թուրքը բռնի ուժով զինք դուրս կը քշէ իր հինավուրց հայրենիքէն, ուր ինքը Արարատն անցնելէն յետո անհող ու անծածք բազմութիւմ մը պիտի դառնա, իր մարդկային սրբազան

[160] Սասունի Կ., Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914-1918), էջ 179:
[161] Նույն տեղում, էջ 182:
[162] Ներսիսյան Ա., Կարո Սասունի, էջ 113:

իրավունքն է, գրավել զենքի ուժով թաթարական գիւղերը եւ բնակիլ հոն, որպէս իր Նոր Հայրենիքը»[163]:

Այս մեջբերումով մեկ անգամ ևս հաստատվում է, որ արևմտահայ քաղաքական միտքը ուղղորդված էր դեպի միատարր հայրենիքի ստեղծման գաղափարը, որի ուղղությամբ գործնական քայլերը չուշացան: Ավելորդ չենք համարում շեշտել, որ նման քաղաքական դիրքորոշում արևելահայ քաղաքական մտքի ներկայացուցիչների մեջ քչերը միայն ունեին, որոնցից կարելի է առանձնացնել Ռուբենին և Արամ Մանուկյանին:

Լցված վերոհիշյալ ոխով՝ Տարոնի, Ալաշկերտի և Վասպուրականի ժողովուրդը 1918 թ. ապրիլի վերջերից Արարատ լեռան բարձունքներից իջնում է դեպի Իգդիր, որտեղ բնակվող թուրքերն ընկճվում են և տեղի տալիս: Այնուհետև ժողովուրդը, Արաքսն անցնելով, հարձակվում է Էջմիածնի և Աշտարակի թաթարական գյուղերի վրա: 500 հոգանոց սասունցիների կողմից ծրագրվում է Թալինի բերդի գրավումը, որը ռազմական բացառիկ նշանակություն ուներ Հայաստանի համար: Այն ոչ միայն իշխում էր Էջմիածնի եւ Աշտարակի վրա, այլ եւ լուրջ սպառնալիք էր Երեւանի համար:[164] Թալինի բերդը գրավվում է մայիսի 5-ին: Կարո Սասունու եղբայրը՝ Արմեն Սասունին, որն այս իրադարձությունների մասնակիցն էր, կարևոր տեղեկություններ է հաղորդում այն արևմտահայ գործիչների մասին, որոնք առաջնորդվում էին հիշյալ տրամաբանությամբ: Համաձայն դրանց՝ արևմտահայության տեղավորելու հարցը քննարկվում է մի ժողովում, որին մասնակցում են Կ. Սասունին, Վահագն Քրմոյանը, Արմեն Սասունին, Մխիթար Դարմանյանը, Միհրան Գրիգորյանը, Արամ Խոճուկյանը, Սասունցի Մուշեղը, Գելեցի Ղազարը, Թեղուտի Գալեն, Նորատինի Արշակը, Արշակ Մանուկյանը, Սասունցի Մանուկը, Աղջանի Վահանը և ուրիշներ: Ժողովը որոշում է, «որ Սասնո հեծելագնդի առաջնորդութեամբ Տարոնի ժողովուրդը տեղափոխվի Արագածի թաթարական, պարսկական եւ քրդական գիւղերը, որոնք պիտի գրավվէին Սասնո հեծելագնդի զինու զորութեամբ: Պուլանուխ-Մանազկերտի ժողովուրդը, որոնց մեծ մասը սայլ ունէր եւ մեծ

---

[163]Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 182-183:

[164]Տե՛ս Ստեփանյան Խ., Ռուբեն Տեր-Մինասյան (Կյանքը և գործը), Ե., 2008, էջ 74:

քանակութեամբ կենդանիներ, Էջմիածնի եւ Աշտարակի խճուղիով պէտք է բարձրանար Աշտարակ, Օշական եւ շարժուէր դէպի Ապարան: Այս որոշումը, - գրում է Ա. Սասունին, - արագ կերպով գործադրուեցավ եւ հետագային բախտորոշ նշանակութիւն ունեցաւ Հայաստանի համար»[165]:

Կռիվների մանրամասնությունների մեջ չխորանալով՝ շեշտենք, որ Թալինի բերդի գրավումից հետո ընկճվեցին մյուս թաթարական գյուղերը ևս, որի արդյունքում Թալինից մինչև Ուջան և Բյուրական, մոտ 70 քառ. կմ տարածքի վրա հաստատվեց արևմտահայությունը: Ավելացնենք նաև, որ ՀՀ հռչակումից հետո էլ նրա հայացման աշխատանքները հիմնականում իրականացնում էին արևմտահայ ուժերը՝ գլխավորապես Ռուբենի գաղտնի ծրագրերի համաձայն[166]:

Չպետք է մոռանալ նաև Ալագյազի (Արագածի) արշավանքը, որի հաղթանակը մեծ նշանակություն ունեցավ Սարդարապատի ճակատամարտում, քանի որ «Սարդարապատի դէմ գործող թրքական բանակը զրկվեցավ թաթարական ուժերու օժանդակութենէն, իսկ հայկական բանակը, ճակատամարտի պահուն, իր կռնակէն եւ կողքերէն հարուած տեւողներէն ազատուեցավ»[167]:

Եվ վերջապես, պետք է շեշտել, որ տարոնցիները և գնդապետ Ա. Բաղդասարյանի գնդից 400 վասպուրականցիներ, ինչպես նաև Անդրանիկը, 1918 թ. ամռանը մի շարք հաղթանակներ տարան Զանգեզուրում՝ չեզոքացնելով թաթարական տարրը: Առաջ անցնելով ասենք, որ այնտեղից էլ Անդրանիկը պատրաստվում էր անցնել նախ Պարսկաստան, ապա Արցախ: Սակայն անգլիական գեներալ Թոմսոնը սպառնաց նրան, որ եթե նա շարունակի իր առաջխաղացումը, ապա հայկական հարցը չի լուծվի Փարիզի խաղաղության կոնֆերանսում: Անդրանիկը թողեց Զանգեզուրը, բացատրելով, որ շրջապատված լինելով դավաճաններով, հրաժարվում է Հայաստանի Երկրապահ

[165] Սասունի Կ., Պատմութիւն Տարոնի աշխարհի, էջ 1073:
[166] Տե՛ս Ռուբէն, նշվ. աշխ., էջ 103-121, նաև՝ Դարբինեան Ռ., Հայ Դատը Այսօր, «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1963, Յուլիս, թիւ 7, էջ 1-15:
[167] Սասունի Կ., Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914-1918), էջ 197, նաև՝ Ստեփանյան Խ., նշվ. աշխ., էջ 74:

Զորամասի հրամանատարությունից: Նա ժամանում է Էջմիածին, զենքերը հանձնում կաթողիկոսին և հեռանում արտասահման:

Այս մասով ամփոփելով՝ հանգում ենք հետևյալ եզրակացությունների.

1.Արևմտահայ քաղաքական կամ առհասարակ հայ քաղաքական միտքը հիմնականում մատուցվում է դիվանագիտական գործընթացներում իրենց դրսևորած կուսակցական և այլ՝ հանրային-քաղաքական գործիչների գործունեության հենքի վրա, որոնք ավելի շատ գնում էին քաղաքական գործընթացների հետևից և ոչ առջևից: Նրանց գործունեությունը հիմնականում կախված էր մեծ տերություններից:

2.Արևմտահայ քաղաքական մտքի այն ուղին էր արդյունավետ, որը մենք ներկայացրինք, և որը գործում էր իրական հաշվարկով, չէր սահմանափակվում տեսություններով, այլ դրանք կյանքի էր կոչում, որով պետք է պայմանավորել հայոց պետականության ստեղծումը:

Եվ կարծում ենք, որ դրանում մենք բավականին համոզվեցինք:

Այժմ փորձենք ճշտել, թե ինչպիսի դիրքորոշում որդեգրեցին արևմտահայ քաղաքական գործիչները Հայաստանի Հանրապետության նկատմամբ, որը հռչակվեց նաև նրանց գործունեության արդյունքում, առանց որի՝ դիվանագիտական հիմնավորումները չէին կարող արդյունավետ լինել:

1918 թ. մայիսի 28-ից խորացել էր քաղաքական անջրպետը արևմտահայերի և արևելահայերի միջև, որը սկսվել էր դեռևս արևմտահայերի 1-ին համագումարից: Արևմտահայերը, որոնք արևելահայերի հետ մեկտեղ երկար տարիներ պայքար էին մղել հանուն իրենց անկախության, իրենց այնքան էլ հոգեհարազատ չէին համարում Արևելյան Հայաստանում առաջացած պետությունը՝ այն համարելով Արարատյան Հայաստան: Իհարկե, նրանց կարելի էր հասկանալ այն առումով, որ չէին ուզում կորցրած տեսնել իրենց հայրենիքը: Բայց նրանք չէին դնում անջատողականության հարց, ինչպես անում էր Պողոս Նուբարի գլխավորած պատվիրակությունը, որին մենք դեռ կանդրադառնանք: Ինչպես նշում է Ա. Չելեպյանը. «Զոր. Անդրանիկը նույնպես մերժեց ճանչնալ Պաթումի

ստորացուցիչ պայմաններով ստեղծուած Երեւանեան Հանրապետութիւնը, որ ո՛չ ազատութիւնը ունէր իր սեփական երկրի պաշտպանութեան համար բանակ պահելու, ո՛չ ալ անկախութիւնը՝ իր երկրի ճամբաներուն տէրը ըլլալու»[168]:

Անդրանիկի համար վավերացնել Բաթումի պայմանագիրը, կնշանակեր ընդունել. «.... Երեւանեան Հանրապետութիւնը որպէս Հայկական հարցի լուծում եւ նուիրագործել Թրքահայաստանի կորսուած հողերը: Ան չէր կրնար գլուխ ծռել Պաթումի թրքական ստորնացուցիչ պայմաններուն եւ հաշտուիլ Թրքահայաստանի կորուստին հետ, որու ազատագրութեան համար պայքարած էր 30 տարի»[169]:

Նման դիրքորոշում ունեին նաև դաշնակցական ղեկավարներ՝ Միքայել Վարանդյանը, Գարեգին Փաստրմաճյանը, Համո Օհանջանյանը, որոնք հավատարիմ մնացին Հայաստանի Հանրապետությանը, բայց նույն մտահոգությունն ունեին արևմտահայության դատի և ապագայի նկատմամբ, ինչպես զորավար Անդրանիկն ու Պողոս Նուբար փաշան:

Ռամկավարները նույնպես չընդունեցին Հայաստանի Հանրապետությունը, այն համարելով անցումնային փուլ՝ հայոց պետականության ստեղծման ճանապարհին, քանի որ այն չէր ընդգրկում Հայաստանի մեծագույն մասը և իրավասու չէր ստեղծել պատվիրակություն, որն իր անունից կպաշտպաներ հայկական հարցը միջազգային դիվանագիտական ատյաններում: Այս առումով Ս. Վրացյանը գրում էր, որ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը ելնում էր իրական փաստերից, այսինքն, Հայաստանի Հանրապետության գոյությունը իրողություն էր, այնտեղ ապրում էր մեկ միլիոն ժողովուրդ, Երևանում կար խորհրդարան, կառավարություն, բանակ. երկիրը հետզհետե կազմակերպվում էր պետականորեն: Մինչդեռ Արևմտյան Հայաստանն ամայի էր՝ «ոչ ժողովուրդ ուներ, ոչ կառավարություն»: «Հետևաբար, - եզրակացնում էր Վրացյանը, - անհրաժեշտ է ազգային բոլոր ուժերը կենտրոնացնել Հայաստանի Հանրապետության վրա, իբրև

[168]Չելեպեան Ա., Զօրավար Անդրանիկ եւ Հայ Յեղափոխական շարժումը, Լոս Անճելըս, 1984, էջ 504-505:
[169]Նույն տեղում, էջ 500:

հայկական պետության կորիզի, և Հայկական հարցի լուծումը դնել Հայաստանի երկու հատվածների միացման ձևով»[170]:

Որո՞նք էին քաղաքական խզման բուն պատճառները: Դրանք լավ ներկայացրել է Ս. Վրացյանը, որն այդ կապակցությամբ մասնավորապես նշում է. «Տասնեակ տարիներ հայ քաղաքական միտքը դաստիարակուել էր այն ուղղութեամբ, որ Հայաստանը այնտեղ էր, Բարթողեան լեռնաշղթայի միւուս կողմը, հայկական հարց, Հայաստանի ինքնավարութիւն, հայ պետութիւն կարող էր լինել միայն Թիւրքահայաստանում, եւ յանկարծ, բոլորովին չսպասուած տեղից՝ մէջտեղը բռնում է ինչ որ մի «Հայաստանի Հանրապետութի՛ւն» - մարսելի՞ բան էր այդ: Յետոյ այդ «Հանրապետութեան» մէջ դեռ շատ բանից՝ օրէնքներից ու լեզուից սկսած մինչեւ ներքին կարգերը, մինչեւ հանրային կենցաղն ու բարքերը՝ ռուսի հոտ էր բուրում: Արեւմտահայութեան մտքին ու զգացմունքներին խորթ էր այդ, անհարազատ: Ուստի եւ զարմանալի չէ, որ անկախութեան առաջին օրերից հենց նրանք սկսել էին մտածել «ինքնորոշման», իրենց քաղաքական դիրքն ու ընթացքը որոշելու մասին»[171]:

Իսկ Հրանտ Ավետիսյանը փորձում է բացատրել այսպես, որ Կովկասում հռչակված Հայաստանի Հանրապետության առկայությունը կարող էր «վտանգ» ստեղծել Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու հարցում, որը թուրքերին հնարավորություն կտար հայտարարել, թե Հայկական հարցը լուծված է, իրենց՝ թուրքերի շնորհիվ, լուծված է վերջնականորեն: Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանին, ապա այնտեղ այլևս հայ չկա՝ ինչպես հայտարարում էին համաթրքության գաղափարախոսները, այստեղ կան «հայադավան օսմանցիներ, և ով այդ վիճակից դժգոհ է, թող գնա իր հանրապետության «լեռներում քաղաքականությամբ զբաղվի»[172]:

Արևմտահայությունը հիմքեր ուներ անհանգստանալու, քանի որ անորոշ էր Արևմտյան Հայաստանի ճակատագիրը: Նրա՝ գեթ

---

[170]Սարգսյան Ս., նշվ. աշխ., էջ 158-159:
[171]Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 254-255, Չելեպեան Ա., նշվ. աշխ., էջ 502-503, Ղազարյան Հ., նշվ. աշխ., էջ 236-237, նաև՝ Պատմութիւն Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան 1887-1962, խմբագիր Ա. Կիտուր, հ. Ա, Պէյրութ, 1962, էջ 483:
[172]Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Ե., 1997, էջ 237-238:

ծիսականորեն ՀՀ մաս հայտարարելու փաստը կարող էր վերացնել արևել ահայ-արևմտահայ անջրպետը: Այդ հաստատում են Ա. Խատիսյանի հետևյալ մտորումները՝ կապված ստեղծված իրավիճակի հետ. «Թրքահայաստանի ամայացած վիլայէթները հայ ժողովրդի անկապտելի սեփականութիւնը կը կազմէին. պէտք էր, որ անոնք եւս մտնէին հայկական նորակազմ պետութեան մէջ, որպէսզի բովանդակ հայութիւնը կարենար համախմբուիլ իր պատմական հայրենիքին մէջ: Ճիշդ է, այդ վիլայէթները մեր ձեռքը չէին, բայց հայ ժողովուրդի գիտակցութեամբ անոնք չէին կրնար պատկանիլ ուրիշ ոեւէ մէկուն, բացի Հայաստանէն. հայութիւնը հասած էր ազգային այնպիսի գիտակցութեան մը, որ չէր կրնար ճանչնալ սահմաններու պատահական բաժանում եւ հատուածներու գոյութիւն. ան կզգար ինքզինքը իբրեւ մէկ ամբողջութիւն եւ իր այդ միութեան գաղափարը կուզէր մարմնաւորել որեւէ մէկ ակտի մէջ: Երեւանը դարձած էր հայութեան քաղաքական կեդրոնը, որ պէտք է միացնէր նաեւ հայկական բոլոր հատուածները»[173]:

Ինչպես համոզվում ենք, խնդիրն ավելի շատ վերաբերում էր ՀՀ շուրջ հայկական հողերի միավորումը համահայկական նպատակ դարձնելուն, երբ դեռ տարածքային առումով ոչինչ ճշգրտված չէր: Ուստի պատահական չէ, որ արևմտահայ քաղաքական ղեկավարներն անհրաժեշտ գտան նրան լուծում տալ: 1919 թ. փետրվարի 6-13-ը Երևանում գումարվեց արևմտահայերի երկրորդ համագումարը:

Դեռևս 1917 թ. դեկտեմբերի 19-ին միջկուսակցական մի շարք խորհրդակցություններից հետո կազմվել էր համագումարի կազմակերպիչ կոմիտե, որն էլ նախաձեռնել էր նրա գումարումը: Համագումարին մասնակցում էին 55 պատգամավորներ: Չերծ մնալով աշխատանքները մանրամասնորեն ներկայացնելուց՝ նշենք, որ քննարկումների արդյունքում փետրվարի 12-ին ընդունվում է հետևյալ բանաձևը.

«Արեւմտահայ երկրորդ Համագումարը՝ քննելով հայ ժողովրդի ներկայ կացութիւնը՝

1. Սրտագին կըողջունէ եւ կը հայտարարէ Ազատ եւ Միացեալ Հայաստանի անկախութիւնը:

---

[173]Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բէյրութ, 1968, էջ 150:

2. Լիակատար վստահութիւն կը յայտնէ Ազատ եւ Միացեալ Հայաստանի Պողոս Նուպար փաշայի անդրանիկ դահլիճին (Այդ օրերին լուրեր էին տարածվել, թե Պողոս Նուբարը Փարիզում հայտարարել է Հայաստանի միությունն ու անկախությունը և կազմել միացյալ Հայաստանի կառավարություն, որը չէր համապատասխանում իրականությանը՝ Հ. Ս.):

3. Կը յայտարարէ իր վճռական որոշումն ու կամքը՝ ունենալ քաղաքական եւ պետական մէկ միութիւն համազգային հատուածներու եւ երկրամասերու միաւորութեամբ:

4. Կը պարտադրէ ընտրուած «Գործադիր Մարմնին»՝ նախարարական դահլիճին հետ անմիջական յարաբերութեան մէջ մտնել՝ իրականացնելու եւ գործնականացնելու քաղաքական եւ պետական այն բոլոր աշխատանքները, որոնք հարկաւոր են Ազատ եւ Միացեալ Հայաստանի պետական գոյութիւնը հիմնաւորելու համար:

5. Միաժամանակ կը պարտադրէ ընտրուած Գործադիր Մարմնին՝ գործնական քայլեր առնել Արարատեան Հանրապետութեան նախարարութեան եւ Խորհրդարանի հետ Միացեալ Ազատ Հայաստանի անկախութիւնը յայտարարելու եւ իր մասնակցութիւնը բերելու գոյութիւն ունեցող պետական եւ օրենսդրական հաստատութիւններու մէջ համազգային միութիւնը իրականացնելու համար: (Ս. Վրացեանի վկայութեամբ՝ այս կետին դեմ են արտահայտվում ռամկավար 5 պատգամավորներ և պատճառը ներկայացնելով՝ հեռանում են): Իսկ պատճառն ընդունելի չի կարելի համարել, քանի որ նրանք գտնում էին, թէ Միացյալ և ազատ Հայաստանի մասին հայտարարությունը պետք է աներ Ազգային Պատվիրակությունը, որի տեսակետներն էին նրանք ընդունում[174]: Սակայն մի՞թե կարևոր էր, թե ո՞վ է անում հայտարարությունը, երբ կար մի ժողովուրդ՝ շահերի ընդհանրությամբ:

6. Կը պահանջէ Ազատ եւ Միացեալ Հայաստանի պետական գոյութեան երաշխաւորումը՝ դաշնակից պետութիւններու քաղաքական, տնտեսական եւ ռազմական օժանդակութամբ եւ աջակցութեամբ:

---

[174]Տե՛ս Սարգսյան Ս., նշվ. աշխ., էջ 161, տե՛ս նաև Հարությունյան Ա., Սևրը և հայ հասարակական-քաղաքական միտքը, Ե., 2004, էջ 31-32:

7. Կը պահանջէ Հայկական Մեծ Եղեռնի հեղինակ եւ պատասխանատու ճիւաղներուն՝ Վիլհելմի, Էնվէրի, Թալէաթի, Ճեմալի, Պեհաէտին-Շաքիրի եւ ընկեր նահանգապետներու, կառավարիչներու եւ բոլոր ղեկաւարներու զինուորական դատարանու պատժիլը:

8. Կը պահանջէ հայ ժողովրդի վնասներու ամբողջական հատուցումը ի հաշիվ օսմանեան կառավարութեան»[175]:

Համագումարն ընտրում է 9 հոգուց բաղկացած Գործադիր Մարմին, որի մեջ մտնում էին արևմտահայերի ներկայացուցիչներ՝ Ս. Բորոյանը, Խ. Բոնապարտյանը, Ա. Սասունին, Բուլղարացի Գրիգորը, Վ. Տերոյանը, Ռ. Դրամբյանը, Վ. Քրմոյանը, Վ. Օխիկյանը և Ա. Կիտուրը:

Ինչպես հաստատում է նույն Ս. Վրացյանը, այս մարմինը, որի ստեղծմամբ լուծարվեցին արևմտահայ նախկին բոլոր մարմինները, փաստորեն կառավարության մեջ մի նոր կառավարություն էր, քանզի իր անդամները կատարում էին նախագահական գործառույթներ: Հարկավ, սա ճիշտ չէր և Գործադիր Մարմինը շուտով դահասկանալով, դիմեց ՀՀ կառավարությանը՝ Հայաստանի երկու հատվածների միավորման հայտարարության անհրաժեշտության մասին, որն էլ տեղի ունեցավ 1919 թ. մայիսի 28-ին: Հայտարարության մեջ մասնավորապես ասված էր. «Հայաստանի ամբողջութիւնը վերականգնելու եւ ժողովրդի լիակատար ազատութիւնն ու բարգաւաճումն ապահովելու համար, Հայաստանի կառավարութիւնը, համաձայն հայ ժողովրդի միահամուռ կամքի եւ ցանկութեան, յայտարարում է, որ այսօրուանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապէս միացած են իբրեւ անկախ պետական միութիւն»[176]:

Հայաստանի հանրապետության պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանը Հայաստանի արտաքին գործերի նախարար և վարչապետ Ա. Խատիսյանին գրում է. «Տեղեկանալով թերթերից մայիսի 28-ի ակտի մասին, իմացանք.

1.Կառավարութիւնը, առանց պառլամենտի, Մայիսի 28-ին յայտարարել է Ամբողջական Հայաստանի անկախութիւնը ընդունելով պառլամենտում արեւմտահայութիւնից 12 ներկայացուցիչներ:

---

[175]Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 257-258:
[176]Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 152, Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 262:

2.Կառավարութիւնը այսպէսով ինքզինքը հռչակել է ամբողջական Հայաստանի Կառավարութիւն:

3.Միւս կուսակցութիւնները դէմ են եղել այս ակտին զանազան պատճառներով եւ ժողովրդական կուսակցութիւնը իր հակամարտութիւնն առաջ տանելով, դուրս է կանչել նախարարական խորհրդից իր ներկայացուցիչներին, միաժամանակ հրաժարուելով նոր պարլամենտական ընտրութիւններից, սոցիալ-դեմոկրատների հետ միակամ: Գիտենք նաեւ որ ժողովրդական կուսակցութեան նախարարները խորհուրդը ձգելուց առաջ, ստորագրած են եղել Մայիսի 28-ի ակտը: Ձեր հեռագրից գիտենք նաեւ որ նոր պարլամենտի ընտրութիւնները տեղի են ունեցել եւ պարլամենտը գումարուած է Օգոստոսի մէկին»[177]:

Բնականաբար այս տեղեկությունն իր ազդեցությունն ունեցավ ՀՀ պատվիրակության և Պողոս փաշայի ու նրա կողմնակիցների վրա:

Փարիզում գումարված արևմտահայ վեհաժողովը ցրելուց առաջ նա իր ընտրած պատվիրակությանը (փաշային և ընկերներին) հանձնարարել էր ՀՀ պատվիրակության հետ խորհել և Ամբողջական Հայաստանի միասնական կառավարություն կազմելու ծրագիր մշակել՝ բնականաբար ենթարկվելով ՀՀ կառավարության սանկցիային: Սա այն ժամանակ էր, երբ հիշյալ վեհաժողովում փոքրամասնության ջանքերով փորձում էին ճանաչել տալ ՀՀ կառավարությանը՝ որպես ամբողջական կառավարություն: Անցան ամիսներ, և Պողոս փաշան բնավ այդպես էլ չուզեց ճանաչել ՀՀ կառավարությունը որպես Ամբողջական Հայաստանի միակ կառավարություն, որը հաճելի կլիներ նաև դաշնակիցների համար: Երբ Մ. Աճեմյանը, որն առանձին վստահություն ուներ Պողոս Նուբարի մոտ, փորձեց համոզել, որ անհրաժեշտ է այս վտանգավոր ժամանակաշրջանում միակ կառավարություն և միակ պատվիրակություն ստեղծել Հայկական հարցի լուծման համար, Պողոս Նուբարը մերժեց, պատճառաբանելով, որ այդ մասին մտածելը դեռ վաղ է, բայց երբ համոզեցին, որ նրա քաղաքական վախերն

---

[177] ՀԱԱ, ֆ. 282, ց. 1, գ. 56. թ. 1:

անօգուտ են, վերջինս պատճառաբանեց, որ այնպիսի ծրագիր չկա, որ ինքը կարողանա ընդունել[178]:

Սակայն առաջարկը շատ պարզ էր, այն բաղկացած էր երկու կարևոր կետերից.

«1.Ապագայ Ամբողջական Հայաստանի պարլամենտում կովկասահայերին հաւասար թւով թիւրքահայեր դնել (անկախ վերջիններիս ընտրողների թւի նւազութիւնից) եւ 2. կառավարութեան մէջ նրանց ներկայացուցիչներին համապատասխան տեղ տալ, թողնելով այսպիսով կազմւած միակ կառավարութեանը մեր երկու պատւիրակութիւնները ձուլել ի մի ըստ իր հայեցողութեան: Հասկանալի էր, որ նոր պատւիրակութիւնն ամբողջապէս ենթակայ պիտի լինէր միակ կառավարութեանը եւ պատասխանատու նրա առաջ»[179]: Առաջարկը մերժվում է պատվիրակության անդամների ձայների մեծամասնությամբ՝ չորսն ընդդեմ երկուսի (Փաստրմաճյանի և բժ. Նարուզի):

Վկայող փաստեր կան, որ փաշայի ու իր կողմնակիցների ձեռքով կատարվում էր երկու աշխատանք. «1. Ամէն միջոցով վարկաբեկել եւ նսեմացնել մեր կառավարութիւնը յաչս օտարների, որպէս բոլշեւիկների կառավարութիւն, եւ 2. Այդ գնով յաջողեցնել, որ պէս զի փաշայի նախագծւած պատւիրակութիւնը ճանաչւի որպէս Հայաստանի կառավարութիւն»[180]:

Ա. Ահարոնյանը նշում է, որ իրենք համաձայն չէին, որ նոր պառլամենտի և նոր Միացյալ կառավարության կեսը լինի թուրքահայերից. համաձայն էին, որ երկու պատվիրակությունները նոր կառավարության համաձայնությամբ ձուլվեն կամ վերակազմվեն և դառնան մի պատվիրակություն՝ ենթարկվելով մեր կենտրոնական իշխանությանը: Ինչպես նաև Պողոս փաշան մնա նոր պատվիրակության միակ նախագահ: Պողոս փաշան պահանջում էր.

«1.Նոր կառավարութեան նախարարապետը պիտի լինի թրքահայ եւ յատկապէս Պօղոս փաշան, որ պահելու է նաեւ միացեալ ու միակ պատւիրակութեան նախագահութիւնն:

[178]Տե՛ս նույն տեղում, թ. 1-2:
[179]Նույն տեղում, թ. 2-3:
[180]Նույն տեղում, թ. 3:

2.Արտաքին գործոց նախարարութիւնը պիտի վերցւի դաշնակցական կուսակցութիւնից եւ նախարարը պիտի ընտրւի փաշայի պատւիրակութեան կամ իր դրկած միսսիայի եւ մեր կառավարութեան համաձայնութեամբ:

3.Զինուորական նախարարը պիտի ընտրւի նոյն կողմերի փոխադարձ համաձայնութեամբ:

4.Նոր կառավարութիւնը կազմելուց յետոյ մեր պարլամենտը կտայ իր սանկցիան եւ կը ցրւի, մինչեւ որ թիւրքահայերի ընտրած պարլամենտի անդամներն էլ կը հասնին ու կը միանան, կազմելով միացեալ եւ ամբողջական Հայաստանի պարլամենտը, որ արդէն կընտրի իր նոր կառավարութիւնը համապատասխան իր մեծամասնութեան:

5.Նոր միացեալ պատւիրակութիւնը լինելու է 6 կամ 8 հոգուց կազմւած, որի կէսը կը նշանակի կառավարութիւնը (մեր այժմու) եւ միւս կէսը ինքը յիշեալ պատւիրակութիւնը, որին վերապահւած է իրաւունք իր անդամների միջից ընտրելու այդ երեքին կամ չորսին:

6.Այդ պատւիրակութիւնը այսպէս կազմելուց յետոյ, թէեւ պաշտօնապէս համարւում է պատասխանատու միացեալ ժամանակաւոր կառավարութեան առաջ եւ ենթակայ նրան, բայց էապէս նա պիտի լինի անկախ եւ ազատ պետութիւններին ներկայացւած մեր ,,Մէմուար,, ի սահմաններում եւ ըստ իր բարեհայեցողութեան վարել մեր դատը ու լինելիք բանակցութիւնները պետութիւնների եւ գուցէ նաեւ մանդատերերի հետ:

7.Միացեալ ժամանակաւոր կառավարութիւնը իրաւունք չունի պատւիրակութեան այս կազմը յետագայում որ եւ է փոփոխութեան ենթարկել մինչեւ Հայաստանի մասին դաշնագրի վերջնական ստորագրութիւնը:

8.Փաշան այդ պատւիրակութեան մէջ պիտի ունենայ մեծամասնութիւն, որովհետեւ, ասում էր այդ առթիւ փաշան, ,,ես պէտք է զինւած լինեմ իմ համախոհներով, ենթակայ չլինելու համար կառավարութեան քմահաճոյքներին,,»[181]:

Ա. Ահարոնյանը նշում է, որ, բնականաբար, իրենք չէին կարող ընդունել այս կէտերը, դեմ էին, որ Պողոս Նուբարի

---

[181]Նույն տեղում, թ. 7-8:

պատվիրակության մեջ մեծամասնություն կազմեն այնպիսի մարդիկ, ինչպիսիք են՝ պարոն Ա. Չոպանյանը, Վ. Թեքեյանը, պրոֆ. Տեր-Հակոբյանը, որոնց վրա հենվելով, նա իրեն կարող էր հռչակել նախագահ՝ միացյալ ժամանակավոր կառավարության: Ապա գրում է, որ ՀՀ պատվիրակության անդամ պարոն Պապաջանյանը միացավ նրա (փաշայի) պատվիրակության հայեցակետերին և ավելի դժվարացրեց մեր (պատվիրակությունների) համերաշխության գործը[182]:

Այդ մասին վկայում է նաև Ս. Սարգսյանը, ասելով, որ մայիսի 28-ի վերամիավորման ակտն առաջ բերեց Պողոս Նուբարի գլխավորած պատվիրակության, ինչպես նաև ռամկավարների և ՀԺԿ-ի դժգոհությունը, որոնք կառավարությունից հանեցին իրենց նախարարներ՝ Ս. Հարությունյանին, Ս. Էնֆիաջյանին, Գ. Մելիք-Ղարագյոզյանին և Վ. Քրմոյանին՝ վերջ դնելով կոալիցիային, քանի որ այն ժամանակի պահանջն էր, և այն կարելի է համարել միանգամայն ճիշտ: Սխալ էին նաև հնչակյանները, որոնք, դեմ գնալով միավորման ակտին, հրաժարվեցին մասնակցել 1919 թ հունիսին կայացած խորհրդարանական ընտրություններին[183]:

ՀՀ-ում գտնվող արևմտահայ քաղաքական մտքի ներկայացուցիչները, որոնք արդեն իշխանության մաս էին դառնալով խորհրդարանի պատգամավորներ, (մինչ այդ 12 հոգով պետք է մտնեին Խորհրդի կազմի մեջ), ավելի իրատեսական ճանապարհ էին ընտրել, քան Պողոս Նուբարը և մյուսները: Եվ դրա ճշմարտացիությունը հետևյալն էր.

1.Անկախ նրանից, թե ինչպիսի տարածքներ կներառեր միացյալ Հայաստանը, դրան գնալու շուրջ արևմտահայ և արևելահայ քաղաքական ուժերի միավորումն անհրաժեշտ էր:

2.Անկախ այդ տարածքների անորոշությունից՝ կենսական նշանակություն ուներ, հոգեբանական անջրպետը վերացնելը, քանզի ներքին տարաձայնություններից շահելու էր միայն թշնամին:

3.Անհրաժեշտ էր որդեգրել պետական դիրքորոշում և միասնական գործելակերպ, ապագա Հայաստանի տարածքների նկատմամբ, ինչը հնարավոր դարձավ Միացյալ Հայաստանի ակտով:

[182]Տե՛ս նույն տեղում, թ. 9:
[183]Տե՛ս Սարգսյան Ս., նշվ. աշխ., էջ 164:

Սակայն, ցավով պետք է ավելացնել, որ Պողոս Նուբարի գլխավորած պատվիրակությունը մեծ տերությունների մոտ իրեն շարունակեց ներկայացնել որպես արևմտահայության միակ ներկայացուցիչ՝ նրանց մատուցելով անիրատեսական հողային պահանջներ՝ փորձելով Արևմտյան Հայաստանի խնդիրը տարանջատել ՀՀ-ից[184]: Եվ սա այն դեպքում, երբ հայկական պետականության առկայության պայմաններում նրա պատվիրակությունը պետք է իր բոլոր գործառույթներից զրկվեր, որի գոյությունն արդեն ոչնչով չէր հիմնավորվում: Նա իրավունք չուներ շարունակելու իր գործընթացը, որը ներծծված էր քաղաքական ռոմանտիզմով, քանզի Հայաստանի Հանրապետությունն արդեն ուներ իր պատվիրակությունը, որին պարտավոր էր զիջել իր դիրքերը:

Ակտի ընդունումն առաջ բերեց բուռն վեճեր և սրեց միջկուսակցական պայքարը, որը, առանց այդ էլ, բավականին լարված էր:

Այդ մասին բավական հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում 1919 թ. ապրիլի 24-ով թվագրված Ա. Ահարոնյանի նամակը՝ ուղղված Արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանին, որտեղ ասվում էր, որ Պողոս Նուբարն իր պատվիրակությանը ուժ տալու և ժողովրդական սանկցիա ստանալու համար որոշել էր 1919 թ. փետրվարին համազգային համագումար հրավիրել Փարիզում և նույնիսկ հաշվի չառնելով ՀՀ գոյության փաստը՝ արևելահայությունից 8 ներկայացուցիչ էր պահանջել: «Հրավերից հետո, երբ մենք հասանք, ընդհանուր ծրագիրը խախտվեց և մենք հայտարարեցինք, որ որպես պատվիրակ չենք մասնակցի, բայց համաձայն մեր կառավարության հրահանգների պատրաստ ենք ձեռք-ձեռք տված գործել թրքահայ համագումարի ընտրվելիք պատվիրակության հետ»[185]:

Ազգային համագումարին (այն պաշտոնապես բացվեց փետրվարի 24-ին և փակվեց ապրիլի 22-ին) մասնակցելու համար հրավիրվել էին 8 արևմտահայեր, 8 արևելահայեր (կովկասահայեր), 4 ամերիկահայեր, 2-ական պատգամավոր Եգիպտոսից, Պարսկաստանից, Ֆրանսիայից,

[184]Տե՛ս Հովհաննիսյան Լ., Հայկական հարցը և մեծ տերությունները 1914-1917 թվականներին, Ե., 2002, էջ 145:
[185]ՀԱԱ, ֆ. 282, ց. 1, գ. 56, թ. 16:

Անգլիայից, 1-ական՝ Իտալիայից, Շվեցարիայից, Հնդկաստանից, Ճավա կղզուց, Բալկանյան երկրներից, Հունաստանից:

Մասնակից 38 պատգամավորներից էին՝ «Պողոս Նուբարը, Աւ. Թերզիբաշեանը, Վ. Ճափազեանը, Լ. Շանթը, Եղիշէ Արք. Դուրեանը, Յ. Խան Մասեհեանը, Մ. Վարանդեանը, Յ. Նեւրուզը, Վ. Թեքէյեանը, Յ. Մոստիչեանը, Գ. Նորատունկեանը, Արմէն Գարօն, Մ. Տամատեանը, Ե. Աղաթոնը, Ա. Չօպանեանը եւ այլոք»[186]:

Ձայնի իրավունքով մասնակցում էին նաև Ազգային պատվիրակության կողմից հրավիրված 6 անձ: Մասնակիցների 1/3-ը դաշնակցականներ էին, նույնքան էլ ռամկավարներ կային[187]:

Պողոս Նուբարը ցանկանում էր ձևավորել ծանրակշիռ ու հեղինակավոր պատվիրակություն, ինչպես նաև հայկական պահանջների միասնական ծրագիր և Փարիզում ձևավորել համահայկական կառավարություն[188]:

Համագումարի նախագահ ընտրվեց Գ. Նորատունկյանը, փոխնախագահներ՝ Ա. Տեր-Հակոբյանը և Ա. Չոպանյանը: Ա. Ահարոնյանը և Հ. Օհանջանյանը հրաժարվեցին ձայնի իրավունքով մասնակցելուց, պատճառաբանելով, որ լիազորված են մասնակցելու միայն Հաշտության Վեհաժողովին: Քանի որ արևելահայերը բացակայում էին, ուստի այդ համագումարը չկոչվեց համազգային, այլ հռչակվեց Ազգային և պետք է ներկայացներ արևմտահայությունն ու գաղթօջախները[189]:

Այդ մասին վկայում են նաև արխիվային փաստաթղթերը, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետությունը, բոլորովին անտեղյակ ծրագրված համագումարից, Ա. Ահարոնյանի նախագահությամբ և Մ. Պապաջանյանի (որը չէր էլ գնացել) ու Հ. Օհանջանյանի անդամակցությամբ պատվիրակություն էր ուղղարկել Փարիզ՝ գործելու Ազգային պատվիրակության հետ՝ ի նպաստ ազգային դատի: Սակայն հաշվի առնելով, որ երեք հոգով չէին կարող ներկայացնել

[186] Մելիքյան Վ., Հայութեան ինքնակազմակերպման խնդիրը եւ արեւմտահայերի 3-րդ համագումարի անհրաժեշտութիւնը. հայկական պահանջատիրութիւն, Ե., 2010, էջ 31:
[187] Տե՛ս նույն տեղում:
[188] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 282, ց. 1, գ. 56, թ. 17:
[189] Տե՛ս Մելիքյան Վ., նշվ. աշխ., էջ 32:

հայության կես հատվածին, ուստի համագումարին մասնակցում էին խորհրդակցական ձայնի իրավունքով[190]:

Իսկ Գ. Գալոյանը մատնանշում է. «Ա. Ահարոնյանը 1919 թ. օգոստոսի 7-ին արտգործնախարար և վարչապետ Ա. Խատիսյանին գրած նամակում հաղորդում էր, որ դեռևս փետրվարին Փարիզում տեղի ունեցած «Ազգային համագումարում» (այս համագումարը նախաձեռնել էր հենց Պողոս Նուբարը, նպատակ ունենալով ստեղծել «միացյալ կառավարություն», բնականաբար իր իսկ նախագահությամբ, իսկ իր գլխավորած Ազգային պատվիրակությունը կներկայացներ Հայկական հարցը Փարիզի վեհաժողովում՝ Հ.Ս.) Պողոս Նուբար փաշան մերժել էր ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարությունը որպես «ամբողջական Հայաստանի միակ կառավարություն», ինքն իրեն համարելով կառավարությունից ու պառլամենտից բարձր, քանի որ ընտրվել էր կաթողիկոսի կողմից, իսկ իրեն համարում էր «ազգի միակ շեֆը», և «Հայոց դատի միակ ներկայացուցիչը»[191]:

Համագումարում բուռն վեճեր եղան, որոնք մեկ անգամ ևս ապացուցեցին, որ հայ քաղաքական միտքը միատարր չէ: Լ. Շանթն առաջարկում էր, որ ամենից առաջ պետք է ճանաչել ՀՀ խորհրդարանն ու կառավարությունը, ապա՝ այն լրացնել ու ամբողջացնել արևմտահայերով, իսկ Ա. Թերզիբաշյանը գտնում էր. «Երևանի կառաւարությանն ենթարկելով թուրքահայ դատը իրենց անեքսիա են անում մի հողամաս, որը միջազգային իրավունքով ռուսական է»[192]:

Միանգամայն ճիշտ է ասված. «Նուպար սկզբունքով եւ պաշտոնապէս ընդունած ըլլալով հանդերձ երկու Հայաստաններու դատերուն միացումը, մէկ կողմէն բանակցութիւններ վարելով հանդերձ մէկ Կառավարութեան եւ մէկ Պատվիրակութեան կազմութեան համար, միւս կողմէ յայտնապէս կը քաջալերէ իր հետեւորդներու անմիտ պայքարը երկու անջատ դատերու մասին: Այլապէս ան վաղուց պէտք էր ազդարարած ըլլար իր կոյր եւ

[190] Տե՛ս Համահայկական խորհրդակցությունները (1912-1920 թթ.), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբ. Ա. Վիրաբյան, Ե., 2004, էջ 338:
[191] Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Ե., 1999, էջ 92-93, նաև տե՛ս ՀԱԱ, ֆ. 282, ց. 1, գ. 56, թ. 4, 7:
[192] Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 31:

կամակոր հետեւորդներուն, որ անոնք անմիտ պայքարներ չմղէին անդոյ հարցերու շուրջ»[193]:

Սակայն, Ա. Ահարոնյանի գլխավորած պատվիրակությունն էր ավելի շատ գնում նրա հետևից, քան հակառակը, իսկ ՀՀ իշխանությունները տարբեր պատճառներով չէին գնում դրա լուծարմանը: Չէ որ այն ստեղծվել էր կաթողիկոսի հրամանով[194], երբ ՀՀ-ն չկար, իսկ այժմ այդ նույն կաթողիկոսին մնում էր պետությանը թողնել քաղաքական խնդիրները, որոնց լուծման նրա ջանքերը, թելադրված ցարական իշխանությունների կողմից, ի դերև ելան և կատարել հավատի և բարոյականության իր առաքելությունը: Սակայն, քանի որ այս ամենը տեղի չունեցավ, Պողոս Նուբարը շարունակեց իր անիրատեսական գործունեությունը:

## 2.2. **Հայոց Ազգային պատվիրակության մոտեցումները Հայկական հարցի լուծման վերաբերյալ**

Ինչպես նշեցինք, Հայոց Ազգային պատվիրակությունը, որը ստեղծվել էր 1912 թ. կաթողիկոսի կոնդակով և որում մեծ դերակատարություն էր ունեցել ցարիզմը, շարունակում էր մնալ արևմտահայության շահերի ներկայացուցիչը մեծ տերությունների մոտ:

Հայկական հարցի վերաբացման շրջանում` 1918 թ. աշնանը, նույն կաթողիկոս Գևորգ Ե.-ի կողմից Հայոց ազգային պատվիրակության ղեկավար նորից հաստատվեց Պողոս Նուբարը: Ճշմարիտ է ասված, որ նա «հայ հասարակական քաղաքական կյանքում արդեն հանրահայտ, ճանաչված գործիչ էր»[195]:

Դա այն ժամանակաշրջանն էր, երբ արդեն ձևավորվում էր Հայաստանի Հանրապետությունը, և նման իրավասությունները պետք է վերագրվեին նրան:

---

[193] «Հայրենիք», օրաթերթ, Բոստոն, 1920, ուրբաթ, Յունվար 16, թիւ 2345:
[194] Տե՛ս Մուրադյան Մ., Հայկական հարցը և ռուսական հասարակական-քաղաքական ու պատմագիտական միտքը, Ե., 1998, էջ 120:
[195] Ղազարյան Հ., նշվ. աշխ., էջ 233:

Պատվիրակության հայտնի անդամներից էին՝ Գաբրիել Նորատունկյանը, (որը 1922 թ.-ից Լոզանի կոնֆերանսում գլխավորեց պատվիրակությունը), Հ. Խան Մասեհյանը (անգլերենի և ֆրանսերենի լավ իմացությունը նրան հնարավորություն էր տվել լինել Պարսկաստանի դեսպանը Լոնդոնում, Փարիզում, Բեռլինում, Տոկիոյում), Վահան Թեքեյանը, Արշակ Չոպանյանը, Հարություն Մոստիչյանը, պրոֆ. Աբրահամ Տեր-Հակոբյանը և ուրիշներ[196]:

1919 թ. հունվարի 18-ին բացվում է Փարիզի վեհաժողովը, որում ներկայացված էին 17 պետություններ, որոնցից գլխավոր ներկայացուցիչներն էին Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան և ԱՄՆ-ը:

Բացումից առաջ հայ ազգային պատվիրակության անդամները հանդիպել են Մեծ տերությունների միջև Կիլիկիայի և Թուրքահայաստանի խնդիրների շուրջ առաջացած սուր հակասությունների: Ս. Պիշոնի հետ ունեցած զրույցներից հետո և ֆրանսիացու արտահայտած ցանկությունների համաձայն՝ Պողոս Նուբարը արդեն հունվարի 9-ին բողոքում էր Մեծ Բրիտանիայի արտաքին գործոց փոխնախարարի օգնական ու մերձարևելյան գործերով գլխավոր խորհրդատու Վ. Ա. Լ. Մելետին, որ իրեն ստիպում են հայցել ֆրանսիական պրոտեկտորատ՝ Վանից Երևան ձգվող Հայաստանի համար: Ինչ վերաբերում է Կիլիկիային, ապա Ժ. Կլեմանսոն մտադիր էր այն դարձնել ընդարձակ Սիրիայի մի մասը: Փաշան չի հավանում այդ ծրագիրը, ուստի ինքը խնդրում էր անգլիացիների և ԱՄՆ-ի երաշխիքը, որ Ադանա և Մերսին ընդգրկող նոր հայկական հանրապետության իրական անկախությունը ճանաչվի երկու Տերությունների կողմից[197]:

Հայկական Հարցը Փարիզի վեհաժողովում ներկայացնում էին երկու պատվիրակություններ՝ Հայոց Ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուբարի և Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝ Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ: Վերջինս հանդես էր գալիս երկու միլիոն հայության անունից և մի կողմից էլ փորձում էր ներդաշնակություն մտցնել թուրքահայ

[196]Տե՛ս նույն տեղում:

[197]Տե՛ս Մախմուրյան Գ., 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետությունը Մեծ Բրիտանիայի քաղաքականության մեջ, դոկ. թեզ., Ե., 2009, էջ 109-110:

համագումարի տեսակետների միջև՝ միաժամանակ նրանց ցույց տալով, թե ո՛րն է նպատակներին հասնելու ուղին[198]:

Այդ մասին Ա. Ահարոնյանը պատմում է, որ բազում հանդիպումներ ունեցավ տերությունների պատասխանատուների հետ, հուսալքվեց ու ոգևորվեց, երազեց ու տառապեց, բայց և չհամարձակվեց ճշմարտությունը պատմել իր ժողովրդին՝ «Երանի նրանց, որոնք չգիտեն այն, ինչ ես գիտեմ»[199]:

Հայկական պատվիրակության պահանջները քննելու համար Փարիզի հաշտության վեհաժողովը ստեղծել էր մի հանձնաժողով[200]:

Ի դեպ, Փարիզում և Լոնդոնում բանակցությունների ժամանակ Անդրանիկը փորձում էր համոզել դաշնակից պետություններին՝ ռազմական միջոցներով ազատագրել Արևմտյան Հայաստանը, սակայն ապարդյուն:

Պողոս Նուբարը դրել էր արևմտահայության խնդիրները ՀՀ-ից զատելու պահանջը: Այն պարզ երևում է ՀՀ պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանի՝ իր կառավարությանն ուղարկած զեկույցից (1919 թ. հուլիս), ուր գրում է, որ Պողոս Նուբարը հեռագիր է ուղարկել կաթողիկոսին, «որով արգիլում է թիւրքահայերի մասնակցութիւնը», արտահայտում է «թիւրքահայ պատուիրակութիւնը կառավարութիւն դարձնելու ձգտումը», որդեգրելով «երկու կառավարութիւն ստեղծելու վտանգաւոր քաղաքականութիւնը»[201]:

Հայ ազգային և ՀՀ պատվիրակությունները դեռևս 1919 թ. փետրվարի 12-ին Փարիզի վեհաժողովին են ներկայացնում հայերի պահանջների վերաբերյալ հռչակագիր, որով նախատեսվում էր հայկական անկախ պետության ստեղծում և ճանաչում՝ հայկական յոթ նահանգների և Կիլիկիայի տարածքում, որոնց միավորվելու էր նաև Հայաստանի Հանրապետությունը: Ընդհանուր առմամբ վեհաժողովի առջև դրված էին հետևյալ պահանջները.

[198] Տե՛ս «Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1919, ապրիլ 9, թիւ 2113:
[199] Զատիկյան Հ., Ավետիս Ահարոնյանը և Հայկական հարցը, «Պատմա-բանասիրական հանդես», Ե., 2006, թիվ 2 (172), էջ 46:
[200] Տե՛ս «Պայքար», Թավրիզ, 1919, Մարտի 15, թիվ 6:
[201] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, Ե հատոր, Պէյրութ, 1966, էջ 303:

«1.Ազատում թուրքական լուծէն, 2.Ամբողջական Հայաստան մը, տրուած Ազգերու Դաշնակցութեան իշխանութեան տակ, ժամանակաւոր աջակցութեամբ յանձնառու պետութեան մը»[202]:

Դաշնակից պետություններից մեկը քսան տարով պետք է ստանձներ Հայաստանի հոգատարությունը կամ մանդատը[203]: Այս հարցը դեռևս քննարկման առարկա չդարձած՝ Ազգային պատվիրակությունը արդեն առաջ էր քաշում խնդիրներ, որոնք չէին կարող բացասաբար չանդրադառնալ ՀՀ արտաքին վարկի և քաղաքական լրջության վրա:

Այդ մասին Գ. Գալոյանը գրում է. «Երբ թուրքական իշխանություններն էին փորձում պառակտում մտցնել դաշնակիցների մեջ, դա հասկանալի է: Սակայն, պատմությունը չի կարող չդատապարտել Պողոս Նուբար փաշայի՝ տասնյակ տարիների ընթացքում դրսևորած ձգտումը՝ արևելահայերի և արևմտահայերի միջոցով հագուրդ տալու իր մտագար փառամոլությանը»[204], մեր կարծիքով մի փոքր չափազանց է ասված:

Փետրվարի 12-ի հռչակագրով Ա. Ահարոնյանը և Պողոս Նուբարը պահանջում էին հետևյալ տարածքները.

«1.Վանի, Բիթլիսի, Դիարբեքերի, Խարբերդի, Սվասի (Սեբաստիա), Էրզրումի և Տրապիզոնի վիլայեթները՝ բացառությամբ Տիգրիսի վտակներից հարավ և Օրդու-Սվազ գծից արևմուտք ընկած շրջանների:

2.Կիլիկիայի չորս սանջակները՝ Մարաշը, Գոզանը (Սիս), Ջեբել-Բերեքեթը և Ադանան՝ Ալեքսանդրեթի նավահանգստով:

3.Հայկական Հանրապետությունը Կովկասում, ներառյալ Երևանի նահանգը, Թիֆլիսի նահանգի հարավային մասը (Լոռին և Ախալքալակը), Ելիզավետպոլի նահանգի հարավ-արևմտյան մասը (Լեռնային Ղարաբաղը և Զանգեզուրը) և Կարսի մարզը, բացառյալ Հյուսիսային Արդահանը»[205]:

1919 թ. փետրվարի 26-ին երկու պատվիրակությունների ղեկավարներն անձամբ ներկայացան «Տասի» խորհրդին, ուր

[202]ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 26, թ. 19:
[203]Տե՛ս Ներսիսեան Ա., Ինչո՞ւ չիրականացաւ Սեւրի պայմանագիրը, «Դրօշակ», Ե., 2000, թիւ 1 (1569), էջ 134:
[204]Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 109:
[205]Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. I, Առաջին տարին, 1918-1919, էջ 303, նաև՝ Ահարոնյան Ա., Սարդարապատից մինչև Սեւր և Լոզան, Պոսթըն, 1943, էջ 6:

ներկայացրին իրենց պահանջները[206]: Ներկայացված պահանջների հետ կապված բավական ճիշտ տեսակետներ է արտահայտում Ա. Խատիսյանը: Նա մասնավորապես գրում է. «Մենք մինչեւ Կիլիկիա պահանջելով անկարելի դարձուցինք որեւէ բանաւոր համաձայնութիւն ոչ միայն Թուրքերուն հետ այն պահուն, երբ անոնք տկար էին եւ անոնց հետ դեռ կարելի էր խօսիլ, այլ նաեւ շահագրգռուած մեծ պետութիւններուն հետ: Ճիշդ է, մեր մէջ կային քաղաքական գործիչներ, ինչպես Ռուբէն Տէր Մինասեանը, Քաջազնունին, որոնք չափաւոր պահանջներու կողմնակից էին, բայց ճնշող մեծամասնութիւնը «զիջումներու» մասին լսել անգամ չէր ուզեր»[207]: Կ. Սարդարյանը նույնպես վկայում է այն մասին, որ դաշնակցականներն ունեին հողային պահանջների հարցում չափավոր մոտեցում[208]:

Իսկ Ա. Ահարոնյանն, որի պատվիրակությունը միշտ հակասական վիճակի մեջ էր գտնվում Պողոս Նուբարի պատվիրակության հետ, ի վերջո տարվեց այդ մեծ պահանջներով:

Ցավալի էր այն հանգամանքը, որ Պողոս Նուբարն իրեն էր վերապահում Արևմտյան Հայաստանի տարածքների միավորման և կառավարման ձևի խնդիրը, որը չէր կարող բացասական չանդրադառնալ ՀՀ միջազգային վարկի վրա: Այսպես, Ա. Խատիսյանին գրած Ա. Ահարոնյանի նամակներից մեկում մասնավորապես կարդում ենք. «.... Միակ ելքը մենք նկատում ենք այս դրությունից դուրս գալու, համաձայնութեան մեջ է՝ այս շատ վտանգավոր ծերունու հետ ....»[209]:

Իսկ ինչու՞ էր այն վտանգավոր: Նախ՝ մեր կարծիքով այն պառակտում էր մտցնում արևելահայերի և արևմտահայերի մեջ, երկրորդ՝ չէր ուզում ճանաչել ՀՀ իրավունքներն Արևմտյան Հայաստանի նկատմամբ:

Ավելին, Պողոս Նուբար փաշան «դիմումներ է արել» օտար տերություններին՝ իր գլխավորած պատվիրակությունն իբրև

---

[206]Տե՛ս Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 12:
[207]Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 151:
[208]Տե՛ս Սարդարյան Կ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ., Ե., 2002, էջ 117-118:
[209]Դաշնակցական կառավարության դոկումենտներից, Ա. Մարտունու առաջաբանով, Ե., 1922, էջ 24, նաև՝ Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 93:

Հայաստանի կառավարություն ճանաչելու համար: Իսկ երբ նրան հայտնի էր դարձել 1919 թ. մայիսի 28-ի ակտը, պատահական չէ, որ նա շատ ծանր էր տարել այն՝ հայտարարելով. «Ինքը և իր պատվիրակությունը հրապարակավ և այն էլ օտար կառավարությունների հեռագրական միջոցներով բողոքելու է այդ ակտի դեմ»[210]: Վերջինս հեռագիր է ուղարկում նաև ՀՀ կառավարությանը՝ պահանջելով, որ նոր կառավարության վարչապետը լինի արևմտահայ և բնականաբար՝ ինքը[211]:

Չերծ մնալով նոր մեկնաբանություններից՝ պարզապես ցանկանում ենք շեշտել, որ ստեղծված իրավիճակում ՀՀ իշխանություններից պահանջվում էր հատուկ որոշմամբ լուծարել Պողոս Նուբարի պատվիրակությունը և տերությունների հետ բանակցելու լիազորությունը դնել միայն սեփական պատվիրակության վրա: Սակայն նա չունեցավ այդ քաղաքական քաջությունը, որը, կարծում ենք ողջունելի կլիներ այդ նույն տերությունների կողմից, մանավանդ, եթե դրան զուգահեռ ներկայացվեին տարածքային ավելի սահմանափակ պահանջներ: Մինչդեռ, դրան հակառակ՝ բանակցություններ տեղի ունեցան երկու պատվիրակությունների միջև:

Պողոս Նուբարը դեմ է եղել միացյալ Հայաստանի ակտին, հաստատում է նաև Ս. Վրացյանը: Անդրադառնալով վերոհիշյալ «Ազգային համագումարին»՝ նա մասնավորապես հետևյալն է գրում. «Համագումարի պաշտոնական բանաձեւերի մէջ, կարծես, ոչինչ արտակարգ բան չկար. ըստ էութեան դրանք նոյնն էին, ինչ որ եւ Երեւանի արեւմտահայ համագումարի որոշումները (համագումարը «կը հռչակէր անգամ մը եւս հայ ազգին կամքը իր ազատ հայրենիքն ունենալու՝ անկախ տէրութեան մը մէջ իր բոլոր հողամասերուն միացմամբ կազմուած» և խնդրում էր վեհաժողովին արագացնել Հայկական հարցի լուծումը[212]՝ Հ.Ս.): Աւելին. նրանք, շատ կողմերով, յիշեցնում էին եւ այն օրերին Հայաստանում տիրող տրամադրութիւնները: Սակայն, համագումարում արտայայտուած ոգին, Ազգ. Պատւիրակութեան եւ պատգամաւորներից շատերի բռնած

---

[210]Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 92-93:
[211]Տե՛ս նույն տեղում:
[212]Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 273:

դիրքը Հայաստանի Հանրապետութեան հանդէպ եւ Հ. Պատուիրակութեան միջեւ ստեղծուած փոխյարաբերութիւնները, վերջ ի վերջոյ առաջ բերին այնպիսի մթնոլորտ, որ Ազգ. Պատուիրակութիւնը եւ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնն ու Պատուիրակութիւնը դարձան, մի տեսակ ներհակ, մրցակից կողմեր: Համագումարի մէջ լսվում էին ուղղակի թշնամական ճառեր, որոնք Հայաստանի Հանրապետութեան գոյութիւնը համարում էին վնասակար հայկական դատի համար. «Արարատեան Հանրապետութեան» հարցը զուտ ռուսական հարց է, ասում էին նրանք, մինչդեռ հայկական խնդիրը վերաբերում է Թիւրքահայաստանին: Ազգ. Համագումարը պէտք է Ռուսահայաստանը թողնէ իր ճակատագրին եւ ամբողջապէս նուիրուէ թիւրքահայոց դատին՝ պահանջելով, ի հարկին «Արարատեան Հանրապետութեան» կցումը Հայաստանին: Հ. Հ. Պատուիրակութիւնը, երկւութիւն չստեղծելու համար, պարտաւոր է քաշուել ասպարեզից կամ ենթարկուել Ազգ. Պատուիրակութեան»[213](Ընդգծումները մերն են՝ Հ.Ս.):

Այսպիսով, երկու պատվիրակությունների տարակարծությունը վերաբերում էր նրան, թե ով պետք է լինի այն մարմինը, որը կներկայացնի հայոց պահանջները: Ստացվում է, որ առաջին պլան էին մղված հավակնությունները, կամ խնդիրն անձնականացված էր: Անհրաժեշտ էր այն ըմբռնումը, որ Հայկական հարցը համայն հայության հարցն էր: Ի վերջո, պետք էր հասկանալ, որ դեռևս Արևմտյան Հայաստանում պետություն չլինելու դեպքում ինչպե՞ս նրան կարող էր միանալ Հայաստանի Հանրապետությունը կամ արդյո՞ք երկրորդական նշանակություն չուներ այն, թե որ Հայաստանը որին էր միանում:

Հետաքրքիրն այն է, որ Պողոս Նուբարն ուզում էր ստեղծել Արևմտահայ պետություն, հետո միայն նրան միացնել Կովկասահայ հանրապետությունը, որն իհարկե անտրամաբանական էր: Սրան ավելի շատ նպաստել էին Նուբարին ուղարկած Անդրանիկի նամակները[214]:

Խնդիրն այս հարթությունների վրա դիտարկելիս բոլորովին անտեղի պետք է համարել երկու պատվիրակությունների միջև բանակցությունները, որոնք տեղի ունեցան 1919 թ. հոկտեմբերի 29-

[213]Նույն տեղում, էջ 273-274:
[214]Տե՛ս ՀԱԱ, ֆ. 282, ց. 1, գ. 56, թ. 19:

ից նոյեմբերի 7-ը Երևանում, որոնց ընթացքում Պողոս Նուբարի բանագնացներն էին Վ. Թեքեյանը, Ն. Տեր-Ստեփանյանը և Ա. Հարությունյանը: Երևանի բանակցությունները, փաստորեն, շարունակությունն ու լրացումն էին վաղօրոք ընդունված ակտի և քաղաքական պայքարի: Մինչ այդ՝ Ազգային պատվիրակությունը համաձայնվել էր հրապարակավ չբողոքել ակտի դեմ և ընդունել Ա.Ահարոնյանի խնդրանքը՝ հարցը «դարմանել» Երևանում: Ա. Ահարոնյանը 1919 թ. հուլիսի 18-ին հեռագրեց կառավարությանը, որ «Ազգային Պատվիրակությունը անընդունելի է համարում այդ պայմանները որոնց մեջ հրատարակված է ակտը»[215]: Մյուս կողմից, նա հայտնում էր ուղարկվող առաքելության մասին և խնդրում ակտի վավերացումը հետաձգել:

Բանակցություններում ՀՀ-ի կողմից հանդես էին գալիս Ս. Վրացյանը, Մ. Հարությունյանը և Ճ. Միսաքյանը: Ս. Վրացյանն ամբողջությամբ չընդունելով Վ. Թեքեյանի առաջարկությունը՝ գնաց որոշակի զիջումների: Ըստ դրանց՝ Պողոս Նուբարը կարող էր լինել պատվիրակության նախագահ, որը կգործեր կառավարության հրամանով, բայց ոչ վարչապետ, իսկ խորհրդարանի լուծարման մասին խոսք լինել չէր կարող: Բայց այդ էլ չբավարարեց Վ. Թեքեյանի պատվիրակությանը: Բանակցություններն ընդհանուր համաձայնության չհասնելով՝ ընդհատվեցին և մտան փակուղի[216], քանզի վերջիններս դնում էին անընդունելի խնդիրներ՝ միացյալ խորհրդարանի ստեղծում, որի կեսը պետք է լինեին արևմտահայեր, կեսը՝ արևելահայեր, արտաքին գործերի և զինվորական նախարարների պաշտոններում պետք է նշանակվեին ոչ դաշնակցականներ, Պողոս Նուբարը պետք է նշանակվեր վարչապետ, որը պետք է նստեր Փարիզում, իսկ նրա տեղակալը՝ Երևանում և այլն[217]:

Ձերծ մնալով անտեղի այս բանակցությունների մանրամասներից, որոնք մտան փակուղի, Վ. Թեքեյանի պատվիրակությունը մեկնեց: Նշենք, որ այս երկրորդական

[215] Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 35:
[216] Տե՛ս «Նոր Կեանք», Ֆրէզնօ, 1920, փետրվար 11, թիվ 247:
[217] Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 283-287, տե՛ս նաև Կէօրկիզեան Ա., նշվ. աշխ., էջ 391:

գործողություններից Հայկական հարցը ոչինչ չշահեց, և հայոց նորանկախ պետությունը նույնպես, բացի նրանից, որ ՀՀ պատվիրակությունը ստիպված գնաց Պողոս Նուբարի և նրա կողմնակիցների հետևից: Արդյունքում, ինչպես վերևում համոզվեցինք, նրանք միասին վեհաժողովին ներկայացրին հայոց պահանջները: Ուրեմն, ու՞մ էին պետք այդ տարաձայնությունները:

Պահանջված սահմաններով Հայաստանի խնդիրը երկար ձգձգվեց: 1920 թ. հունվարի 19-ին Փարիզի վեհաժողովը de facto ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը, բայց տարածքային հարցերով ձգձգումները շարունակվում էին: Ա. Ահարոնյանի արտահայտությամբ՝ հայ ժողովուրդը Փարիզի կոնֆերանսի առաջին զոհն էր: Այդ առիթով 1920 թ. մարտի 17-ին ՀՀ խորհրդարանում Հ. Տերտերյանը նշում էր. «Դաշնակիցները մեզ վրայ միշտ նայել են որպէս ողորմութիւն խնդրողի եւ երբեք չեն ունեցել այն գիտակցութիւնը, թէ գործ ունեն իրաւատէր եւ իր իրաւունքներին միշտ պաշտպան կանգնող մի ժողովրդի հետ»[218]:

Ճշմարիտ է նկատել Ա. Խատիսյանը, որ Փարիզի խորհրդաժողովի թերևս միակ դրական կետը «Ազգերու Լիգային ուղղուած հրավէրն էր միջամտելու Հայկական Հարցին: Իսկ ինչ կը վերաբերի մեծ տէրութիւններուն, անոնք ակներեւ կերպով կը խուսափէին իրենց անզօրութիւնը»[219]:

Վերջապես, 1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրվեց Սևրի պայմանագիրը, բայց նրա իրականացման հիմքերն արդեն խախտվել էին: Նույն օրը Թիֆլիսում կնքվեց հայ-ռուսական համաձայնագիրը: Ռ. Փիրումյանը նշում է. «Ու՞ր էր իրականութիւնը, Փարիզու՞մ, որտեղ Դաշնակիցները Հայաստանի անկախութեան մանդատը ստորագրած, իրենց պարտքը հայ ժողովրդին հատուցած էին համարում եւ հանգիստ խղճով յետ քաշւում, թէ՞ Կովկասի ճակատներում, որտեղ Խորհրդային Ռուսաստանի զորքը թիզ առ թիզ Հայաստանի հողերն էր խլում»[220]:

Հայոց Ազգային պատվիրակությունը հանդես գալով որպես արևմտահայ քաղաքական պահանջների կրող կազմակերպություն,

[218] Մելիքյան Վ., Հայութեան ինքնակազմակերպման խնդիրը եւ արեւմտահայերի 3-րդ համագումարի անհրաժեշտութիւնը, էջ 55:
[219] Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 351:
[220] Փիրումեան Ռ., նշվ. աշխ., էջ 235:

ամենևին լսել անգամ չուզեց առավել իրապաշտ գործիչներին, որոնք կողմնակից էին առավել նեղ սահմաններով ՀՀ ամրապնդմանը: Պողոս Նուբարը իր հետևից տարավ Ա. Ահարոնյանին, որը նույնպես, կարելի է ասել, չուներ դիվանագետի անհրաժեշտ հատկանիշներ: Այն, որ իսկապես նա հետևեց Պողոս Նուբարի անիրատեսական քաղաքական ծրագրերին, անժխտելի է և այդ հաստատում է նաև Ռուբեն Տեր-Մինասյանը: Այդ մասին նա հետևյալն է գրում. «Հայաստանի արտաքին քաղաքականութիւնը գնում էր աւելի պատուիրակութեանց յետեւից քան թէ առջեւից, ու ստիպուած էր նրանց առած այս կամ այն քայլը յետին թուով հաստատել եւ վաւերացնել՝ Դաշնակիցների եւ արտաքին աշխարհի առջեւ հակասութիւնները չցուցադրելու մեր ներքին կեանքի աննօրմալութեան: Բայց ամենածանրակշիռ երեւոյթն այն էր, որ Ազգային Պատուիրակութիւնը ունէր իր առանձին պահանջները, ցանկութիւններն ու քաղաքականութիւնը, որոնք ոչնչով էին կապուած Հայաստանի Արտաքին գործերին՝ ոչ բարոյապես եւ ոչ իրաւապէս: Այս հանգամանքը մեծապէս կը նպաստէր անկանոնութեանց եւ անպատասխանատուութեանց, որի առջեւն առնելու համար կար մի հիմնական միջոց՝ գործերը բնականոն վիճակի մէջ դնելու համար չէզոքացնել եւ ոչնչացնել Ազգային Պատուիրակութիւնը եւ ունենալ Հայաստանի ներկայացուցչութիւն արտասահմանում, որ իր քայլերը նախօրոք չափէր եւ համաձայնեցնէր Արտաքին գործոց նախարարութեան հրահանգներին: Այդ կտրուկ միջոցը քանիցս քննուել է Բիւրոյի եւ կառավարութեան նիստերին, բայց անհնար է եղել իրագործելը, քանի որ Ազգային Պատուիրակութեան չէզոքացումը մեր ույժերից վեր էր եւ մեր իրաւունքներից դուրս: Այդ անկարողութեան առաջ կանգնելով, մեր Պատուիրակութիւնն էլ իր քայլերը ստիպուած էր որոշ չափով համաձայնեցնել Պօղոս Փաշայի տրամադրութիւններին, որոնք համապատասխան չէին մեր ցանկութիւններին»[221]:

Այսպիսով, ՀՅԴ Բյուրոն, որը մայիսի 5-ին վերցրեց իշխանությունը, դեմ է եղել այն սահմաններով Հայաստանի

[221]Ռուբէն, նշվ. աշխ., էջ 238, նաև՝ Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական կողմնորոշումը, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 2005, թիվ 1, էջ 75:

պահանջին, որը Դաշնակիցների առջև դնում էր Պողոս Նուբարի պատվիրակությունը՝ իր հետևից տանելով Ա. Ահարոնյանին:

Ռուբենը գրում է, որ ստեղծված պայմաններում երկրորդ միջոցը՝ Ազգային Պատվիրակությունը ՀՀ պատվիրակությանը մոտեցնելն էր՝ մեղմելով երկուսի հակամարտությունները և ստիպելով նույն տեսակետով հանդես գալ արտաքին աշխարհում: Որոշվում է նաև ՀՀ պատվիրակությունը դարձնել դեսպանություն, բայց այդ ևս չի իրականացվում՝ երկու պատվիրակությունների ձգտումների տարբերության պատճառով:

«Փոքր դեր չէին խաղում այս հարցում, - շարունակում է Ռուբենը, - կուսակցական եւ անձնական հաշիւները, մանավանդ Նուպարեանների կողմից: Մեր տեսակետների հիմնական գծերը անցկացնելու համար յետ է կանչւում Օհանջանեանը եւ նրա տեղը ուղարկվում է Վ. Փափազեանը, որը տաճկահայ լինելով, կարող էր գուցէ մեղմել Նուպարեանների հակառակ ընթացքը: Այսպէս թե այնպէս, փաստը մնում էր իրականութիւնը, եւ Հայաստանի Արտաքին քաղաքականութեան աղբիւրը աւելի մնում էր Փարիզը, քան թէ Երեւանը»[222]:

Այսպիսով, ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղղորդողը Պողոս Նուբարի պատվիրակությունն էր: Այդ քաղաքականությունը հենված էր միայն դաշնակիցների վրա, որը չէր արդարացվում, մանավանդ 1920 թ. ամառվանից սկսած, երբ ձևավորվում էր բոլշիկ-քեմալական դաշինքը:

Հետաքրքիր է Ռուբենի հետևյալ վկայությունը. «Երեւանում՝ թէ Բիւրոն եւ թէ կառավարութիւնը, մասամբ բնազդով եւ մասամբ Պոլսից եւ ուրիշ տեղերից առած տեղեկութիւնների հիման վրայ, կասկածանքով էին վերաբերւում այն մեր ընթացքին, որ Դաշնակիցների վրայ անվերապահօրէն յենուիլը կարող է ցանկալի արդիւնք տալ: Ի նկատի առնելով Դաշնակիցների հակամարտութիւնը, Հայաստանի խնդիրը մէկը միւսի վրայ ձգելու քաղաքականութիւնը, Ամերիկայի վերապահութիւնը, Ռումանիոյ ***մանդատէր*** դառնալու խոստացութիւնները, միլիճինների ուժեղացումը այս կամ այն պետութեան կողմից (Իտալիա, Ֆրանսա) եւ այլն, կը մտածուէր

---

[222] Ռուբէն, նշվ. աշխ., էջ 239:

Դաշնակիցներից ամէն ինչ յուսալու փոխարէն, որոնել այլ, աւելի իրական յենարաններ: Ի հարկէ այդ յենարանների ճիշտ ընտրութիւնը Երեւանը չէր կարող անել արտաքին աշխարհից իր անտեղեակութեան պատճառով: Բայց գոյգ Պատուիրակութիւնները տարուած էին անվերապահօրէն Դաշնակիցների օժանդակութեան, քանի որ նրանց մէջն էր աշխատանքը կատարւում բացառապէս»[223]:

Այսպիսով, Ազգային և ՀՀ պատվիրակությունները դուրս էին եղել Բյուրո-կառավարության վերահսկողությունից, որը մշակել էր ՀՀ սահմանների մասին մեկ ուրիշ տարբերակ, որը մատնանշված պատճառների հետևանքով ձախողվել էր: Իսկ Բյուրոյի ցանկությունն էր՝ փորձել Հունաստանի հետ մի ճակատ կազմել հայերին և հույներին սպառնացող քեմալական (միլլի) շարժման դեմ և Պոնտոսի խնդիրը լուծել ի նպաստ հույների, որը Հայաստանի հետ պետք է կազմեր համադաշնություն: Այս ծրագրով հույների մոտ բանակցությունների են մեկնում Ռուբենն ու Ա. Խատիսյանը: Բայց այն ձախողվում է պատվիրակությունների մեղքով, որոնց ծրագրով՝ ըստ Ռուբենի «Պոնտոսը Հայաստանի մասը պիտի կազմէր: Հակառակ դրան. մենք հարցը դրինք այլ հողի վրա, այն է որ Հայաստանին Սեւ ծովում ելք է տրւում Ռիզէի եւ Ճորոխի միջեւ մի նավահանգիստ իբրեւ մի սեփականութիւն, իսկ Պոնտոսը, ուր յոյները մեծ տոկոս են կազմում (35 %-ից աւելի), դառնում է անկախ կառավարութիւն, Հայաստանի հետ կոնֆեդերասիոն կազմելով, եւ այդ պարագային հայ և յոյն միացած ույժերը, թէ Պոնտոսում եւ թէ Անատոլու եւ Հայաստանի ճակատներում, պիտի կազմէին մի ընդհանուր ճակատ թուրքերի դէմ: Այս էր նախնական համաձայնութիւնը, որը դաշնագիր դարձնելու համար ճամբւում է Պատուիրակութեան՝ ընթացք տալու համար: Սակայն, այն լայն յոյսերը ան ունէր Ամերիկայից եւ Դաշնակիցներից, որով Պոնտոսից-Կիլիկիա մերը պիտի լիներ, ինչպէս եւ Ազգային Պատուիրակութեան բացասական տրամադրութիւնները Երեւանի գիջող քաղաքականութեան հանդէպ, ստիպում են Պատուիրակութեան նկատողութիւն անել Երեւանին, որ նման ծրագրերը չեն համապատասխաներ ազգային մեր պահանջներին եւ ձգտումներին: Այստեղ հետաքրքրականը ոչ միայն այն է, թէ ինչ

[223]Նույն տեղում:

պիտի լինեին միացեալ ճակատի ստեղծման հետեւանքները Հայաստանի, Յունաստանի եւ Պոնտոսի վերաբերմամբ, այլ ուշագրաւ է այն, որ Հայաստանը իր արտաքին քաղաքականութիւնը սխալ թէ շիտակ, չէր կարող որոշել»[224]:

Հարկ ենք համարում փոքր ինչ անդրադառնալ Պ. Նուբարի ստեղծած լեգեոնին (որը կոչվեց Հայկական), որի կազմում էին Մուսալեռան քաջերը, որոնց թիվը հասնում էր 600-700 հոգու, կային 300 եգիպտահայ եր և մոտ 1200 ամերիկահայ եր[225]: Նրա հրամանատարն էր ֆրանսիական մայոր Ռոմիեոն: Լեգեոնի թիվը հասավ մոտ 5000-ի[226], որը հետագայում կրկնապատկվեց[227]: Կռվում էր Պաղեստինում անգլիացի զորավար Ալենբիի հրամանատարության տակ, բայց, սկսած 1918 թ.-ի օգոստոսից, հայ լեգեոնականներն իրենց հատկապես փայլուն են դրսևորում Պաղեստինում, Երուսաղեմից ոչ շատ հեռու գտնվող Արարայի ճակատամարտում, 1918 թ. սեպտեմբերին՝ մասնակցում են Բեյրութի գրավմանը, իսկ նույն թվականի նոյեմբեր-դեկտեմբերին ժամանում են Կիլիկիա[228]: Հայկական լեգեոնի ձևավորումը և մղած կռիվները Ռուսաստանից հետո արդեն Ֆրանսիայի քաղաքական ձգտումների մակերեսային ընկալման և քաղաքական դյուրահավատության արդյունքն էր:

Կիլիկիայի ինքնապաշտպանության համար ռամկավարների կամավորական խմբերը կազմակերպվում և առաջնորդվում էին Ավետիս Չավուշի, Լևոն Աճեմյանի, Ապահի, Սմբատ Կեպենլյանի, Գրիգոր Ղարիպյանի, Մարտիրոս Ոսկյանի, Պետրոս Տեր-Հովհաննէսյանի և ուրիշների կողմից[229]:

1920 թ. օգոստոսի 4-ին Ադանայում Հայոց Ազգային Միության հրավերով տեղի ունեցավ ժողով, որին ներկա էին երեք հարևանների հոգևոր առաջնորդները, Ազգ. Գերագույն մարմնի անդամները, ինչպես նաև հույն, ասորի, քաղդեացի և սիրիացի համայնքների

---

[224] Նույն տեղում, էջ 240:
[225] Տե՛ս Ներսիսյան Ա., Կարո Սասունի, էջ 103, Մենակ Գ., Կեանքիս ուղին, Յուշեր Հայկական լեգէոնէն, Պէյրութ, 1968, էջ 96, Յուշամատեան Մուսա Լերան, Պէյրութ, 1970, էջ 426:
[226] Տես Ճիզմէճեան Մ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, 1890-1925, Ֆրեզնօ, 1930, էջ 354:
[227] Տե՛ս Պօղոսեան Ս., Պօղոս Նուբար փաշա. Ազգային գործիչը, Ե., 2004, էջ 121:
[228] Արարայի ճակատամարտի մասին ավելի հանգամանորեն տե՛ս Պօյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 116-137, նաև՝ Տասնապետեան Հ., նշվ. աշխ., էջ 35:
[229] Տե՛ս Սարգսյան Ս., նշվ. աշխ., էջ 182-183:

ներկայացուցիչները, և կազմվեց «Կիլիկիոյ մէջ Քրիստոնէական Արտակարգ Խորհուրդ»: Սահմանադրական Ռամկավար կուսակցության ներկայացուցիչ` Միհրան Տամատյանը, նույն օրն իսկ հռչակեց Կիլիկիայի անկախությունը ֆրանսիական հովանավորության ներքո, իսկ հաջորդ օրն ընտրվեց կառավարության կազմը. «.... որուն վարչապետ կ'ընտրուի Միհրան Տամատեանը, արտաքին գործոց նախարար` Տոքթ. Մնացականեան, ներքին նախարար` Տոքթ. Պեզիրճեան, պատերազմական նախարար` Կարապետ Ժամկոչեան, եւ այլն»[230]: Սակայն ֆրանսիական ներկայացուցիչները Մ. Տամատյանին և իր խմբին դուրս են հրավիրում կառավարության շենքից:

Չնայած դրան` հայերը շարունակեցին Կիլիկիան փրկելու իրենց պայքարը: Փարիզի Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը փորձում է Վան-Վասպուրականի հերոս Արմենակ Եկարյանին և համազգային հերոս զոր. Անդրանիկին ուղարկել Կիլիկիա` սեփական ուժերով փրկելու այն: Սակայն դա նույնպես չի հաջողվում, որովհետև ֆրանսիական կառավարությունը մերժում է վերջիններիս մուտքը Կիլիկիա:

1921 թ. գարնանը Կիլիկիան սեփական ուժերով փրկելու փորձեր է անում նաև ամերիկահայ հարյուրապետ` Ջիմ Չանկալյանը (վերջինս կամավոր մեկնել էր Կովկաս` մասնակցելու հայ ազատագրական շարժմանը, Վանում 1915-1916 թթ. վարել էր ընդհանուր ոստիկանապետի պաշտոնը, իսկ Կովկասյան ճակատում ռուսական բանակի նահանջից հետո հիասթափված` վերադարձել էր Ամերիկա), որը չիրականացավ:

Այսինքն նրանք նույնպես ճաշակեցին նույն խաբկանքը, քանզի «ֆրանսական եւ անգլիական կառավարութիւնները հրապարակով յայտարարում էին, որ պատերազմի նպատակներից մէկն էլ Հայաստանի ազատագրութիւնն է, միւս կողմից, դիւանագիտական առանձնասենեակներում, գաղտնի բանակցում էին Հայաստանի բաժանման մասին: Հայաստանի անդամահատութեան ծրագիրն, ի վերջոյ, հաստատուեց առանց հաշվի առնելու հայ ժողովրդի շահերն ու բաղձանքները»[231]:

---

[230]Չելեպեան Ա., նշվ. աշխ., էջ 622-623 նաև` Թորոսյան Ճ., Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920 թթ., Ե., 1987, էջ 250-251:
[231]Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 16:

Ինչպես Ա. Չելեպյանն է նշում. «Մոռցուեցան Արարան եւ հայուն թափած ծով արիւնով, ուրացուեցան հայ ազատագրական խոստումները՝ քրիստոնեայ դիմակով մեզ չարաչարող շահախնդիր եւրոպացիներու կողմէ: Արարայի պատուաւոր եւ անկեղծ հերոսամարտը՝ միշտ մուր պիտի մնայ, վերոյիշեալ շահախնդիրներու եւ սուտքրիստոնեաներու ճակտին ….»[232]:

Այսպիսով, Պողոս Նուբարի քաղաքական ձգտումներն էլ իրականություն չդարձան, թեպետ նա չքաղեց անհրաժեշտ դասեր, և մինչև Լոնդոնի կոնֆերանսը շարունակեց գործել այն տրամաբանությամբ, որ հայերին խաբած դաշնակիցները կլուծեն Հայկական հարցը:

Ճիշտ է նկատել Ս. Պողոսյանը, որ «Առանց գրաւոր համաձայնագրի Պ. Նուբարի համագործակցութիւնը ֆրանսիական կառավարութեան հետ հնարաւորութիւն տուեց վերջինիս յետագայում յետ կանգնել իր խոստումներից եւ թուրքական յաթաղանին մատնել Կիլիկիայի հայերին»[233]:

Վերը ասվածից եզրակացնում ենք, որ արևմտահայ քաղաքական մտքի մատնանշած ուղին արևմտահայ ազգաբնակչության համար աղետաբեր եղավ. նրանք խաբվեցին դաշնակիցներից, որոնց հակասություններից օգտվեց Օսմանյան Թուրքիան:

Ընդհանրացումներն այս ամենից հետևյալն են.

1.Ազգային պատվիրակությունը իրեն ներկայացնում էր որպես արևմտահայության քաղաքական շահերի միակ ներկայացուցիչ և նույնիսկ դրանց իրականացմանը միտված աշխատանքներում ցանկանում էր արժեզրկել Հայաստանի պատվիրակության դերը, որը մասնավորապես ՀՀ փաստացի ճանաչումից հետո պետք է լիներ հայոց շահերը ներկայացնող միակ օրինական մարմինը:

2.Ազգային պատվիրակության քաղաքական ընկալումներում մեծ տեղ էր գրավում ռոմանտիզմը՝ կապված տարածքային պահանջների ներկայացման չափերի և դրանք Դաշնակիցների կողմից հայությանը նվիրաբերելու հարցում:

3.Ազգային Համագումարի որոշումներն ըստ էության չէին տարբերվում Միացյալ Հայաստանի ակտում առկա կետերից, քանզի

[232]Չելեպեան Ա., նշվ. աշխ., էջ 628-629:
[233]Պողոսեան Ս., նշվ. աշխ., էջ 119:

այնտեղ չէին մատնանշվել հստակ տարածքներ, իսկ վերևում մեջբերած երկու պատվիրակությունների մեր պահանջները վկայում էին, որ իսկապես ՀՀ պատվիրակությունը ստիպված է գնացել Ազգային պատվիրակության հետևից կամ էլ, իսկապես, ելնելով այն համոզմունքից, որ լայն տարածքներով Հայաստանի պահանջը ճիշտ է:

4.Բյուրո-կառավարության իշխանության գալուց հետո (1920 թ. մայիսի 5) արդեն հասկանալի էր դարձել, որ չեն իրականանալու երկու պատվիրակությունների ցանկությունները և փորձ էր արվել ներկայացնելու այլընտրանքային և առավել խոստումնալից ծրագրեր, բայց Պողոս Նուբարի և Ա. Ահարոնյանի քաղաքական ռոմանտիզմը, ինչպես նաև ՀՀ–ում նրանց մտայնությամբ առաջնորդվող ուժերի առկայությունն արգելք են հանդիսացել դրանց իրականացման համար:

5.Երկու պատվիրակությունները փաստորեն անտեսել են Բյուրո-կառավարության ծրագրերը, որի արդյունքում, չնայած հասան Սևրի պայմանագրի ստորագրմանը, բայց այն այդպես էլ չիրականացավ:

Արևմտահայ քաղաքական միտքը ներկայացնող Պողոս Նուբարը հանդես եկավ այդ միտքը ՀՀ պետական քաղաքական մտքից տարանջատելու ճանապարհով, որից գործնականում ոչինչ չշահեց Արևմտյան Հայաստանը: Համոզվելու համար մի փոքր էլ փորձենք խորամուխ լինել նրա գլխավորած ՀՀ պատվիակության գործընթացների մեջ: Անհրաժեշտ է չուրանալ մի պարզ ճշմարտություն, որ դաշնակիցները շահագրգռված էին Կովկասյան հանրապետությունների կայացման խնդրով, բայց դրան արգելք էին հանդիսանում միջպետական վեճերը: Կոնկրետ Արևմտյան Հայաստանի տարածքներից ՀՀ-ին մաս հատկացնելու խնդրում նրանք համաձայն էին, բայց այնքան էլ սիրով չէին ընդունում պատվիրակությունների ներկայացրած մեծ պահանջները: Բացի այդ, նրանք գործնականում դրանց իրականացումն անհնար էին համարում: Այսպես, դեռևս 1920 թ. հունվարի 11-ին Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Բերտելոյի՝ Քերզոնին հղած նոտայում, որը կոչվում է

«Հաշտություն Թուրքիայի հետ», այդ հաշտության համար առաջադրվում էին «չորս սկզբունքային պրոբլեմներ», որից երրորդը վերաբերում է Հայաստանին[234]: Հայաստանին վերաբերող բաժնում կարդում ենք. «Հայաստանի Հանրապետության տերիտորիան կազմված է լինելու.

1.Երևանի հայկական հանրապետության գոյություն ունեցող տերիտորիայից:

2.Թուրքական կայսրությունից՝ Էրզրումի վիլայեթի արևելյան մասը, ներառյալ Էրզրում քաղաքը և Էրզրումի շրջանը, Մշո դաշտը, Բիթլիսի շրջանը և Վանա լիճն իր շրջակայքով մինչև պարսկական սահմանը: Հայաստանի սահմանները Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունների, Թուրքիայի, ֆրանսիական գոտու և Քուրդիստանի հետ անցկացվելու են տեղում՝ ներդաշնակցային հանձնաժողովի կողմից:

....Քանի որ Հայաստանի տերիտորիան ուղիղ ելք չունի դեպի ծով, վերջին հաշվով չի ընդգրկում որևէ նավահանգիստ, նոր պետականության հարաբերությունները մյուս երկրների հետ երաշխավորվելու է տարանցիկ համաձայնություններով Հայաստանի և նրան շրջապատող երկրների միջև, և Բաթումը դարձնելով անկախ քաղաք՝ Ազգերի լիգայի խնամակալության ներքո: Այս կարգը, համանման Դանցիգի ստատուսին, կերաշխավորի Հայաստանին և Վրաստանի ու Ադրբեջանի հանրապետություններին Բաթումի նավահանգստի օգտագործումը»[235]:

Ինչպես համոզվում ենք, դաշնակիցները նույնպես ցանկանում էին հնարավորինս գոհացում տալ արևմտահայերի պահանջներին, բայց ավելի չափավոր սահմաններ էին դնում և տարանցիկ երկիր դառնալու համար այլ տարբերակ էին առաջարկում, ի տարբերություն զույգ պատվիրակությունների: Այնպես, որ ճիշտ է Ա. Խատիսյանը, երբ գրում է, որ նրանք սխալվել են՝ դնելով լայն պահանջներ:

Հարկավ այս նոտան չի նշանակում, որ մատնանշված ուղին պետք է կյանքի կոչվեր: Այն դեռևս տեսություն էր, որի իրականացման

234 Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 602:

235 Նույն տեղում, էջ 603-604:

համար կային բազում խոչընդոտներ: Դրանցից մեկն այն էր, որ «հայերը գործնականում ոչ մի տեղ մեծամասնություն չէին կազմում. մեծագույն արգելքը նրանց վերագրելու այնպիսի երկրներ, ինչպիսին Կիլիկիան, որտեղ ազգային ուժեղ միջուկ կա, տեղադրված Հայաստանից ավելի քան 400 կմ հեռավորության վրա, այն է, որ նման տարածումը կունենա մի հետևանք, որ հայերին կդնի իրենց իսկ պետությունում որոշակի փոքրամասնության մեջ, և երբ բնակիչների իսկական խորհուրդ տեղի ունենա, նրանք կընտրեն ներկայացուցիչների մեծամասնություն, որոնք թշնամի կլինեն հայերին: Երբեք չպետք է աչքաթող անել այն հանգամանքը, որ պատմական Հայաստանը Միջերկրականից ավելի հեռու է, քան Շվեյցարիան Ցետտեից, և որ ճանապարհին միայն հայերի մեկուսացած խմբեր կան հսկա մեծամասնություն կազմող և անդրդվելիորեն թշնամական բնակչության մեջ: Իրականությունը և տրամաբանությունը հավասարապես ընդդիմանում են Տրապիզոնից մինչև Ալեքսանդրետ տարածվող Մեծ Հայաստանի երազին»[236] (ընդգծումը մերն է՝ Հ.Ս.):

Այս մեջբերումն իսկապես համոզում է, թե ինչպիսի անիրատեսական երազների գիրկն էր գլորվել արևմտահայ քաղաքական միտքը՝ հանձինս Ազգային պատվիրակության ներկայացուցիչների:

Այսպես, 1920 թ. ապրիլի 22-ին Սան Ռեմոյի Դևաշան վիլլայում տեղի է ունենում Գերագույն խորհրդի անդամների հանդիպում, որին մասնակցում են Լլոյդ Ջորջը, Քերզոնը, Վանսիտարը, Հանքը և Սթորն՝ Անգլիայի կողմից, Միլերանը, Սցիալոյան, Գարբասսոն, Գալլին և Տրոմբետտին՝ Ֆրանսիայի կողմից, Մացուին և Սաիտոն՝ Ճապոնիայի կողմից: Այս մասին բրիտանական քարտուղար Մ. Հանքի նոթերից տեղեկանում ենք, որ Նիտտին Թուրքիայի սահմանների հետ կապված գտնում էր, որ դաշնակից տերությունները, նախագծելով պայմանագիրը, պետք է այնպես անեն, որ այն ընդունելի լինի թուրքերի կողմից, և միաժամանակ ենթակա կիրառման, եթե անհրաժեշտ լինի, դիմել՝ զենքի ուժով դաշնակիցների

[236] Նույն տեղում:

միջամտությանը[237]: Այնուհետև նա հարցնում էր, թե ով ինչ նկատառումներ ունի: Սկզբում արտահայտվում է Լլոյդ Ջորջը, որի խոսքերը, եթե տուրք տանք զգացմունքներին, մեզ համար դավաճանի խոսքեր են, բայց իրականում բխում են ճիշտ իրավիճակից: Խնդիրը վերաբերում է Էրզրումը պայմանագրով Հայաստանին հատկացնելուն: Ահա, թե ինչ է գրում նա. «Պայմանագրի մեջ հոդված մտցնել այն առումով, որպեսզի Էրզրումը զիջվի Հայաստանին, որոշակիորեն կավելացնի մեր դժվարությունները՝ ստիպելու թուրքերին՝ ստորագրել պայմանագիրը: Ինքն անձամբ չի տեսնում, թե ինչ ուղիով կարելի կլինի դիմագրավել բոլոր վնասակար հետևանքները, եթե թուրքերը հրաժարվեն ստորագրել՝ ի դեմս այն փաստի, որ դաշնակից տերություններն ընդունել են ինքնորոշման սկզբունքը (իսկ թուրքերն Էրզրումում մեծամասնություն էին կազմում՝ Հ. Ս.): Ենթադրենք, թե թուրքը կամեցողություն ցույց տա ստորագրելու պայմանագիրը, ի՞նչ կպատահի: Դաշնակից տերությունները ցանկանում են հայտարարել, որ Էրզրումը պետք է լինի Հայաստանի մասը: Խորհրդակցության սեղանի շուրջը նստածներից մեկը կարծու՞մ է, որ թուրքերն այդ առանձնահատուկ շրջանում, տվյալ դեպքում, ամենափոքր իսկ չափով հաշվի կնստեն հայերի հետ: Նման հոդվածը, իր տեսակետով, պարզապես կոտորածներ կսանձազերծի: Ամենը, ինչ Հայաստանը կկարողանա այնժամ անել, հաշտության պայմանագիրն անտեսելն է, հրաժարվելը Էրզրումը վերցնելուց կամ փորձել հարկերը գանձել և այլն, և հետևաբար, պայմանագիրը կդառնա մեռած տառ:

....Իրեն համար արտակարգ առաջարկ է թվում խորհուրդ տալ հայերին՝ նվաճելու մի լայնածավալ տերիտորիա, երբ նրանք ներկայումս դժվարությամբ են պահպանում այն խիստ սահմանափակ տարածությունը, որ կա նրանց ձեռքին»[238]:

Լլոյդ Ջորջին հակառակ տեսակետն է պնդում Բերտելոն: Նա գտնում է, որ «Չնայած Էրզրումում երբեք հայկական մեծամասնություն չի եղել, բայց եղել է մեծաքանակ հայկական գաղութ, որի մեծ մասը, դժբախտաբար, կոտորվել է» և որ Էրզրումը թուրքերին թողնելը կնշանակի Հայաստանը կտրել ծովից և

237 Տե՛ս նույն տեղում, էջ 640:
238 Նույն տեղում, էջ 640-641:

թուրքերին տեղավորել «ուղիղ հայերի թիկունքում» և անհնար է հզոր հայկական պետություն կառուցել՝ առանց նրա համար ելք ապահովելու դեպի ծով: Բերտելոն գտնում է նաև, որ Դաշնակիցները կապված են «իրենց պատվո խոստումով՝ դարձնել Էրզրումը հայկական նոր պետության մասը»[239]:

Սակայն, նրա պնդումները արդարացի լինելով, մեր կարծիքով անիրական էին: Հակադրվելով իր վարչապետ Լլոյդ Ջորջին՝ Էրզրումը Հայաստանին թողնելու կողմ է արտահայտվում Քերզոնը: Նա այն կարծիքն է հայտնում, որ ԱՄՆ-ի Հայաստանին խոստացած Տրապիզոնը նա երբեք չի ստանա, եթե Էրզրումը թողնվի թուրքերին[240]: Լլոյդ Ջորջի հետ համակարծիք է լինում Նիտտին, գտնելով, որ եթե Հայաստանին պետք է մի բան տրվի, որը նրա շահերից չէ, ապա ավելի լավ է, որ չտրվի, և որ եթե ինքը դեմ է, որ Էրզրումը տրվի հայերին, չի նշանակում, որ գործում է ի վնաս նրանց: Նրա կարծիքով հակառակը կնշանակի, որ մեկը պետք է վերցնի Հայաստանի մանդատը և առաջարկում է, որ դա անի Նորվեգիան[241]:

Այնուհետև նորից արտահայտվում է Լլոյդ Ջորջը, որը ճշտորեն գտնում է, որ Էրզրումը տալ Հայաստանին, կնշանակի այն նվաճել, իսկ դաշնակիցներից ոչ մեկը դա չի անի, քանզի «մի հսկա բանակ անհրաժեշտ կլինի, որպեսզի նվաճեն Մուստաֆա Քեմալին, իսկ նման մի ուժ վերստեղծելու ամենափոքր իսկ մտադրություն ոչ ոք չունի»: Նա նույնիսկ թերահավատություն է հայտնում, որ ԱՄՆ-ը մեկ-երկու դիվիզիա կուղարկի Էրզրումը գրավելու համար[242]: Լ. Ջորջն առաջարկում է պարզել, թե Վիլսոնը պատրա՞ստ է օգնություն ցույց տալ դաշնակիցներին՝ իրականացնելու պայմանագիրն այնպես, ինչպես նախագծված է, և միայն դրական պատասխանը կարող է որոշիչ լինել այդ հարցում: Երկրորդ՝ ստորագրելու պայմանն այն կլինի, եթե հայերն հանձն առնեն իրենց ուժերով պաշտպանել իրենց տրված տարածքները: Միլերանը հարցը դնում է այսպես. եթե Էրզրումը տալիս ենք Հայաստանին, ապա կարող ենք օգնել նրան, եթե նա դա պահանջի: Նա խնդիրը կախյալ է համարում ԱՄՆ-ի կողմից

---

239 Նույն տեղում, էջ 642-643:
240 Տե՛ս նույն տեղում, էջ 644:
241 Տե՛ս նույն տեղում:
242 Տե՛ս նույն տեղում, էջ 645-656:

Հայաստանի մանդատի ստանձնումից, մյուս կողմից էլ ճիշտ չի համարում Հայաստանի բախտը թողնել անորոշ՝ մինչև Վիլսոնի վճիռը: Ուրեմն Գերագույն խորհուրդը պետք է ինչ-որ վճիռ կայացնի և Էրզրումը զիջի Հայաստանին[243]:

Այնուհետև Նիտտին առաջարկում է հրավիրել հայկական պատվիրակությանը Գերագույն խորհրդի նիստին, ճշտելու համար, թե հայերը պատրա՞ստ են լիակատար պատասխանատվություն վերցնելու իրենց պետությունը ապահովելու համար, եթե նրանց տրվի Էրզրումը, թե՞ սպասում են դրսի օգնությանը: Հարցերին պատասխանելու համար նիստերի դահլիճ է հրավիրվում Պողոս Նուբարը: Նրա պատասխաններից այն տպավորությունն ենք ստանում, որ վերջինս իրեն ցանկացել է դրսևորել որպես փայլուն դիվանագետ, սակայն պարզապես իրականում ճիշտ չի խոսել, կամ էլ լիարժեքորեն տեղեկացված չի եղել այն իրավիճակից, որում գտնվում էր Հայաստանի Հանրապետությունը: Նրան տրվում են հետևյալ հիմնական հարցերը.

ա) Հայաստանը պատրա՞ստ է պահպանելու իր նոր սահմանները և ցանկանում է, որ դրանցում ընդգրկվի Էրզրումը:

բ) Պողոս Նուբարը գտնու՞մ է արդյոք, որ Հայաստանն ի վիճակի է վերակառուցելու իր բանակը, և միջոցառումներ կարո՞ղ է ձեռնարկել իր ընդլայնված սահմաններով պետության անվտանգության համար:

գ) Նրա կարծիքով հայերն ի վիճակի՞ են գրավելու Էրզրումը, որը թուրքերի տիրապետության տակ է, և հաստատվելու այնտեղ (Լ. Ջորջ)[244]:

Պողոս Նուբարը պատասխանում է. «Հայերը կարող են հաստատվել Էրզրումում և ամրապնդել իրենց դիրքերն այնտեղ: Նրանք արդեն իսկ Երևանում ունեն զորամասեր, որոնք կռվել են ողջ պատերազմի ընթացքում և արդարացրել իրենց որպես գերազանց զինվորներ: Նրանք լիովին պատրաստ են կրկին մարտնչել և գրավել Էրզրումը, որի ներառումը խիստ էական է Հայաստանի համար: Հայերն արդեն ունեն 15.000-ից ոչ պակաս բանակ և կարող են առանց

[243]Տե՛ս նույն տեղում, էջ 649-650:
[244]Տե՛ս նույն տեղում, էջ 651:

դժվարության ոտքի հանել ևս 40.000, եթե դաշնակիցները պատրաստ են ապահովել նրանց զինամթերքով ու հանդերձանքով»[245]:

Այնուհետև նա բերում է հայերի անզուգական կռվող լինելը հիմնավորող փաստեր՝ կամավորական շարժման շրջանից: Լ. Ջորջի հարցին՝ առանց դաշնակիցների օգնության Էրզրումը գրավելու հնարավորության մասին, նա դրական պատասխան է տալիս:

Նրան լսելուց հետո նիստը հետաձգվում է մինչև հաջորդ օրվա առավոտյան ժամը 11-ը[246]:

Առանց վիճարկելու Նուբար փաշայի հայրենասիրությունը՝ ավելացնենք միայն, որ նրա այն փաստարկը, որ հայկական բանակը կարող էր գրավել Հայաստանին տրված տարածքներից մասնավորապես Էրզրումը, դյուրին խնդիր չէր առանց դաշնակիցների օգնության, որովհետև այդ բանակը դեռևս չէր կարողանում լուծել Ադրբեջանի և Վրաստանի հետ սահմանային հարցերը: Անորոշ էին Լոռվա, Ղարաբաղի, ինչ որ տեղ նաև Նախիջևանի ճակատագրերը: Ուրեմն ինչպե՞ս էր հնարավոր գրավել Էրզրումը, մանավանդ, երբ արդեն թափ էր հավաքում քեմալական շարժումը: Այն տպավորությունն ես ստանում, որ Պողոս Նուբարը ցանկանում էր անպայման պայմանագրով Թուրքիայից պոկել տարածքներ՝ չխորանալով այն հարցի մեջ, թե հնարավոր է արդյո՞ք գրավել և պահպանել դրանք:

Հաջորդ օրվա նիստին կանչվում է Ա. Ահարոնյանը, որը գրեթե նույնն է ասում: Թեպետ մեր նպատակը արևմտահայ քաղաքական մտքի նրբերանգների բացահայտումն է, բայց քանի որ Ա. Ահարոնյանն ավելի շատ առաջնորդվում էր Ազգային պատվիրակության քաղաքական հայացքներով, ավելորդ չենք համարում մի փոքր անդրադառնալ Վեհաժողովում տրված հարցերի նրա պատասխաններին:

Իտալիայի վարչապետ Նիտտին ասում է. «Կոնֆերանսը շատ է մտահոգված Հայաստանի հարցով և իրենք շատ են կամենում հասնել մի որոշման, որը հիմնված լինի այդ իսկ երկրի շահերի վրա», ապա Ահարոնյանին դիմելով շարունակում է, որ նա լավ գիտի իր սեփական երկիրը և Էրզրումի կարևորությունը, և նրան իրազեկում է, որ «դաշնակից տերությունների համար անհնարին է Հայաստանին

245 Նույն տեղում:
246 Տե՛ս նույն տեղում: Այս նոթերը տե՛ս նաև՝ George D. L., The Truth about the Pease Treaties, vol. 2, London, 1938, p. 1302-1321.

օգնության համար զորքեր ուղարկել»: Այս ամենից ելնելով` նա Գերագույն Խորհրդի անունից հարցնում է. «Ենթադրենք, թե դաշնակից տերությունները պատրաստ են սպաներ, զինամթերք և հանդերձանք մատակարարել հայկական բանակներին, այդ բանակներն ի վիճակի կլինե՞ն թուրքերին Էրզրումից վտարել և իրենք հաստատվել այդ ամրոցում, ինչպես նաև ապահովել իրենց նոր սահմանները»: Նրա երկրորդ հարցը հետևյալն էր` «Ի նկատի ունենալով Հայաստանի լավագույն շահերը, ո՞րն է ամենահարմար սահմանագիծը, որ կարելի է անցկացնել»[247]:

Ա. Ահարոնյանը ասում է, «որ իրադրությունը, ինչպես հարցրեց սինյոր Նիտտին, կարելի է բաժանել երկու մասի. առաջինը` թուրքերի դրությունը և նրանց ուժերի տեղակայումը և երկրորդը` հայկական բանակի չափը և պատրաստվածությունը: Հայկական շտաբային սպաները զեկուցում են, որ Մուստաֆա Քեմալի հրամանատարության ներքո գտնվող զորքերը իրականում շատ ավելի վատորակ են, քան պատկերացնում էին: Ավելին, այս զորքերը, փոքր բացառությամբ, կանոնավոր զորքեր չեն: Թերևս նրանք կարող են կազմված լինել շուրջ 1000 կամ 2000 հեծելազորից, բայց մյուս դեպքերում կազմված են քրդերից և գյուղացիներից»: Շարունակելով նա ասում է, «որ հայերը 20000-ից 25000-անոց մի բանակ ունեն: Իրենց գլխավոր դժվարությունը զինամթերքի և հանդերձանքի պակասն է», և «եթե ինքը հավատալու լինի իր սեփական ռազմական էքսպերտներին, որոնք առավելություն են ունեցել ռուսների հետ կողք կողքի կռվելու պատերազմի ընթացքում, հնարավոր կարող է լինել հաջորդ երկու կամ երեք ամսվա ընթացքում ոտքի հանել 40000-ից ոչ պակաս մի բանակ»: Ըստ Նրա` եթե այդ բանակն ապահովվի զենքով, հանդերձանքով և սպաներով, ի վիճակի կլինի ոչ միայն վերցնել Էրզրումը, այլև` մյուս նահանգները և «անկասկած ողջ Հայաստանը»: Նրա ընդհանրացումն հետևյալն է լինում. «Առանց Էրզրումի անհնարին է պատկերացնել ապահով հայկական պետություն»[248]:

[247]Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 654-655:
[248]Նույն տեղում, էջ 654-656, նաև` Փաստաթղթերի Սովետական հանրապետությունների պետական հարաբերությունների մասին (1920-1922 թվականներ), «Բանբեր Հայաստանի արխիվների», Ե., 1972, թիվ 3 (34), էջ 54-56:

Այն, որ իսկապես Էրզրումը Հայաստանի զարգացման և հզորացման կարևորագույն կռվան կարող էր լինել, անկասկած է, բայց Ա. Ահարոնյանի փաստարկներն այնքան էլ համոզիչ չէին, ինչպես Պողոս Նուբարինը: Բավական է նշել, որ Նիտտիի այն հարցին, թե «Հաշվվում է մոտավորապես 15.000 թուրք Էրզրումում և շրջակայքում: Հայերը թուրքական բանակին դեմ հանդիման գտնվելուց բացի, կռվում են նաև ադրբեջանցիների հետ», այդ տեսանկյունից նա կարող է «լույս սփռել ներկա իրադրության վրա», Ա. Ահարոնյանը պատասխանում է, որ այդ պահին չի կարող ճիշտ թվեր ներկայացնել թուրքական բանակի մասին, բայց հայերն իրականում ադրբեջանցիների հետ սահմանային մասնակի կռիվների մեջ են և ոչ պատերազմի և այդ կռիվներն էլ կդադարեն, եթե «տերությունները որոշակիորեն հաստատեն երկրի սահմանները»[249]:

Ա. Ահարոնյանն ակնհայտորեն սխալ էր ներկայացնում իրավիճակը: Նախ՝ հայկական կռվող ուժերի մասին. դրանք թե՛ Նուբար փաշան և թե՛ Ա. Ահարոնյանը չափազանցնում էին: Բավական է նշել, որ 1920 թ. նոյեմբերին, երբ արդեն հայ-թուրքական պատերազմն ընթացքի մեջ էր, Ա. Խատիսյանը գործուղվում է թուրքերի հետ բանակցելու, որից առաջ անցնում է Թիֆլիս՝ դաշնակիցների ներկայացուցիչներին հանդիպելու: Նա իր հետ տանում է պաշտպանության նախարար Ռուբեն Տեր Մինասյանի տվյալները հայկական ուժերի թվաքանակի վերաբերյալ, ուր դրանց թիվը չէր գերազանցում 40000-ը, այն էլ չորս տարբեր ճակատների վրա: Այդ նույն ճակատների վրա թուրքերն ունեին 20000 կանոնավոր զորքեր և 30000 ոչ կանոնավոր կռվողներ[250]: Սա նշանակում է, որ ապրիլ ամսին եթե հայոց բանակի թիվը կազմեր 15 կամ 20 հազ. և մի քանի ամսից աճեր ևս այդքանով, միևնույնն է, անհնար էր գրավել Էրզրումը, քանզի ողջ բանակը չէր կարող շարժվել Էրզրումի վրա: Երկրորդ՝ ՀՀ-ն թեև Ադրբեջանի հետ մասնակի կռիվների մեջ էր և ոչ պատերազմի, բայց ցանկացած պահի այդ մասնակի կռիվները կարող էին վերաճել պատերազմի: Չպետք է մոռանալ, որ ՀՀ-ում գտնվում էր

[249]Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 657, նաև՝ Փաստաթղթեր Սովետական հանրապետությունների պետական հարաբերությունների մասին (1920-1922 թվականներ), տե՛ս նույն տեղում, էջ 56:

[250]Տե՛ս Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 289-290:

700000 մահմեդական՝ մեծամասամբ թաթար բնակչություն, որը Թուրքիայի հետ գաղտնի կապի մեջ էր և հարմար պահի էր սպասում՝ ապստամբելու համար[251]:

Հարկավ, մենք չենք ուզում այն տպավորությունն առաջ բերել, թե Պողոս Նուբարը և Ա. Ահարոնյանը իրենց պահանջների մեջ արդարացի չէին: Բայց այն դեպքում, երբ դաշնակիցներն իրենք էին հասկացնում, որ չեն օգնելու հայերին, կարծում ենք, որ անհրաժեշտ էր տվյալ պահին ավելի սթափ դատել և սահմանափակվել քիչ պահանջներով:

Ավելորդ է նշել, որ իրենք՝ դաշնակիցները, շատ լավ էին հասկանում առանց օժանդակության հայերի կողմից պահանջված տարածքների գրավման անհնարինությունը և այդ պատճառով որոշեցին ԱՄՆ նախագահին առաջարկել Հայաստանի մանդատը: Դեռևս 1919 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին մանդատը ընդունելու նպատակահարմարության հարցը ճշտելու համար Փոքր Ասիայում և Անդրկովկասում ուսումնասիրություններ կատարեց գեներալ Հարբորդի 30 հոգուց բաղկացած հանձնախումբը, որը եղավ նաև Երևանում: Նրա՝ ԱՄՆ վերադարձից հետո՝ 1920 թ. ապրիլին, նախագահ Վիլսոնը ԱՄՆ-ի սենատին ներկայացրեց Հարբորդի տեղեկագիրը, որը 52 ձայնով ընդդեմ 28-ի մերժվեց[252]: Կա այն տեսակետը, որ սրանում կարևոր դեր է ունեցել սենատոր Հենրի Քեփըտ Լաճը, որը Վիլսոնի հակառակորդներից էր[253]:

Բայց հիմնական պատճառները սրանք էին՝

ա) ԱՄՆ-ն ցանկանում էր մանդատի տրամադրում Փոքր Ասիայի և Անդրկովկասի վրա, Միջերկրականից մինչև Կասպից ծով, որը նրան չէին տա դաշնակիցները,

բ) Հայաստանի մանդատի առանձին ստանձնումը նրան ձեռք չէր տալիս, քանի որ Դարդանելի հնարավոր փակման դեպքում նա չէր կարող կատարել իր պարտավորությունները:

Դեռևս 1920 թ. ապրիլի 27-ին Թիֆլիսից իրեն ուղղված Հարբորդի մի զեկույցին տված պատասխանում Վիլսոնի հետևյալ տողերը

[251] Տե՛ս Ռուբէն, նշվ. աշխ., էջ 186:
[252] Տե՛ս Հայ ժողովրդի նորագույն պատմություն, Թեհրան, Ա.թ., Պր., էջ 40:
[253] Տե՛ս Մսըրլեան Զ., ԱՄՆ-ի արտաքին քաղաքականութիւնը եւ Հայկական հարցը (1900-1976 թթ.), «Հայկազեան Հայագիտական Հանդէս», Պէյրութ, 1977-78, հ. Զ., էջ 74-75:

վկայում են, որ նա ինքն էլ Հայկական հարցի լուծմանը վերապահությամբ է մոտեցել ԱՄՆ-ի ստանձնելու արդյունավետության խնդրին՝ «Միացյալ Նահանգներն իսկապես ընդունում է պարտավորությունն իր վրա՝ կարգավորելու արտաքին քաղաքականության մեր հետաքրքրությունները առանձնապես շոշափող մի շարք հարցեր, անկախ մեծ նշանակության ներքին գործերից: Բայց և այնպես, ամերիկյան միջամտությունը հայկական գործին պահանջում է 100-ից մինչև 20 հազ. զինվոր: Միացյալ Նահանգները կարող է իր վրա վերցնել այսպիսի ծանրություն միայն Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հետ վերջնական համաձայնությունից, ինչպես նաև Ռուսաստանի և Գերմանիայի հստակ արտահայտությամբ հավանությունից հետո, հատկապես Թուրքիայի և Անդրկովկասին վերաբերվող միջամտության ծախսերի թիվն առաջին տարվա համար նշվում է 275 մլն. դոլար»[254]:

Բայց մենք մերժման պատճառներն արդեն մատնանշեցինք: Ավելացնենք նաև, որ ԱՄՆ-ի համար դեռևս պարզ չէր Ռուսաստանի վերաբերմունքը, որը դաշինքի մեջ էր քեմալական Թուրքիայի հետ: Սրանք արդեն լուրջ գործոններ էին, որոնց հետանհնար էր հաշվի չնստել:

Այսպիսով, ԱՄՆ-ի նախագահի նպատակադրումները Հայաստանի նկատմամբ չիրականացան:

1920 թ. օգոստոսի 10-ին կնքվեց Սևրի դաշնագիրը, որի 89-րդ հոդվածն ուներ հետևյալ բովանդակությունը. «Թիւրքիան և Հայաստանը, այլ և ուրիշ բարձր դաշնագիր կողմերը, համաձայնվում են Ամերիկ. Միաց. Նահանգների նախագահի իրաւարար վճռին յանձնել սահմանի որոշումը Թիւրքիայի եւ Հայաստանի միջեւ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Բիթլիսի վիլայէթներում եւ ընդունում նրա վճիռը, այլ եւ բոլոր այն միջոցները, որ կարող է նա հրահանգել Հայաստանի դէպի ծով ելք ունենալու եւ յիշեալ սահմանին կից գտնւող օսմանեան որևէ հողի զինաթափման մասին»[255]:

Իրավարար վճռից ամիսներ առաջ Վիլսոնը մանդատի ստանձնումը կախյալ էր համարում Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի,

---

[254]Армения в документах государственной департаменте США 1917-1920 гг., составитель Махмурян Г.Г., Е., 2011, с. 401-402:

[255]Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 440, նաև՝ «Ժողովուրդ», Ե., 1920, չորեքշաբթի, 23 յունիսի, թիւ 97:

ինչպես նաև Ֆրանսիայի և Գերմանիայի դիրքորոշումներից: Սա նշանակում է, որ արդեն ՀՀ խորհրդայնացումից հետո, երբ կեղծ կարգախոսներով իշխանության եկած բոլշևիկները քաղաքացիական կռիվները հօգուտ իրենց ավարտելով, վերադառնում էին ցարական Ռուսաստանի նվաճողական սկզբունքներին, գրավելով հեղափոխությունից հետո նրանից դուրս մնացած տարածքները, որը լրիվ ապարդյուն էր դարձնում արևմտահայ քաղաքական մտքի այն ուղղվածությունները, որ գոնե կլուծվի Արևմտյան Հայաստանի հարցը:

1920 թ. նոյեմբերի 22-ին Վիլսոնն իր հեռանալուց առաջ կայացրեց իր իրավարար վճիռը, գծելով Հայաստանի սահմանները, Սևրի պայմանագրի հիմքով: Սակայն այդ օրերին Հայաստանը բաժանվում էր քեմալականների և բոլշևիկների միջև:

1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրով Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր: ՀՀ-ն խորհրդայնանում է բոլշևիկ-քեմալական միացյալ գործողությունների հետևանքով, որի պայմաններում հաղթում է այն տեսակետը, որ թուրքական առաջխաղացումը հնարավոր չէ կանգնեցնել, մանավանդ, որ հայկական բանակը հայտնվել էր պարտվողի դերում, իսկ բոլշևիկներն արդեն խոսում էին սպառնալիքի լեզվով: Ստեղծված իրավիճակում երկու ճակատով կռվելը ոչ միայն նպատակահարմար չէր համարվում, այլև անհնար էր: Ուստի 1920 թ. դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը քեմալականների հետ Ալեքսանդրապոլում Ա. Խատիսյանը կնքում է պայմանագիր, որի մասին Անդրանիկը գրում է. «Այն մարդիք, որոնք կհիանային թուրքերու ճենթելմենության վրայ, ստորագրեցին Ալեքսանդրապոլի դաշնագիրը, ցեխի մեջ թաթախելով այն ոսկե գրիչը, որով ստորագրված էր Սևրի դաշնագիրը»[256]:

Թ. Վեհապետյանը գտնում է, որ այս պայմաններում արդեն անիրական մի փաստաթուղթ էր դառնում Սևրի պայմանագիրը, քանի որ Ալեքսանդրապոլի դաշնագրի համաձայն այն չեղյալ էր

[256]Ղարիբջանյան Գ., նշվ. աշխ., էջ 170:

հայտարարվում[257], և այլևս ոչ մի հիմք չէր մնում Վիլսոնի իրավարար վճիռը իրականացնելու համար:

Արդեն քաղաքականապես շատ միամիտ պետք էր լինել՝ հավատալու, որ այս կետը կարող էր իրականանալ: Եվ այդ միամտությունն է բուրում Պողոս Նուբարի և Ա. Ահարոնյանի՝ Վիլսոնին ուղարկած հեռագրից, ուր կարդում ենք. «Անսահմանորեն յերջանիկ ենք, վոր Գերագույն խորհուրդը անկախ Հայաստանի սահմանների վորոշումը ձեզ է հանձնել: Ամբողջ հայ ազգը իր աչքերը ուղղած է ձեզ վրա, հուսալով տեսնել, վոր իր իրավունքները պաշտպանված պիտի լինի ձեզանից:

Հայաստանի պետության հովանավորության ընդունումը Ամերիկայի կողմից միայն կարող է իրականացած դարձնել մեր յերազները ունենալ լիակատար Հայաստան: Բայց յեթե Ամերիկան հանձն չառնե այս պարտականությունը, մենք ձեզ թախանձում ենք պնդել, վոր գեթ Հայաստանի պետության մաս կազմեյին Բիթլիսի նահանգը առանց Սղերդ գավառի, Վանի նահանգը առանց Հեքարի գավառի, ամբողջ Կարնոյ նահանգը, վորի գլխավոր քաղաքները Կարին յեվ Երզնկան անհրաժեշտ են Հայաստանի պաշտպանության համար, ամբողջ Խարբերդի գավառը ..., նայեվ ունենալ յելք Սեվ ծովու վրա, Ճորոխի հովիտը, որ անհրաժեշտե մեր երկաթուղիներու շինության համար յեվ ամբողջ Անդրկովկասյան Հայաստանը: Հույս ունենք, վոր համենայն դեպս Ամերիկան ցույց կտա իր առատաձեռն ու հզոր աջակցությունը Հայաստանին: Այն հայկական հողամասերը, որոնք դուրս պիտի մնան անկախ պետությունից, այսինքն Սեբաստյան, Տիգրանակերտի, Մալաթյան հողամասերը, նայեվ ամբողջ Կիլիկյան մենք ցանկանում էինք, վոր դաշնակիցները զրկեյին թյուրք վարչությունից յեվ ոժտվեյին Յեվրոպական կառավարության հատուկ ռեժիմով դաշնակիցների վերահսկողության ներքո»[258]:

Կարևոր է մատնանշել, որ եթե Ազգային և ՀՀ պատվիրակությունները, որոնք փորձում էին ներկայացնել արևմտահայության շահերը, զրկվում էին Արևմտյան Հայաստանի խնդիրը դաշնակիցների օգնությամբ անջատ լուծելու

[257]Տե՛ս Վեհապետեան Թ., Լուսարձակ մեր անցեալ եւ ներկայ հանրային կեանքին վրայ: Ներածական Ե գիրք, Պէյրութ, 1993, էջ 90-91:
[258]ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 114, թ. 1:

հնարավորություններից, քանզի ընդդեմ վերջիններիս՝ դաշնակցել էին բոլշևիկներն ու քեմալականները, իսկ այս պայմաններում դաշնակիցներն որդեգրել էին քեմալականներին սիրաշահելու քաղաքականությունը:

Դաշնակիցներն իսկապես փորձում էին բարեկամանալ Քեմալի հետ: Այդ է վկայում թեկուզ և այն հանգամանքը, որ Անգլիայի համաձայնությամբ հոկտեմբերին սուլթանական կառավարության նախագահի պաշտոնում Ֆերիդ փաշայի փոխարեն նշանակվում է Թևֆիկ փաշան, իսկ արտաքին և ներքին գործերի նախարար է նշանակվում Իզզեթ փաշան, որը հեղինակավոր անձ էր քեմալականների շրջանում: Վերջինս նույնիսկ մեկնում է Անկարա և բանակցում քեմալականների հետ՝ փորձելով նրանց կողմնորոշել դեպի Անտանտը: Այդ մասին պահպանվել է Քեմալի վկայությունը[259]:

Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի հարցը մտավ փակուղի և աստիճանաբար դուրս մղվեց դիվանագիտական գործընթացներից՝ Լոնդոնի և Լոզանի խորհրդաժողովներում:

Այսպիսին էր արևմտահայ քաղաքական միտքը հայոց Ազգային Պատվիրակության քաղաքական ընկալումներում.

ա) Մեծ Հայաստանի ստեղծումը պատկերացնում էր Արևմտյան Հայաստանի վիլայեթներով մինչև Կիլիկիա, որին պետք է կցվեր ՀՀ –ը:

բ) Նրա այդ ընկալումները ընդունելի դարձան ՀՀ պատվիրակության համար ևս, որը նշանակում է, որ իրականում Պողոս Նուբարի պատվիրակությունն էր ձևավորում ՀՀ արտաքին քաղաքականությունը կամ նրա քաղաքականությունը ՀՀ արտաքին քաղաքականությունն էր:

գ) Այդ քաղաքականությունն ամենևին իրատեսական չէր, չէր բխում աշխարհաքաղաքական գործընթացների ճիշտ ըմբռնումից:

[259]Տե՛ս Кемаль М., Путь новой Турции, т. 3, М., 1934, с. 136.

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

## ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԸ 1921–1923 ԹԹ.

### 3.1.Արևմտահայ քաղաքական մտքի դրսևորումը Լոնդոնի խորհրդաժողովում

Լոնդոնի խորհրդաժողովը բացվում է 1921 թ. փետրվարի 21-ին և շարունակվում մինչև մարտի 14-ը: Մինչ այդ, 1921 թ. փետրվարի 17-ին, Հայոց Ազգային և ՀՀ պատվիրակությունների միջև կնքվում է մի համաձայնագիր՝ դրան մասնակցելու ձևաչափի մասին: Այն ներառում էր հետևյալ կետերը.

«1.Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը և Թուրքիայի հայերի ազգային պատվիրակությունը պահպանում են համապատասխանաբար իրենց բնորոշ կառուցվածքը:

2.Դաշնակիցների հետ հարաբերությունների համար ոչ մի քայլ չի կարող կատարվել առանձին: Հետևաբար, ժողովները կկայանան յուրաքանչյուր պատվիրակությունում հավասար քանակի անդամների մասնակցությամբ (Լոնդոնի համար՝ 3 անդամ՝ յուրաքանչյուր պատվիրակությունից)՝ անհրաժեշտ որոշումներն ուսումնասիրելու և կայացնելու համար: Որոշումները կկայացվեն ձայների մեծամասնությամբ: Ձայների բաժանման դեպքում հարցը մի կողմ կդրվի և յուրաքանչյուր պատվիրակություն ազատ կգործի այդ հարցի լուծման համար պայմանով, որ հարգի այն սկզբունքները, որոնք ամրագրված են 2-րդ պարագրաֆի համաձայն:

3.Պաշտոնական նամակագրությունը կստորագրվի համատեղ Միավորված պատվիրակությունների անունից նորին

գերազանցություն Նուբար Փաշայի և պարոն Ահարոնյանի կողմից իրենց համապատասխան տիտղոսներով: Այն դեպքում, երբ Միավորված պատվիրակությունների խորհրդում կորոշվի, որ հայկական շահերը պահանջում են, որ պատվիրակություններից մեկը գործի կամ ստորագրի միայնակ, ուրեմն այդպես էլ կարվի:

4.Դաշնակիցների հետ նամակագրության բլանկները կկրեն «Միավորված հայկական պատվիրակություն» նշումը՝ բացառությամբ պարագրաֆ 3-ում նախատեսված հանգամանքների, այդ հատուկ դեպքերում ստորագրող պատվիրակությունը կօգտագործի իր սեփական բլանկը»[260]:

Ընդհանուր համաձայնությամբ որոշվում է, որ երկու պատվիրակությունները Լոնդոնում պետք է պաշտպանեն հետևյալ կետերը.

«1. Պահանջել Հայաստանին վերաբերող Սևրի պայմանագրի դրույթների պահպանումը և կատարումը:

2. Պահանջել Հայաստանի մանդատը:

3. Եթե հանգամանքները բարենպաստ լինեն, փորձել համաձայնության գալ դաշնակիցների հետ, խոսել թուրքերի հետ համաձայնության գալու մասին:

4. Ինչ վերաբերում է Կիլիկիային.

ա) պահանջել հատուկ վարչակարգ Կիլիկիայի այն հատվածի համար, որը մնում է թուրքական գերակայության տակ:

բ) Սիրիայի ֆրանսիական մանդատում ներառված մասի համար պահանջել, որպեսզի Ֆրանսիան այն դարձնի մեկ ինքնավար հայկական նահանգ ֆրանսիական մանդատի ներքո:

գ) Սևրի պայմանագրի վերանայման դեպքում պահանջել, որ Կիլիկիայի վերոնշյալ 2 մասերը կազմեն 1 նահանգ, որը կօգտվի ինքնավար վարչակարգից օսմանյան գերիշխանության և ֆրանսիական խնամակալության ներքո»[261]:

Ինչպես համոզվում ենք, այն պայմաններում, երբ արդեն խորհրդայնացվել էր Հայաստանը, իսկ Արևմտյան Հայաստանը և Կարսը ռազմականացված էր քեմալական բանակի կողմից, դեռևս

[260]Եղ. Չարենցի անվան ԳԱԹ-ի արխիվ Ֆ. Վ. Մալեզյան, գ. 736, թ. 1:
[261]Նույն տեղում, թ. 2:

հայկական պատվիրակությունները շարունակում էին մնալ իրենց նախկին պահանջների վրա: Անտեսվում էր այն հանգամանքը, որ Լոնդոնի խորհրդաժողովը տեղի էր ունենում այն նույն օրերին, երբ Մոսկվայում ընթանում էր ռուս-թուրքական խորհրդաժողովը, որը Թուրքիային առավել համարձակ գործելու հնարավորություն էր տալիս[262]: Այն հրավիրելու հիմնական դրդապատճառը խորհրդա-թուրքական մերձեցումն էր, որը լրջորեն անհանգստացնում էր դաշնակիցներին: Այնտեղ հրավիրված էին թուրքական երկու` սուլթանական (Կ. Պոլսի) և քեմալական (Անկարայի) կառավարությունների ներկայացուցիչները: Միանգամայն ճիշտ է Ա. Խատիսյանը, երբ գրում է. «Լոնտոնի խորհրդաժողովը արդիւնք էր այն դիմադրութեան, զոր Թուրքիա ցոյց տուաւ Սեւրի դաշնագրի պայմաններուն ենթարկուելու դէմ»[263]: Հասկանալի է, որ այդ դիմադրությունը սակավարդյունք կվերջանար, եթե չլիներ Ռուսաստանի աջակցությունը:

Անգլիան հույսեր ուներ, որ խորհրդաժողովի ընթացքում Թուրքիային կստիպեր ճանաչելու Սևրի պայմանագրի գոնե հիմնական դրույթները, իսկ Ֆրանսիան և Իտալիան նպատակ ունեին նրան պարտադրել ընդունելու կապիտուլյացիաները և ստանալու նոր կոնցեսիաներ` իհարկե դրա դիմաց փոխզիջումներ անելով: Դրանով նրանք քեմալականներին փորձում էին ներքաշել հակախորհրդային կոալիցիայի մեջ, բայց չկարողացան հասնել հաջողության:

ՀՀ պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանը նշում էր, որ «Ֆրանսիայում այն կարծիքն է տիրում, թէ որքան մեծ լինեն Թուրքիային թողնուելիք հողերը, այնքան աւելի լաւ ֆրանսիական շահերի համար: Ահա թէ ինչու ֆրանսիական ներկայացուցիչներն այստեղ, Հայաստանի սահմանները գծելիս, աշխատեցին որքան կարելի է կրճատել մեր հողերը յօգուտ Թուրքիային»[264], քանի որ

---

[262] Տե´ս Հակոբյան Ա., ՀՍԽՀ 1921 թ. ներքաղաքական կյանքի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ, Ե., 2014, էջ 5:

[263] Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 337:

[264] Մելիքյան Վ., Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917-1923 թթ., Ե., 2007, էջ 30, Այս մասին մանրամասն տե´ս նույնի` Հայութեան ինքնակազմակերպման խնդիրը եւ արեւմտահայերի 3-րդ համագումարի անհրաժեշտութիւնը, էջ 60-61:

այնտեղ Ֆրանսիան ուներ ամենամեծ ներդրումները և վախենում էր Թուրքիայի մասնատման դեպքում կորցնել դրանք[265]:

Մինչդեռ Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարար՝ Բրիան հայտարարում էր. «Անկեղծօրէն կը յայտարարեմ ձեզ, թէ ես Թիւրքիոյ անկախ եւ կենսունակ գոյութեան պաշտպանութեան կողմնակից եմ ....»[266]:

Լոնդոնի խորհրդաժողովից արևմտահայ քաղաքական մտքի ակնկալիքներն արդեն չէին իրականանալու, քանզի դաշնակիցները միակամ չէին, և նրանց համար առաջնային խնդիրը Խորհրդային Ռուսաստանի դեմ պատվար ստեղծելն էր, որը քեմալական Թուրքիայի հետ նախատեսում էր նոր քաղաքական կուրսի մշակում: Եվ պատահական չէր, որ դաշնակիցները այս խորհրդաժողովից սկսեցին Արևմտյան Հայաստանի խնդիրը կամ Սևրի պայմանագիրը ի չիք դարձնելու գործընթացը, որն ավարտվեց Լոզանի խորհրդաժողովով:

Լոնդոնի խորհրդաժողովում Կ. Պոլսի և Անկարայի կառավարությունների ներկայացուցիչներն էին Օսման Նիզամի փաշան և Բեքիր Սամի բեյը: Լոնդոն էին ժամանել Ա. Ահարոնյանը, գեներալ Հ. Բագրատունին, Մ. Վարանդյանը, Գ. Փաստրմաճյանը, Ս. Արարատյանը, Հ. Մասեհյանը և Պողոս Նուբար փաշան: Ինչպես համոզվում ենք, ՀՀ անկումից հետո արևմտահայ և արևելահայ քաղաքական մտքի գործիչները միավորվել էին՝ լուծելու Արևմտյան Հայաստանի խնդիրը, քանզի ՀՀ-ն արդեն խորհրդայնացած էր: Խորհրդաժողովը նախագահում էր Լլոյդ Ջորջը: Նշենք որ այս խորհրդաժողովի գումարման կարևորագույն պատճառներից էր նաև Բեքիր Սամի բեյի՝ փետրվարի 2-ի պահանջը՝ «վերականգնել Եւրոպայի մէջ 1914 թ. Թուրքիոյ սահմանները, վերադարձնել Իզմիրը, Կիլիկիան, իսկ Հայաստանի եւ Քիւրտիստանի վերաբերմամբ արտայայտուեցաւ որոշ կերպով հետեւեալ խօսքերով. «Մենք կը գտնենք, որ հողային խնդիրներու ուշադիր ուսումնասիրութիւնը, մանաւանդ Հայաստանի եւ Քիւրտիստանի վերաբերմամբ, հնարաւորութիւն կու տայ արդարացի լուծում գտնելու էական կէտերու մէջ» (ընդգծումը՝ հեղինակի)[267]:

---

[265]Տե՛ս Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 52:
[266]Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. Գ, Գահիրէ, 1957, էջ 109:
[267]Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 339:

Հայ ներկայացուցիչները այնքան էլ ճիշտ չէին պատկերացնում ստեղծված իրավիճակը. այդ մասին է վկայում փետրվարի 26-ի նիստի ընթացքը, որին մասնակցում էին Ա. Ահարոնյանը, Պողոս Նուբարը, զոր. Հ. Բագրատունին և Լոնդոնում ՀՀ գործերի նախկին հավատարմատար, հայազգի Մալքոլմը: Նիստը նախագահում էր Ջ. Քերզոնը, որը հայտարարեց. «Գերագույն խորհուրդը տեղեկացվել է, որ հայկական պատվիրակությունը ցանկանում է Սևրի պայմանագրի վերաբերյալ այժմ վարվող բանակցությունների կապակցությամբ շարադրել իր հայեցակետը: Բոլորին էլ հայտնի են այն դժբախտ իրադարձությունները, որոնք փոփոխեցին իրադրությունը Սան-Ռեմոյի կոնֆերանսից հետո: Ներկա նիստը հրավիրված է, որպեսզի հայկական պատվիրակությանը հնարավորություն ընձեռվի շարադրելու իր տեսակետը ներկա իրադրության վերաբերյալ: Կոնֆերանսը կունկնդրի պատվիրակությանը և կզեկուցի Գերագույն խորհրդին: Սակայն կոնֆերանսն առաջին հերթին պետք է իմանա երկու բան՝ ո՞վ է հայերի անունից խոսողը և հանուն ու՞մ է նա դիմում կոնֆերանսին»[268]:

Քերզոնը գիտեր, թե ինչ էր ասում. ՀՀ-ն անկում էր ապրել, որի հետևանքով Ա. Ահարոնյանի պատվիրակությունը կորցնում էր իր իրավական ուժը[269]: Խորհրդաժողովներին մասնակցում են պետությունների ներկայացուցիչները, իսկ Պողոս Նուբարը որևէ պետություն չէր ներկայացնում:

Պողոս Նուբարը իր ելույթում բացատրում է, որ պատերազմի սկզբից ի վեր ինքը ներկայացրել է Թուրքիայի հայերին, իսկ ՀՀ-ի ստեղծումից հետո ձևավորված Ա. Ահարոնյանի պատվիրակության հետ գործել է համատեղ՝ «հուսալով ապահովել թուրքական և ռուսական Հայաստանի միավորումը: Անկասկած, վերջին իրադարձությունները բարդացրել են կացությունը, բայց դա չի արգելում երկու պատվիրակություններին՝ համատեղելու և շարունակելու իրենց միասնական ջանքերը»[270]: Նշում է, որ ինքը և

---

[268] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 697-698:
[269] Տե՛ս Արզումանյան Մ., Արհավիրքից վերածնունդ, Ե., 1973, էջ 455:
[270] Նույն տեղում, էջ 698:

Ա. Ահարոնյանը խոսելու էին իրենց պատվիրակությունների անունից, բայց որպես նախագահ՝ հանդես էր գալու ինքը: Վերջինս իր խոսքում փորձում էր խորհրդաժողովի մասնակիցներին համոզել, որ Հայաստանում խորհրդային կարգերի պարտադրելը չի կարող հետ պահել տերություններին թուրքական չորս վիլայեթներն ազատագրելուց: «Այն փաստը, - շարունակում է նա, - որ Հայաստանին սովետական կարգեր են պարտադրվել, չպետք է ետ պահի տերություններին երկրի մյուս մասերը, այն է՝ թուրքական չորս վիլայեթները ազատագրելուց: Պետք է հիշել, անկասկած, որ Հայկական հարցը ծագեց Թուրքիայում. Թուրքիայում հայկական ջարդերն էին, որոնք դրդեցին տերություններին ջանալու հայերի ազատագրության համար: Պարտված Թուրքիայի հետ էր և ոչ թե նախկին դաշնակից Ռուսաստանի, որ տերությունները կնքեցին Սևրի պայմանագիրը: Ռուսական Հայաստանը մտցվեց հայկական պետության մեջ այն պատճառով, որ նա դեպքերի բերումով անկախ հռչակվեց: Ճիշտ է, անշուշտ, որ չորս վիլայեթներն օկուպացված են քեմալական զորքերի կողմից, բայց դաշնակիցները ճնշում գործ դնելու տարբեր միջոցներ ունեն, որոնք կարող են օգտագործել էվակուացումն ապահովելու համար: Պարտադրելիք սանկցիաների թվում ամենից հեշտ կիրառելին այն տերիտորիաների օկուպացումը շարունակելն է, որոնք այժմ գտնվում են դաշնակիցների ռազմական հսկողության ներքո, բայց որոնք, եթե Թուրքիան իրագործի իր հանձնառությունները, վերջին հաշվով կարող են էվակուացվել»[271]:

Անհրաժեշտ է նշել, որ Պողոս Նուբարն այս անգամ, ստեղծված պայմանների ազդեցությամբ ճիշտ էր արտահայտվում, երբ առանձնացնում էր Արևմտյան Հայաստանի հարցը արդեն խորհրդայնացված Հայաստանից՝ գտնելով, որ Սևրի պայմանագիրը դաշնակիցներն էին ստորագրել Թուրքիայի հետ և ոչ թե Ռուսաստանը, և որ Հայկական հարցը ծագել էր Թուրքիայում: Բայց նրա այդ հիմնավորումները բավարար չէին նրանց ստիպել՝ գրավելու չորս վիլայեթները: Նա նաև անտեսում էր այն հանգամանքը, որ քեմալականներն այդ վիլայեթները գրավել էին Ռուսաստանի օգնությամբ, որի հետ նրա նախկին դաշնակիցներն

[271] Նույն տեղում, էջ 699:

ամենևին ցանկություն չունեին ընդհարվելու: Նրանք ավելի շատ ուզում էին քեմալականներին իրենց կողմը գրավել և ապա՝ տրամադրել ընդդեմ Ռուսաստանի:

Այնուհետև Պողոս Նուբարը Կիլիկիայում գտնվող ավելի քան 150 000 հայերի անունից խնդրում է Ֆրանսիային, որի ազդեցության գոտում էր Կիլիկիան, «որպեսզի նաչլքի հայ ազգաբնակչությանը, այլ Կիլիկիայի համար ձեռք բերի վարչական ինքնավարության ռեժիմ՝ խառը ժանդարմերիայով»[272]:

Առհասարակ այն կարծիքն էր իշխում, որ անհրաժեշտ է պահանջել Ֆրանսիայի հովանավորության տակ Կիլիկիայի ինքնավարությունը՝ Թուրքիայից որպես անջատ երկիր: Բայց եթե դա էլ հանգամանքներն անկարելի դարձնեին, ապա, իբրև նվազագույնը, պահանջել Կիլիկիայի տեղական ինքնավարությունը սուլթանի անվանական գերիշխանության և Ֆրանսիայի հովանավորության տակ[273]:

Ա. Ահարոնյանը նույնպես իր խոսքում պնդում է Սևրի պայմանագրի իրականացման անհրաժեշտության մասին, քանզի դրանով ճանաչվել էր Հայաստանի անկախությունը, որը, խորհրդայնացումից շատ չանցած, վերականգնվել էր Փետրվարյան ապստամբության շնորհիվ: Ա. Ահարոնյանը չէր սխալվում, երբ ասում էր. «.... Քեմալականների ներխուժումը Հայաստան իրականում ուղղված էր Սևրի պայմանագրի և դաշնակիցների դեմ: Դա ապացուցվում է պարտությունից հետո Հայաստանին պարտադրված առաջին իսկ պայմաններով, որպեսզի Հայաստանի կառավարությունը հրաժարվի Սևրի պայմանագրից: Կային մարդիկ, որոնք ասում էին, թե քանի որ Ռուսահայաստանը բոլշևիկացել է, այլևս կարիք չկա հայկական պետություն ստեղծելու: Նրանք մոռանում են, սակայն, որ Թուրքիայի ոչ բոլոր հայերն են բնաջնջվել: Նրանցից մոտ 300 000-ը ապաստան են գտել Կովկասում և սպասում են այն պահին, երբ կկարողանան վերադառնալ իրենց տները: Պետք է հիշել, սակայն, որ Վանի, Բիթլիսի և Էրզրումի երեք վիլայեթներում, համաձայն վերին տեղեկությունների, միայն 96 000 մահմեդականներ են

[272]Նույն տեղում, էջ 700, տե՛ս նաև Պօղոսեան Ս., նշվ. աշխ., էջ 200:
[273]Տե՛ս Եղ. Չարենցի անվան ԳԱԹ-ի արխիվ, ֆ. Վ. Մալեզյան, գ. 504, թ. 1,3, տե՛ս նաև՝ գ. 550, թ. 5:

մնում»[274]: Այսպիսով, Ա. Ահարոնյանն արդեն, ինչպես Պողոս Նուբարը դաշնակիցների առջև դնում էր միայն արևմտահայերին առնչվող խնդրի լուծման անհրաժեշտությունը:

Լորդ Քերզոնը ներկայացրած պահանջների լուծման առումով մատնանշում է երեք խոչընդոտ՝ ա) բոլշևիզմի հաղթանակը Ռուսաստանում, բ) Մուստաֆա Քեմալի կողմից հայկական տարածքների մեծագույն մասի գրավումը, գ) տերությունների՝ Հայաստանին օգնության համար մեծ ուժեր ուղարկելու անզորությունը[275]:

Այս մասին վկայում է նաև Ա. Խատիսյանը, որը գրում է. «Լորտ Քըրզընը մատնանշեց այն դժուարին կացութիւնը, որուն մէջ կը գտնուէր խորհրդաժողովը Հայաստանի վերաբերմամբ-թուրքերը փաստօրէն գրաւած են բոլոր վիլայէթները, որոնք պէտք է անցնէին Հայաստանին, եւ նոյնիսկ Ռուսահայաստանի մէկ մասը. եւրոպական պետութիւնները չեն կրնար այնտեղ ուղարկել զորքեր, իսկ ռուսական Հայաստանը թէեւ ազատուած խորհրդային լուծէն, կը գտնուի նոր յարձակմանց սպառնալիքին տակ»[276]:

Հիշյալ նիստի արձանագրության մեջ մի հետաքրքիր հանգամանք է ի հայտ գալիս. փաստորեն, Լոնդոն գնացած Նուբար փաշան և Ա. Ահարոնյանն այնքան էլ ճիշտ չէին կողմնորոշվել Հայաստանի սահմանների հարցում: Դրանում համոզվելու համար բավական է մեջ բերել Քերզոնի՝ հայկական պատվիրակության անուն արած հարցադրումները: Ինչպես լորդ Քերզոնն էր նշում «օգտակար կլինի իմանալ, թե հայկական պատվիրակությունը որո՞նք է համարում Հայաստանի էական տերիտորիալ սահմանները: Նրանք պետք է հիշեն, որ Սան-Ռեմոյի կոնֆերանսը Հայաստանի սահմանների որոշման հարցը վերապահեց պրեզիդենտ Վիլսոնին: Պրեզիդենտ Վիլսոնը գծեց մի սահման, որն ընդգրկում էր մի շարք թուրքական հողամասեր, ինչպես նաև Տրապիզոնի նավահանգիստը: Պարզ է, որ գործնականում խիստ դժվար կլինի նման սահմանագծի հաստատումը:

[274] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 700-701:
[275] Տե՛ս նույն տեղում, էջ 702:
[276] Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 340:

Ուստի լորդ Քերզոնը կամենում է երկու որոշակի հարցեր տալ պատվիրակություններին, այն է՝

1.Որո՞նք են Հայաստանի անհրաժեշտ սահմանները, որոնք խնդրում են երկու պատվիրակությունները:

2.Որո՞նք են մարդկային և դրամական այն աղբյուրները, որոնք կկարողանա տրամադրել Հայաստանը՝ իր անկախությունը ձեռք բերելու համար»[277]:

Եթե զերծ մնանք զգացմունքայնությունից և հեռու այն կաղապարված մոտեցումներից, որ մեծ տերությունները զոհաբերում էին Հայկական հարցը հանուն իրենց քաղաքական շահերի, ապա պետք է ընդունենք, որ այս իրավիճակում այդ հարցը զոհաբերելն ամենևին իրենց շահերից չէր բխում: Եվ Քերզոնի այս հարցադրումներն ամբողջությամբ տրամաբանական էին: Հայ և մասնավորապես արևմտահայ քաղաքական միտքը դարձյալ ընթանում էր սխալ ուղով՝ լուրջ քննության չենթարկելով այն խնդիրը, թե ինչու՞ պետք է դաշնակիցները կռվեին քեմալականների դեմ՝ հանուն հայ ժողովրդի: Եվ այն էլ այն դեպքում, երբ հայ գործիչները չգիտեին, թե ի՞նչ սահմաններ էին ուզում: Բնականաբար, Սևրի պայմանագրով նախատեսված, բայց չէ՞ որ Սևրով ոչ թե սահմաններն էին մատնանշվում, այլ՝ իրավական հիմք էր տրվում ԱՄՆ նախագահին՝ գծելու սահմանները՝ հայտնի վիլայեթներով: Իսկ որ նրա նշած սահմաններից, մասնավորապես Տրապիզոնով, ամենևին տեղյակ չէին հայ պատվիրակները, երևում է Պողոս Նուբարի պատասխանից, ըստ որի՝ «պրեզիդենտ Վիլսոնի որոշման մասին հայկական պատվիրակությունը չի տեղեկացվել»[278]:

Այնուհետև Պողոս Նուբարը հայտնում էր, որ իրենք երբեք Տրապիզոնի նահանգը չեն պահանջել, քանի որ այնտեղ հայերը մեծամասնություն չեն կազմել, այլ՝ միայն Տրապիզոնով ելք դեպի ծով, հայերը պատրաստ են հարմարվելու Վիլսոնի սահմանագծին[279]:

Փաստորեն, ստացվում է, որ Վիլսոնն իսկապես նախագահի պաշտոնը լքելուց առաջ ցույց է տվել իր հայասիրությունը՝

[277]Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 702:
[278]Նույն տեղում, էջ 703:
[279]Տե՛ս նույն տեղում, էջ 702-703:

գծելով այնպիսի սահմաններ, որոնցից հայկական պատվիրակությունները անգամ տեղյակ չէին, որոնք անտեսում էին Լոնդոնի խորհրդաժողովում սահմանային հանձնաժողովի այն տեսակետը, որ «Տրապիզոնը չպետք է ընդգրկվի հայկական տերիտորիայում», որին համաձայնվել են հայկական երկու պատվիրակությունները[280]:

Ինչ վերաբերում է Կիլիկիայի խնդրին, ապա Ֆրանսիայի ներկայացուցիչ Բերտելոն հայտնում էր. «Ֆրանսիական կառավարությունը չի կարծում, որ հնարավոր կլինի Կիլիկիայի համար հատուկ ռեժիմ պահանջել: Երբևէ ոչ մի նման ռեժիմ չի ենթադրվել Սևրի պայմանագրով»: Նա նույնիսկ վիճարկում է Կիլիկիայում քրիստոնյաների մեծամասնություն կազմելու հարցը՝ հակադրվելով Պողոս Նուբարին[281]:

Այսպիսով, փաստորեն, դաշնակիցները ստեղծված նոր քաղաքական իրավիճակում հասկացնում էին, որ չեն պնդելու Սևրի պայմանագրի իրականացման մասին: Իսկ հայ քաղաքական մտքի ներկայացուցիչները չէին կամենում ըմբռնել, որ նրանց օգնությունն ակնկալելն այլևս անօգուտ է, և Սևրի պայմանագրի գործադրությունը Հայաստանի համար՝ քաղաքական ռոմանտիզմ[282]:

Հիշյալ ժողովածվում մի հետաքրքիր փաստաթուղթ է զետեղված, որը ցանկանում ենք վերլուծել: Այն անգլիական դիվանագետներ Օսբորնի և Նիքոլսոնի՝ դեռևս Լոնդոնի խորհրդաժողովից առաջ 1921 թ. փետրվարի 17-ի հուշագիրն է՝ կազմված Անգլիայի արտգործնախարարությունում: Այնտեղ ներկայացված էին «խնդիրներ, որոնց առնչությամբ պայմանագրում կարելի կլիներ փոփոխություններ մտցնել»[283]: Հայաստանին վերաբերող բաժնում կարդում ենք. «Հրաժարվել Վիլսոնի սահմաններից և փոխարինել հետևյալ հոդվածներով.

ա) Թուրքիան ճանաչում է Երևանի հայկական հանրապետության անկախությունը նախապատերազմյան ռուսական սահմաններում և

---

[280] Տե՛ս նույն տեղում, էջ 702:
[281] Տե՛ս նույն տեղում, էջ 703-704:
[282] Տե՛ս Պօղօսեան Ս., Պօղոս Նուպարը և հայկական հարցի զարգացումները 1912-1921 թթ., տե՛ս նույն տեղում, էջ 442:
[283] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 696:

հրաժարվում է Կարսի, Ալեքսանդրապոլի և Արդահանի շրջանների նկատմամբ բոլոր պահանջներից ի ճանաչումն այն բանի, որ Հայաստանը հրաժարվում է պահանջներից թուրքական վիլայեթների նկատմամբ:

բ) Թուրքիան ճանաչում է թուրքական տերիտորիայում հայերի ինքնավարության իրավունքը և պարտավորվում է Ազգերի լիգային զիջելու սուվերեն իրավունքները և իրավունք՝ Կիլիկիայում բավարար տերիտորիայի վրա ամփոփելու երկրում գտնվող թուրքահայերին՝ աջակցելու հայ փախստականների դրսից վերադարձին: Այս տերիտորիան, որը կառավարվելու է հայերի կողմից Լիգայի գերակայության ներքո, տարածվելու է մոտավորապես Մերսին-Տարսուս-Ադանա-Օսմանիե սահմանագլխից մինչև Հաճըն-Զեյթուն-սահմանագիծը, այն շրջանակներում, որը որոշվելու է Ազգերի Լիգայի նշանակված հանձնաժողովի կողմից և ներառելու է Թուրքիայի և Հայաստանի ներկայացուցիչներին:

գ) Թուրքիան պարտավորվում է դյուրացնել Թուրքիայի մյուս մասերից բոլոր հայերի տեղափոխումն այս տերիտորիան, ովքեր կցանկանան գնալ այնտեղ, ինչպես նաև օգնել բոլոր թուրքերին, ովքեր կկամենան հեռանալ այս տերիտորիայից և հաստատվել Թուրքիայի այլ վայրերում»[284]:

Այսպիսով, այս նախագծով, որը թեպետ կյանքի չկոչվեց, Անգլիան նախատեսում էր Թուրքիային պարտադրել 1914 թ. սահմանները, որոնց դիմաց Հայաստանը պետք է հրաժարվեր Սևրի պայմանագրով նախատեսված վիլայեթների պահանջից և փաստորեն նախատեսվում էր ստեղծել այն օջախը, որը հետո մերժվեց Լոզանի խորհրդաժողովում: Իսկ արևմտահայության քաղաքական պահանջները ներկայացնողները շարունակում էին Սևրի նախատեսած սահմաններով Արևմտյան Հայաստան՝ Դաշնակիցների օգնությամբ, վերջիններիս՝ այդ պայմանագրից փաստացի հրաժարվելու գործընթացի պայմաններում:

Դաշնակիցներին կաշկանդում էր Մոսկվայի խորհրդաժողովը, որն ավարտվեց հայտնի ռուս-թուրքական պայմանագրով, որով փաստորեն Ռուսաստանի համար չպահպանվեցին 1914 թ. սահմանները:

[284]Նույն տեղում:

Իսկ խորհրդա-թուրքական մերձեցումը, որը Քեմալին իրենց կողմը գրավելու ցանկություն էր առաջացնում Դաշնակիցների մեջ, անտեսվում էր հայ քաղաքական գործիչների կողմից: Մարտի 16-ի պայմանագրով Թուրքիային էին անցնում Կարսի նահանգը և Սուրմալուի գավառը, Նախիջևանը տրվում էր Ադրբեջանին, իսկ Բաթումը՝ Վրաստանին[285]: Ի վերջո, Մոսկվայի պայմանագրով էին պայմանավորված դաշնակիցների զիջումները Թուրքիային, որի ներկայացուցիչները պահանջում էին.

«1.Եվրոպական մասում 1913 թ. սեպտեմբերի 16-ի թուրք-բուլղարական պայմանագրով գծված սահմանի վերականգնում, այսինքն՝ Արևելյան Թրակիայի վերադարձը Թուրքիային:

2.Հարավում Կիլիկիայի և նրանից արևելք ընկած շրջանների (Ուրֆա և այլն) վերադարձը Թուրքիային:

3.Արևելքում Ալեքսանդրապոլի պայմանագրով գծված սահմանի պահպանում:

4.Արևմուտքում Իզմիրի մարզի վերադարձը Թուրքիային»[286]:

Այս բոլոր հարցերում էլ Թուրքիան հասավ հաջողության: Լոնդոնի խորհրդաժողովը չավարտվեց պայմանագրով, իսկ դա փաստորեն նշանակում էր հրաժարում Սևրի պայմանագրից, որով Թուրքիան ճանաչել էր Հայաստանի անկախությունը: Խորհրդաժողովն ընդունեց 10 կետից բաղկացած որոշում, որի 9-րդ կետը վերաբերում էր Հայաստանին: Այն ուներ հետևյալ բովանդակությունը. «9. Հայաստան. - Ինչ կը վերաբերի Հայաստանին, ներկայ պարտաւորութիւնները կրնան յարմարցուիլ, պայմանով որ Թուրքիան ճանչնայ Թուրքահայերու իրավունքները Ազգային Օճախի մը համար Ասիական Թուրքիոյ արեւելեան սահմաններու մէջ եւ համաձայնի ընդունիլ այն յանձնաժողովի որոշումը, որ կը նշանակուի Ազգերու Լիկայի Խորհուրդէն՝ նպատակ ունենալով տեղւոյն վրայ ուսումնասիրել այն հողամասերու խնդիրը, որոնք

[285]Այս պայմանագրի մասին տե՛ս Документи внешней политики СССР, т. 3, М., 1958, с. 597-604, Ասլանյան Ս., Մոսկվայի և Կարսի պայմանագրերի համեմատական վերլուծության փորձ, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 2005, թիվ 1, էջ 76, Սահակյան Տ., Ցավալի պայմանագրեր, Ե., 2007, էջ 187-200, Ղազարյան Հ., Մոսկվայի և Կարսի 1921 թվականի պայմանագրերն ու նրանց ողբերգական դերը հայ ժողովրդի ճակատագրում, Ե., 2010, էջ 267-335, Հակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Ե., 2010, էջ 145-316 և այլն:

[286]Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 775:

արդարացի պիտի ըլլար այդ նպատակի համար փոխանցել Հայաստանին»[287]:

Այսպիսով, Վիլսոնյան սահմաններն անցնում էին պատմության գիրկը, պետություն բառին փոխարինում էր «Ազգային օջախ» եզրույթը, այսինքն. «Լոնտոնի մէջ Հայերուն տրուելիք «Ազգային Տուն»ը կուգար քանդելու Սէվրի մէջ տրուած «միացեալ եւ անկախ Հայաստան»ի օդակառույց շէնքը»[288], այն էլ՝ ոչ հստակ սահմաններով, որը դարձյալ չընդունեցին թուրքերը:

Եղ. Չարենցի անվ. Արխիվում, Ա. Չոպանյանի ֆոնդում, պահպանված Ֆրանսիայի արտգործնախարարին և նախարարների խորհրդի նախագահին ուղղված 1922 թ. 15-ի գրության մեջ կարդում ենք, որ այդ օջախը պետք է պարտադիր կերպով ներառեր շատ թե քիչ ընդլայնված չափով Վանի, Բիթլիսի և Էրզրումի տարածքները՝ դեպի Սև ծովելքով[289]:

Սակայն, նման պահանջների իրականացման հիմքերն արդեն խախտվել էին:

Ճիշտ է նկատել Հ. Քաջազնունին. «Լոնդոնի կոնֆերանսում առաջին անգամ պաշտոնապես արտասանվեց ու արձանագրվեց Home բառը: Սեւրի դաշնագիրը մոռացվել էր հիմնովին: Այլեւս խոսքը անկախ հայ պետականության մասին չէր, ոչ իսկ ինքնավար նահանգների, այլ ինչ, որ ազգային Home-ի մի կասկածելի օջախի ուրիշի տան մեջ»[290]:

Այս ամենի պատճառը դաշնակիցների անմիաբանությունն էր: Լլոյդ Ջորջը գրում է. «Այդ ողբալի իրադարձությունների ընթացքում որոշ դաշնակից տերություններ բացահայտ դավաճանական դեր կատարեցին: Իտալացիները Մուստաֆա Քեմալին հույների դեմ կռվելու համար զենք էին վաճառում, գնումների դիմաց վճարվում էին Մոսկվայից տրվող փողերով: Ֆրանսիական կառավարությունը Անգլիայի թիկունքում Քեմալի հետ

---

[287] Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 341:

[288] «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1922, կիրակի-հունվար, թիվ 2774 նաև՝ Պողոսյան Ս., Փարիզի վեհաժողովի հայկական հուշագիրը և նրա հետագա ճակատագիրը, Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, Ե., 2002, թիվ 6, էջ 127:

[289] Տե՛ս Եղ. Չարենցի անվան ԳԱԹ-ի արխիվ, ֆ. Ա. Չոպանյան, գ. 2590, բաժ. 7-րդ, թ. 4:

[290] Քաջազնունի Հ., Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, Վիեննա, 1923, էջ 52:

բանակցություններ էր վարում գաղտնի պայմանագրի մասին»[291]: Իսկապես, Ֆրանսիայի արտգործնախարար Բրիանը գաղտնի բանակցությունների մեջ էր մտել քեմալականների հետ և դեռևս Լոնդոնի խորհրդաժողովի ավարտից առաջ, մարտի 9-ին, կնքել գաղտնի համաձայնագիր Բեքիր Սամի բեյի հետ, որով Ֆրանսիան կրճատում էր Սիրիայում իր ազդեցության շրջանակները հօգուտ Թուրքիայի, դրա փոխարեն ստանալով մի շարք արտոնություններ Կիլիկիայում, Դիարբեքիրում և Սեբաստիայում[292]:

Մարտի 12-ին Իտալիայի արտգործնախարարն էլ, իր հերթին առանձին համաձայնություն է ստորագրում Բեքիր Սամիի հետ, որով Իտալիան պարտավորվում էր վերջնական հաշտություն կնքելու ժամանակ պաշտպանել թուրքերի շահերը[293]: Անգլիան բոլորովին ուրիշ քայլ կատարեց: Նա մարտի 16-ին համաձայնագիր ստորագրեց Խորհրդային Ռուսաստանի հետ, որով վերջինս պարտավորվում էր հրաժարվել գաղութներում նրա դեմ քարոզչությունից, իսկ Անգլիան՝ չճանաչել այն նորանկախ երկրները, որոնք կազմավորվել էին նախկինում ցարական Ռուսաստանի մեջ մտնող տարածքներում:

Միանգամայն ճիշտ է նկատվել, որ թեև Լոնդոնի խորհրդաժողովը ձախողվեց, բայց «դրական նշանակություն ունեցավ քեմալականների համար, քանի որ Անտանտի տերությունները դե-ֆակտո ճանաչեցին Անկարայի կառավարությանը»[294]:

Արդ ներկայացնենք այն պատճառները, որոնք նպաստեցին դաշնակիցների պառակտմանը և քեմալականների հաղթանակին: Լիովին կարելի է ընդունել Ա. Խատիսյանի մատնանշած դրդապատճառները: Դրանք են՝ 1.Եվրոպայի ժողովուրդները հոգնել էին պատերազմից և ծարավ էին խաղաղության: 2.Ռուս-թուրքական զինակցությունը և նրանց դավադրական գործունեությունը եվրոպական երկրների ասիական և աֆրիկյան գաղութներում:

---

[291] Джордж Л.,Правда о мирных договорах, т. 2, М., 1957, с. 460.
[292] Տե՛ս Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 342-343, Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 436-437, նաև տե՛ս Salahi R.S., Turkich Diplomacy 1918-1923: Mustafa Kemal and the National Movement, London, 1975, p. 400-405, Саакян Р., Франко-турецкие отношения и Киликиа в 1918-1923 гг., Е., 1986, с. 205-206.
[293] Տե՛ս Խատիսեան Ա., նշվ. աշխ, էջ 343:
[294] Յասրաթյան Մ., Թուրքիայի պատմության ուրվագծեր, Ե., 1986, էջ 241:

3.Ներքին, քաղաքացիական կռիվների ավարտը Ռուսաստանում, որն ամրապնդում էր վերջինիս դիրքերը Կովկասում և Արևելքում` ավելի զգույշ գործելակերպի մղելով նրան կովկասյան հանրապետությունների նկատմամբ: 4.Հունաստանի պարտությունը Թուրքիայից, որով անտեսվում էր Սևրի պայմանագրի ուժը Իզմիրի վերաբերյալ[295]:

1921 թ. ամռանը, հույների` Քեմալից կրած պարտությունից հետո, Ֆրանսիան և Իտալիան հանդես եկան Սևրի պայմանագիրը վերանայելու օգտին: 1921 թ. հոկտեմբերի 21-ի պայմանագրով Ֆրանսիան ճանաչեց քեմալական Թուրքիան և իր զորքերը հետքաշեց Կիլիկիայից: 1922 թ. թուրքերը հույներից գրավեցին ամբողջ Անատոլիան, իսկ հոկտեմբերին Մուդանյա քաղաքում դաշնակիցների հետ կնքված զինադադարով թուրքերին անցավ Արևելյան Թրակիան, որով ավարտվեցին ռազմական գործողությունները: Փաստորեն, Քեմալը վերամիավորեց Թուրքիան, նոյեմբերի 1-ին վերացնելով նաև սուլթանական կառավարությունը[296]:

Վերջնական հաշտության համար շուտով նոր խորհրդաժողով հրավիրվեց Լոզանում: Մինչ արևմտահայ քաղաքական մտքի վերջին դեգերումների վերլուծությանն անցնելը, վերոշարադրյալը նկատի ունենալով` կարող ենք եզրակացնել.

1.Լոնդոնի խորհրդաժողովը գումարվեց աշխարհաքաղաքական այնպիսի գործընթացների պայմաններում, որ արդեն խիստ կասկածելի էր Սևրի պայմանագրի իրականացումը:

2.Բոլշևիկյան Ռուսաստանի օգնությամբ հզորացած քեմալական շարժումը հասնում էր հաջող ավարտի, իսկ դաշնակիցներն այլևս անկարող էին խոչընդոտել այն:

3.Դեռևս Լոնդոնի խորհրդաժողովից առաջ դաշնակիցները ցանկանում էին վերանայել Սևրի պայմանագիրը` փորձելով իրենց կողմը գրավել Քեմալին, սակայն վերջինիս ներկայացուցիչներն արդեն իրենց ուժեղ զգալով, չհամաձայնվեցին անգամ մազաչափ զիջում անել նրանց, այդ թվում` Արևմտյան Հայաստանի հարցում:

---

[295]Տե՛ս Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 338:
[296]Տե՛ս Ասիայի և Աֆրիկայի երկրների նորագույն պատմություն, մաս 1, 1917-1945, Ե., 1982, էջ 219:

4.Լոնդոնի խորհրդաժողովում արևմտահայ քաղաքական միտքը դարձյալ ձախողում կրեց, քանզի նրա ներկայացուցիչները, ինչպես նաև Ա. Ահարոնյանը, որն ստեղծված իրավիճակում պաշտպանում էր առավելապես արևմտահայերի շահերը, դարձյալ չխորանալով աշխարհաքաղաքական նոր գործընթացների մեջ, շարունակում էին պնդել Սևրի պայմանագրով Արևմտյան Հայաստանին նախատեսված տարածքներում հայկական պետություն ստեղծելու գաղափարը: Մինչ դաշնակիցները դեռևս Սան Ռեմոյի խորհրդաժողովում հասկացնում էին, որ չեն օգնելու Հայաստանին՝ չորս վիլայեթները գրավելու համար, այն դեպքում, երբ արդեն չկար ՀՀ-ն, իսկ այն խորհրդայնացրած Ռուսաստանը Թուրքիայի դաշնակիցն էր:

Հետագայում Լ. Ջորջը քննադատեց Սան Ռեմոյում «Պօղոսի կախարդական հեքիաթները» և Ահարոնյանի «կույր լավատեսությունը»:[297]

5.Լոնդոնի խորհրդաժողովը հայերի համար անպտուղ վերջացավ, և այն չավարտվեց պայմանագրով, սակայն նրա ընթացքում ձևավորվեցին ֆրանս-թուրքական, իտալո-թուրքական, անգլո-ռուսական համաձայնագրերը, որոնք Սևրի պայմանագիրը և Հայկական հարցը թեքեցին դեպի մայրամուտ:

6.Ազատ և Միացյալ Հայաստանի փոխարեն Լոնդոնում ծնվեց «Ազգային օջախ» եզրույթը, կարծես թե երևույթները փրկելու համար, առանց հստակ սահմանների, որը նույնպես չընդունվեց թուրքերի կողմից:

Ցավոք, այս ամենից հետո էլ արևմտահայ և արևելահայ քաղաքական գործիչները զուր հույսեր էին փայփայում այդ օջախը ստեղծելու համար, որոնք վերջնականապես ի դերև ելան Լոզանում:

## 3.2.**Լոզանի խորհրդաժողովը և արևմտահայ քաղաքական մտքի ձախողումը**

Լոնդոնի խորհրդաժողովից հետո արևմտահայության խնդրի շուրջ միավորված հայ քաղաքական ուժերը դարձյալ փորձեցին կյանքի կոչել «Ազգային օջախի» մասին սին գաղափարը, որն

[297]Պօղոսեան Ս., Պօղոս Նուպար և հայկական հարցի զարգացումները 1912-1921 թթ., տե՛ս նույն տեղում, էջ 438:

աստիճանաբար դուրս մղվեց օրակարգից: Ա. Խատիսյանը, որն արդեն հայկական պատվիրակությունների գործունեության ոչ միայն ականատեսն էր, այլև՝ մասնակիցը, ճիշտ է ներկայացրել այն հոգեբանական պահը, որն առաջացել էր դաշնակիցների մոտ: Ըստ նրա՝ ՀՀ պատվիրակության անդամները պահպանում էին Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանի գաղափարի անձեռնմխելիությունը, բայց գործնականում հանդիպում էին դժվարությունների: Իսկ այդ դժվարությունը հետևյալն էր նման Հայաստանի պահանջն ուրիշ բան չէր նշանակում, քան «Խորհրդային Միութեան մէկ անդամին սահմաններուն ընդարձակման պահանջքը»[298]:

Պատահական չէ, որ երբ նրանք դնում էին Միացյալ Հայաստանի պահանջը, հետևյալ հարցն էր տրվում. «Բայց դուք կուզեք, որ Խորհրդային Հայաստանը ընդարձակուի, այսինքն՝ նոր հողամասեր անցնին բոլշեւիկներու իշխանութեան տակ»[299]:

Բայց սա դեռևս հարցի մի կողմն էր: Իսկ իրենք պատկերացնու՞մ էին արդյոք, թե ո՞վ պետք է հայությանը տար Միացյալ Հայաստանը: Այս հարցի պատասխանի որոնման ճանապարհին արդեն պետք է պարզ լիներ, որ սայթաքումներն անխուսափելի էին: Մանավանդ ֆրանս-թուրքական համաձայնագրից և հույների խորտակումից հետո: Հայերն ունեին առաջարկների երեք տարբերակ. ա) դեմ լինելով բոլշևիկներին, կողմ էին Խորհրդային Հայաստանի սահմանների ընդարձակմանը, բ) եթե հայկական ինչ-որ հողամասեր տրվեին, պետք է նրանց համար ստեղծվեր նոր վարչաձև՝ Ազգերի Լիգայի հսկողության տակ, գ) այդ հողամասերը պետք է մնային թուրքական տարածքներ:

Բնականաբար այս վերջինն իրականացավ, որովհետև արդեն տարածքներ տրամադրելը դաշնակիցներից չէր կախված, այլ՝ ռուսներից և թուրքերից: Այս պարզ ճշմարտությունը կարծես թե ընկալելի չէր: Հակառակ դեպքում դժվար է պատկերացնել, թե ինչ շարժառիթներով են դիմումներ գրվել Լոզանի խորհրդաժողովի նախագահությանը: Դրանցից մեկում, որի տակ ստորագրել են Շ. վրդ. Գասպարյանը, դոկտ. Ծովիկյանը, դոկտ. Թաշճյանը, Ռ. Դարբինյանը և Ե. Մեսիայանը, կարդում ենք. «Մենք ներկայացուցիչներս 20 000

[298] Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 347:
[299] Նույն տեղում, էջ 347-348:

հայերու, որոնք թրքական վայրագութիւններու երեսէն՝ ապաստանած են Պոսթըն, Քէմպրիճ, Տորչէսթր, Ուօթըրթաուն, Չըլսի, Լին եւ շրջակաները, ձեզի կը դիմենք յանուն խաղաղութեան ու արդարութեան, որպէսզի՝ մեզի եւ մեր ութ հարիւր հազար տարագիր դժբախտ ազգակիցներուն համար, յատակացնէք՝ մեր պատմական հայրենիքին մէջ անկիւն մը՝ ազատ թրքական անտանելի բռնապետութենէն, ուր կարենանք վերադառնալ, եւ սկսիլ վերաշինութեան եւ անարգել առաջադիմութեան մեր գործը»[300]:

1922 թ. Լոզանում գումարված խորհրդաժողովում արդեն հայեր չէին հրավիրված: Այդ խորհրդաժողովը շարունակեց գնալ զիջումների՝ հօգուտ թուրքերի: Նրանց վերադարձվելու էր Կ. Պոլիսը, արևելյան Թրակիայի մի մասը, Միջերկրական և Սև ծովերի միջև գտնվող բոլոր տարածքները՝ մինչև Անդրկովկասի, Պարսկաստանի և Միջագետքի սահմանները: Իսկ Լոնդոնում հայերին խոստացված «Ազգային օջախ» պետք է ստեղծվեր Թուրքիայի արևելյան սահմանների մեջ, կոնկրետորտեղ, հայտնի չէր[301]:

Հայաստանին վերաբերվող որոշման մեջ մասնավորապես կարդում ենք. «Հայերի պահանջները պարփակվում են ընդհանուր ձգտման մեջ՝ պահպանել իրենց համար մի ազգային օջախ Փոքր Ասիայի կամ այն շրջանում, որտեղ նրանք ցարդ հաստատված են նշանակալից թվով: Ընտրությունն այդ շրջանի, ուր այդ օջախը կարելի կլինի առավել լավ ապահովել, կախված է քաղաքական, տնտեսական և սոցիալական այն պայմաններից, որոնք ներկա պահին հնարավոր չէ ճշգրիտ որոշել: Այնուհանդերձ, տերությունները մասնավորապես Ազգերի լիգային կառաջարկեն, հաշտության կնքելուց անմիջապես հետո, բանակցությունների մեջ մտնել օսմանյան կառավարության հետ հայերի համար նման մի ազգային օջախ ստեղծելու հարցի շուրջ և կջանան սահմանել այն պայմանները, որոնցում կարելի է իրականացնել նրա գոյության համար անհրաժեշտ երաշխիքները»[302] (Ընդծումը մերն է՝ Հ. Ս.):

---

300 ՀԱԱ, Ֆ. 430, ց. 1, գ. 1357, թ. 2:
301 Տե՛ս Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 350:
302 Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 732-733:

Ընդգծվածից պարզ է, որ դեռևս չճշտված շրջանում ազգային օջախ ստեղծելու խնդիրը մնում էր հաշտությունից հետո, որը նշանակում է, որ հաջողությունը խիստ կասկածելի էր:

Իսկ Ազգերի Լիգայի հրավերն ուներ հետևյալ բովանդակությունը՝ «Ասամբլեան հրավիրում է Խորհրդին, իսկույն ևեթ (դաշնակիցների) Գերագույն խորհրդին հարկադրել ընդունելու պայմանագրում այնպիսի պայմաններ դնելու անհրաժեշտությունը, որոնք կապահովեին Հայաստանի ապագան և, ապա, հայերի համար ապահովել ազգային օջախ՝ ամբողջովին անկախ թուրքական կառավարումից»[303]:

Այսպիսով, ստացվում է, որ Ազգերի Լիգան պետք է հարկադրեր Թուրքիային ստեղծելու ազգային օջախ՝ նրա կառավարումից դուրս: Բայց արդյո՞ք դա հնարավոր էր: Քաղաքական թոհուբոհով անցած հայ քաղաքական ղեկավարներն արդեն պետք է հասկանային, որ՝ ոչ: Նույն Ազգերի Լիգան իր սեպտեմբերի 22-ի նիստի մեջ ընդունված բանաձևում արդեն շրջանցում էր «անկախ թուրքական կառավարումից» ձևակերպումը և արձանագրում, որ «Թուրքիոյ հետ խաղաղութեան բանակցութիւններու միջոցին անուշադիր չթողնուի նաեւ Հայերուն համար Ազգային Օճախ մը հաստատելու անհրաժեշտությունը»[304]:

Իսկ Լոզանի խորհրդաժողովում (1922 թ. նոյեմբեր 20-ից - 1923 թ. հուլիս 24-ը) առհասարակ դուրս մղվեց օջախի գաղափարը ևս, քանի որ թուրքական պատվիրակությունը կատեգորիկ մերժեց բոլոր տեսակի պահանջները, որոնք վերաբերում էին հայերին[305]:

Ճիշտ է ասված, որ «Լոզանի Դաշնագիրը կը փոխարինէ կամ յավելում մը կը բերէ Սևրի Դաշնագրին վրայ, որովհետև ստորագիր կողմերը նույնը չէին»[306]: Այդ մասին ավելի մանրամասն է խոսում Արա Պապյանը, ասելով, որ. «Իրավական տեսանկյունից Սևրի և Լոզանի պայմանագրերը երկու տարբեր փաստաթղթեր են՝ տարբեր ոչ միայն մասնակիցների շրջանակով ու հարցերի ընդգրկումով, այլև,

[303] Նույն տեղում, էջ 734:
[304] Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 353:
[305] Տե՛ս Армянскии вопрос на Лозаннскои конференции, Извлечения из протоколов, перевод М. Т., с предисловием П. Макинциана, Тифлис, 1926, с. 25:
[306] Ասլանյան Ս., Մոսկվայի և Կարսի պայմանագրերի համեմատական վերլուծության փորձ, տե՛ս նույն տեղում, էջ 182:

ամենակարևորը՝ էությամբ ու նպատակներով: Սևրի պայմանագիրը վերաբերում է Առաջին աշխարհամարտին, իսկ Լոզանի պայմանագիրը՝ 1919-1922 թթ. տեղի ունեցած պատերազմական գործողություններին»[307]:

Մինչև հայ քաղաքական մտքի՝ Լոզանում ունեցած դրսևորումներին անդրադառնալը, նշենք, որ արդեն երկու պատվիրակությունները դարձյալ հանդես էին գալիս միացյալ, որը նշանակում է, որ արևմտահայ և արևելահայ քաղաքական միտքը դարձյալ միաձուլված էր: ՀՀ պատվիրակության կողմից Միացյալ պատվիրակությունը ներկայացնում էին Ա. Ահարոնյանը և Ա. Խատիսյանը, Իսկ Ազգային պատվիրակությունը՝ Գ. Նորատունկյանը և Լ. Բաշալյանը: Պատվիրակության նիստերին մասնակցում էին նաև Արմեն Գարոն, Ա. Մանդելշտամը և ուրիշներ:

1922 թ. հունիսի 23-ին թվագրված նամակներից մեկում Գ. Նորատունկյանը գրում է Լևոն Բաշալյանին. «.... Ձեր ազգասիրական զգացմանց եւ վստահ թէ բարեյօժարութեամբ պիտի գործակցիք ազգային խնդրոյն հարկադրած աշխատութեանց, անդամ ընտրեց Ձեր Ազնուութիւնը իր Խորհրդականաց Յանձնաժողովին որուն պաշտօնն է, ինչպէս գիտէք, զբաղիլ հայկական դատին փրօփականտի վերաբերեալ գործերով եւ պատուիրակութեան կողմէ առ ի քննութիւն իրեն յղուած խնդիրները խորհրդակցութեան նիւթ ընելով արդիւնքը հաղորդել մասնաւոր տեղեկագրով ....»[308]:

Հայկական միացյալ պատվիրակությունը գործում էր երկու ուղղություններով՝

ա) Միջազգային հայասեր և մարդասեր անձանց տրամադրել հօգուտ Հայկական հարցի լուծման, որոնք իրենց դիմումնագրերով պետք է նպաստեին խորհրդաժողովում այդ հարցի քննարկմանը, բ) կոնֆերանսին ներկայացնել իրենց պահանջները, որոնք բնականաբար նահանջ էին կատարել Սևրի պայմանագրից:

Փաստորեն նրանք գործում էին այն նոր հնարավորությունների սահմաններում, որոնք ներկայացրել էին դաշնակիցները: Պատվիրակությանը չթույլատրվեց մասնակցել կոնֆերանսին, քանի որ այն չէր ներկայացնում խորհրդային

[307]Պապյան Ա., Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները, Ե., 2007, էջ 32:
[308]Եղ. Չարենցի անվան ԳԱԹ-ի արխիվ, ֆ. Լ. Բաշալյան, գ. 119, թ. 1:

Հայաստանը: Ուստի և այն Խորհրդաժողովին է ներկայացնում մի հուշագիր, որով առաջարկում էր.

ա) Ազգային օջախի ստեղծում այն տարածքների վրա, որոնք սահմանագծել էր Վիլսոնը:

բ) Խորհրդային Հայաստանի տարածքների ընդլայնում Արևմտյան Հայաստանի նրան մասերի կցումով, այնպես, որ ապահովվի ելք դեպի ծով:

գ) Այս երկուսի չիրականացման դեպքում՝ Ազգային օջախի ստեղծում Կիլիկիայում կամ Փոքր Հայքում[309]:

Ակնհայտ է, որ հայ քաղաքական միտքը դարձյալ չէր թոթափել իր ռոմանտիզմը: Ներկայացնելով այս պահանջները՝ հաշվի չէր առնվում, որ Լոզանից առաջ դաշնակիցներն արդեն հրաժարվել էին Վիլսոնյան սահմաններից, իսկ Խորհրդային Հայաստանի սահմանների ընդարձակում Թուրքիայի հաշվին այլևս անհնար էր, քանզի կնքվել էր 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագիրը, որը նույնությամբ հաստատվել էր հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրով և վերջապես այն, որ եթե դաշնակիցները լքել էին Կիլիկիան, ապա ինչու՞ պետք է Թուրքիան համաձայնվեր այնտեղ հայկական օջախ ստեղծելու գաղափարին:

Հակառակ այս ամենին Ազգային տուն ստեղծելու դիմումագրերը հայոց կողմից շարունակվում էին ուղղվել դեպի ԱՄՆ-ի սենատ և Լոզանի խորհրդաժողով: Այսպես, Նյու-Յորքի 10000 հայության անունից «Ծերակուտականներուն եւ յանձնախումբերուն» ուղղված մի գրության մեջ կարդում ենք. «Կը խնդրենք որ բարեհաճիք ձեր բարեացակամ ազդեցութիւնը ի գործ դնել ու որ պէտք է, Հայոց համար Ազգային Տուն մը ձեռք բերելու համար: Հայկական խնդրոյն միակ լուծումը պիտի ըլլայ, իրենց պատմական երկիրներուն մէջ հայոց ազատագրութեան համար դաշնակիցներու տուած խոստումներուն գործադրութիւնը»[310]:

Հայկական պատվիրակությունը հրավիրվում է մասնակցելու 1922 թ. դեկտեմբերի 22-ին կայացած ենթահանձնաժողովի նիստին: Այստեղ Ա. Ահարոնյանը «գծեց քարտէսի վրայ սահմանագիծ մը, որ անցնելով Ռիզէէն ու Հասան Կալայէն՝ դուրս թողելով Էրզրումը,

[309] Տե՛ս Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 373-374:
[310] ՀԱԱ, ֆ.430, ց.1, գ.1357, թ.12:

կը հասնէր մինչեւ Մուշ եւ Մէջը առնելով Վանայ ծովը՝ կը միանար Պարսկաստանի սահմաններուն»[311]:

Իսկ Գ. Նորատունկյանի պատկերացմամբ՝ «Օճախը կը գծուի Ճիհունի, Սուրիոյ սահմաններու եւ Եփրատի միջեւ ու կերկարի դէպի հիւսիս՝ առնելով իր մէջ Սիսը և Մարաշը»[312]:

Ինչպես համոզվում ենք, նրանց համար վերջնականապես ճշտված չէր, թե ինչ սահմաններ էր ընդգրկելու Հայկական օջախը: Ճշմարտությունը պահանջում է նշել, որ դա պարզ չէր նաև դաշնակիցների համար, որոնք Թուրքիայի առջև խեղճացածի կարգավիճակում էին հայտնվել: Հայկական հարցին անդրադառնալը նրանց համար արդեն կրում էր սոսկ մարդասիրական բնույթ, որը չէին հասկանում հայ քաղաքական գործիչները, կամ եթե հասկանում էլ էին, չէին պատկերացնում որ մարդասիրական կոչերը խեղդվում են քաղաքական սառը հաշվարկների մեջ: Այսպես, 1923 թ. հունվարի 6-ի նիստում, որը վերջնականապես պետք է բանաձև ընդուներ հայկական օջախի մասին, իտալացի դիվանագետ Մոնտանան «ճառով մը դիմեց Թուրքերուն՝ խնդրելով յատկացնել «վայր» մը Հայերը կեդրոնացնելու համար», որի սահմանները և վարչաձևը պետք է ընտրեր Ազգերի Լիգան (նույն իմաստով խոսեցին անգլիացի Ռումբոլդը և ֆրանսիացի Լա Քրուան): Իզզեթ փաշայից հետո Թուրքիայի երկրորդ պատվիրակ Ռիզա Նուր բեյը հայտարարում է, որ ինքը չի մասնակցի այնպիսի նիստին, ուր քննարկվելու է Հայկական հարցը, քանի որ հենց իրենք են կորստյան մատնել հայերին՝ գրգռելով թուրքերի դեմ և դուռն ուժգին խփելով՝ իր խորհրդականների հետ հեռանում է[313]:

Դրանից հետո, 1923 թ. հունվարի 9-ին տեղի ունեցած ռազմատարածքային հանձնաժողովի նիստում Քերզոնը հայտնում է, թե հայերի հարցը դրված չէ քաղաքական հողի վրա, և ինքը հույս ունի, «որ թուրքական պատվիրակությունը կհավատա իրեն, եթե բոլոր պատվիրակությունների հավանությամբ ինքը հայտարարի, որ այդ հարցում Տերությունները չեն հետապնդում քաղաքական որևէ

[311]Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 382:
[312]Նույն տեղում, էջ 385:
[313]Տե՛ս նույն տեղում, էջ 401:

նպատակ: Ինչպես ասաց պ-րն Բարրերը, իրենց նպատակն ունի զուտ մարդասիրական բնույթ»[314]:

Քերզոնն այնուհետև հայտնում է, որ օջախ ստեղծելով՝ իրենք ամենևին նպատակ չունեն խախտելու Թուրքիայի սուվերենությունը և այդ պետության մեջ ստեղծելու «ինքնավար տարածք»: Այնուամենայնիվ, Իսմեթ փաշան մերժում է հայերի հետ կապված ցանկացած առաջարկ: Հուլիսի 24-ին ստորագրված Լոզանի պայմանագրի մեջ հայ անունն անգամ չկա: Այնտեղ խոսք է գնում միայն ոչ մահմեդական փոքրամասնությունների իրավունքների մասին, որոնք իբրև թե հավասարվում էին մահմեդականների իրավունքներին[315]:

Ինչպես իրավացիորեն նկատել է Ագապի Նասիպյանը. «Սեւրէն Լօզան՝ պատրանքներու, քաղաքական անկայունութեան եւ ուժի ցուցադրութեան բուռն պայքարի այդ եւ յեղյեղուկ ժամանակաշրջանին, կը թուի թէ ո՛չ Հայաստանը, ո՛չ Բրիտանիան եւ Դաշնակիցները, ո՛չ իսկ Ռուսիան կրցեր էին իրենց ըղձանքները եւ նպատակակէտերը պատշաճեցնել իրենց միջոցներուն կարելիութեանց»[316]:

ՀՀ պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանն այսպես է արտահայտվել Լոզանի կոնֆերանսի ձախողման մասին. «Ձախողանքը հայ ժողովրդի զանազան խաւերում առաջ է բերել եթէ ոչ յուսաբեկութիւն, գէթ մի ծանր շուարում: Անօգուտ է փորձել այդ անյաջողութեան ասենք, եթէ ոչ աղէտի բոլոր ծանրակշիռ արժէքը մեղմել: Եւ վաղաժամ է այդ ձախողանքի հետեւանքով այնպիսի վերագնահատումների անձնատուր լինել, որոնք ժխտէին մեր վերջին կէս դարու ազգային եւ քաղաքական գործունէութիւնը.... Իմաստուն չէ փորձութեան ժամին հրաժարուել կամ յախուռն քննադատութեան ենթարկել ազգային իդէալն ու քաղաքականութիւնը ....»[317]:

---

[314] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 756:
[315] Տե՛ս Լազեան Գ., նշվ. աշխ., էջ 304-305:
[316] Նասիպեան Ա., Բրիտանիա եւ հայկական հարցը 1915-1923, Պէյրութ, 1994, էջ 249-250:
[317] «Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1923, շաբաթ, մայիս 19, թիւ 3360:

Այսպիսով, Հայկական հարցը դուրս մղվեց օրակարգից: Մի վերջին անգամ այն շոշափվեց հուլիսի 17-ի նիստում՝ վերածվելով հայ գաղթականության հարցի[318]:

Իսկ ինչի՞ համար Անգլիան այդքան զիջող էր դարձել Թուրքիայի նկատմամբ: Վերոնշյալների հետ հիմնական պատճառ էր նաև այն, որ նա կարողացավ Լոզանում հասնել նեղուցների խնդրում իր տարբերակի ընդունմանը: Համաձայն դրա՝ ցանկացած դրոշակի ներքո նավերի անցում էր պահանջվում նեղուցներով ոչ միայն խաղաղ, այլև՝ պատերազմի ժամանակ, եթե պատերազմում Թուրքիան չեզոքություն էր պահպանում: Պատերազմում Թուրքիայի մասնակցության դեպքում նեղուցներով օգտվելու էին միայն չեզոք երկրների ռազմանավերը: Նեղուցները ենթակա էին ապառազմականացման և նրանց նկատմամբ պետք է սահմանվեր ինչպես սևծովյան, այնպես էլ մի քանի երկրների միջազգային հանձնաժողովի հսկողության: Սրանով Անգլիան հնարավորություն էր ստանում իր ռազմածովային ներկայությունն ապահովել սևծովյան ափերում, այսինքն ԽՍՀՄ նկատմամբ[319]:

Լոզանի խորհրդաժողովում Թուրքիայի հետ կնքված պայմանագրով փաստորեն չեղյալ հայտարարվեց Սևրի պայմանագիրը և այն դարձավ սուվերեն պետություն՝ միջազգայնորեն ճանաչված սահմաններով[320]:

Միանգամայն ճիշտ է Ռ. Դարբինյանը, գրելով, որ Լոզանի կոնֆերանսը «Մեծ խաչ մը դրաւ ոչ թէ հայկական դատին վրայ, այլ այն միամիտ ու ցնորամիտ ազգային մուրացկան քաղաքականութեան վրայ, որուն սկիզբ դրուեցաւ Պերլինի վեհաժողովի ատենեւ որ իր այնքան տխուր ու, յուսով ենք, վերջնական վախճանին յանգեցաւ Լօզանի մէջ»[321]:

Այդ մասին անդրադարձ է կատարել նաև Ս. Պողոսյանը՝ նշելով, որ Լոզանի կոնֆերանսով փակվեցին հայկական ազգային օջախի

---

[318]Տե՛ս Հայկական Հարց, հանրագիտարան, Ե., 1996, էջ 162: Լոզանի Կոնֆերանսի մասին նաև տե՛ս Армянский вопрос на Лозанской конференции, с. 3-36, Mandelstam A. N. , La Socie'le' des Nations et les Puissansces devant le problem arme'nien, 2 e'me e'd., Beyrut, 1970, p. 277-280.

[319]Տե՛ս Նորագույն պատմություն 1918-1939 թթ., Ե., 1983, էջ 105-106:

[320]Տե՛ս «Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1923, մարտի 8, թիվ 3299:

[321]Դարբինեան Ռ., Հայ քաղաքական մտքի դեգերումները, «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1923, ապրիլ, թիվ 6, էջ 3:

ստեղծման քննարկումները, իսկ արևմտահայ գաղթականները ստիպված էին մեծ դժվարությունների դիմագրավել և ապաստան փնտրել օտար երկրներում[322]: Շարունակելով իր միտքը նա նշում է, որ ձախողվեց նաև Կիլիկիայում հայկական ազգային օջախ ստեղծելու և հայ գաղթականությանը այնտեղ համախմբելու բրիտանական նախագիծը: Ի վերջո, ֆրանսիացիները Անկարայի և Լոզանի պայմանագրերով թուրքերին զիջեցին նաև մյուս հայկական տարածքները՝ մոտ 150.000 հայ՝ բնակչությանը կանգնեցնելով գաղթելու պարտադրանքի առաջ[323]:

Հայ խաբված քաղաքական գործիչները թեև շարունակեցին միաժամանակ էլ ծեծել տերությունների դռները, բայց նրանց համար Հայկական հարցը, որպես այդպիսին, այլևս չկար:

Ամփոփելով նշենք հետևյալը.

1.Լոզանի խորհրդաժողովում հայ քաղաքական միտքը առաջնորդվում էր «Ազգային օջախի» գաղափարը կյանքի կոչելու ուղղությամբ, որը ներմուծված էր հենց դաշնակիցների կողմից:

2.Այդ գաղափարը հնարավոր չէր իրականացնել, քանզի դաշնակիցները սիրախաղ էին սկսել Թուրքիայի հետ և ամենևին նպատակ չունեին հայերի համար պայքարի մեջ մտնել թուրքերի դեմ:

3.Լոզանի պայմանագրով չեղյալ հայտարարվեց Սևրի պայմանագիրը, որն հայության համար այդպես էլ իրական չդարձավ, բայց որի համար մեծ տերություններին դատապարտելուց ավելի շատ անհրաժեշտ է պատճառներ տեսնել արևմտահայ և առհասարակ հայ քաղաքական մտքի ուղղվածությունների մեջ, որոնք սխալ նպատակակետ էին ընտրել և չէին բխում այն ռեալ իրավիճակից, որում գտնվում էր Հայաստանը 1918 թ. հետո:

---

[322] Տե՛ս Պողոսյան Ս., Կիլիկիայում հայկական Ազգային օջախ ստեղծելու հարցը, ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված «Ազգ, պետություն, հայրենիք. պետականության գաղափարը» երիտասարդ գիտնականների միջազգային գիտաժողովի (2011 թ. նոյեմբերի 6-8, Ծաղկաձոր) հոդվածների ժողովածու, Ե., 2012, էջ 125:

[323] Տե՛ս Պողոսյան Ս., Կիլիկիայի հարցը Սևրի և Լոզանի պայմանագրերում, «Վէմ», Ե., 2012, թիվ 3 (39), էջ 164:

## ԵԶՐԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ավարտելով 1912-1923 թթ. հայոց համար ճակատագրական ժամանակահատվածի՝ արևմտահայ քաղաքական մտքին վերաբերվող մեր ատենախոսությունը, փորձենք նրա զարգացման փուլերի մասին մատուցել հետևյալ եզրակացությունները:

**1.**1912 թ. Բալկանյան պատերազմի սկզբնավորումով ցարական Ռուսաստանը ելնելով իր քաղաքական շահերից, կյանքի է կոչում Հայկական հարցը: Արևմտահայ քաղաքական և հոգևոր ղեկավարները ցարիզմի ներշնչմամբ տարվում են բարենորոգումների նոր ծրագրերով՝ վերստին որդեգրելով հակաթուրքական կեցվածք, որը հանել էին իրենց քաղաքական օրակարգից 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո:

**2.**Արևելահայ և արևմտահայ քաղաքական միտքը 1912-1914 թթ. գրեթե միաձուլված էր և զարգանում էր այն տրամաբանությամբ, որ միայն մեծ տերությունները և մասնավորապես Ռուսաստանը կարող են լուծել Հայկական հարցը: Այս առումով միավորված էին քաղաքական կուսակցությունները, հասարակական-քաղաքական կազմակերպությունները, Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Կ. Պոլսի Պատրիարքը: Եվրոպայում Հայկական հարցը ներկայացնում էր կաթողիկոսական կոնդակով ստեղծված Ազգային Պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան, որն այնուհետև մինչև Լոնդոնի խորհրդաժողովը ներառյալ իրեն դրսևորում էր որպես արևմտահայերի քաղաքական շահերի գլխավոր ներկայացուցիչներից մեկը:

**3.**Օսմանյան կայսրությանը ներկայացված մեծ տերությունների Հայկական հարցին առնչվող բարենորոգման նախագծերի հիման վրա, 1914 հունվարի 26-ին կնքվում է համաձայնագիր, որի իրականացման համար միաժամանակ շահագրգռված էին և՛ արևմտահայ և՛ արևելահայ քաղաքական առաջնորդները: Այդ նախագիծը, որի իրականացման վերաբերյալ նրանք հույսեր էին փայփայում, օրակարգից դուրս է գալիս Առաջին աշխարհամարտի սկզբնավորումով: Սա նշանակում է, որ արևմտահայ քաղաքական միտքը դարձյալ ձախողում է կրում: Եվ հիմնականում

արևելահայերի ու հայոց կաթողիկոսի ներշնչման արդյունքում արևմտահայ քաղաքական գործիչների ռուսական ճնշմամբ Թուրքիայում ապակենտրոնացման հասնելու գաղափարը չի իրականանում: Կարծում ենք, որ հայ քաղաքական միտքն այդպես էլ չկարողացավ այն աստիճանի հասունություն դրսևորել՝ հասկանալու համար այն պարզ ճշմարտությունը, որ երկու ռազմաքաղաքական առանցքների միջև պատերազմն օրերի խնդիր է, ինչին նրանք արդեն հասնում էին լոկալ պատերազմների հրահրումով և փոքր ժողովուրդների ազգային զգացմունքները չարաշահելով:

**4.**Երիտթուրքական իշխանությունը՝ հանձին «Միություն և առաջադիմություն» կուսակցության, բանակցություններ էր վարում արևմտահայ քաղաքական գործիչների հետ այն ձգտումներով, որ արևմտահայ քաղաքական միտքը ուղղորդի այնպես, որ հրաժարվի դաշնակիցների նախագծերից, իր արևմտյան կամ ռուսական կողմնորոշումներից, այն պատճառաբանության ներկայացմամբ, թե նրանք շահարկում են արևմտահայության խնդիրը և արդյունքում արևմտահայերը կրկին կխաբվեն: Սակայն արևմտահայ առաջնորդները մերժում են նրանց ծրագրերը, որի համար հիմքեր տվել էր հայ–թուրքական համագործակցության ջանքերի ձախողումը 1908 թ. սահմանադրությունից հետո: Սակայն այդ մերժումը չպետք է նախատեսեր այլ ծրագրերի ընդունում, քանզի հստակ կերպով երիտթուրքերը հասկացնում էին, որ դա կարող է ծանր հետևանքներ ունենալ արևմտահայության համար: Մեծ տերությունների քաղաքականության մեջ խորանալը պետք է արևմտահայ քաղաքական միտքն ուղղորդեր դեպի չեզոքության ճանապարհը:

**5.**Առաջին աշխարհամարտի սկզբնավորումով ձախողվում է Արևմտյան Հայաստանի բարենորոգումների ռուսական ծրագիրը, որից հետո ցարական իշխանությունները դարձյալ շարունակում են հայությանը ներշնչել դեպի իրենց կողմնորոշվելու գաղափարի ճշտությունը: Այս անգամ արդեն հայությունը ոգևորվում է կամավորական շարժմամբ, որը նախատեսում էր կամավորական գումարտակներով, որոնք պետք է ստեղծվեին ռուսական

բանակներին կից՝ կռվելու թուրքերի դեմ: Կամավորական շարժման վերաբերյալ հայ քաղաքական միտքը չի ունեցել մեկ ընդհանուր ուղղվածություն և չի եղել արևմտահայ առանձին քաղաքական հոսանք կամ կազմակերպություն, որը կամավորական շարժման նկատմամբ իր վերաբերմունքով եղել է միատարր: Սկզբնական շրջանում կարծես թե ընդհանրության է հասել այն գաղափարը, որ չպետք է գնալ այդ շարժմանը, այլ՝ պահպանել չեզոքություն, բայց դա եղել է տեսականորեն, իսկ գործնականում նաև ցարական իշխանությունների քաղաքականությամբ պայմանավորված, մեծ է եղել հակվածությունը դեպի այդ շարժումը՝ Արևմտյան Հայաստանի շուտափույթ գրավման թյուր հույսերով պայմանավորված: Կամավորական շարժմամբ Արևմտյան Հայաստանի արագ գրավմանը նպաստելու արևմտահայ, ինչպես նաև արևելահայ քաղաքական մտքի համոզվածությունն իրեն չի արդարացրել: Այն գրավվել է այն ժամանակ, երբ գրեթե ամբողջությամբ ոչնչացված և տարագրված էր արևմտահայ տարրը և գլխատված էին նրա քաղաքական ղեկավարները:

**6.**Պատերազմի առաջին ամիսներից պարզ դարձավ, որ ռուսական զորքերը չեն շտապում, որը նշանակում էր, որ հայ քաղաքական մտքի այն հիմքի վրա կառուցումը, որ ռուսական զորքերը շատ արագ կգրավեն Արևմտյան Հայաստանը, իրեն չարդարացրեց: Արևմտահայ և առհասարակ հայ քաղաքական մտքի ներկայացուցիչները զգում էին իրենց սխալը Ռուսաստանից ունեցած ակնկալիքների առումով, և այդ զգացումն ավելի ուժեղացավ Սարիղամիշի ճակատամարտից հետո, որով ձախողվեց Կովկասը գրավելու թուրքական պլանը: Դրանից հետո սկսվեց հայոց ցեղասպանության իրագործումը, որին ոչ մի կերպ չխոչընդոտեց ռուսական բանակը:

Ռուսական զորքերին կից կամավորական գումարտակների ստեղծումը սխալ մարտավարություն էր, որը հիմնականում չծառայեց իր նպատակին: Այն միայն նոր առիթ հանդիսացավ թուրքական ջարդարարական ծրագրերի նախապատրաստման և իրականացման համար՝ չնայած արևմտահայ քաղաքական միտքը երբեք չէր դրել Թուրքիայից անջատվելու խնդիր: Պատմական ճշմարտությունն այն է, որ արևմտահայ քաղաքական ընտրանին ամբողջությամբ թեքված էր դեպի Ռուսաստանը՝ միաժամանակ

չդնելով Օսմանյան կայսրությունից անջատվելու հարց: Բայց, պատերազմի սկսումով արդեն հիշյալ ընտրանին ոչնչացվեց այն պատճառաբանությամբ, թե դրել է անջատողականության հարց: Խնդրին այսպիսի մոտեցումը թուրքերի համար իրականում առիթ էր արևմտահայ տարրին ոչնչացնելու, դրանով իր հերթին վերացնելով հայության վիճակի բարելավման առիթով մեծ տերությունների՝ Թուրքիան բաժանելու ակնկալիքները:

**7.**Արևմտահայ քաղաքական միտքը ճիշտ չկողմնորոշվեց նաև Անգլիայի և Ֆրանսիայի նկատմամբ վերաբերմունքի առումով: Նրա մատնանշած ուղին արևմտահայ ազգաբնակչության համար աղետաբեր եղավ: Այդ մտքի կրողները խաբվեցին դաշնակիցներով, որոնց հակասություններից օգտվելով՝ Օսմանյան Թուրքիայում իրականացվեց հայոց ցեղասպանությունը: Հայկական լեգեոնի ստեղծման գաղափարն իրականություն դարձնելով, Պողոս Նուբար փաշան և մյուսներն, ի վերջո, չհասան իրենց ցանկացածին, ինչպես որ դրան չհասան ռուսական բանակին կից կամավորական ջոկատներով արևմտահայությանը փրկելու մարտավարության կողմնակիցները: Հայկական լեգեոնը փայլուն մասնակցություն դրսևորեց Պաղեստինի, Լիբանանի, Կիլիկիայի ազատագրման մարտերին, բայց արդյունքում նրանց զենքի հաջողություններից միայն օգտվեցին դաշնակիցները:

**8.**Արևմտյան Հայաստանի հիմնական մասի՝ Ռուսաստանի կողմից 1916 թ. գրավվելուց հետո արևմտահայ և արևելահայ քաղաքական միտքը գործում էր միաձույլ՝ այն հայացնելու և Մեծ եղեռնից մազապուրծ բեկորներին փրկելու առումով: Այդ գործունեությունը շարունակվում է մինչև 1917 թ. ռուսական Փետրվարյան հեղափոխությունը, որը ձախողեց ցարական իշխանությունների մարտ ամսին ծրագրած հարձակումը, որի նպատակն էր Երզնկայից առաջանալ Խարբերդ-Սեբաստիա, Խնուսից իջնել Տիգրանակերտ, իսկ Պարսկաստանի և Վանի գծից մտնել Մուսուլ և այդ կողմից միանալ անգլիական բանակին: Փետրվարյան հեղափոխությունը հայության համար բերեց մտավախություն, որ կարող է քայքայվել ռուսական ռազմաճակատային գիծը և իսպառ վերանալ հայության երազանքը՝ կապված Արևմտյան Հայաստանի

վերաշինության հետ: Հեղափոխությունից հետո Անդրկովկասի համար կազմվեց հատուկ իշխանություն՝ Օզակոմ՝ Անդրկովկասի Հատուկ Կոմիտե անունով, իսկ Արևմտյան Հայաստանի համար ստեղծվեց առանձին կարգավիճակ ժամանակավոր կառավարության 1917 թ. ապրիլի 26-ի կարգադրությամբ, որով այն առանձնացվում էր կովկասյան քաղաքացիական և զինվորական իշխանությունների տնօրինությունից և անմիջապես ենթարկվում էր ժամանակավոր կառավարությանը: Նրա կառավարման համար ստեղծվում էր Թուրքահայաստանի ընդհանուր կոմիսարի պաշտոն: Այն բաժանվում էր չորս նահանգների՝ Էրզրումի, Վասպուրականի, Տրապիզոնի և Խնուսի: Փետրվարյան հեղափոխությունից մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը արևմտահայ և արևելահայ գործիչները Արևմտյան Հայաստանի նկատմամբ որդեգրած ծրագրերում միակամ էին: Այդ ծրագրերն ունեին հետևյալ ուղղվածությունները. հաղթող դուրս գալ միջցեղային կռիվներում, հայացնել Արևմտյան Հայաստանը և ստեղծել զինված կազմավորումներ՝ ռուսական զորքերի հնարավոր նահանջի դեպքում թուրքերին դիմադրելու համար: Այս խնդիրներն իրականացնելու համար գրավված վայրերում աշխատում էին բազմաթիվ մշակութային և բարեգործական կազմակերպություններ՝ Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը, Եղբայրական օգնության կոմիտեն, Քաղաքների միությունը, Մոսկվայի կոմիտեն և այլն: Կատարված եռուն աշխատանքների հետևանքով հայրենիք վերադարձած արևմտահայության բեկորները վերընձյուղում էին իրենց օջախները: Այս իրավիճակում էր Արևմտյան Հայաստանը, երբ տեղի ունեցավ Հոկտեմբերյան հեղափոխությունը, որից հետո արևմտահայերի քաղաքական միտքը ձեռք բերեց նոր ուղղորդվածություններ:

**9.**Կարծում ենք, որ Հայաստանի առաջին Հանրապետության գոյության շրջանում արևմտահայերի քաղաքական միտքն ուներ հիմնականում երկու ուղղվածություն՝ ներքին, որը ենթադրում էր ՀՀ հայացում և արտաքին, որը մեծ տերություններից պահանջում էր Մեծ Հայաստան: Արևմտյան Հայաստանի հայացման գործընթացը, որին ձեռնամուխ էին եղել բազում գործիչներ դեռևս 1916 թ.

կեսերից, այնտեղ կիսատ մնալով՝ շարունակվեց Արևելյան Հայաստանում: Այս ուղղության ներկայացուցիչները ցանկանում էին ՀՀ անբաժան մասը տեսնել նաև Արևմտյան Հայաստանը, որի միավորման ակտն ընդունվեց 1919 թ. մայիսի 28–ին: Արևմտահայ քաղաքական մտքի այդ ուղին արդյունավետ էր, քանի որ առաջնորդվում էր իրական հաշվարկով, չէր սահմանափակվում տեսություններով, այլ դրանք կյանքի էր կոչում, որով պետք է պայմանավորել հայոց պետականության ամրապնդումը:

Երկրորդ ուղղությամբ գործող հայ քաղաքական միտքը դարձյալ փորձում էր լուծված տեսնել Արևմտյան Հայաստանի հարցը, բայց միշտ չէ, որ այն դիտարկում էր ՀՀ մաս: Այդ մտքի կրողները ՀՀ պատվիրակության հետ ավելի շատ գնում էին քաղաքական գործընթացների հետևից և ոչ առջևից: Նրանց գործունեությունը հիմնականում կախված էր մեծ տերություններից: Ազգային պատվիրակությունը իրեն ներկայացնում էր որպես արևմտահայության քաղաքական շահերի միակ ներկայացուցիչ և նույնիսկ դրանց իրականացմանը միտված աշխատանքներում ցանկանում էր զրոյացնել Հայաստանի պատվիրակության դերը, որը մասնավորապես ՀՀ փաստացի ճանաչումից հետո հայոց շահերը ներկայացնող միակ օրինական մարմինը պետք է լիներ: Նրա քաղաքական ընկալումներում մեծ տեղ էր գրավում ռոմանտիզմը՝ կապված տարածքային պահանջների ներկայացման չափերի և դրանք դաշնակիցների կողմից հայությանը նվիրաբերելու հետ: Միացյալ Հայաստանի վերաբերյալ երկու պատվիրակությունների դիրքորոշումներն իրարից չէին տարբերվում պահանջված տարածքների հետ կապված, բայց ՀՀ պատվիրակությունը ստիպված գնում էր Ազգային պատվիրակության հետևից, կամ էլ իսկապես, ելնելով այն համոզմունքից, որ ճիշտ է լայն տարածքներով Հայաստանի պահանջը:

ՀՀ Բյուրո-կառավարության իշխանության գալուց հետո (1920 թ. մայիսի 5) արդեն հասկանալի էր դարձել, որ չեն իրականանալու երկու պատվիրակությունների ցանկությունները և փորձ էր արվել ներկայացնելու այլընտրանքային և առավել խոստումնալից ծրագրեր, բայց Պողոս Նուբարի և Ա. Ահարոնյանի քաղաքական

ռոմանտիզմը, ինչպես նաև ՀՀ-ում նրանց մտայնությամբ առաջնորդվող ուժերի առկայությունն արգելք են հանդիսանում դրանց իրականացման համար: Երկու պատվիրակությունները փաստորեն անտեսում են Բյուրո-կառավարության ծրագրերը, որի արդյունքում չնայած հասնում են Սևրի պայմանագրի ստորագրմանը, բայց այն այդպես էլ չի իրականանում:

Հայոց Ազգային պատվիրակությունը մեծ Հայաստանի ստեղծումը պատկերացնում էր Արևմտյան Հայաստանի վիլայեթներով մինչև Կիլիկիա, որին պետք է կցվեր ՀՀ-ը: Նրա այդ ընկալումները ընդունելի դարձան ՀՀ պատվիրակության համար ևս, որը նշանակում է, որ իրականում Պողոս Նուբարի պատվիրակությունն էր ձևավորում ՀՀ արտաքին քաղաքականությունը կամ նրա քաղաքականությունը ՀՀ արտաքին քաղաքականությունն էր: Այդ քաղաքականությունն ամենևին իրատեսական չէր, չէր բխում աշխարհաքաղաքական գործընթացների ճիշտ ըմբռնումից:

**10.**ՀՀ անկումից հետո ինչպես արևմտահայ, այնպես էլ արևելահայ քաղաքական միտքը շարունակում է ընթանալ պարտության ճանապարհով: Բոլշևիկների հաղթանակի և քեմալական շարժման նրանց օգնությամբ հաջողությամբ պայմանավորված՝ դաշնակիցները փորձում են վերանայել Սևրի պայմանագիրը: Թուրքիայի հետ վերջնական հաշտության համար շուտով նոր խորհրդաժողով հրավիրվեց Լոզանում, իսկ մինչև այդ Լոնդոնի խորհրդաժողովում Թուրքիային առաջարկված հաշտության պայմանները չեն ընդունվում: Լոնդոնի խորհրդաժողովից առաջ արդեն դաշնակիցները հրաժարվել էին Սևրի պայմանագրից, ցանկանալով իրենց կողմը գրավել Քեմալին, սակայն վերջինիս ներկայացուցիչներն արդեն իրենց ուժեղ զգալով՝ չհամաձայնվեցին մազաչափ զիջում անել նրանց, այդ թվում Արևմտյան Հայաստանի հետ կապված: Լոնդոնի խորհրդաժողովում արևմտահայ քաղաքական միտքը դարձյալ ձախողում ապրեց, քանզի նրա ներկայացուցիչները, ինչպես նաև Ա. Ահարոնյանը, որին ստեղծված իրավիճակում մնում էր պաշտպանել արևմտահայերի շահերը, դարձյալ չխորանալով նոր աշխարհաքաղաքական

գործընթացների մեջ, շարունակում էին պնդել Սևրի պայմանագրով Արևմտյան Հայաստանին նախատեսված տարածքներում հայկական պետություն ստեղծելու գաղափարը, այն դեպքում, երբ դաշնակիցները Սան-Ռեմոյի խորհրդաժողովում էին դեռևս հասկացրել, որ չեն օգնելու Հայաստանին՝ չորս վիլայեթները գրավելու համար:

Լոնդոնի խորհրդաժողովը, ըստ էության, անպտուղ է վերջանում, չի ավարտվում պայմանագրով: Նրա ընթացքում ձևավորվում են ֆրանս-թուրքական, իտալո-թուրքական, անգլո-ռուսական համաձայնագրերը, որոնք նշանակում էին Հայկական հարցից հրաժարում: Ազատ և Միացյալ Հայաստանի փոխարեն Լոնդոնում ծնվում է «Ազգային օջախ» եզրույթը՝ առանց հստակ սահմանների, որը նույնպես չի ընդունվում թուրքերի կողմից:

Այս ամենից հետո էլ արևմտահայ և արևելահայ քաղաքական գործիչները սկսում են թյուր հույսեր փայփայել այդ օջախի ստեղծման համար, որոնք վերջնականապես ձախողվում են Լոզանում:

**11.**Լոզանի խորհրդաժողովում հայ քաղաքական միտքը առաջնորդվում է «Ազգային օջախի» գաղափարը կյանքի կոչելու ուղղությամբ, որը ներմուծված էր հենց Դաշնակիցների կողմից: Բայց այդ գաղափարն այլևս հնարավոր չէր կյանքի կոչել, քանզի Դաշնակիցները սիրախաղ էին սկսել Թուրքիայի հետ և ամենևին նպատակ չունեին հայերի համար պայքարի մեջ մտնել նրա հետ: Լոզանի խորհրդաժողովին հաջորդած պայմանագրով չեղյալ է հայտարարվում Սևրի պայմանագիրը, որն հայության համար այդպես էլ իրական չի դառնում: Պայմանագրում չի ներառվում նույնիսկ «Ազգային օջախ» ստեղծելու վերաբերյալ որևէ կետ, որը նշանակում է, որ Հայկական հարցը վերջնականապես դուրս է մղվում մեծ տերությունների քաղաքական օրակարգից:

Ահա սրանք են հայեցակարգային նշանակություն ունեցող այն եզրակացությունները, որոնք բխում են մեր ատենախոսությունից:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### 1.Սկզբնաղբյուրներ

ա/Հայաստանի Ազգային Արխիվ (ՀԱԱ)

1.1.Ֆ. 57 (Ամենայն հայոց կաթողիկոսի դիվան), ց.2, գ.107, ց.5, գ.53:

1.2.Ֆ. 200 (Հայաստանի առաջին հանրապետության արտաքին գործերի նախարարություն), ց. 2, գ. 114:

1.3.Ֆ. 222 (Թիֆլիսի հայոց ազգային խորհուրդ), ց.1, գ.1:

1.4.Ֆ. 282 (Չոպանյան Արշակ-արևմտահայ հասարակական-քաղաքական գործիչ, գրող), ց. 1, գ. 4, գ. 45, գ. 56:

1.5.Ֆ. 370 (Օզանյան Անդրանիկ Թորոսի-ազգային հերոս, գեներալ-մայոր), ց. 3, գ. 11, գ. 19:

1.6.Ֆ. 402 (Փաստաթղթերի հավաքածու հայ ազատագրական շարժումների վերաբերյալ), ց. 2, գ. 11:

1.7.Ֆ. 430 (Հայ ազգային պատվիրակություն), ց. 1, գ. 26, գ. 729, գ.1357:

1.8.Ֆ. 1457 («Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցություն), ց.1, գ.81ա, գ.88, գ.89, գ.95:

բ/Եղ. Չարենցի անվան ԳԱԹ-ի արխիվ

1.9.Ֆ. Վ. Մալեզյան, գ. 504, գ. 550, գ. 726, գ. 735, գ. 736, գ. 738, գ. 739, գ. 747:

1.10.Ֆ. Ա. Չոպանյան, գ. 2590, բաժ. 7:

1.11.Ֆ. Լ. Բաշալյանի, գ. 119:

### 2.Տպագիր սկզբնաղբյուրներ

ա/Հայերեն

2.1.Արամ Մանուկյան, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, Ա.Հ., 2009, 575 էջ:

2.2.Դաշնակցական կառավարության դոկումենտներից, Ա. Մարտունու առաջաբանով, Երևան, Ա.Հ., 1922, 28 էջ:

2.3.Լազեան Գ., Հայաստան եւ հայ դատը, հայ և ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Երևան, Ադանահրատ., 1991, 435 էջ:

2.4.Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923 թթ.), պրոֆ. Ջ. Ա. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, Հայաստան, 1972, 809 էջ:

2.5.Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբ. Գ. Գալոյան, Երևան, ՀՀ ԳԱԱ "Գիտություն", 2000, 455 էջ:

2.6.Համահայկական խորհրդակցությունները (1912-1920 թթ.), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբ. Ա. Վիրաբյան, Ե., ՀԱԱ, 2004, էջ 788:

2.7.Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, Հայաստան, 1991, 758 էջ:

2.8.Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1960, 642 էջ:

2.9.Մսըրլեան Զ., Երեք դաշնագրեր, Պէյրութ, 1979, 176 էջ:

2.10.Սահակյան Տ., Ցավալի պայմանագրեր, Երևան, Լուսակն, 2007, 231 էջ:

2.11.Փաստաթղթերի Սովետական հանրապետությունների պետական հարաբերությունների մասին (1920-1922 թվականներ), «Բանբեր Հայաստանի արխիվների», Ե., 1972, թիվ 3 (34), էջ 3-66:

բ/ Օտար լեզվով

2.12.Армения в документах государственного департамента США 1917-1920 гг., Составитель Г. Г. Махмурян, Ереван, Ин-т истории НАН Армении, 2011, 560 ст.

2.13.Армянскии вопрос на Лозаннскои конференции, Извлечения из протоколов, перевод М. Т., с предисловием П. Макинциана, Тифлис, Акционерное общество "Заккнига", 1926, с. 36.

2.14.Великая Октябрьская революция и победа Советской власти в Армении (Сборник документов), Ереван, Айпетрат, 1957, 682 ст.

2.15.Документи внешней политики СССР, т. 3, Москва, Госполитиздат, 1958, 723 ст.

## 3.Յուշագրություններ


3.1.Ա-Դո, Իմ հիշողությունները, Երևան, Պատմամշակութ. արգելոց-թանգ. և պատմ. միջավայրի պահպ. ծառ., 2015, 507 էջ:

3.2.Ավետեան Մ., Հայ ազատագրական ազգային յիսնամեայ (1870-1920) յուշամատեան եւ Զօր. Անդրանիկ, Փարիզ, Le Soleil, 1954, 526 էջ:

3.3.Արամը, Մահուան յիսնամեակին առթիվ, Երևան, Միքայէլ Վարանդեան, 1991, 550 էջ:

3.4.Գարօ Ա., Ապրուած օրեր, Բոստըն, տպ. Հայրենիք, 1948, 208 էջ:

3.5.Գ. Զօհրապը ժամանակակիցների յուշերում եւ վկայութիւններում, Երեւան, Երևանի համալս. հրատ., 2006, 534 էջ:

3.6.Զաւեն արքեպիսկոպոս, Պատրիարքական յուշերս, վաւերագրեր եւ վկայութիւններ, Գահիրէ, Նոր Աստղ, 1947, 424 էջ:

3.7.Թագուորեան Գ., Երազանքի ու տագնապի տարիներ, Գահիրէ, Յուսաբեր, 1961, 196 էջ:

3.8.Մենակ Գ., Կեանքիս ուղին, Յուշեր Հայկական լեգէոնէն, Պէյրութ, 1968, 133 էջ:

3.9.Յուշամատեան Մուսա Լերան, Պէյրութ, տպ. Ատլաս, 1970, 877 էջ:

3.10.Յուշեր Արմենակ Եկարեանի, Պէյրութ, Ռ.Ա. կուսակցութ. Ա. Եկարեան ակումբի հրատ., 1985, 255 էջ:

3.11.Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Է հատոր, Լօս Անճէլըս, Հորիզոն, 1952, 432 էջ:

3.12.Սեպուհ, Էջեր իմ յուշէրէն, հ. Ա, Պոսթըն, տպ.Հայրենիք, 1925, 511 էջ:

3.13.Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Գ, Պէյրութ, Մշակ, 1963, 178 էջ:

3.14.Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Ե, Պէյրութ, Համազգային, 1966, 363 էջ:

3.15.Տերտերյան Ի., Հայկական գոյամարտը, հ. 6, Թեհրան, տպ. «Մոդերն», 1957, 642 էջ:

3.16.Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. Բ, Պէյրութ, Հայրենիք, 1952, 610 էջ:

3.17.Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. Գ, Գահիրէ, «Յուսաբեր», 1957, 432 էջ:


## 4.Մենագրություններ

ա/ Հայերեն


4.1.Ադոնց Ն., Երկեր, Ձ, Հրապարակախոսություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, 540 էջ:

4.2.Ահարոնյան Ա., Սարդարապատից մինչև Սեւր և Լոզան, Պոսթըն, Հայրենիք, 1943, 212 էջ:

4.3.Ահարոնյան Ա., Հայկական Հարցը խաղաղութեան ժողովին առջեւ, Բոստոն, 1919, 32 էջ:

4.4.Ահարոնեան Վ., Անդրանիկ, մարդը և ռազմիկը, Բոսթըն, Հայրենիք, 1957, 182 էջ:

4.5.Ասիայի և Աֆրիկայի երկրների նորագույն պատմություն, մաս 1, 1917-1945, Երևան, Երևանի համալս. հրատ., 1982, 319 էջ:

4.6.Ասրյան Ա., Արամ Մանուկյան, կյանքը և գործունեությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ, 2009, 114 էջ:

4.7.Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, Բարձրագույն դպրոց, 1997, 433 էջ:

4.8.Արզումանյան Մ., Արհավիրքից վերածնունդ, Երևան, Հայաստան, 1973, 580 էջ:

4.9.Արզումանյան Մ., Հայաստան 1914-1917, Երևան, Հայաստան, 1969, 780 էջ:

4.10.Արծրունի Վ., Հայ-տաճկական պատերազմը, Հայ սպայութիւնը, Շատախ, Երեւան, Մուղնի, 2002, 456 էջ:

4.11.Բոյաջյան Հ., Պողոս Նուբար փաշան և բարենորոգումների խնդիրը Արևմտյան Հայաստանում 1912–1914 թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2010, 208 էջ:

4.12.Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները (1917-1923 թթ.), Երևան, Գիտություն, 1999, 540 էջ:

4.13.Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն, Փարիզ, Ա.Հ., 1947, 640 էջ:

4.14.Զոհրաբյան Է., 1920 թ. Թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, Ոսկան Երևանցի, 1997, 366 էջ:

4.15.Զոհրաբյան Է., Նախիջևանի հիմնահարցը և Հայաստանի «Դաշնակիցները», (1918 թ. դեկտեմբեր-1920 թ. ապրիլ), Երևան, Ա.Հ., 2002, 266 էջ:

4.16. Զօհրապ Գ., Երկերի ժողովածու, հ.Զ (Յավելեալ), գ. 2, Երեւան, ԳԱԹ հրատ., 2004, էջ 454:
4.17.Թերզիբաշյան Ա., Անդրանիկ, Փարիզ, Տեր-Հակոբյան, 1942, 416 էջ:
4.18.Թյուրապեան Յ., Դրվագներ հայկական եղեռնէն, Պարիզ, Յ.Թիւրապեան, 1946, 208 էջ:
4.19.Թորիկեան Շ., Հայկական հարցը եւ միջազգային օրէնքը, Բէյրութ, Հայ դատի յանձնախումբի հրատ., 1976, 311 էջ:
4.20.Թորոսյան Շ., Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920 թթ., Երևան, Երևանի համալս. հրատ., 1987, 272 էջ:
4.21.Լեո, Անցյալից, Թիֆլիս, Խորհուրդ Կովկաս, 482 էջ:
4.22.Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումը և զարգացումը, Բէյրութ, Համազգային, 1968, 488 էջ:
4.23.Խուրշուդյան Լ., Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, Եր. Համալս. Հրատ., 2002, 315 էջ:
4.24.Խուրշուդյան Լ., Հայկական հարցը, Երևան, Համազգ. Հայ կրթ. մշակութ. միության հրատ., 1995, 100 էջ:
4.25.Խուրշուդյան Լ., Սովետական Ռուսաստանը և Հայկական հարցը, Երևան, «Հայաստան»,, 1977, 209 էջ:
4.26.Խուդինյան Գ., Հակոբյան Ա., ՀՅ Դաշնակցության պատմության խեղաթյուրման վերջին փորձերը, Երևան, «Լուսակն» հրատ., 2005, 60 էջ:
4.27.Կացարով Գ., Հայաստանը և հայկական հարցը պատերազմից առաջ և հետո, Երևան, 1999, 72 էջ:
4.28.Կէօրկիզեան Ա., Մեր ազգային գոյապայքարը 1915-1922-ի զուլումի տարիներուն, Պէյրութ, տպ. Զարթօնք, 1967, 503 էջ:
4.29.Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, Հայաստան, 1967, 557 էջ:
4.30.Հակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, "Գիտություն" հրատ., 2010, 340 էջ:
4.31.Հակոբյան Ա., ՀՍԽՀ 1921 թ. ներքաղաքական կյանքի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ, Երևան, Ա. հ., 2014, 260 էջ:
4.32.Համբարյան Ա., Հայ հասարակական քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Երևան, «Հայաստան», 1990, 481 էջ:

4.33.Հայ ժողովրդի նորագույն պատմություն, Թեհրան, Ի.Ա.Մ.Մ. հրատ., Ա. թ., Պր.:

4.34.Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, 1050 էջ:

4.35.Հայաստանի ավտոնոմիան և Անտանտան, Երևան, Պետհրատ, 1926, 93 էջ:

4.36.Հայկական Հարցը, հանրագիտարան, Երևան, Հայկ.հանրագիտ. գիտ. խմբ., 1996, 527 էջ:

4.37.Հասրաթյան Մ., Թուրքիայի պատմության ուրվագծեր, Երևան, Երևանի համալս. հրատ., 1986, 402 էջ:

4.38.Հարությունյան Ա., Սեվրի պայմանագիրը և հայ հասարակական-քաղաքական միտքը, Ե., ՀՀ ԳԱԱ "Գիտություն", 2004, 139 էջ:

4.39.Հիսնամեակ սոցիալ-դեմոկրատ հնչակեան կուսակցութեան, Ֆրեզնո, Ա. հ., 1938, 352 էջ:

4.40.Հ.Յ. Դաշնակցութեան յոթերորդ ընդհանուր ժողովի որոշումները, Ա. տ., 1913, 21 էջ:

4.41.Հովհաննիսյան Գ., Հնչակյան կուսակցության պատմություն (1887-1915 թթ.), Երևան, Պատմության ինստիտուտ, 2012, 352 էջ:

4.42.Հովհաննիսյան Լ., Հայկական հարցը և Մեծ տերությունները 1914-1917 թթ. թվականներին, Ե., «Զանգակ-97», 2002, 182 էջ:

4.43.Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ.1, Առաջին տարին, 1918-1919, Երևան, Տիգրան Մեծ, 2005, 570 էջ:

4.44.Ղազարյան Հ., Սևրի պայմանագիրը և Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանման վերաբերյալ, գիրք առաջին, Երևան, Էդիթ Պրինտ, 2012, 732 էջ:

4.45.Ղազարյան Հ., Սևրի պայմանագիրը և Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանման վերաբերյալ, գիրք երկրորդ, Երևան, Էդիթ Պրինտ, 2012, 732 էջ:

4.46.Ղազարյան Հ., Մոսկվայի և Կարսի 1921 թվականի պայմանագրերն ու նրանց ողբերգական դերը հայ ժողովրդի ճակատագրում, Երևան, Էդիթ Պրինտ, 2010, 988 էջ:

4.47.Ղամբարյան Ա., Հայկական Հարցը 1912-1914 թթ. և Մեծ Բրիտանիան, Ե., ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ., 2006, 232 էջ:

4.48.Ղարիբջանյան Գ., Ժողովրդական հերոս Անդրանիկ, Երևան, Հայաստան, 1990, 244 էջ:

4.49.Ճիզմէճեան Մ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, 1890-1925, Ֆրեզնօ, Նոր օր, 1930, 572 էջ:

4.50.Մելիքյան Վ., Արևմտահայերի համագումարները և հայկական հարցի փուլերը 1917–1923 թթ.,Երևան, «Զանգակ–97» հրատ, 2007, 77 էջ:

4.51.Մելիքյան Վ., Հայութեան ինքնակազմակերպման խնդիրը եւ արևմտահայերի 3-րդ համագումարի անհրաժեշտութիւնը. հայկական պահանջատիրութիւն, Երևան, «Զանգակ–97» հրատ, 2010, 118 էջ:

4.52.Մելիքյան Վ., 1917 փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Երևան, «Մխիթար Գոշ», 1997, 320 էջ:

4.53.Մելիքյան Վ., Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում: Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը (1917 թ. նոյեմբեր – 1918 թ. փետրվար), Երևան, Ա. հ., 2010, 263 էջ:

4.54.Մեծ պատերազմը և հայ ժողովուրդը, Ա.հ., Ա.տ., Ա.թ., 96 էջ:

4.55.Մխիթարեան Ս., Հայկական Հարցը, Փարիզ, imp. Araxes, 1968, 159 էջ:

4.56.Մուրադյան Մ., Հայկական Հարցը և ռուսական հասարակական–քաղաքական ու պատմագիտական միտքը, Երևան, ՀՀ ԳԱԱ հայ. ցեղ. թանգ. ին-տ., 1998, 182 էջ:

4.57.Նազարյան Ա., Հայկական զորամասերի կազմավորումը Կովկասյան ճակատում (1914-1918 թվականներ), Երևան, «Զանգակ-97», 232 էջ:

4.58.Նասիպեան Ա., Բրիտանիա եւ Հայկական հարցը 1915-1923, Պէյրութ, Սիփան, 1994, 343 էջ:

4.59.Ներսիսյան Ա., Կարո Սասունի, Երևան, Իրանագիտական կովկասյան կենտրոն, 2004, 344 էջ:

4.60.Ներսիսյան Ա., Զորավար Սեպուհ, Երևան, Էդիթ Պրինտ, 2005, 346 էջ:

4.61.Ներսիսյան Ա., Ավետիք Սահակյան (Հայր Աբրահամ), Երևան, Իրանագիտական կովկասյան կենտրոն, 2006, 297 էջ:

4.62.Ներսիսյան Ա., Ռուբէն, Երևան, Էդիթ Պրինտ, 2007, 394 էջ:

4.63.Ներսիսյան Ա., Մովսէս Տէր Գալուստեան, Երեւան, Էդիթ Պրինտ, 2011, 242 էջ:

4.64.Ներսիսեան Ա., Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պատմութիւն (1908-1918), Բէյրութ, 2013, 349 էջ:

4.65.Նորագույն պատմություն 1918-1939 թթ., Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1983, 664 էջ:

4.66.Չելեպեան Ա., Զօրավար Անդրանիկ եւ Հայ Յեղափոխական շարժումը, Լոս Անճելըս, Ա. հ., 1984, 745 էջ:

4.67.Չորմիսեան Լ., Կուսակցութիւնները, Երեւան, Նաիրի, 1995, 308 էջ:

4.68.Չորմիսեան Լ., Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, հ.Գ, Պէյրութ, Սեւան, 1975, 750 էջ:

4.69.Պապյան Ա., Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները, Երևան, Ա. հ., 2007, 119 էջ:

4.70.Պատմութիւն Ս.Դ.Հնչակեան կուսակցութեան 1887-1962, խմբագիր Ա. Կիտուր, հ. Ա, Պէյրութ, տպ. Շիրակ, 1962, 616 էջ:

4.71.Պօյաճեան Տ., Հայկական Լէգէոնը, Ուօթրթաուն, տպ. Պայքար, 1965, 415 էջ:

4.72.Պօղոսեան Ս., Պօղօս Նուբար փաշա. Ազգային գործիչը, Երեւան, «Զանգակ-97», 2004, 264 էջ:

4.73.Սահակյան Ռ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, 326 էջ:

4.74.Սահակյան Ռ., Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Երևան, Գիտություն, 2005, 401 էջ:

4.75.Սահակյան Ռ., Ինքնապաշտպանական կռիվները Արևմտյան Հայաստանում 1915 թվականին և ՀՅ Դաշնակցությունը, Երևան, Ա. հ., 2010, 70 էջ:

4.76.Սահակյան Ռ., Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը (1914 թ. հուլիս - 1917 թ. փետրվար), Երևան, Պատմության ինստիտուտ, 2015, 427 էջ:

4.77.Սապահ-Գիւլեան, Ինքնավար Հայաստան, Գահիրէ, տպ. Զ. Պէրպէրեան, Ա. թ., 96 էջ:

4.78.Սասունի Կ., Տաճկահայաստանը ռուսական տիրապետութեան տակ (1914-1918), Բոստոն, Ա.հ., 1927, 188 էջ:

4.79.Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, Պէյրութ, Տարօն-Տուրուբերան հայրենակց.միութ.կեդր.վարչ., 1956, 1250 էջ:

4.80.Սասունի Կ., Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914-1918), Պէյրութ, Սևան, 1966, 224 էջ:

4.81.Սասունի Կ., Մայիսեան խռովութիւնները եւ թաթարական ապստամբ շրջանները, Պեյրութ, Ա. հ., 1968, 208 էջ:

4.82.Սարգսյան Ս., Հայ սահմանադրական Ռամկավար Կուսակցություն (1908-1921), Երևան, Տիգրան Մեծ, 2009, 244 էջ:

4.83.Սարդարյան Կ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ., Երևան, Նաիրի, 2002, 224 էջ:

4.84.Սարվազյան Լ., Մաղաքիա Օրմանյան, Երևան, Եվրոպրինտ, 2013, 368 էջ:

4.85.Սարուխանյան Ն., Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական քաղաքական մտքի և պատմագրության մեջ, Երևան, Ոսկան Երեվանցի, 1997, 272 էջ:

4.86.Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, Հայաստան, 1991, 630 էջ:

4.87.Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 5, Երևան, Հայագիտակ, 2013, 1296 էջ:

4.88.Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գիրք Ա, Երևան, Կաիսա, 1996, 752 էջ:

4.89.Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Երևան, Կաիսա, 1996, 830 էջ:

4.90.Ս.Էջմիածինը և հայոց ցեղասպանությունը, հրատ. պատր. Հարությունյան Ա., Ս.Էջմիածին, Մայր Աթոռ Ս.Էջմիածին, 2010, 736 էջ:

4.91.Ստեփանյան Խ., Ռուբեն Տեր-Մինասյան (Կյանքը և գործը), Երևան, ՎՄՎ-Պրինտ, 2008, 183 էջ:

4.92.Ստեփանյան Մ., Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը Առաջին աշխարհամարտի և հայոց ցեղասպանության ժամանակաշրջանում, Ե., Նահապետ, 2005 162 էջ:

4.93.Վասպուրական: Վան–Վասպուրականի ապրիլյան հերոսամարտի տասնհինգ ամյակի առթիվ (1915-1930), Վենետիկ, Ս. Ղազար, 1930, 413 էջ:

4.94.Վեհապետեան Թ., Լուսարձակ մեր անցեալ եւ ներկայ հանրային կյանքին վրայ: Ներածական 5 գիրք, Պէյրութ, Ա. հ., 1993, 96 էջ:

4.95.Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Բէյրութ, Մշակ, 1958, 684 էջ:

4.96.Տասնապետեան Հր., Հ.Յ.Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ Ընդհ.Ժողով (1890-1924), Աթէնք, Հ.Յ.Դաշնակցութեան, 1988, 260 էջ:
4.97.Տասնապետեան Հ., Հայկական հարցը, Պէյրութ, տպ. Համազգ. Վ. Սեթեան, 1984, 60 էջ:
4.98.Փիրումեան Ռ., Հայաստանը Հ.Յ.-Բոլշեւիկ Յարաբերութիւնների Ոլորտում (1917-1921), Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 1997, 406 էջ:
4.99.Քաջազնունի Յ., Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1923, 108 էջ:
4.100.Քիւրքճեան Յ., Ուրուագիծ Հ.Յ.Դ. պատմութեան 1919-1924 հնգամեակի, Աթէնք, 1988, 94 էջ:

բ/ Օտար լեզվով
4.101.Армянский вопрос на Лозанской конференций, Тифлис, АО "Заккнига", 1926, 36 ст.
4.102.История внешней политики СССР, 1917-1970 гг, в 2-х т., под. ред. Б. Н. Пономарев и др., Москва, Наука, 1970, 519 ст.
4.103.История внешней политики СССР, 1917-1985, в 2-х т., под. ред. А. А. Громико, Б. Н. Пономарев, Москва, Наука, 1986, 535 ст.
4.104.История внешней политики СССР, 1917-1966 гг., в 2-х т., авт. кол. А. М. Александров, под. ред. Б. Н. Пономарев и др., Москва, Наука, 1966, 477 ст.
4.105.Кемаль М., Путь новой Турции, т. 3, Москва, Соцэкгиз, 1934, 572 ст.
4.106.Корсун Н., Первая мировая война на Кавказском фронте, Москва: Воениздат, 1946, 98 ст.
4.107.Кочар М., Армяно-турецкие общественно-политические отношения и армянский вопрос в конце XIX-начале XX веков, Ереван, Изд-во Ерев. Ун-та, 1988, 308 ст.
4.108.Джордж Л., Правда о мирных договорах, т. 2, Москва, Изд. иностр. лит., 1957, 556 ст.
4.109.Масловский Е. В., Мировая война на Кавказском фронте 1914-1917 гг., Париж, 1933, 450 ст.
4.110.Саакян Р. Г., Франко-турецкие отношения и Киликиа в 1918-1923 гг, Ереван, Изд-во АН АрмССР, 1986, 284 ст.

4.111.Тунян В., Политика самодержавия России в Закавказье 19-нач. 20 вв., часть 6, Ереван, Чартарагет, 2010, 134 ст.

4.112.Тунян В., Младотурки и армянский вопрос: ноябрь 1914 - февраль 1916 гг., т. 3, Ереван, Чартарагет, 2010, 245 ст.

4.113.Тунян В., Армянский вопрос: мифотворческий аспект, Ереван, Изг-во ЕГУ, 2015, 398 ст.

4.114.Чичерин Г. В., Статьи и речи по вопросам международной политики, Москва, Соцэкгиз, 1961, 516 ст.

4.115.Штейн. Б. Е., "Русский вопрос" на Парижской мирной конференции, Москва, Госполитиздат, 1949, 463 ст.

4.116.Штейн Б. Е., "Русский вопрос" в 1920–1921 гг., Москва, Госполитиздат, 1958, 335 ст.

4.117.George D. L., The Truth about the Pease Treaties, vol. 2, London, Gollancz, 1938, 1350 p.

4.118.Hovannisian R. G., The Republic of Armenia, vol. 2, 1919-1920, Berkeley-Los Angeles-London, 1982, 603 p.

4.119.Hovannisian R. G., The Republic of Armenia, vol. 3, From London To Sevres, February August 1920, Berkeley-Los Angeles-London, 1996, 531 p.

4.120.Hovannisian. R. G., The Republic of Armenia, vol. 4, Between and Sickle: Partition and Sovietization, Berkeley-Los Angeles- London, 1996, 496 p.

4.121.Mandelstam A. N., La Socie'le' des Nations et les Puissansces devant le problem Arme'nien, 2 e'me e'd., Beyrut, Association Libanaise des universitaires Armenies, 1970, 514 p.

4.122.Salahi R.S., Turkich Diplomacy 1918-1923: Mustafa Kemal and the National Movement, London, 1975, 422 p.

4.123.Ter Minasian A. , La Rpublque d'Armenie, Bruxelles, 1989, 323 p.

4.124.Ter Minasian A., La Question Armenienne, Paris, 1983, 263 p.

## 5. Հոդվածներ

5.1.Աստվածատրեան Ա., Իշխանը (Նիկոլ Միքայէլեան) «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1955, ԼԳ. տարի, դեկտեմբերի, թիւ 12 (358), էջ 82-96:

5.2.Ասլանյան Ս., Մոսկվայի և Կարսի պայմանագրերի համեմատական վերլուծության փորձ, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 2005, թիվ 1, էջ 174-182:

5.3.Աւօ, Արշակ Վռամեան (Օննիկ Դերձակեան-Վահապ, Վարազ), «Յեղափոխական ալպոմ», Պէյրութ, 1965, Հ. Ե, թիւ 10 (58), էջ 269-278:

5.4.Բաբայան Կ., Շուխյան Ռ., Անդրանիկի եւ Պօղոս Նուբարի նամակագրութիւնից (1919–1921 թթ.), «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1990, թիվ 1, էջ 94-101:

5.5.Գարօ Ա., Մեր վերջին տեսակցութիւնը Թալէաթ փաշայի հետ, «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1922, նոյեմբեր, թիւ 1, էջ 39-45:

5.6.Դարբինեան Ռ., Հայ քաղաքական մտքի դեգերումները, «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1923, ապրիլ, թիւ 6, էջ 89-96:

5.7.Դարբինեան Ռ., Հայ Դատը Այսօր, «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1963, ԽԱ. տարի, յուլիս, թիւ 7, էջ 1-15:

5.8.Ջատիկյան Հ., Ավետիս Ահարոնյանը և Հայկական հարցը, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 2006, թիվ 2 (172), էջ 41-52:

5.9.Հարությունյան Ա., Անվտանգության ապահովումը և վերաշինության գործի ընթացքը Վան-Վասպուրականում 1916 թ. վերջերին և 1917 թ. սկզբներին, «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2012, թիվ 2 (5), էջ 19-25:

5.10.Հարությունյան Ա., Ռուսական բանակի նահանջի և Վան-Վասպուրականի 1915 թ. մեծ գաղթի հարցի շուրջ, «Իրան-Նամե», 2001, հ. 37, էջ 18-23:

5.11.Հարությունյան Ա., Վան-Վասպուրականի ազգաբնակչության Մեծ գաղթը. Պատճառները, ընթացքը, հետևանքները և պատասխանատվության խնդիրը, Հայաստանի մայրաքաղաքները, գիրք 1, Վան, Երևան, 2013, էջ 170-196:

5.12.Հարությունյան Ա., Վան-Վասպուրականի ազգաբնակչության 1915 թ. հուլիսյան գաղթը, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2002, թիվ 2 (606), էջ 46-58:

5.13.Մախմուրյան Գ., Ինքնապաշտպանության կազմակերպման հարցերի քննարկումը Հայոց Ազգային խորհրդում (1917 թ. նոյեմբեր – 1918 թ. հունվար), «Բանբեր Հայաստանի արխիվների», Ե., 2014, թիվ 122, էջ 58-111:

5.14. Մախմուրյան Գ., Արեւմտեան Հայաստանի պաշտպանութեան խնդիրները ԱՄՆ-ի եւ Դաշնակից տէրութիւնների քաղաքականութեան ոլորտում (1917-1918 թթ.), «Հայկազեան Հայագիտական Հադես», Պէյրութ, 2015, հատ. 35, էջ 273-292:

5.15.Մելիքյան Վ.,Հայկական հարցը և հայ հասարակության ինքնակազմակերպման խնդրի փուլերը, Գիտագործնական միջազգային գիտաժողով, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրը». 18-19 ապրիլի 2008: Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները, Կիպրոս-Նիկոսիա. 18-19 ապրիլի 2008 թ.: Գիտական զեկուցումների ժողովածու, Երևան, Ա. հ., 2009, էջ 156-166:

5.16.Միրզոյան Ա., Էջեր Արեւմտահայ գործիչների եւ հայ կամավորների հրամանատարության 1915 թ. նամակագրությունից, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2006, թիվ 1 (107), էջ 66-73:

5.17.Մխիթարեան Օ., Վանի ինքնապաշտպանութիւնը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, յունիս, թիւ 8, էջ 91-101, յուլիս, թիւ 9, էջ 127-132, սեպտեմբեր, թիւ 11, էջ 77-90, նոյեմբեր, թիւ 1(25), էջ 87-96, 1925, մայիս, թիւ 7(31), էջ 78-96:

5.18.Մսըրլեան Զ., ԱՄՆ արտաքին քաղաքականությունը և Հայկական Հարցը 1900-1976 թթ, «Հայկազեան Հայագիտական Հանդես», Պէյրութ, 1977-78, Հ. Զ, էջ 71-104:

5.19.Ներսիսյան Ա., Արամ Մանուկյանը և հայոց նոր պետականության արարումը, «Էջմիածին», Ե., 2007, մայիս, Ե, էջ 140-149:

5.20.Ներսիսյան Ա., Հայերի հոգեբանութեան փոփոխութեան գործօնները 1912-1914 թուականներին, «Բագին», Պէյրութ, 2007, Սեպտեմբեր, թիւ 3, էջ 55-61:

5.21.Ներսիսյան Ա., Առաջին Աշխարհամարտում հայ կամավորական շարժման սկզբնավորման պատմության դասավանդման հայեցակարգային հիմքերը, «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2011, թիվ 1, էջ 104-109:

5.22.Ներսիսյան Ա., Հայկական հարցի վերաբացումը 1912-1914 թթ., «Նորք», Երևան, 2006, թիվ 3, էջ 148 -159:

5.23.Ներսիսյան Ա., Իշխան (Նիկոլ Պողոսյան), «Դրօշակ», Երևան, 2000, յունիս, թիւ 6 (1568), էջ 20-25:

5.24.Ներսիսյան Ա., Ինչո՞ւ չիրականացաւ Սեւրի պայմանագիրը, «Դրոշակ», Երևան, 2000, դեկտեմբեր, թիւ 1 (1569), էջ 132-153:
5.25.Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական կողմնորոշումը, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 2005, թիվ 1, էջ 66-81:
5.26.Պողոսյան Ս., Փարիզի Վեհաժողովի հայկական հուշագիրը և նրա հետագա ճակատագիրը, Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, Երևան, 2002, թիվ 6, էջ 119–129:
5.27.Պօղօսեան Ս., Պօղոս Նուպարը և հայկական հարցի զարգացումները 1912-1921 թթ., Հանդէս ամսօրեայ, Վիեննա-Երևան, 2005, թիւ 1-12, էջ 416-446:
5.28.Պողոսյան Ս., Կիլիկիայում հայկական Ազգային օջախ ստեղծելու հարցը, ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված «Ազգ, պետություն, հայրենիք. պետականության գաղափարը» երիտասարդ գիտնականների միջազգային գիտաժողովի (2011 թ. նոյեմբերի 6-8, Ծաղկաձոր) հոդվածների ժողովածու, Երևան, 2012, էջ 119-125:
5.29.Պողոսյան Ս., Կիլիկիայի հարցը Սևրի և Լոզանի պայմանագրերում, «Վէմ», Երևան, 2012, թիվ 3 (39), էջ 154-164:
5.30.Պողոսյան Ս., Գևորգ Ե. կաթողիկոսի և Պողոս Նուբարի նամակագրությունը (1915 –1918 թթ.), «Էջմիածին», 2013, թիվ 4, էջ 45–59:
5.31.Փափազեան Վ., Հայկական բարենորոգումները (1912-1914), «Վեմ», Փարիզ, 1934, Յունուար-Փետրուար, թիւ 1 (3), էջ 62-75:

## 6. Ատենախոսություններ և սեղմագրեր

6.1.Մախմուրյան Գ., 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետությունը Մեծ Բրիտանիայի քաղաքականության մեջ, Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Ե., ՀՀԳԱ, 2009, էջ 358:
6.2.Սահակյան Ռ., Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը (1914 թ. Հուլիս - 1917 թ. փետրվար), Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2012, էջ 43:

6.3.Мартиросян М., Армянский вопрос и русская дипломатия 1912-1914 гг., Автореферат, диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Ереван, 1990, ст. 19.
6.4.Хуршудян Р., Критический анализ политики и идеологии армянской мелкобуржуазной партии гнчак в период борьбы трудящихся закавказья за победу и упрочение советской власти (1917-1921 гг.), Автореферат, диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Ереван, 1981, ст. 31.

## 7.Պարբերական մամուլ

7.1.«Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1912, 1913:
7.2.«Ժողովուրդ», Երեւան, 1920:
7.3.«Ժողովուրդի Ձայնը», Կ. Պոլիս, 1919:
7.4.«Հայաստան» օրաթերթ, Թիֆլիս, 1917:
7.5.«Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1919, 1920, 1923:
7.6.«Հորիզոն», Թիֆլիս, 1916, 1917, 1918:
7.7.«Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1919, 1922:
7.8.«Մշակ», Թիֆլիս, 1914, 1920:
7.9.«Նայիրի», Բեյրութ, 1969:
7.10.«Նոր Կեանք», Ֆրէզնօ ,1919, 1920:
7.11.«Պայքար», Թավրիզ, 1919:
7.12.«Վան-Տոսպ», Վան, 1914: